ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Վերլուծական տեղեկագիր

№ 6

Երևան – 2013

Խմբագրական խորհուրդ՝ Դավիթ Հովհաննիսյան
Սաթենիկ Մկրտչյան
Աննա Գևորգյան
Տիգրան Մաթոսյան
Հայկ Քոչարյան
Տաթևիկ Մկրտչյան

Վերլուծական տեղեկագիր։
Հոդվածների ժողովածու - հ. 6.- Երևան: «Կոլլաժ» ՍՊԸ, 2013.-
178 էջ։

Ժողովածուն նախատեսված է քաղաքագետների, մշակութաբանների, սոցիոլոգների, ազգագրագետների, հայագետների, արևելագիտական, պատմական և միջազգային հարաբերությունների բաժինների ուսանողների, ինչպես նաև ընթերցող լայն շրջանակի համար։

© Քաղաքակրթական և մշակութային
հետազոտությունների կենտրոն
© Երևանի պետական համալսարան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Դավիթ Հովհաննիսյան
ՏՐԱՆՍՖՈՐՄԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ
ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ 4

Տաթևիկ Մկրտչյան
«ՇԻԱՅԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ» «ԱՐԱԲԱԿԱՆ ԳԱՐՆԱՆ» ԵՎ ԴՐԱՆ
ՀԱՋՈՐԴԱԾ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 23

Աննա Գևորգյան
ԻՐԱՆԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ «ԱՐԱԲԱԿԱՆ ԳԱՐՆԱՆԸ» 51

Տիգրան Մաթոսյան
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՆԵՐՈՒԺԸ
ԵԳԻՊՏՈՍՈՒՄ ՆԱԽՔԱՆ «ԱՐԱԲԱԿԱՆ ԳԱՐՈՒՆԸ»
(ԸՍՏ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ
ՀԱՐՑՄԱՆ (WVS) 2008 Թ. ՏՎՅԱԼՆԵՐԻ) 77

Անի Գրիգորյան
ԱՄՆ-Ի ԱՐՁԱԳԱՆՔԸ «ԱՐԱԲԱԿԱՆ ԳԱՐՆԱՆԸ» 95

Սարգիս Գրիգորյան
«ԱԼ-ԿԱԻԴԱ»-Ի ԶԻՀԱԴԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՆՈՐ
ՄԻՏՈՒՄՆԵՐԸ 21-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ. ԱԲՈՒ ՄՈՒՍԱԲ
ԱՍ-ՍՈՒՐԻԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ 109

Շուշանիկ Ղազարյան
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔԸ
«ԱՐԱԲԱԿԱՆ ԳԱՐՆԱՆԸ» 124

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՐԹԱԿ

Հեղինե Կարապետյան
ԵԿԵՂԵՑԻՆ՝ ՈՐՊԵՍ ՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ 137

Արշակ Գևորգյան
«ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՈՒ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ 151

ՏՐԱՆՍՖՈՐՄԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ

Դավիթ Հովհաննիսյան

Դեռ 90-ական թվականների վերջից Ժ.Կեպելի «Ջիհադ՝ իսլամիզմի էքսպանսիան և մայրամուտը»[1] հանրահայտ գրքի հրապարակումից հետո արաբագետների և իսլամագետների շրջանում ծավալվեց բավականին լուրջ քննարկում այն հարցի վերաբերյալ, թե արդյո՞ք ծայրահեղական իսլամը իրոք սպառել է իրեն և նահանջի մեջ է գտնվում, թե՛, ինչպես շատ մասնագետներ շարունակում էին համոզված լինել, այն դեռ պահանջարկ ունի և նոր դրսևորման ձևեր է գտնելու:

Իրականում այս քննարկումների հիմքում ընկած էր այն սկզբունքային հիմնահարցը, թե կարո՞ղ է քաղաքական իսլամը, ինչպես այն երբեմն անվանում են, կամ, ավելի ճիշտ՝ իսլամիզմը[2], իրապես մրցունակ և իրականացվելու հնարավորություն ունեցող քաղաքակրթական ծրագրով հանդես գալ[3]: Այսինքն, այնպիսի ծրագրով, որը հնարավորություն տա այս կրոնի արժեքային համակարգի[4] շուրջ միավորել համաշխարհային դաշտում մրցունակություն ունեցող ծրագիր իրականացնելու համար անհրաժեշտ մարդկանց, կազմակերպությունների, պետությունների՝ դրանց տրամադրության տակ գտնվող բոլոր անհրաժեշտ ռեսուրսներով:

*

* *

---

[1] Кепель Ж., Джихад: Экспансия и закат исламизма / Пер. с фр. В.Ф. Денисова, М: Ладомир, 2004

[2] «Իսլամիզմ» եզրը, իմ տեսանկյունից, վերաբերում է ոչ թե կրոնին կամ քաղաքականությանը, այլ ավելի ընդգծված գաղափարախոսական էություն ունի:

[3] Հարկ է շեշտել, որ այս հոդվածում քննարկվում են հիմնականում սուննիական իսլամի հետ կապված խնդիրները:

[4] Բնականաբար, այն արժեքային համակարգի, որը կրում են և համարում են միակ ճշմարիտը տվյալ ուղղությանը պատկանող գործիչները, որոնց համար մյուս բոլոր իսլամական բնութագրիչներ ունեցող արժեքային համակարգերը կեղծ են:

Անհրաժեշտ է նշել, որ հակագաղութատիրական ազգային-ազատագրական պայքարը մուսուլմանական հասարակություններում ընթացել է ազգայնական գաղափարախոսությունների դրոշի ներքո: Կարելի է հիշել և՛ «թամսիրը»՝ եգիպտականացում, և «ումմա արաբիյան»՝ արաբական ումման, ի հակադրություն իսլամական ումմայի, և բազմաթիվ այլ նման օրինակներ:

Սակայն կարևորն այն էր, որ ազգայնական գաղափարախոսությունները մուսուլմանական հասարակություններում դատապարտված էին պատմամշակութային գիտակցության մեջ երկփեղկվածություն առաջացնելու, քանի որ «ումմա» հասկացությունը ամրագրել է միասնության այնպիսի տեսակ, որը հիմնված է եղել մուսուլմանական համայնքին պատկանելու սկզբունքի վրա և ի սկզբանե հակադրվել է արյունակցական, տոհմացեղային կապերի հիման վրա կենսագործունեություն իրականացնող համայնքին:

Ազգայնականությունը աղճատեց, քայքայեց իսլամի պատմամշակութային աշխարհը՝ դար ուլ-իսլամը՝ ստեղծելով այդ միասնության փոխարեն առանձին ազգային հասարակություններ՝ թուրքական, իրաքյան, եգիպտական, թունիսյան և այլն:

Հակադարձությունն անխուսափելի էր, և 1920-ականների վերջին Եգիպտոսում ստեղծվում է «Մուսուլման եղբայրներ» միությունը, որը մերժում է բոլոր տեսակի ազգայնական գաղափարները և հայտարարում դրանք հակաիսլամական, իսկ այդ գաղափարները կրողներին մեղադրում անհավատության մեջ (թաքֆիր), ինչը հետագայում՝ 2-րդ աշխարհամարտից հետո, Սաիդ Կուտբի և նրա հետևորդների համար դարձավ «թաքֆիր ուա հիջրա» կոնցեպցիայի հիմքը. մեղադրել անհավատության մեջ ազգայնական իշխանավորներին[5] և դրա հիման վրա անցնել

[5] Ազգային-ազատագրական պայքարի ալիքով իշխանության եկած և ազգայնական գաղափարախոսությամբ առաջնորդվող ուժերը շատ արագ իրենց անփորձության, կաշառակերության, երբեմն՝ ծախվածության հետևանքով կորցրեցին իրենց հասարակությունների վստահությունը, սակայն՝ վերածվելով ավտորիտար վարչակարգերի, կարողացան (մինչև Սառը պատերազմի

ջահիլիայից (տգիտություն և վայրենություն) իսլամի (իմացություն և քաղաքակրթություն): Թաքֆիրը ենթադրում է պատիժ, ինչը նշանակում է, որ հիջրան՝ ումման դեպի «թաուհիդ» (միաստվածության իսլամական կոնցեպցիա) հետ բերելը, հնարավոր է միայն պատիժն իրականացնելուց հետո. սա, իր հերթին, հիմնավորում էր բռնության կիրառումը նշված նպատակներին հասնելու համար:

Սաիդ Կուտբի հեղինակած «Իսլամ և քաղաքակրթության խնդիրները» աշխատությունը[6] Ս. Հանթինգթոնից առաջ հիմնավորեց քաղաքակրթությունների բախման կամ, ավելի ճիշտ, դրանց միջև պատերազմի անխուսափելիության մասին տեսությունը, քանի որ, ըստ նրա, բոլոր մնացած քաղաքակրթությունները և, հատկապես՝ արևմտյանը, կեղծ արժեքների վրա են կառուցված:

Սակայն Հասան ալ-Բաննան և նրա հետևորդները, մերժելով արևմտյան քաղաքակրթությունը, այնուամենայնիվ կողմ էին որոշ քաղաքակրթական համակարգերի ադապտացիային: Նրանք համարում էին, որ իսլամական պետությունը կարող է հակադրվել պետության աշխարհիկ կաղապարին՝ կիրառելով այն մեխանիզմները, որոնք, իրենց կարծիքով, ի սկզբանե հատուկ են եղել չաղավաղված սուննիականությանը՝ ընտրություններ, խորհրդարան, գերագույն դատարան և այլն: Այս գաղափարները հատկապես մեծ տարածում ստացան այն ժամանակաշրջանում, երբ «Մուսուլման եղբայրները» Եգիպտոսում ենթարկվում էին հետևողական և դաժան հետապնդման: Նրանք ստիպված եղան ցանցայնացվել թե՛ Եգիպտոսում՝ կորցնելով իրենց կենտրոնացված հիերարխիկ կառուցվածքը, և թե՛ հատկապես այլ երկրներում, որտեղ ստիպված էին եղել օթևան որոնել այդ երկրից հեռանալուց հետո: Սա տվեց որոշ չափով անսպասելի արդյունքներ, որոնցից մեկը, այսպես կոչված, ալ-Կաիդայի ձևավորումն էր:

ավարտից հետո տեղի ունեցած փոփոխություններով պայմանավորված տեղաշարժերը) ուժային միջոցներով իշխանությունը իրենց ձեռքում պահել;

[6] Said Qutb, al-islam wa mushkilat al-hadara, dar al-shuruk, al-qahira, 2001.

Բանն այն է, որ կախաղան հանված Սաիդ Կուտբի ավագ եղբայր Մուհամմադ Կուտբը ու մեկ այլ քարոզիչ՝ Աբդալլա Ազամը, ինչպես նաև նրանց նման այլ ջիհադականներ ապաստանեցին Սաուդյան Արաբիայում, որտեղ նույն ոգևորությամբ շարունակեցին իրենց գործունեությունը: Սա բնավ հաճելի չէր այդ երկրի իշխող համակարգին, սակայն մեծ եռանդով և ոգևորությամբ ընկալվեց Ուսամա բեն Լադենի և այլ երիտասարդների կողմից, որոնք կենտրոնացան հիմնականում «ջիհադ» և «թաքֆիր» հայեցակարգերի վրա:

Սակայն «Մուսուլման եղբայրների» ցանցայնացվող համակարգի մոտեցումների տարածումը չափազանց վտանգավոր էր սաուդական թագավորական համակարգի համար, ինչի հետևանքով հետ-իխուանական գաղափարների հետ մրցակցության մեջ մտավ սաուդական սալաֆիականությունը կամ, լրագրողների թեթև և ոչ շատ գրագետ ձեռքով շրջանառության մեջ մտած եզրույթը՝ վահհաբականությունը, որը հատկապես մեծ պահանջարկ ձեռք բերեց վերջին տասնամյակներում Աֆղանստանում տեղի ունեցած պատերազմների ընթացքում և դրանց միջև ընկած ժամանակահատվածներում:

Սաուդյան Արաբիան սկսեց օգտագործել սալաֆիականությունը որպես գաղափարական զենք հատկապես Իրանում Իսլամական հեղափոխության հաղթանակից հետո՝ հակադրելով այն սկզբում շիայական Իրանի հսկայական հեղինակությանը, իսկ հետագայում՝ նաև Թուրքիայի աշխարհիկ կաղապարին:

Տարածաշրջանում իրենց ազդեցությունը գերիշխող դարձնելու համար սաուդական իշխանությունները ստիպված եղան շատ ավելի ագրեսիվ քաղաքականություն վարել՝ ծախսելով հարյուրավոր միլիարդներ սալաֆիական քարոզչության համար, ինչն ունեցավ իր արդյունքը և արտահայտվեց սալաֆիների ազդեցության արմատականացմամբ ամբողջ աշխարհում:

Ներկա փուլում կարող ենք արձանագրել, որ սուննիական տարբեր մոդելների պայքարը դարձել է կարևոր գործոն ոչ միայն

Միջին Արևելքում, այլ նաև՝ ամբողջ աշխարհում: Դրանց առաջարկած քաղաքակրթական ծրագրերի մրցակցությունը հատկապես ցայտուն է երևում արաբական աշխարհում տեղի ունեցող իրադարձություններում:

Երկու ծրագրերն էլ՝ Մուսուլման եղբայրների և սալաֆիների, ուղղված են համընդհանուր իսլամական ումմայի վերականգմանը, սակայն բոլորովին տարբեր կերպ են պատկերացնում և՛ այդ իդեալական իրավիճակին հասնելու միջոցներն ու ճանապարհը, և՛ թե հենց ինքը՝ իդեալական ումման ինչպիսին պետք է լինի:

Այս տարաձայնությունները և մրցակցությունը իրենց դրսևորումներն են գտնում ոչ միայն կրոնական, գաղափարական կամ քաղաքական բանավեճերում. համաձայն ԱՄՆ Ռազմական ակադեմիայում իրականացված մի հետազոտության՝ ալ-Կաիդայի կողմից 2004-2008 թթ. իրականացված ահաբեկչական գործողությունների զոհերի 88%-ը մուսուլմաններ են եղել, մեծամասամբ՝ իրաքցիներ, սուննիներ և շիաներ[7]:

Այս տվյալները, ինչպես նաև մի շարք այլ հետազոտություններ ցույց են տալիս, որ Իրաքում, Աֆղանստանում, Եգիպտոսում, Եմենում և այլ մուսուլմանական երկրներում բախումները և ահաբեկչական գործողությունները տեղի են ունենում մի կողմից ծայրահեղականների և իշխանությունների միջև, մյուս կողմից՝ հենց իրենց՝ ծայրահեղականների տարբեր խմբերի միջև:

Միաժամանակ հարկ է նշել, որ այս բոլոր խմբերը գործողություններ են իրականացնում քրիստոնյաների և, ինչպես իրենք են արտահայտվում, «Արևմուտքի և Իսրայելի լրտեսների» դեմ: Այս վերջին խմբին կարող են դասվել ուղղակի աշխարհիկ, ազատական, ժողովրդավարական հայացքներ ունեցող մարդիկ:

*

* *

[7] Տվյալները վերցվել են հետևյալ հրապարակումից՝ Линдгрен Х., Военный репортаж - крупнейшие в мире войны не освещаются в СМИ, http://navoine.ru/mass-media-no-use.html (մուտք՝ 23.01.2013)

Քաղաքակրթական ծրագրերի մրցակցությունը, որը հստակորեն արտացոլվեց հատկապես Սիրիայում և նրա շուրջ կատարվող իրադարձություններում, մեծ նշանակություն ունի ինչպես «մեգատարածաշրջանի»[8], այնպես էլ դրա այն փոքր հատվածի համար, որի մի մաս է կազմում Հայաստանը։ Այստեղ զարգացող գործընթացները և մեր երկրի համար դրանց հետևանքները վերլուծելու և գնահատելու համար՝ անհրաժեշտ է նորից անդրադառնալ այն բոլոր հիմնարար փոփոխություններին, որոնք սկսվեցին Թունիսում տեղի ունեցած իրադարձություններից։

Արաբական երկրների դրամատիկական, իսկ ավելի արդար բնորոշմամբ՝ ողբերգական իրադարձությունների սկզբից ևեթ, տեղեկատվության սպառողների վրա են հորդում ամենակուլ տեղեկատվական հոսքեր, որոնք բազմազան են թե՛ իրենց ժանրային բաղադրիչներով, թե՛ այնպիսի չափանիշներով, ինչպիսիք են օբյեկտիվությունը, լրջությունը, գիտականությունը, իրազեկությունը, կողմնապահությունը և այլն։ Այս խլացնող բազմաձայնության մեջ գրեթե չեն զանազանվում պրոֆեսիոնալ այն հետազոտողների և վերլուծաբանների կարծիքները, որոնք մասնագիտացած են այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են արաբագիտությունը, երկրագիտությունը, իսլամագիտությունը, աշխարհաքաղաքականությունը, ռազմական և էներգետիկ անվտանգությունը և այլն։ Այդ իսկ պատճառով բավականին դժվար է հստակորեն սահմանել պրոֆեսիոնալների մոտեցումների հիմնական սկզբունքը այնպիսի հարցերում, ինչպիսիք են «Արաբական գարուն» կոչվածի պատճառները, յուրահատկությունները, նպատակները, միջոցները և ռեսուրսները[9]։ Սրան գումարվում է նաև այն հանգամանքը, որ

[8] «Մեգատարածաշրջան» տերմինի տակ ենթադրվում է երեք ծովերի համակարգը՝ (Միջերկրական, Սև և Կասպից) այդ ծովերի ավազաններին հարակից բոլոր տարածքների, ծովային և ցամաքային կապուղիների հետ մեկտեղ։

[9] Վաղուց արդեն ակնհայտ է, որ արաբական երկրների իրադարձությունները բոլորովին կապ չունեն գարնան գալստյան զգացումի հետ, քանի որ դրանք

հետազոտողները և վերլուծաբանները նույնպես հայտնվում են իրադարձությունների վայրերից ստացվող հաճախ հակասական և ոչ օբյեկտիվ տեղեկատվության հորձանուտի ազդեցության տակ։

Այնուամենայնիվ, փորձենք առանձնացնել հիմնահարցին նվիրված բազմաթիվ հրապարակումներում, զանազան գիտաժողովների և սեմինարների ամբիոններից բարձրաձայնված մի քանի շարժառիթներ, որոնք սկիզբ դրեցին «Արաբական գարնանը».

1. – Պատճառ՝ որդնած ու կոռումպացված վարչակարգերին այլևս հանդուրժելու անհնարինությունը,

- նպատակներ՝ ժողովրդավարություն, մարդու իրավունքների պաշտպանություն, օրենքի գերակայություն և այլն

- ռեսուրսներ՝ կրթված երիտասարդություն, որը չի կարող հարմարվել իշխող խմբերի ավտորիտարիզմին և կաշառակերությանը, խորը անբավարարվածություն և սոցիալական խմորումներ:

- միջոցներ՝ ինտերնետային և բջջային կապ, տեխնոլոգիաներ, որոնք իրենց արդյունավետությունը ապացուցել են տարբեր «գունավոր հեղափոխությունների» ընթացքում:

2. - Պատճառ՝ համաշխարհային կենտրոնների պայքարն ածխաջրածնային ռեսուրսների համար,

- նպատակներ՝ ամբողջական վերահսկողություն հաստատել նավթի և գազի արդյունահանման և տեղափոխման համակարգի վրա,

- ռեսուրսներ՝ ռազմական և տնտեսական հզորություն, այսպես կոչված «իսլամական աշխարհում», մասնավորապես արաբական երկրներում տեղի ունեցող գործընթացների իմացություն և այդ գործընթացների ճիշտ գնահատում,

- միջոցներ՝ վերոնշյալ գործընթացների իմացությունն օգտագործելու կարողություն, համաշխարհային շահագրգիռ յուրաքանչյուր կենտրոնի ապավինումը տարածաշրջանի ներսում գտնվող համապատասխան ուժերին, դրանց ֆինանսավորումն ու

միլիոնավոր մարդկանց տառապանքի, հազարավոր անմեղ զոհերի, փախստականների հոսքերի, ավերածության պատճառ հանդիսացան։

զինումը: Երկրների ներսում հաստատված հարաբերությունների փլուզում, ստատուս քվոն պահպանող կառույցների քայքայում, կայուն գործոնների թուլացում և այլն:

3. -Պատճառ՝ դեռևս Բուշ ավագի կողմից հռչակված «Նոր համաշխարհային կարգ» ծրագրի իրականացման ձգտումը: Ի տարբերություն նախորդի, այս տարբերակի կողմնակիցները խոսում են ոչ թե տարբեր համաշխարհային կենտրոնների պայքարի մասին, այլ՝ գլխավորապես ԱՄՆ-ի միանձնյա առաջատար լինելու մասին՝ մյուս կենտրոնների ստորադասվելու պատրաստակամության կամ թույլ դիմադրության պայմաններում:

Ընդ որում, նշված վարկածի ենթատարբերակներից մեկը ենթադրում է ոչ թե ԱՄՆ-ի առաջատարությունը, այլ համաշխարհային «ետնաբեմի»՝ անկախ այն բանից, թե ինչպես է այն անվանվում, օրինակ՝ համաշխարհային կառավարություն, Բիլբորդյան ակումբ կամ որևէ այլ նման բան,

- նպատակ՝ համաշխարհային տարածքի, առաջին հերթին Մերձավոր և Միջին Արևելքի տարածաշրջանի հոմոգենացում, որպեսզի ստանդարտիզացվեն օրենքները, հարկերն ու տարիֆները, ինչը կապահովի ֆինանսների, ապրանքների և մարդկանց ազատ և առանց խոչընդոտների տեղաշարժը:

- միջոցներ՝ նախորդ տարբերակում թվարկվածները:

4 - Պատճառ՝ ԱՄՆ-ի և Իսրայելի ձգտումը թուլացնել Իրանի դիրքերը, չեզոքացնել արաբական երկրներին և սպառել դրանց ռեսուրսները,

- նպատակ՝ ապահովել Իսրայելի անվտանգությունը՝ բացառելով հակաիսրայելական իսլամական ճակատի ստեղծման հնարավորությունը,

- միջոց՝ այս վարկածի կողմնակիցների ձևակերպմամբ, «կառավարվող քաոսի» ստեղծում. (իհարկե, թե ինչ է այն նշանակում, բավականին դժվար է հասկանալ նրանց աղոտ հիմնավորումներից. խնդիրն այն է, որ քաոսում գոյություն չունի պատճառահետևանքային կապ, հետևաբար, այն սկզբունքորեն անկառավարելի է):

Գոյություն ունեն նաև այլ տարբերակներ, որոնք նույնպես բավականին հակասական են և ճշմարիտ են միայն առանձին դեպքերի առնչությամբ, և որոնք ապացուցում են, որ իրադարձությունները, որ տեղի են ունենում իրենց բնութագրիչներով (ժողովրդագրություն, տնտեսություն, սոցիալական զարգացում, մշակույթ, կրոն, կրթություն, կոռուպցիա և այլն) տարբեր այնպիսի երկրներում, ինչպես Թունիսը, Լիբիան, Ալժիրը, Եգիպտոսը, Եմենը, Բահրեյնը, Սիրիան, Լիբանանը, հնարավոր չէ բացատրել մեկ համապարփակ մոդելով, և որ այս երկրներից յուրաքանչյուրի նկատմամբ առանձին մոտեցում և վերլուծություն պետք է դրսևորվի՝ ելնելով նրանց բնորոշ առանձնահատկություններից:

Այս ամենի հետ մեկտեղ, հարկ է նշել, որ գրեթե բոլոր վերը նշված մոդելները այս կամ այն չափով ունեցել են իրենց դրսևորումը որպես հիմնական կամ լրացուցիչ գործոններ, որոնք երկու տարի է, ինչ ազդում են պրոցեսների զարգացման վրա:

Վերը նշվածից բխու՞մ է արդյոք այն եզրակացությունը, որ թունիսյան ռեժիմի տապալումով սկիզբ առած այս բոլոր իրադարձությունները չի կարելի դիտարկել որպես մեկ գործընթաց:

Եթե «մեկ գործընթաց» ասելով ի նկատի ունենք, որ թունիսյան իրադարձությունները յուրահատուկ դետոնատորի դեր կատարեցին, որի արդյունքում պայթյունների շարք գրանցվեց մի քանի արաբական երկրների[10]՝ վաղուց արդեն ըմբոստանալու և ընդվզելու պատրաստ հասարակություններում (սրան զուգահեռ մի քանի համաշխարհային և տարածաշրջանային խաղացողներ ներգրավվեցին նմանատիպ իրավիճակների մոդելավորման մեջ), ապա այդպիսի բացատրությունն իմաստ ունի:

Ակնհայտ է, որ շատ արաբական երկրներում առկա հայտնի ժողովրդագրական և տնտեսական խնդիրները դարձան այստեղ գոյություն ունեցող տարաբնույթ լատենտ և ակնառու

[10] Թունիսի և Եգիպտոսի իրադարձությունների հոգեբանական ազդեցությամբ հնարավոր չէ բացատրել Լիբիայում և Սիրիայում տեղի ունեցածը:

կոնֆլիկտների ակտուալացման պատճառ, ինչը զգալիորեն ռադիկալացրեց այդ երկրների ներքին իրավիճակը:[11]

Կուզեի հատուկ ուշադրություն հրավիրել մի շատ կարևոր հանգամանքի վրա, որն իր ազդեցությունն ունի արաբական երկրների իրադարձությունների վրա: Դա արտաքին ուժերի ներգրավվածությունն է այս երկրներում ընթացող ներքին գործընթացներին:

Արաբական երկրներում սկսված գործընթացներում արտաքին գործոնի ակտիվացման մասին դիտորդները խոսեցին Թահրիրի հրապարակը մեկնաբանելիս: Դրան հաջորդեց Սաուդյան Արաբիայի և Ծոցի մի քանի այլ երկրների ռազմաքաղաքական ակտիվ միջամտությունը Բահրեյնի և Եմենի իրադարձություններին: Իսկ Լիբիայում կատարված ռազմական ներխուժումից հետո մի շարք եվրոպական երկրների և ԱՄՆ-ի միջամտությունը ինքնիշխան արաբական պետության ներքին գործերին բացահայտ բնույթ ստացավ: Լիբիան ջախջախվեց, և այսօր կարելի է նշել այն փաստը, որ աշխարհի քաղաքական քարտեզի վրա այս երկիրն արդեն որպես ինքնիշխան միավոր գոյություն չունի:

Ակնհայտ է, որ հենց Լիբիայում սկսվեց իրականացվել վերոնշյալ սցենարներից մեկը՝ ածխաջրածնայինը, որի կենսագործումը թույլ տվեց հանել երկրի ռեսուրսները նրա իշխանությունների վերահսկողությունից, ինչպես նաև պատրաստվել հետագա պայքարին՝ արդեն ալժիրյան գազային պաշարների համար:

[11] Գրեթե բոլոր արաբական երկրներում արձանագրվել է բնակչության շրջանում մինչև 18 տարեկան երիտասարդության գերակշռություն, ինչը առաջնահերթ է դարձնում բազմաթիվ աշխատատեղերի ստեղծման անհրաժեշտությունը, որը պրակտիկորեն անհնար է իրագործել անգամ միջնաժամկետ տեսլականում՝ գրեթե բոլոր երկրներում արդեն առկա աճող գործազրկության պայմաններում: Պետք է նշել նաև համաշխարհային ֆինանսական ճգնաժամի ազդեցությունը, ինչպես նաև ԵՄ երկրների և մի քանի այլ պետությունների՝ արաբական երկրներից միգրացիոն հոսքերի սահմանափակմանն ուղղված միջոցառումների արդյունավետությունը: Այս ամենի մասին շատ է գրվել. այդ իսկ պատճառով զերծ ենք մնում հայտնի փաստերի կրկնությունից:

Հատկապես հետաքրքիր է հետևել տարբեր աշխարհաքաղաքական ծրագրերի դրսևորումներին Սիրիայի իրադարձություններում: Կարծես թե ակնհայտորեն ստուգված սցենար է. երկրում իշխում է ալավիական փոքրամասնությունը (տարբեր տվյալների համաձայն՝ բնակչության 14-21%-ը), բնակչության մեծամասնությունը սուննիներն են, որոնք պետք է որ իրենց ճնշված զգան: Բացի այդ, ալավիների կողմից կառավարվող Սիրիան հանդիսանում է շիայական իսնաաշարիական Իրանի մերձավոր գործընկերը, որը պետք է որ դատապարտելի լիներ Սիրիայի բոլոր սուննի արաբների համար:

Մինչդեռ, իրականում, երկրի ներկայիս ղեկավար Բաշար ալ-Ասադի հայրը՝ Սիրիայի նախորդ նախագահ Հաֆեզ ալ-Ասադը, որ ղեկավարում էր երկիրը 1970 թվականից, կարողացել էր երկրում ապահովել կայունություն, անվտանգություն և տնտեսական ու սոցիալական զարգացման համեմատաբար արագ տեմպեր և այդ աշխարհիկ, բազմազգ և բազմադավան երկրում ստեղծել համակեցության համար բարենպաստ մթնոլորտ:

Բացի այդ, ապավինելով բանակում ու հատուկ ծառայություններում ընդգրկված ալավիներին, նա աստիճանաբար երկրի կառավարման կառույցներում ներգրավել էր բազմաթիվ սուննիների, այդ թվում՝ հինավուրց հեղինակավոր ընտանիքների ներկայացուցիչների, ինչն, անշուշտ, նպաստել էր վարչակարգի սոցիալական բազայի ընդլայնմանը:

Հարկավոր է, սակայն, նկատի ունենալ այս վարչակարգի ավտորիտար բնույթը, որն ավելի էր խորացել Իսրայելի հետ ունեցած մի շարք պատերազմների արդյունքում: Այս իմաստով, հարկ է մտաբերել Գոլանի բարձունքների խնդիրը, խիստ լարված հարաբերությունները Թուրքիայի[12] և Հորդանանի և բարդ հարաբերությունները Ծոցի միապետությունների հետ:

[12] Հարկ է նշել, որ անցյալ դարի 90-ականներից սկսած թուրք-սիրիական երկկողմ հարաբերություններում նկատելի ջերմացում էր արձանագրվել: Ինձ հետ մասնավոր զրույցներում որոշ թուրք բարձրաստիճան դիվանագետներ ու քաղաքական գործիչներ թուրք-սիրիական հարաբերությունների կարգավիճակը

Դարաայում և մի քանի այլ բնակավայրերում սկսված ցույցերն ակնհայտորեն դրսի ուժերի կողմից էին հրահրված, դրանք նախապատրաստվել էին Թուրքիայում և Հորդանանում, ինչն այսօր արդեն ոչ ոք չի հերքում: Այս ցույցերին հետևած զինյալների ահաբեկչական գործողությունները, որոնք վերաճեցին քաղաքացիական պատերազմի, նույնպես նախապատրաստվել էին Թուրքիայի տարածքում և ֆինանսավորվել Անկարայի, Էր-Ռիադի, Դոհայի, ինչպես նաև տարբեր ծայրահեղական սուննիական կազմակերպությունների կողմից:

Բոլորովին միանշանակ չէ Թուրքիայում փախստականների առաջին ճամբարների ի հայտ գալու պատմությունը այն ժամանակ, երբ դեռ չէին սկսվել ռազմական գործողությունները (միայն առանձին հարձակումներ էին տեղի ունեցել ոստիկանական բաժանմունքների և պարետային միավորների վրա): Միանշանակ չէ նաև լավ պատրաստված և զինված ահաբեկիչների խմբերի ներթափանցման փաստը մասնավորապես այն սիրիական շրջաններ, որոնք նախորդ դարի 80-ական թթ.-ի «Մուսուլման եղբայրների» ցույցերը ճնշելուց հետո, հայտնի են որպես սուննիական ֆունդամենտալիստական գաղափարների ամենամեծ ազդեցությունը կրող տարածքներ: Համայի և այլ նմանատիպ քաղաքների ու գյուղերի շատ ընտանիքներ սիրիական մշակութային գիտակցության առումով շատ կարևոր՝ արյան վրեժի պարտավորություն ունեին նաև, ինչը նրանց կառավարության դեմ ուղղված քարոզչության բնական թիրախ էր դարձնում:

Սիրիական իրադարձություններում հստակորեն դրսևորվել են ներգրավված արտաքին խաղացողները, որոնցից յուրաքանչյուրն իր շահն է հետապնդում:

Ցուցարարներին անմիջականորեն զինում, ֆինանսավորում և ապահովում են համալրմամբ Սաուդյան Արաբիան, Կատարը, Թուրքիան, ամենայն հավանականությամբ նաև Միացյալ Արաբական Էմիրությունն ու մի քանի եվրոպական երկրներ,

---

ներկայացնում էին որպես հակասությունների և անգամ պատմական պատճառներ ունեցող տարակարծությունների հաղթահարման օրինակ:

մասնավորապես, Ֆրանսիան: Զորավարժանքների ճամբարները հիմնականում Թուրքիայում են գտնվում: Վերջինիս մասնակցության հիմնական նպատակը սիրիական ապստամբության մեջ ակնայտ է. Դամասկոսում Անկարայից կախվածություն ունեցող սուննիական կառավարություն ստեղծել, որը կրոնական ուղիներով կապված կլինի Թուրքիայի իշխող կուսակցության հետ: Այս նպատակի իրագործումը կապահովի տարածաշրջանում Թուրքիայի դերակատարության աճը, ինչպես նաև կտրուկ կնվազեցնի Իրանի ազդեցությունը, կչեզոքացնի քրդական սպառնալիքը Սիրիայի տարածքից, կարգելափակի սիրիական և թուրքական ալավիների միջև եղած կապուղիները, այլ կերպ ասած, նախապայմաններ կստեղծի, որ Թուրքիան առանձնանա որպես վերտարածաշրջանային մակարդակի խաղացող:

Պրակտիկորեն նույն՝ տարածաշրջանային դերի ապահովմանն ու շիայական ազդեցության նվազեցմանը միտված նպատակներ է հետապնդում նաև Սաուդյան Արաբիան, որի հետաքրքրությունները հակասում են Անկարայի հետաքրքրություններին, քանի-որ սաուդական վերնախավը հիմնվում է սալաֆիների վրա, և հենց նրա մասնակցությամբ է բացատրվում ռազմական գործողություններում տարածաշրջանի տարբեր երկրներից եկած սալաֆիական ուղղության ահաբեկիչների ներգրավվածության աճը:

Պետք է նշել, որ Ծոցի միապետությունները, որոնք վախեցած են Թունիսի և Եգիպտոսի կոռումպացված ռեժիմների տապալումներից, իշխանական ուժերի դեմ ուղղված ռազմական գործողություններում ներգրավված առավել արմատական տարրերին ֆինանսավորելով, լուծում են մեկ այլ խնդիր ևս. ահաբեկիչներին զինելով ու նրանց Թուրքիա տեղափոխելով, նրանք հետևում են ԱՄՆ-ի օրինակին, որը սեպտեմբերի 11-ի ողբերգությունից հետո Իրաքում ստեղծեց յուրատեսակ արգելակ՝ երկիրը վերածելով ԱՄՆ քաղաքացիների անվտանգությանը սպառնացող տարբեր ֆունդամենտալիստական կազմակերպություններին հարող ծայրահեղականների ու

էքստրեմիստների գործողությունների թատերաբեմի: Այլ կերպ ասած, Սիրիան վերածելով մեգատարածաշրջանային ահաբեկչական պոչամբարի՝ Ծոցի երկրները նպաստում են իսլամական արմատականների և ծայրահեղականների, այսպես կոչված տարբեր տիպի ջիհադիստների արտահոսքին այն երկրներից, որոնցում մինչ այդ նկատվել է նրանց ակտիվությունը կամ եղել է ակտիվացման սպառնալիք:

Ի տարբերություն նախկին իրադարձությունների՝ արևմտյան երկրների՝ Սիրիային ուղղված ներկայի գործողությունները բավական զգուշավոր են թվում:

Ակնհայտ է, որ Եգիպտոսի իրադարձությունների զարգացումն ու Կադաֆիի տապալման հետևանքները անհանգստացրել են ԱՄՆ-ին, և ընդհանրապես, ՆԱՏՕ-ի անդամ-երկրներին:[13] Հասարակական-քաղաքական ուսումնասիրությունների ռուսաստանյան կենտրոնի տնօրեն Վ. Եվսեևը, խոսելով ինտերվենցիայի հնարավորության մասին, նշում է. «ՆԱՏՕ-ում չկա մի անդամ-երկիր, որը անհրաժեշտ կհամարի ռազմական գործողություններ սկսել ՍԱՀ-ի դեմ: Նույնիսկ Ֆրանսիան դեռ դրա անհրաժեշտությունը չի տեսնում: Բայց սա չի բացառում դրա իրականացումը ՆԱՏՕ-ի մի խումբ անդամ-երկրների կողմից. կամ էլ հնարավոր է օգնության ցուցաբերումը, առաջին հերթին տեղեկատվական օգնության, եթե Թուրքիան ինքնուրույն ռազմական գործողություն սկսի: Շատ հնարավոր է, որ Լիբիայի բացասական օրինակը լուրջ դաս դարձավ ԱՄՆ-ի համար: Չնայած սիրիական գործերում ներգրավվածությանը՝ Վաշինգթոնում գիտակցում են, որ պատրաստ չեն զինված միջամտության. վերընտրված նախագահ Բարաք Օբաման դեմ է ռազմական միջամտությանը: Արդյունքում, ԱՄՆ-ի վարչակազմը զերծ կմնա

[13] Տե՛ս Stewart S., The Consequences of Intervening in Syria, http://www.stratfor.com/weekly/consequences-intervening-syria (մուտք՝ 31.01. 2013).

սիրիական հակամարտության մեջ իր անմիջական մասնակցությունից»։[14]

Միանգամայն ակնհայտ է, որ Իրանը, լինելով Սիրիայի ամենամոտ դաշնակիցը, գործընթացներից դուրս մնալու ոչ մի հնարավորություն և ցանկություն չունի։ Իրաքից ամերիկյան ուժերի դուրս բերումից հետո, Իրանի ազդեցությունը Բաղդադում կտրուկ աճել է, ինչը Թեհրանին թույլ է տալիս ապավինել այն հանգամանքին, որ իր վարած քաղաքականությունը աջակցություն կստանա ողջ այսպես կոչված շիայական գոտում (Իրան, Իրաք, Սիրիա, Լիբանան)։

Ակնհայտ է, որ ՄԱԿ-ի պատժամիջոցների, ԱՄՆ-ի և Իսրայելի՝ Իրանի միջազգային մեկուսացմանն ուղղված ջանքերի ֆոնին Իրանը չի կարող իրեն թույլ տալ կորցնել վերոհիշյալ աշխարհաքաղաքական դերակատարությունը:

Այս իրավիճակը անհանգստություն և զայրույթ է առաջացնում ոչ միայն ԱՄՆ-ի և ԱՄՆ-ի եվրոպական դաշնակիցների շրջանում, այլ նաև բոլոր սուննիական երկրներում, մասնավորապես՝ Թուրքիայում, Եգիպտոսում, Սաուդյան Արաբիայում և Կատարում։ Հենց Բահրեյնի՝ շիայական համակարգին միանալու հնարավորությունից անհանգստանալու պատճառով է բացատրվում Էր–Ռիադի վճռական օգնությունը այդ երկրի սուննի ղեկավարներին։

Իրանը Սիրիային աջակցում է բոլոր հնարավոր միջոցներով, այդ թվում նաև աջակցություն է ցուցաբերում Սիրիայի կառավարությանը բոլոր միջազգային կազմակերպություններում, երկկողմ և բազմակողմ բանակցությունների ձևաչափերում, ինչպես նաև հանդես է գալիս Չինաստանի և Ռուսաստանի հետ համատեղ միջազգային միավորումների ստեղծման նախաձեռնություններով՝ որպես այլընտրանք միջազգային ասոցիացիաներ ստեղծելու Ֆրանսիայի, Թուրքիայի, Կատարի և Սաուդյան Արաբիայի նախաձեռնություններին:

---

[14] Евсеев В., Внешние силы в сирийском конфликте, http://iran.ru/news/analytics/85118/Vneshnie_sily_v_siriyskoy_konflikte (մուտք՝15.01.2013).

Թեհրանը նաև ռազմական և ֆինանսական աջակցություն է ցուցաբերում:

Ինչպես վերջերս հաղորդեց «Washington Post-ը», Իրանը և լիբանանյան Հիզբալլահ շարժումը Սիրիայում ստեղծել են ռազմականացված «Ջայշ աշ–Շաաբի» կազմավորում, որն իր գործողությունները պետք է կոորդինացնի սիրիական բանակի հետ և ուղղված լինի զինված ապստամբների ոչնչացմանը:[15]

Ինչպես նշվում է հոդվածում, Սիրիայում գործում են ավելի քան հիսուն հազար իշխանամետ զինված աշխարհազորայիններ, որոնք օգտվում են Իրանի աջակցությունից: Նրանք Իրանից ֆինանսական աջակցություն և զենք են ստանում:

Ինչպես բազմիցս տեղեկացրել են տարբեր արևմտյան աղբյուրները, Իրանը սիրիական աշխարհազորայիններին նախապատրաստելու համար Սիրիա է ուղարկում հրահանգիչների էլիտար ռազմական միավորումից՝ Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսից, բայց պաշտոնական Թեհրանը կտրականապես հերքում է ԻՀՊԿ-ի զինծառայողների ներկայությունը Սիրիայի տարածքում:

Չինաստանը, որ ածխաջրածնի անընդհատ աճող պահանջարկ ունի և իր արագ զարգացող տնտեսության պահանջները բավարարելու համար օգտագործում է ինչպես Իրանի սեփական պաշարները, այնպես էլ նրա տարանցիկ հնարավորությունները (մուտք դեպի Ծոց), նույնպես բացարձակ հետաքրքրված չէ Իրանի թուլացմամբ և արևմտյան կամ արևմտամետ երկրների՝ Սիրիայի վրա ամբողջական վերահսկողության սահմանմամբ: Չինաստանը նույնպես չինական աշխարհընկալման տեսանկյունից բոլոր հնարավոր միջոցներով աջակցություն է ցուցաբերում Սիրիայի իշխանամետ ուժերին:

[15] DeYoung K., Warrick J., Iran and Hezbollah build militia networks in Syria in event that Assad falls, officials say, Washington Post, http://articles.washingtonpost.com/2013-02-10/world/37026054_1_syrian-government-forces-iran-and-hezbollah-president-bashar, (մուտք՝ 11.02.2013).

Ռուսաստանի համար, որն ունի ավանդական բարեկամական հարաբերություններ Դամասկոսի հետ, ալավիական ռեժիմի աջակցությունը ակնհայտ աշխարհաքաղաքական նշանակություն ունի: Ռուսաստանը երեք անգամ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում օգտագործել է իր վետոյի իրավունքը՝ Սիրիայի նկատմամբ պատժամիջոցների սահմանումը կասեցնելու համար: Ռուս դիվանագետները և ռազմական խորհրդականները ամեն ինչ անում են սիրիական իշխանություններին աջակցելու համար:[16]

Հարկ է նշել, որ բացի վերը նշված երկրներից, շատ այլ երկրներ կա՛մ աջակցում են սիրիական կառավարությանը և կտրականապես դեմ են ռազմական միջամտությանը, օրինակ՝ Բրազիլիան, Հնդկաստանը, Հարավային Աֆրիկան, կա՛մ էլ բարյացկամ չեզոքության քաղաքականություն են որդեգրել:

*

* *

Անդրադառնանք արաբական երկրների իրադարձությունների՝ Հայաստանի վրա ունեցած հետևանքներին:

Մեր երկիրը արդեն այդ իրադարձությունների անմիջական ազդեցությունը զգացել է: Սիրիայի հայ համայնքից տաս հազարից ավել փախստական է եկել Հայաստան: Հայաստանում ներկայումս բնակվող սիրիահայերի թիվը դժվար է ճշտել, քանի որ նրանցից շատերը ունեն նաև ՀՀ քաղաքացիություն և մինչև վերջին շրջանի տագնապալի իրադարձությունները մեր երկրում ձեռք էին բերել անշարժ գույք:

Մեր երկիրը, ունենալով լուրջ տնտեսական խնդիրներ և դրա հետ կապված նաև սոցիալական լարվածություն, այնուամենայնիվ, պարտավոր է ընդունել և բավարարել փախստականների կարիքները, որոնք Սիրիայում կորցրել են իրենց ողջ ունեցվածքը:

[16] Քանի որ Սիրիայի շուրջ ձևավորված իրավիճակի վերաբերյալ Ռուսաստանի քաղաքականության մասին շատ է գրվել, մենք այս հարցի ուսումնասիրության վրա կանգ չենք առնի:

Մյուս խնդիրը, որը կարող է ծառանալ Հայաստանի առջև, իր վերջին «Another Regional War in the Wings» հոդվածում նկարագրել է Ամերիկյան արտաքին քաղաքականության խորհրդից Ի. Վեյն Մերին[17]: Նա գրում է. «Այս հակամարտությունների տիրույթում, որ ձգվում է Սիրիայից մինչև Աֆղանստան, տեղակայված է մեկ այլ պատերազմ, որ սպասում է իր արթնության ժամին՝ Լեռնային Ղարաբաղը: Այս բանավեճը, ամենայն հավանականությամբ, նախագահ Օբամայի արտաքին քաղաքականության նոր խմբի խնդրո առարկան կլինի, ուզեն դա նրանք, թե չուզեն»: Այնուհետև, հեղինակը համառոտ ներկայացնում է հակամարտության զարգացման պատմությունը, որն ավարտվեց հրադադարի համաձայնագրով, նշում է նոր պատերազմին պատրաստվելու ընթացքում սպառազինությունների մրցավազքը, Թուրքիայի հովանավորությունը Ադրբեջանին և Հայաստանի ու Ռուսաստանի ռազմական միությունը, Ռ. Սաֆարովի ներման փաստը, ռևանշիստական տրամադրությունների սրացումը և նկատում, որ եթե հրադադարի համաձայնագրի ստորագրումից հետո ընկած ժամանակահատվածը կարելի է բնութագրել որպես հետպատերազմյան շրջան, ապա այսօր ժամանակահատվածը նախապատերազմյան է:

Վերլուծելով բանակցային գործընթացի իրավիճակը, որտեղ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների շարքում Թուրքիան բացակայում է, նա գրում է. «Դիվանագիտական բալանսում բացակայող տարրը Թուրքիան է, որին Ռուսաստանի դերի հետ համեմատելի քաղաքական դեր է հարկավոր, Անկարան և Մոսկվան միայն միասին աշխատելով կարող են ետ պահել իրենց «կլիենտներին» նոր պատերազմներից և նրանց ստիպել իրական բանակցություններ վարել»:[18]

[17] Wayne Merry E., Another Regional War in the Wings. The National Interests, http://nationalinterest.org/commentary/another-regional-war-the-wings-8042, (մուտք՝ 31.01. 2013).

[18] Հեղինակը հաշվի չի առնում, որ, առաջին հերթին, հայ ազգի պատմական փորձը, Թուրքիայի՝ Օսմանյան կայսրությունում իրագործված Հայոց ցեղասպանության չճանաչումը Թուրքիային բացարձակ անընդունելի միջնորդ է

Մոսկվան և Անկարան ԼՂ-ի հարցում տարբեր մոտեցումներ ունեն, սակայն Սև ծովի, կովկասյան և կասպյան հարցերում նրանց տեսակետները համընկնում են. բացի այդ, երկու երկրներն էլ ցանկանում են խուսափել պատերազմից։ «Դժբախտաբար, այսօր Թուրքիան այնքան է կենտրոնացել իր հարավային սահմանի վրա, որ բավարար ուշադրություն չի դարձնում արևելքից մեծացող վտանգին»։[19]

Ակնհայտ է, որ ոչ միայն այն հանգամանքը, որ Թուրքիան գտնվում է մերձավորարևելյան ճահճում և ստիպված է այստեղ պաշարներ և էներգիա կորցնել, (որն այս երկրի իսլամիստ ղեկավարների տեսակետից պետք է ուղղված լիներ «զրո խնդիրներ հարևանների հետ» քաղաքականության իրականացմանը և մուսուլմանական աշխարհում առաջնորդի դեր ստանձնելուն), այլև մեգատարածաշրջանում լարվածության և բռնության ընդհանուր աճը, Իրանի նկատմամբ իրականացվող ճնշումները, Աֆղանստանում շարունակվող պատերազմը, աշխարհի այս մասի ընդհանուր սոցիալ-տնտեսական իրավիճակի վատթարացումը, տարածաշրջանի ընդհանուր մթնոլորտը պայթյունավտանգ են դարձրել:

Հարկ է նշել, որ սալաֆիական քարոզչության հաջողությունը, նրա կողմից սիրիական պատերազմում մասնակցելու համար զինակոչվող երիտասարդների քանակը, այն մարտական փորձը, որը նրանք ձեռք են բերում ներկայումս, հետագայում սպառնալիք են դառնալու թե՛ մեր երկրի համար, և թե՛ Հյուսիսային Կովկասում զարգացող գործընթացների տեսանկյունից, ինչը նույնպես բացասական հետևանքներ կարող է ունենալ ՀՀ-ի համար:

դարձնում Հայաստանի համար, և երկրորդը՝ Թուրքիան և Ռուսաստանը ղարաբաղյան հակամարտության մեջ հավասարահեռ խաղացողներ չեն:

[19] Wayne Merry E., Another Regional War in the Wings. The National Interests, http://nationalinterest.org/commentary/another-regional-war-the-wings-8042, (մուտք՝ 31.01. 2013).

«ՇԻԱՅԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ» «ԱՐԱԲԱԿԱՆ ԳԱՐՆԱՆ» ԵՎ ԴՐԱՆ ՀԱՋՈՐԴԱԾ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Տաթևիկ Մկրտչյան

Այսպես կոչված «Արաբական գարուն»-ը և դրան հաջորդած իրադարձությունները ողջ աշխարհի ուշադրությունը սևեռեցին Միջին Արևելքի տարածաշրջանի վրա: Այս իրադարձությունների վերաբերյալ համաշխարհային տեղեկատվական գրոհից բացի իրականացվել են նաև բազմաթիվ հետազոտություններ և ուսումնասիրություններ՝ անդրադառնալով տարբեր երկրներում իրադարձությունների այս կամ այն ընթացքին, դրդապատճառներին, ներքին և արտաքին տարբեր ուժերի և խմբավորումների՝ այդ իրադարձություններում ներգրավվածությանը և արձագանքներին, ինչպես նաև այդ երկրների առաջ ծառացած մարտահրավերներին: Մեզ հետաքրքրում է «շիայական գործոնի» դերը «Արաբական գարնան» իրադարձություններում: «Շիայական գործոն» ասելով՝ մենք ի նկատի ունենք «Արաբական գարնան» և դրան հաջորդած իրադարձություններում շիայական համայնքների, շիայական գաղափարախոսության, շիայական կամ հակաշիայական քարոզչության, իսնաաշարիական Իրանի այս կամ այն ներգրավվածության և այլ դրսևորումներ: Մի տեղում շիայական գործոնը դրսևորվում է որպես շիա բնակչության իրական բողոք, մեկ այլ տեղում՝ պարզապես հակաշիայական քարոզչություն, մի ուրիշում՝ արևմտյան կամ արտաքին այս կամ այն ուժերի շահերի հակասությունների պատճառ և այլն: Ընդհանրապես պետք է նշել, որ «Արաբական գարնան» իրադարձություններում կրոնական գործոնը նկարագրելիս վերլուծությունները տարբեր մոտեցումներ են ներկայացնում. «Արաբական գարունը»՝ որպես սուննիական երևույթ[1], և «Արաբական գարունը»՝ որպես սուննի-շիա

[1] Մի շարք վերլուծություններ «Արաբական գարունը» համարում են սուննիական երևույթ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ «գարունը» գալիս է միայն սուննիների համար, և համաշխարհային տեղեկատվական դաշտը ողողվում է

բազմադարյա հակասությունների ակտուալացում: Գործնականում, սակայն, այս երկու մոտեցումներն էլ աղերսներ ունեն իրականության հետ: Քանի դեռ արաբական երկրներում արաբ էթնիկական ինքնությունն էր կենտրոնականը աշխարհիկ կառավարման համակարգի պայմաններում՝ կրոնական համայնքները ավելի անտեսված էին, և նրանց միջև տարբերությունները չէին շեշտվում: Իսկ «Արաբական գարնան» արդյունքում իսլամական ուժերի քաղաքականության առաջին պլան մղվելով՝ կրոնական տարբերությունները կրկին կարևորություն են ստանում և կենտրոնական դիրք սկսում զբաղեցնել «Արաբական գարնանը» հաջորդած իրադարձություններում[2]:

Հատկապես հետաքրքրական է այն հանգամանքը, որ ընդհանուր համատեքստում շիայական համայնքները կամ շիայական շրջանակները, այս կամ այն կերպ մինչ օրս չկարողացան միանալ «արաբական գարնան» «հաջողությամբ պսակված ճամբարին»: Իհարկե, պետք է նշել, որ նրանց «անհաջողությունները» տարբեր երկրներում տարբեր պատճառներ և տարբեր խոչընդոտներ ունեն: «Արաբական գարնան» առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ շիայական համայնքները տարբեր երկրներում անկախ նրանից իշխանական թևի ներկայացուցիչներ են, թե՛ ընդդիմության, մեծամասնություն են, թե՛ փոքրամասնություն, միևնույն է «Արաբական գարնան» մյուս երկրների սուննիական մեծամասնության պես իրենց գործողությունների համար հավանություն չեն ստանում Արևմուտքի կամ, այսպես կոչված, «միջազգային հանրության» կողմից:

Շիա-սուննի հակասությունների համատեքստում կտեսնենք նաև որոշակի արևմտյան դիրքորոշումներ և արձագանքներ

Արևմուտքի կողմից խրախուսվող սուննիական հաջողությունների մասին լուրերով:

[2] Barry Rubin, Sunni Versus Shia: The Middle East's New Strategic Conflict, January 5, 2012, http://www.gloria-center.org/2012/01/sunni-versus-shia-the-middle-easts-new-strategic-conflict/ (մուտք՝ 11.04.13):

արաբական մի շարք երկրներում տեղի ունեցող իրադարձություններին, որոնց հիմքում ընկած են սեփական արևմտյան շահերն ու հետաքրքրությունները[3]: Իհարկե, չընկնելով կոնսպիրոլոգիական թակարդը, կարելի է այս ամենը հասկանալ նաև որպես մի մեծ աշխարհաքաղաքական համատեքստի մաս, որն ուղղված է տարածաշրջանում իրավիճակը փոխելուն:

Հոդվածում անդրադարձ է կատարվում «Արաբական գարնան» գործընթացներին մասնակցած շիայական համայնքներին, շիայական գործոնի այս կամ այն դրսևորմանը տարբեր երկրներում: Մեր հոդվածի շրջանակներում մենք կանդրադառնանք այն երկրներում տիրող իրադարձություններին, որտեղ շիայական գործոնն իր տարբեր դրսևորումներով ունի իր դերակատարությունը: Դրանք են՝ Լիբանանը, Իրաքը, Սիրիան, ինչպես նաև Ծոցի մի շարք երկրներ, մասնավորապես՝ Սաուդյան Արաբիան, Բահրեյնը, Եմենը, Քուվեյթը և Կատարը, որտեղ շիայական համայնքները և շիայական գործոնը որոշակի ներգրավվածություն ունեն հետ-«արաբական գարնան» իրադարձություններում[4]: Մինչ առանձին-առանձին երկրներում տիրող իրավիճակը ներկայացնելը, նպատակահարմար ենք համարում որոշ ժողովրդագրական տվյալներ ներկայացնել սուննի-շիա բնակչության համամասնության մասին «Արաբական գարնան» ներկա և հավանական ուղեծրում գտնվող երկրներում, քանի որ շիայական համայնքների աշխարհագրությունը պայմանավորում է նաև քաղաքական իրադարձությունների որոշակի տրամաբանություն և ցույց է տալիս, թե իրադարձությունների որ շարանն է պայմանավորված շիայական գործոնով:

---

[3] Jeremy Salt, Containing the “Arab Spring”, *Interface: a journal for and about social movement, Volume 4 (1): 54 - 66 (May 2012),* http://www.interfacejournal.net/wordpress/wp-content/uploads/2012/05/Interface-4-1-Salt.pdf (մուտք՝ 18.04.13):

[4] Առանձին անդրադարձ չի կատարվում Իրանի Իսլամական Հանրապետությանը: Դրա մասին տես Գևորգյան Աննայի «Իրանական արձագանքները «Արաբական գարնանը»» հոդվածը սույն ժողովածուում՝ էջ. 51-76:

Մենք օգտվել ենք Pew Research Center-ի իրականացրած հետազոտության[5] արդյունքներից, որոնք ներկայացնում են աշխարհում բնակվող շիա բնակչության մասին առավել հավանական տվյալներ: Զեկույցը կոչվում է «Քարտեզագրելով աշխարհի մուսուլման բնակչությանը. զեկույց աշխարհի մուսուլման բնակչության քանակի և տեղաբաշխվածության վերաբերյալ»: Այն ներկայացնում է վերջին տվյալները (2009 թ.) աշխարհում բնակվող մուսուլման բնակչության քանակի, բաշխվածության, ինչպես նաև իսլամական այս կամ այն հոսանքին պատկանելության վերաբերյալ: Հետազոտության ընթացքում համապարփակ ժողովրդագրական ուսումնասիրություն է անց կացվել ավելի քան 200 երկրներում, որի արդյունքում պարզ է դարձել, որ **2009թ տվյալներով աշխարհի 6,8 միլիարդ բնակչությունից 1,57 միլիարդը մուսուլմաններ են, ինչը կազմում է աշխարհի բնակչության 23 տոկոսը[6]:**

Հետազոտությունը ցույց է տալիս նաև, որ թեև մուսուլմանների 60 տոկոսը բնակվում է Ասիա մայրցամաքում և միայն 20 տոկոսը՝ Մերձավոր Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում, սակայն Մերձավոր Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում ավելի շատ են այն երկրները, որտեղ մուսուլմանները բնակչության մեծամասնությունն են կազմում: Այս տարածաշրջանի ավելի քան 20 երկրում բնակչության 95 տոկոսը մուսուլմաններն են: 300 միլիոն մուսուլմաններ կամ աշխարհի մուսուլմանների մեկ հինգերորդը բնակվում է այն երկրներում, որտեղ իսլամը բնակչության մեծամասնության կրոնը չէ: Իհարկե, այս մուսուլման փոքրամասնությունները շատ հաճախ մեծ թիվ են կազմում իրականում: Այսպես օրինակ Հնդկաստանը մուսուլմանների մեծաքանակության առումով աշխարհում երրորդն է, թեև մուսուլմանները Հնդկաստանում կրոնական փոքրամասնություն են համարվում: Չինաստանում ավելի շատ

[5] Mapping the Global Muslim Population: A Report on the Size and Distribution of the World's Muslim Population, *Pew Research Center*, October 2009, http://www.pewforum.org/Mapping-the-Global-Muslim-Population.aspx, (մուտք՝ 19.04.13)

[6] Նույն տեղում. էջ 1-2:

մուսուլմաններ կան, քան Սիրիայում, իսկ Ռուսաստանում ավելի շատ մուսուլմաններ կան, քան Հորդանանի և Լիբիայի մուսուլմանները միասին վերցված:

Աշխարհի մուսուլման բնակչության 10-13 տոկոսը շիաներն են, 87-90 տոկոսը՝ սուննիներ: Ըստ վերոնշյալ զեկույցի՝ աշխարհում բնակվում է 154-200 միլիոն շիա բնակչություն: Ընդ որում շիաները մեծամասնություն են կազմում հետևյալ չորս երկրներում՝ Իրան՝ (90-95%), Ադրբեջան՝ (65-75%), Բահրեյն՝ (65-75%) և Իրաք՝ (65-70%)[7]:

Զեկույցում ընդգրկված աղյուսակներից մեկը ներկայացնում է այն երկրների ցանկը, որտեղ բնակչության 100.000-ից ավելին շիա է և միևնույն ժամանակ դա տվյալ երկրի մուսուլման բնակչության մեկ տոկոսից ավելին է: Աղյուսակում ընդգրկված չեն այն երկրները, որտեղ շիաների քանակը պակաս է երկրի բնակչության մեկ տոկոսից: Ստորև ներկայացնում ենք այդ աղյուսակը[8].

100.000 և ավելի շիա բնակչություն ունեցող երկրների ցանկը

Երկիր	2009թ տվյալներով շիա բնակչության թիվը	Շիա բնակչության մոտավոր թվաքանակը (տոկոսներով)	Տոկոսը աշխարհի բնակչության թվաքանակում
Իրան	66-70 միլիոն	90-95	37-40
Պակիստան	17-26 միլիոն	10-15	10-15
Հնդկաստան	16-24 միլիոն	10-15	9-14
Իրաք	19-22 միլիոն	65-70	11-12
Թուրքիա	7-11 միլիոն	10-15	4-6
Եմեն	8-10 միլիոն	35-40	մոտ 5
Ադրբեջան	5-7 միլիոն	65-75	3-4

[7] Mapping the Global Muslim Population: A Report on the Size and Distribution of the World's Muslim Population, Pew Research Center, October 2009, http://www.pewforum.org/Mapping-the-Global-Muslim-Population.aspx, Շինաների մասին տվյալները տես՝ էջ 8-11, (մուտք՝ 19.04.13):

[8] Նույն տեղում, էջ 10:

Աֆղանստան	3-4 միլիոն	10-15	մոտ 2
Սիրիա	3-4 միլիոն	15-20	մոտ 2
Սաուդյան Արաբիա	2-4 միլիոն	10-15	1-2
Նիգերիա	<4 միլիոն	<5	<2
Լիբանան	1-2 միլիոն	45-55	<1
Տանզանիա	<2 միլիոն	<10	<1
Քուվեյթ	500000-700000	20-25	<1
Գերմանիա	400000-600000	10-15	<1
Բահրեյն	400000-500000	65-75	<1
Տաջիկստան	~400000	~7	<1
ԱՄԷ	300000 – 400000	~10	<1
ԱՄՆ	200000 – 400000	10-15	<1
Օման	100000 – 300000	5-10	<1
Մեծ Բրիտանիա	100000 – 300000	10-15	<1
Բուլղարիա	~100,000	10-15	<1
Կատար	~100,000	~10	<1

Փաստորեն, տարածաշրջանի ժողովրդագրական տվյալները ցույց են տալիս, որ «Արաբական գարնան» ուղեծրում գտնվող երկրների մեծ մասում մեծամասնություն են կազմում սուննիները: Այս տվյալների համաձայն՝ Իրանից բացի, շիաները մեծամասնություն են կազմում միայն Իրաքում և Բահրեյնում: Ուստի շիայական գործոնը այս երկու երկրներում ակտուալ է շիա բնակչության մեծամասնության տեսանկյունից, սակայն տարբեր դիրքերից. Իրաքում՝ որպես գործող իշխանություն, որն ունի խնդիրներ երկրում էթնո-կրոնական այլ տարրերի հետ, մասնավորապես՝ քրդերի և սուննիների, իսկ Բահրեյնում՝ լինելով

մեծամասնություն, ղեկավարվում և ճնշումների է ենթարկվում սունnի փոքրամասնության կողմից:

«Արաբական գարունը» շիաներին, անկախ նրանից, մեծամասնություն են, թե փոքրամասնություն, հնարավորություն տվեց ոտքի կանգնել և պահանջել քաղաքական ազատություններ և քաղաքացիական իրավունքներ այն երկրներում, որտեղ նրանք ունեն իրավունքների սահմանափակումներ և որոշակի դժգոհություններ և իրենց «հեղափոխական» գործողություններով փորձում են ձեռք բերել իրենց իրավունքների և/կամ ազատությունների ապահովում:

Մյուս կողմից, շիայական գործոնը կրոնաքաղաքական բլոկներ[9] կազմելու տեսանկյունից դիտարկելիս՝ Իրանի դերը դառնում է կենտրոնական, որի հետ միասին շիայական գոտի են կազմում Իրաքը, (որը, սակայն, բազմաթիվ ամերիկյան[10] և արևմտյան վերլուծությունների համաձայն՝ վերջին միջկրոնական բախումների և լարվածությունների արդյունքում սահմանափակումներ և խոչընդոտներ պետք է հաղթահարի Իրանի ազդեցության գոտու մաս մնալու համար)[11], Սիրիան և Լիբանանը (Հիզբուլլահ): Իսկ Բահրեյնը, հաշվի առնելով մի շարք

[9] Ընդհանրապես ամերիկյան բանակի՝ Իրաքից դուրս գալուց հետո շիայական ընդհանուր գոտու մաս են համարվում Իրանը, Իրաքը, Սիրիան, Հիզբուլլահ կազմակերպությունը (Լիբանան), ինչը միշտ էլ բացասական և վտանգավոր երևույթ է ընկալվել թե՛ արաբական երկրների և թե՛ Արևմուտքի կողմից:

[10] Հատկապես նման վերլուծություններով են հանդես գալիս ամերիկյան Արտաքին Հարաբերությունների Խորհրդի (Council on Foreign Relations (CFR)) փարձագետների հրապարակումները, և/կամ հարցազրույցներն ու կարծիքները Տես՝ Douglas A. Ollivant, Renewed Violence in Iraq, Contingency Planning Memorandum No. 15, http://www.cfr.org/iraq/renewed-violence-iraq/p28808 (մուտք 02.04.13); Iraq's Worsening Situation, Interview with Ned Parker, Baghdad Correspondent, Los Angeles Times, May 3, 2013, http://www.cfr.org/iraq/iraqs-worsening-situation/p30625 (մուտք 05.05.13); Andrea Palatnik, Issue Guide: Iraq Invasion Ten Years After, March 14, 2013, http://www.cfr.org/iraq/issue-guide-iraq-invasion-ten-years-after/p30196 (մուտք 18.03.13):

[11] Նաև կարելի է հիշատակել մի հանգամանք ևս, որ իրանա-իրաքյան հարաբերությունների սերտացմանը խոչընդոտում է նաև իրանա-իրաքյան երկարատև պատերազմի հիշողությունը:

աշխարհաքաղաքական իրողություններ առնվազն չի եղել իրանական/շիայական գոտու մաս[12]:

Շիայական համայնքների իրավիճակը և նրանց մասնակցությունը այս գործընթացներում շիայական գոտուց դուրս՝ Արաբական ծոցի երկրներում, շիայական գործոնի մեկ այլ դրսևորում է գրանցում: Այստեղ հակաշիայական քարոզչությունը մեծապես օգտագործվում է սուննիական իսլամիստական շրջանակների կողմից սեփական նպատակներին հասնելու համար. այն է՝ իրենց երկրներում հեղափոխական/բողոքական իրավիճակի հանդարտեցում՝ շիայական գաղափարախոսության/իրանական ազդեցության տարածման վտանգի չափազանցեցման միջոցով բողոքի վեկտորը շիաների դեմ ուղղելով[13]:

Այժմ ներկայացնենք յուրաքանչյուր երկրում առանձնահատկությունները[14], կարևոր իրադարձությունների ժամանակագրությունը[15] և ներկա իրավիճակը:

Սաուդյան Արաբիա

Սաուդյան Արաբիան տարածաշրջանի կարևորագույն խաղացողներից մեկն է և աշխարհում երկրորդ ամենամեծ

[12] Թեև իրանական կողմը այլ կարծիք ունի Բահրեյնի հարցի վերաբերյալ:

[13] Այս մասին տես՝ Barah Mikail, Sectarianism after the Arab Spring: an Exaggerated Spectre, Policy brief, No 131, June 2012, FRIDE, http://www.isn.ethz.ch/isn/Digital-Library/Articles/Special-Feature/Detail/?lng=en&id=161041&contextid774=161041&contextid775=161035&tabid=1454206054 , (մուտք 15.04.13):

[14] Մենք ելնում ենք այն մոտեցումից, որ «Արաբական գարնան» դրսևորումները յուրաքանչյուր երկրում ունեն բնութագրիչների (ժողովրդագրություն, տնտեսություն, սոցիալական պայմաններ, մշակույթ, կրոնական տարբեր համամասնություններ, կրթական տարբեր համակարգեր, կոռուպցիա և այլն) յուրահատուկ ցուցանիշներ, և մոտեցման ընդհանրական մոդել կիրառել դրանց համար ճիշտ չի լինի:

[15] Նշենք, որ «Արաբական գարնան» 2010 թ. դեկտեմբեր, 2011-2012 թթ ժամանակագրության մասին տվյալների աղբյուր է հանդիսացել անգլիական The Guardian թերթի օնլայն տարբերակը, որտեղ ինտերակտիվ տարբերակով կա «Արաբական գարնան» իրադարձությունների ժամանակացույցը՝ ըստ երկրների: Arab spring: an interactive timeline of Middle East protests, http://www.guardian.co.uk/world/interactive/2011/mar/22/middle-east-protest-interactive-timeline (մուտք 15.04.13):

արաբական երկիրը (Ալժիրից հետո): 2013թ մարդահամարի տվյալներով բնակչությունը 26 միլիոն է, որից 5.5 միլիոնը օտարերկրացիներ են[16]: Հետաքրքրական է, որ ԱՄՆ-ի Կենտրոնական հետախուզական գործակալության տվյալների բազայում Սաուդյան Արաբիայի բնակչության կրոնական պատկանելության բաժնում նշված է 100 տոկոս մուսուլման[17]: Սա այն պարզ պատճառով, որ Սաուդյան Արաբիան կրոնական պատկանելության վերաբերյալ հարցում չի անում մարդահամարի ժամանակ, սակայն, ոչ պաշտոնական տվյալներով, բնակչության 85-90 տոկոսը սուննի է, իսկ 10-15 տոկոսը՝ մոտավորապես 2-4 միլիոն շիաներ[18]: Սաուդյան Արաբիայի՝ որպես տարածաշրջանի կարևորագույն խաղացողի գործողությունները հետաքրքրական են տարբեր տեսանկյուններից, սակայն մեզ համար առավել կարևոր է հակաշիայական քարոզչության տարածումը:

Մինչ սաուդական հակաշիայական քարոզչամեքենայի գործելակերպի մասին խոսելը, համառոտ ներկայացնենք, թե երբ և ինչ միջոցներ է ձեռնարկել Սաուդյան Արաբիան երկրում «Արաբական գարնան» ալիքի կանխման համար:

Սաուդյան Արաբիայում նույնիսկ հեղափոխական տրամադրությունների ոչ այդքան ընդգծված լինելու պայմաններում սաուդյան իշխանությունները ձեռնարկեցին կանխարգելիչ հակահեղափոխական քայլեր՝ վախենալով «Արաբական գարնան» ալիքից:

---

[16] Այս տվյալները վերցված են ամերիկյան Կենտրոնական հետախուզության գործակալությունից, https://www.cia.gov/library/publications/the-world-factbook/geos/sa.html (մուտք՝ 01.05.13): Սակայն անհրաժեշտ է նշել, որ Սաուդյան Արաբիայի բնակչության մասին տվյալները տարբեր են. օրինակ Սաուդյան Արաբիայի 2010 թ. մարդահամարի տվյալները ներքոհիշյալ կայքում ներկայացվում է որպես 27 միլիոնից ավելի: http://www.saudigazette.com.sa/index.cfm?method=home.regcon&contentID=2010112487888&archiveissuedate=24/11/2010 (մուտք՝ 15.05.13):

[17] ԱՄՆ Կենտրոնական հետախուզության գործակալության տվյալների բազա, Սաուդյան Արաբիայի բաժին, https://www.cia.gov/library/publications/the-world-factbook/geos/sa.html (մուտք՝ 22.04.13):

[18] Al-Shi'a fi Al-Saudiya. min al-Tahmish ila al-ihtiwa, http://arabic.cnn.com/2007/middle_east/3/8/shiite-saudi/ (մուտք՝ 01.05.13):

Ընդհանրապես Ծոցի արաբական հարուստ երկրներում «Արաբական գարնան» ալիքի կանխման նպատակով սոցիալ-տնտեսական ոլորտում կանխարգելիչ տարբեր քայլեր են իրականացվել, ինչպես օրինակ, սոցիալ-տնտեսական. նպաստների տրամադրում բնակչությանը կամ պարզապես տնտեսության մեջ մեծ գումարների ներդրում:

2011թ փետրվարին մինչ Սաուդյան Արաբիայի տարբեր քաղաքներում և հատկապես նավթային պաշարների կենտրոնը համարվող և շիաներով բնակեցված Արևելյան նահանգի քաղաքներում կսկսվեին բողոքի ակցիաները, Սաուդյան միապետությունը 130 միլիարդ ԱՄՆ դոլար է տրամադրում քաղաքացիական ծառայողների աշխատավարձերի համար (վճարելով աշխատավարձի երկու ամիս հավելավճար), միաժամանակ խոստանալով կառուցել 500.000 նոր բնակարան ցածր եկամուտներ ունեցողների համար և մեծացնելով կրոնական կազմակերպությունների ֆինանսավորումը[19]: 2011 թ. մարտ ամսին Սաուդյան միապետը այս քայլով կարծես փորձում էր կանխել հնարավոր տնտեսական և սոցիալական բողոքների ալիքը:

[19] Այս մասին տես՝ Neil MacFarquhar. "Saudi Cash is the Key to Quiet in the Kingdom," The International Herald Tribune (June 10, 2011), p. 4, Steffen Hertog, The Costs of Counter Revolution in the GCC, *The Middle East Channel,* 31 May 2011, http://mideast.foreignpolicy.com/posts/2011/05/31/the_costs_of_counter_revolution_in_the_gcc (մուտք՝ 02.05.13):
Այստեղ հետաքրքրական է մեջբերել նաև մի հետաքրքիր ժողովրդագրական և ֆինանսական հաշվարկ, ըստ որի՝ Սաուդյան Արաբիայի բնակչության աճը քսան տարվա ընթացքում կրկնապատկվելու է, և Սաուդյան Արաբիայի ներկա տեմպերով ռեսուրսների սպառումը չի կարողանալու լուծել երկրի առջև ծառացած խնդիրները տարիներ անց, ի տարբերություն Կատարի՝ որի հնարավորությունները թույլ են տալիս ներկա ֆինանսատնտեսական քաղաքականության իրականացումը, որն արդյունավետ կլինի նաև քսան տարի անց: տես SilviaColombo, The GCC Countries and the Arab Spring. Between Outreach, Patronage and Repression, IAI Working Papers 1209, March 2012, Instituto Affari Internazionali, http://www.iai.it/pdf/DocIAI/iaiwp1209.pdf, (մուտք՝ 05.05.13):

Համաշխարհային լրատվամիջոցները ողողվեցին 2011 թ. մարտի 14-ին սաուդական զորքերի[20] Բահրեյն մուտքի մասին տեղեկություններով և վերլուծություններով: Կարևորն այն է, որ գրեթե ամենուրեք կարելի էր հանդիպել այդ ամենի հակաշիայական կամ հակաիրանական լինելու վերաբերյալ մտքեր: Ինչպես մարտի 15-ին «Ռոյթերս» գործակալությանը ասել էր Բահրեյնի մի ցուցարար (Ալի Սուհայր). *«Մա տարածաշրջանային ծրագիր է, և նրանք ուղղակի կռվում են մեր հողերի վրա: Եթե ամերիկացիները տղամարդ լինեին, կգնային և կկռվեին իրանցիների դեմ ուղղակի և ոչ թե մեր երկրում»*[21]:

Սաուդյան Արաբիայի իշխանությունները «Արաբական գարունը» օգտագործեցին սուննի-շիա բաժանումը և նրանց միջև եղած հակասությունները ավելի խորացնելու համար[22]: Ներքոհիշյալ հոդվածում Լոնդոնի համալսարանի պրոֆեսոր Մադաուի ալ-Ռաշիդը բացատրում է, թե ինչպես Մարտի 11-ի «Ցասման օրվա» ցույցերի լոզունգները սաուդյան իշխանությունները ներկայացրեցին իբրև շիայական դավադրություն սուննի մեծամասնության նկատմամբ՝ այդ ամենի նպատակը համարելով իրանական ազդեցության մեծացումը սուննիական հայրենիքում[23]: Փաստորեն, դրանով ռեժիմը ավելի է ուժեղացնում միջկրոնական լարվածությունը՝ միևնույն ժամանակ նսեմացնելով մի շարք քաղաքներում երիտասարդական շարժումների ջանքերը և նշանակությունը:

---

[20] Հետաքրքրական է, որ զորքերի թվաքանակի և երկրների մասնակցության մասին տեղեկությունները տատանվում են 1000-2000 միջև տարբեր տեղեկատվական աղբյուրներում:

[21] Thousands protest against Saudi troops in Bahrain, 15.03.11 http://www.reuters.com/article/2011/03/15/us-bahrain-protests-embassy-idUSTRE72E4X720110315 (մուտք 15.04.13):

[22] Այս մասին առավել մանրամասն տես՝ Madawi Al-Rasheed, Sectarianism as Counter-Revolution: Saudi Responses to the Arab Spring, Studies in Ethnicity and Nationalism: Vol. 11, No. 3, 2011, pp 513-526 http://onlinelibrary.wiley.com/doi/10.1111/j.1754-9469.2011.01129.x/pdf (մուտք՝ 11.05.13):

[23] Նույն տեղում՝ էջ 520:

Սաուդյան իշխանությունները չափազանցնում են տարածաշրջանում իրանական նվաճողական ծրագրերը և շիայական ազդեցության հնարավոր աճի մասին տեղեկությունները ընդհանրապես Արաբական աշխարհում, և հատկապես Սաուդյան Արաբիայում և Ծոցի երկրներում:

Նրանք մի կողմից աջակցում են «Արաբական գարնան» ջատագովներին այն վայրերում, որտեղ իրենց շահերը համընկնում են և դուրս են գտնվում իրենց արեալից[24], քանի դեռ «Արաբական գարունը» չի հասել Սաուդյան Արաբիա, իսկ մյուս կողմից հետևում են, որ տարածաշրջանում տեղի ունեցող փոփոխությունները ոչ մի կերպ չուժեղացնեն Իրանի դիրքերը և չփոփոխեն ուժերի հարաբերակցությունը ի օգուտ Իրանի՝ այս հարցում օգտագործելով շիա-սուննի տարբերությունների և հակասությունների վրա հիմնված քաղաքականությունը: Այս տեսանկյունից տարածաշրջանում տեղի ունեցող իրադարձությունների տրամաբանությունը որոշակիորեն կարելի է հասկանալ: Սիրիայում թուլացնելով Իրանի դաշնակից Բաշար ալ-Ասադի իշխանությունը՝ Սաուդյան Արաբիան կարող է ուժեղացնել Սիրիայում և Լիբանանում իր ազդեցությունը, մեծապես աջակցելով և ֆինանսավորելով Հիզբուլլահի դեմ գործող խմբավորումներին. հայտնի է, որ սաուդցիները ֆինանսավորում են Լիբանանում սուննիական համայնքը առաջնորդող Հարիրիի ընտանիքին[25]:

---

[24] Հետաքրքրական վերլուծություն է արել Սիլվիա Կոլոմբոն, որը Ծոցի երկրները և «Արաբական գարունը» վերնագրով իր հոդվածում, որտեղ Սաուդյան Արաբիայի գործողությունները նկարագրում է «երկակի ստանդարտների» հասկացության կիրառմամբ երեք տարբեր հարթություններում՝ ներսը ընդդեմ դրսի, միապետությունները ընդդեմ հանրապետությունների, սուննիները ընդդեմ շիաների: Այս մասին առավել մանրամասն տես՝ Silvia Colombo, The GCC Countries and the Arab Spring. Between Outreach, Patronage and Repression, IAI Working Papers 1209, March 2012, Instituto Affari Internazionali, http://www.iai.it/pdf/DocIAI/iaiwp1209.pdf, (մուտք՝ 05.05.13):

[25] Ward Vloeberghs, The Hariri Political Dynasty after the Arab Spring, Mediterranean Politics, Vol. 17, No. 2, p. 241-248, July 2012, http://www.academia.edu/1771526/ The_Hariri_Political_Dynasty_after_the_Arab_Spring (մուտք՝ 08.05.13):

Բաշար ալ-Ասադի կողմից պաղեստինյան Համաս խմբավորմանն ուղղված աջակցությանը վերջ դնելու դեպքում Սաուդյան Արաբիան կրկին կարող է շահեկան իրավիճակում հայտնվել՝ կրկին թուլացնելով Սիրիայի և հատկապես Իրանի ներգրավվածությունը և ազդեցությունը Պաղեստինում:

Մի խոսքով, սաուդական սալաֆիական քարոզչամեքենան և գործելաոճը ամեն կերպ սրում են սուննի-շիա հակասությունները և հրահրում բախումներ շիաների և սուննիների միջև:

Բահրեյն

Բահրեյնը համարվում է «Արաբական գարնան» յուրահատուկ դեպքերից: Բահրեյնի թագավոր Համադ ալ-Խալիֆան համարվում է Արևմուտքի կարևորագույն դաշնակիցներից մեկը: Նախ, այստեղ է «հյուրընկալվում» Ամերիկյան հինգերորդ նավատորմը: Երկրորդ, Բահրեյնը նաև կարևոր կապող օղակ է դիտարկվում Պարսից ծոցի նավթային ռեսուրսների հասանելիության ապահովման հարցում և, որի պահպանությունը ամերիկյան ջանքերի արդյունք է[26]: Բահրեյնը նաև տարածաշրջանային ուժային կենտրոն է և մերձավորարևելյան նավթային կարևորագույն արդյունահանող Սաուդյան Արաբիայի մերձավոր դաշնակիցը: Բահրեյնում Ծոցի այլ երկրների խնդիրներից բացի՝ աղքատություն, կոռուպցիա, աճող գործազրկության ֆոնին երիտասարդների թվաքանակի աճ և այլն, կա նաև շիայական մեծամասնության գործոնը: Այս երկրում սուննի փոքրամասնությունը ղեկավարում է շիա մեծամասնությանը (65-75 տոկոս):

Բահրեյնում 2011թ. փետրվարի 14-ին[27]՝ «Ցասման օրով»[28] սկսված «Արաբական գարունը» երկու տարի անց հանգեցնում է 55

[26] Joost R. Hiltermann, Pushing for Reform in Bahrain, Washington's Leverage Over the Khalifa Regime, September 7, 2011, Foreign Affairs, http://www.crisisgroup.org/en/regions/middle-east-north-africa/iraq-iran-gulf/bahrain/hiltermann-pushing-for-reform-in-bahrain.aspx (մուտք՝ 12.05.13):

[27] Ի դեպ, նույն օրը թունիսյան և եգիպտոսյան իրադարձություններից ազդված բողոքի ակցիաներ տեղի ունեցան նաև Իրանում և Եմենում՝ ի հակազդեցություն իշխանությունների կողմից բողոքի հավաքների արգելմանը:

հոգու սպանության[29], որոնցից վերջինը 16 ամյա պատանիի սպանությունն էր 2013 թ. ապրիլի 14-ին մայրաքաղաք Մանամայի արևմուտքում գտնվող շիա մեծամասնություն ունեցող Դիի գյուղում[30]:

Ընդհանրապես, Բահրեյնում տեղի ունեցած բողոքի ակցիայի հիմքում ընկած էին Բահրեյնի բնակչության շիա մեծամասնության իրավունքների ավելացման կամ հավասարեցման և քաղաքական ազատությունների ապահովման պահանջները, քանի որ իրականում շիաները չեն կարողանում քաղաքացիական ծառայողական ոլորտում աշխատանք գտնել կամ չեն կարող լինել ոստիկանության կամ բանակի մաս և այլ սահմանափակումներ:

Փետրվարի 17-ին Մանամայի հրապարակում տեղի ունեցան բախումներ ցուցարարների և ոստիկանների միջև, որը հայտնի է «Արյունոտ հինգշաբթի» անվամբ: Բողոքի ակցիաները շարունակական բնույթ էին կրում:

Բահրեյնում կարևոր է նաև հասկանալ ընդդիմադիր շիաների շրջանում եղած հակասությունները: Բահրեյնի ընդդիմադիրները միատարր և միակարծիք չեն: Օրինակ, «Ուաֆաք» ընդդիմադիր շիայական կուսակցությունը և մի շարք այլ շիայական կուսակցություններ բանակցում են սուննի իշխանությունների հետ, մինչդեռ կան շիայական ծայրահեղ տրամադրություններով խմբավորումներ, որոնք դեմ են երկխոսությանը՝ համարելով, որ

[28] Բահրեյնում «Արաբական գարունը» սկսվում է փետրվարի 14-ին շիաների կազմակերպած միտինգով, որը հայտնի է որպես «Ցասման օր»: Այն կազմակերպվել էր երկրի շիա մեծամասնության դեմ սուննի փոքրամասնության կողմից ճնշումների և անհավասարությունների դեմ բողոքի լոզունգների ներքո: Օրը պատահական չէր, 2001 թ. այդ օրը թագավոր ալ-Խալիֆան առաջ էր քաշել «Ազգային գործողությունների խարտիա» փաստաթուղթը, որով վերջ էր տրվում 90-ական թթ ներքաղաքական խռովություններին, միևնույն ժամանակ 2002 թ. սահմանադրության ընդունման օրն էր:

[29] Ըստ Բահրեյնի արդարության և զարգացման շարժման տեղեկատվության՝ որտեղ կան ըստ օրերի մահացածների անուն ազգանունները, մահացածների թիվը հասնում է 97-ի: տես՝ http://www.bahrainjdm.org/78-killed-since-14th-february-2011/ (մուտք՝ 22.05.13):

[30] Teenager killed in Bahrain clashes, 14 Feb 13, http://www.express.co.uk/news/world/377653/Teenager-killed-in-Bahrain-clashes (մուտք՝ 15.03.13):

երկխոսությունը չի թուլացնի ներկա իշխանություններին և չի ստիպի նրանց կատարել իրենց պահանջները: Ընդդիմությունը բնականաբար պահանջում է, որ իշխանությունները վերանայեն կառավարության կազմում և ռազմական գլխավոր պաշտոններում շիաներին չընդգրկելու հարցը: Սակայն վերոնշյալ պահանջներով բողոքի ակցիաները փորձեցին արմատախիլ անել Սաուդյան Արաբիայի կողմից Բահրեյն զորք մտցնելով, որի իրական նպատակը ներկա սուննի կառավարությանը պաշտպանելն էր, ինչը բխում է ոչ միայն Ասաուդյան Արաբիայի շահերից, այլև ԱՄՆ-ի: Իսկ Սաուդյան իշխանությունները Բահրեյն զորք մտցնելը համարեցին Բահրեյնի շիաների գործողություններում իրանական ազդեցության մեծացման և Իրանի ներգրավվածության վտանգները չեզոքացնելուն միտված գործողություն[31]:

Քուվեյթ

«Արաբական գարնան» ուղեծրում գտնվող երկրներից է նաև Քուվեյթը: Մոտավորապես 3,6 միլիոն բնակչություն ունի, որից երկու երրորդը օտարերկրացիներ են և չունեն քաղաքացիություն: Այստեղ շիա քաղաքացիների թվաքանակի հետ կապված բազմաթիվ թվեր կարելի է հանդիպել՝ 20-40 տոկոս: Կան հրապարակումներ[32] և տվյալներ, որ ցեղային բնակչության մեծ մասը թաքցնում է իր շիա լինելու հանգամանքը, օգտվելով շիայական իսլամում «թակիյա»-ի[33] իրավունքից՝ հաշվի առնելով

[31] Այս մասին տես՝ W. Andrew Terill, The Saudi-Iranian Rivalry and the Future of Middle East Security, http://www.isn.ethz.ch/isn/Digital-Library/Articles/Special-Feature/Detail/?lng=en&id=162538&tabid=1452396487&contextid774=162538&contextid775=142831 (մուտք՝ 18.05.13):

[32] “The actual percentage of Kuwaiti Shiites is 40 percent”, compiled by Zaki Taleb, http://www.arabtimesonline.com/NewsDetails/tabid/96/smid/414/ArticleID/144073/reftab/69/Default.aspx (մուտք՝ 10.05.13):

[33] «Թակիյա»-ն արաբերեն տերմին է, որը հատուկ է շիայական իսլամին: Այն թույլ է տալիս շիա հավատացյալին թաքցնել իր կրոնական պատկանելությունը, եթե վտանգված է իր կամ այլ մուսուլմանների կյանքը կամ գտնվում են ճնշումների և հետապնդման մեջ: Շիաները պատմության ընթացքում տարբեր քաղաքական միավորների կազմում փոքրամասնություն լինելով և շատ անգամներ

երկրում հակաշիայական մոտեցումները: Օրինակ, բազմաթիվ են այն ոլորտները, որտեղ եթե անձը շիա է, ապա հնարավորություն չունի զբաղեցնելու այս կամ այն պաշտոնը: Չնայած այս ամենին՝ ԱՄՆ Պետդեպարտամենտի Համաշխարհային կրոնական ազատությունների 2010 և 2011թթ. միջազգային զեկույցներում կրոնական տարբեր խմբավորումների պատկանելության հարցը երկրի քաղաքական կյանքի մասնակցության տեսանկյունից՝ որպես կարևոր խնդիր, չի նշվում, և փաստորեն շիաների նկատմամբ խտրականությունը լուրջ խնդիր չի դիտարկվել[34]: Սակայն հետաքրքրական է, որ «Արաբական գարնան» իրադարձություններից հետո 2012թ զեկույցը արդեն բազմաթիվ դեպքեր է գրանցում շիայական գաղափարախոսության ազատությունների սահմանափակումների մասին[35]: Խնդիրներ կան նաև կրոնական ազատությունների մեկ այլ չափանիշի՝ մզկիթներ ունենալու մասով. 1100 սուննիական մզկիթների կողքին կա ընդամենը 35 շիայական մզկիթ[36]:

Սակայն, իրականում, Քուվեյթում իրադարձությունները սրվեցին 2011 թ. նոյեմբերին, երբ ցուցարարները հարձակվեցին

հետապնդումների և ճնշումների ենթարկվելով սուննիների կողմից՝ օգտագործել են թակիյան՝ որպես պաշտպանական միջոց:

[34] 2010թ Համաշխարհային կրոնական ազատությունների զեկույցը տես՝ http://www.state.gov/documents/organization/171738.pdf (մուտք՝ 10.05.13), իսկ 2011թ-ի զեկույցը՝ http://www.state.gov/documents/organization/193105.pdf (մուտք՝ 10.05.13):

[35] Տես 2012թ Համաշխարհային կրոնական ազատությունների զեկույցը: http://www.state.gov/documents/organization/208610.pdf (մուտք՝ 22.05.13):

[36] Համաշխարհային կրոնական ազատությունների 2010թ զեկույցում նշվում է, որ շիայական համայնքները բողոքներ և խնդիրներ ունեն շիայական մզկիթների փոքրաթվության առումով, միևնույն ժամանակ երկրի իշխանությունները թույլ չեն տալիս նոր մզկիթներ կառուցել, և որ 2001թ-ից մինչև հիմա իշխանությունները թույլ են տվել կառուցել 6 նոր շիայական մզկիթ, որից հետո շիայական մզկիթների ընդհանուր թիվը կազմում է 35: Մինչդեռ շիաները քիչ թիվ չեն կազմում երկրի մշտական բնակչության կազմում, և դրան ավելանում են նաև ժամանակավոր շիայական համայնքը (մոտ 150000): Այս մասին առավել մանրամասն տես 2010թ Համաշխարհային կրոնական ազատությունների զեկույցում՝ http://www.state.gov/documents/ organization/171738.pdf (մուտք՝ 10.05.13):

խորհրդարանի շենքի վրա՝ բողոքելով երկրում բարձրաստիճան պաշտոնյաների կոռումպացված լինելու դեմ: Քուվեյթի իշխանությունները հրամայեցին ավելի կտրուկ քայլեր ձեռնարկել անվտանգության ապահովման համար՝ անհրաժեշտության դեպքում նույնիսկ ձերբակալություններ իրականացնելով:

Էմիր Շեյխ Սաբահ ալ-Ահմեդ աս-Սաբահը այս ցույցերը որակեց վտանգավոր երկրի «անվտանգության և կայունության» համար և հրամայեց ավելի խիստ պատասխան տալ նման քաոտիկ իրավիճակներում[37]:

Նոյեմբերի 28-ին տեղի ունեցան հսկայածավալ բողոքի ակցիաներ, որտեղ հիմնականում պահանջում էին վարչապետի հրաժարականը, որին մեղադրում էին մեծ կոռուպցիոն սկանդալի մասնակից լինելու մեջ: Այս բողոքները համարվում են կարևոր, քանի որ դրանց առաջին անգամ մասնակցում էին հիմնական ցեղախմբերի առաջնորդները:

2012 թ. փետրվարին կայացած խորհրդարանական ընտրություններում հաղթանակ տարան ընդդիմադիր իսլամիստները: Նրանք առաջ քաշեցին մի քանի պահանջներ՝ շարիաթը դարձնել բոլոր օրենքների հիմք, մահվան դատապարտել Ալլահին անարգողներին և թույլ չտալ որևէ քրիստոնեական եկեղեցու կառուցում[38]:

2012 թ. նոյեմբերին արդեն Քուվեյթի թագավոր շեյխ Սաբահ ալ-Ահմեդ աս-Սաբահը ստիպված էր քայլեր ձեռնարկել պահպանելու թագավորության կայունությունն ու

---

[37]Տեղեկատվությունը Քուվեյթյան իրադարձությունների մասին վերցված է Քուվեյթի պաշտոնական լրատվական գործակալությունից և անգլիական The Guardian թերթի օնլայն կայքից, որտեղ ինտերակտիվ տարբերակով կա «Արաբական գարնան» իրադարձությունների ժամանակացույցը՝ ըստ երկրների: Arab spring: an interactive timeline of Middle East protests, http://www.guardian.co.uk/world/interactive/2011/mar/22/middle-east-protest-interactive-timeline (մուտք 15.04.13)

[38] Այս մասին տես՝ Doug Bandow, The Arab Spring Comes To Kuwait: Will Democracy Arrive And Liberty Thrive?, http://www.forbes.com/sites/dougbandow/2012/12/10/the-arab-spring-comes-to-kuwait-will-democracy-arrive-and-liberty-thrive/ (մուտք՝ 21.04.13):

անվտանգությունը: Դրա համար նա ձեռնարկեց մի շարք սոցիալ-տնտեսական խրախուսական միջոցառումներ՝ սնունդի կտրոնների ավելացում, ֆինանսական օժանդակություններ և բողոքի որոշակի/սահմանափակ տարբերակների ընդունում[39]:

Սակայն իրավիճակը կրկին սրվեց այս ընտրությունների չեղյալ հայտարարելուց հետո և ընտրական օրենսգրքում արված փոփոխությունները հանգեցրեցին 2012 թ. նոր ընտրությունների նախաշեմին ընդդիմադիրների բոյկոտին՝ դրանով կասկածի տակ դնելով քուվեյթյան համեմատաբար ազատական քաղաքական համակարգը:

Սակայն քուվեյթյան իրադարձությունները կարելի է բնութագրել ընդդիմադիր լիդերներից մեկի՝ Մուսալլամ ալ-Բարաքի խոսքերով. *«Այսօրվա պայքարը պայքար է իշխանության համար: Արդյոք իշխանությունը, ինչպես որ սահմանված է սահմանադրության մեջ պատկանում է ժողովրդին, թե դրան հակառակ՝ Էմիրին: Մարդիկ կասկածի տակ չեն դնում աս-Սաբահ ընտանիքի՝ երկիրը կառավարելու իրավունքը, սակայն աս-Սաբահ ընտանիքը թույլ չի տալիս ժողովրդին կառավարել պետությունը և օգտվել դրա հարստությունից: Վերջում Քուվեյթի բնակիչներն են հաղթող լինելու»*[40]:

Եմեն

Եմենը համարվում է արաբական երկրներից ամենաաղքատը, որի 23 միլիոն բնակչության մոտ կեսը ապրում է օրական 2 դոլարից քիչ գումարով, իսկ մեկ երրորդը տառապում է խրոնիկական հիվանդություններով[41]: Եմենում անընդհատ աճում է գործազրկությունը՝ աճող երիտասարդության ֆոնին և նվազող նավթային ու ջրային պաշարների պայմաններում: Այդ ամենին

[39] Այս մասին տես՝ Paul McGeough, Kuwait may write Arab Spring's next chapter, November 29, 2012, http://www.smh.com.au/world/kuwait-may-write-arab-springs-next-chapter-20121128-2aedg.html (մուտք՝ 25.04.13):

[40] Նույն տեղում:

[41] Tom Finn, Yemenis take to the streets calling for President Saleh to step down, The Guardian, Thursday 27 January 2011, http://www.guardian.co.uk/world/2011 /jan/27/yemen-protests-president-saleh (մուտք՝ 28.04.13)

զումարվում է նաև Հարավային և Հյուսիսային Եմենների[42] միջև անընդհատ լարվածությունը և այլն:

Եմենը Արաբական ծոցի միակ երկիրն է, որտեղ վերլուծվող իրադարձությունների արդյունքում տեղի է ունեցել իշխանության փոփոխություն:

«Արաբական գարնան» առաջին ցույցերը Եմենում սկսվեցին 2011թ. հունվարի 27-ին, երբ երիտասարդները և ընդդիմադիր ակտիվիստները պահանջեցին Ալի Աբդուլլահ Սալեհի հրաժարականը:

Եմենում բողոքի ալիքը հիմնականում ուներ սոցիալ-տնտեսական պատճառներ՝ աղքատության բարձր ցուցանիշը[43], գործազրկության ամենամեծ տոկոսը տարածաշրջանի երկրներում՝ մոտ 40 տոկոս, հակակոռուպցիոն տրամադրություններ և քաղաքական բարեփոխումների անհրաժեշտության սպասումներ և ակնկալիքներ: Հիշենք, որ նույն ամսվա սկզբին Եմենի խորհրդարանը հաստատել էր սահմանադրական փոփոխությունը, որով վերացնում էին նախագահության ժամկետների սահմանափակությունը, ինչը Սալեհին թույլ կտար շարունակել մնալ իշխանության գլխին 2013թ-ից հետո, երբ ավարտվում էր իր ժամկետը: Բողոքի ցույցերը շարունակական էին: Փետրվարի 23-ին իշխանական և հակաիշխանական ցույցերի բախման արդյունքում երկու ընդդիմադիր է սպանվում Սանայի համալսարանի շրջակայքում:

2011 թ. նոյեմբեր ամսին նախկին նախագահ Սալեհը, որը 32 տարի է իշխում էր Եմենում, հրաժարական տվեց՝ Ծոցի արաբական երկրների կողմից առաջարկած անցումային ծրագրին համաձայնելով: Համաձայն այդ ծրագրի՝ ընտրությունները տեղի ունեցան 2012 թ. փետրվարին, որոնց արդյունքում Սալեհի

---

[42] Եմենի Հարավը 1990 թ. սկզբերին միացվել է Հյուսիսիային Եմենին, սակայն մինչ օրս տեղի չի ունեցել այդ երկուսի որպես մեկ միավորի ձևավորումը: Հարավային Եմենը իր Ադեն կենտրոնով շարունակում է հուսալ, որ մի օր կառանձնանա Հյուսիսային Եմենից:

[43] Լոզունգներից մեկը, որ կարելի էր տեսնել այս օրերին հետևյալն էր. «Տեսե՛ք աղքատների և հարուստների միջև եղած անդունդը»:

փոխնախագահ Աբեդ Ռաբբո Մանսուր Հադին դարձավ բազմաթիվ խնդիրներով լի այս երկրի անցումային փուլի լիդերը: Կարելի է ասել, որ այս քայլով կանխվեց քաղաքացիական պատերազմը Եմենում, սակայն այս անցումային շրջանը նույնպես բարդ է: Նախ նախկին նախագահ Սալեհի կուսակցականները շարունակում են մեծամասնություն կազմել խորհրդարանում, և նրան լոյալ բազմաթիվ մարդիկ շարունակում են ռազմական և անվտանգության ապարատներում դիրքեր և պաշտոններ զբաղեցնել: Սրանից բացի, այսպես կոչված «ազգային երկխոսությունը», որը պետք է սկսվեր 2012 թ. վերջում, սկսվեց միայն 2013 թ. սկզբին, որի արդյունքները դեռ պարզ չեն: Մի շարք հարցեր, ինչպես օրինակ, սահմանադրական և ընտրական իրավունքների մշակման հարցը մնում է օրակարգում. հիմնաքարային հարցեր պետության բնույթի (նախագահական, թե խորհրդարանական) վերաբերյալ պետք է քննարկվեն և լուծումներ ստանան[44]:

Կատար

Կատարը Արաբական ծոցի այն երկներից է, որը «Արաբական գարնան» իրադարձություններում դառնում է կարևոր խաղացող, և ոչ այնքան իր երկրի ներսում ընթացող իրադարձությունների տեսանկյունից, այլ «Արաբական գարնան» մաս կազմող երկրների իրադարձությունների մասնակցության տեսանկյունից: Կատարը համարվում է աշխարհում ամենահարուստ երկիրը ՀՆԱ-ի ցուցանիշով, որը կազմում է 88,22 ԱՄՆ դոլար[45]: Չնայած, որ Կատարը փոքր տարածք է զբաղեցնում (11500 մ^2), և քաղաքացիների համեմատաբար փոքր թվաքանակ (ընդամենը 300.000[46]) ունի, նրա ներգրավվածությունը «Արաբական գարնան»

[44] Այս մասին տես՝ Yemen's political transition reaches tipping point, 21.01.13,http://www.dw.de/yemens-political-transition-reaches-tipping-point/a-16523986 (մուտք 15.04.13):

[45] Beth Greenfield, The World's Richest Countries, 2.22.12, http://www.forbes.com/sites/bethgreenfield/2012/02/22/the-worlds-richest-countries/ (մուտք՝ 02.04.13):

[46] Տարբեր տվյալների համաձայն՝ Կատարի ներկա բնակչությունը (քաղաքացիներ և ոչ քաղաքացիներ) 1,5 միլիոնից տատանվում է մինչև 2 միլիոն:

իրադարձություններում և հատկապես Լիբիայի և Սիրիայի հարցում բավականին մեծ է: Կատարը այն երկիրն է, որը Լիբիայի ռազմական գործողություններին է մասնակցել՝ ԱՄՆ-ի, Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի հետ, և որը հակասիրիական տրամադրություններ է տարածում Արաբական պետությունների լիգայում և պարբերաբար պահանջում է ռազմական ներխուժում Սիրիա[47]: Արաբական գարնան իրադարձություններում, ինչպես և Սաուդյան Արաբիան, Կատարը նույնպես աջակցում ու ֆինանսավորում էր տարբեր սուննիական իսլամիստական խմբավորումներին՝ դրանով իսկ բարձրացնելով իր տարածաշրջանային դերը:

Լիբանան

Լիբանանյան իրադարձությունները «Արաբական գարնան» համատեքստում մի քանի առանձանահատկություններ ունեն: Նախ 1975-90թթ քաղաքացիական պատերազմի հիշողությունները շատ թարմ են, և քաղաքական ուժերը և բնակչությունը մի փոքր զգուշավոր են: Երկրորդ, 2005թ Լիբանանում տեղի ունեցած իրադարձությունները ներլիբանանյան դիսկուրսում երբեմն համարվում են անկյունաքարային և հիմք «Արաբական գարնան» համար, ինչը վերջ դրեց երկրում 30-ամյա սիրիական ազդեցությանը: Մյուս կողմից, ներլիբանանյան հիզբուլլահական շրջանակներն էլ մեկ այլ հարթությունում են տեսնում լիբանանյան ազատագրումը: 2013թ մայիսի 25-ին Հիզբուլլահի առաջնորդ Հասան Նասրալլահը Իսրայելի ռազմական հեռացման 13-ամյակի տոնակատարությունների ժամանակ խոստանում է մեկ այլ հաղթանակ[48]: Հետաքրքրական է, որ Լիբանանում ներկայում

[47] Կան տեսակետներ, որ Սաուդյան Արաբիան Կատարի միջոցով է իրականացնում իր ձգտումները Սիրիայում՝ ինքը մնալով ետնաբեմում:

[48]Միևնույն ժամանակ հեռուստատեսային իր ելույթում նա նշում է, որ այսօր Լիբանանում կա երկու վտանգ՝ Իսրայելը և սուննի սալաֆիական զինված խմբավորումները, որոնք կռվում են Սիրիայի իշխանությունների դեմ: Ավելի մանրամասն տե՛ս՝ Hezbollah chief promises “victory» in Syria conflict, May 25, 2013, http://www.globalpost.com/dispatch/news/afp/130525/hezbollah-chief-promises-

«Արաբական գարունը» դիտարկվում է միջնորդավորված սիրիական իրադարձություններով, քանի որ Լիբանանյան ներքաղաքական իրավիճակի փոփոխությունը շատերը պայմանավորում են նաև Սիրիայում իրավիճակի անկայունությամբ և դրանից բխող հետևանքներով: Իրականում Լիբանանում միշտ փորձել են պահել կրոնաքաղաքական տեսանկյունից ուժային հավասարակշռություն, և ներկայում Սիրիայի դեպքերը հաշվի առնելով, որը համարվում է Իրանի հետ միասին լիբանանյան Հիզբուլլահ շիայական ռազմական միավորի և նաև քաղաքական կուսակցության հիմնական հոգաբարձուն[49], հավանական է թվում այդ հավասարակշռության խախտման ձգտման փորձերը արտաքին խաղացողների ռազմավարական հաշվարկների տեսանկյունից[50]: Հատկապես, եթե հաշվի առնենք, որ Հիզբուլլահի առաջնորդի ելույթից մեկ օր անց, մայիսի 26-ին արդեն երկու ռազմական հարված է եղել Բեյրութի հարավային արվարձաններում՝ որտեղ էլ գտնվում են Հիզբուլլահի ռազմական ուժերը, որոնք աջակցում են Սիրիայում Բաշար ալ-Ասադին[51]: Նույն տեղեկատվության մեջ արդեն նշվում է, որ Լիբանանի երկրորդ քաղաք Տրիպոլիում նույնպես սկսվել են զինված բախումներ պրո-ասադական ալավիների և պրո-սուննի ապստամբ մուսուլմանների միջև, և որ մեկ շաբաթվա ընթացքում արդեն 30 մարդ է սպանվել:

victory-syria-conflict-1; Nasrallah: we cannot side with the beheaders in Syria, May 25, 2013, http://english.al-akhbar.com/node/15903/ (մուտք՝ 27.05.13)

[49] Այստեղ մենք չենք անդրադառնում Հիզբուլլահի գործունեությանը Լիբանանում, քանի որ այդ մասին շատ է գրվել:

[50] Հատկապես, եթե հաշվի առնենք ԱՄՆ-ի, Իսրայելի և Սաուդյան Արաբիայի ցանկությունները Լիբանանում սուննիական ազդեցության ուժեղացման ձգտումները, հատկապես 2012թ Հարիրի իշխանության թուլացումից հետո:

[51] Սիրիայում արդեն երկու տարի տևած իրադարձություններում սա առաջին անգամն էր, որ ռազմական հարձակում եղավ Լիբանանի հարավային հիզբուլլահական ազդեցության գոտի համարվող շրջանների վրա: Այս մասին տես՝ Two rockets aimed at Hizbollah area of Beirut leaves at least four people wounded, May 26, 2013 http://www.telegraph.co.uk/news/worldnews/middleeast/lebanon/10081209/Two-rockets-aimed-at-Hizbollah-area-of-Beirut-leaves-at-least-four-people-wounded.html (մուտք՝ 27.05.13):

Ինչպես և Սիրիայում, հաշվի առնելով Լիբանանի կրոնաքաղաքական ժողովրդագրական տվյալները[52] ներլիբանանյան իրավիճակն էլ շատ հեշտությամբ կարելի է հանգեցնել շիա-սուննի հակասությունների շարքին, որոնք կարող են անդառնալի հետևանքներ թողնել Լիբանանի և ամբողջ Մերձավոր Արևելքի տարածաշրջանի վրա:

Իրաք

Իրաքի շուրջ վերլուծությունները «Արաբական գարնան» համատեքստում մի փոքր այլ են, քանի որ 2003թ իրաքյան իրադարձությունները և դրանց հաջորդած ժամանակահատվածը ունի իր տրամաբանությունը և ներկայում Իրաքում տեղի ունեցող իրադարձությունները ոչ այնքան «Արաբական գարնան» արդյունք կամ հետևանք են, թեև ակտիվացման պատճառ են հանդիսացել, սակայն Իրաքում ներկա իրադարձությունները 2003թ-ի շարունակությունն են: Իրաքը շարունակում է մնալ անկայուն, չնայած ստեղծված սահմանադրական կարգերին, անընդհատ սպասվող ահաբեկչական բռնությունները, ներ/միջէթնո-կրոնական՝ շիա-սուննի, շիա-շիա, արաբ-քրդական և շիա-քրդական հակասությունները և շահերի բախումը մշտապես իրաքյան իրադարձությունների կիզակետում են, ինչը վտանգավոր է Իրաքի սահմանդրական կարգերի վերացման տեսանկյունից[53]:

2013թ տարվա ապրիլի 26-ին ամերիկյան Կոնգրեսի հետազոտական կենտրոնի զեկույցում, որը վերնագրված է «Իրաք. քաղաքականություն, կառավարում և մարդու իրավունքներ», Քեննեթ Կացմանը նույնպես նշում է, որ Իրաքյան պատերազմից 10

[52] Լիբանանի բնակչության 39 տոկոսը կազմում են քրիստոնյաներ, 30-40 տոկոս շիաները (ի դեպ, Լիբանանում շիայական բնակչության թիվը տատանվում է 30-55 տոկոսի սահմաններում՝ ըստ տարբեր աղբյուրների), մնացած բնակչությունը կազմված է սուննիներից, դրուզներից, ալավիներից, ընդ որում բնակչության 95 տոկոսը արաբ է:

[53] Այս մասին առավել մանրամասն վերլուծություն կարող եք տեսնել՝ Douglas A. Ollivant, Renewed Violence in Iraq: Contingency Planning Memorandum No. 15, available at: http://www.cfr.org/iraq/renewed-violence-iraq/p28808 (մուտք՝ 02.04.13):

տարի անց միջկրոնական բռնությունները մեծապես ազդում են երկրի փխրուն կայունության վրա: Սուննի-քրդա-շիայական (շիա առաջնորդ Մուկթադա աս-Սադրի խմբավորումը) ապստամբությունը ներկա շիայական Նուրի ալ-Մալիքի կառավարության դեմ ուժեղ լարվածություն է առաջացնում Իրաքում[54]:

Սիրիա

Սիրիայի իրադարձությունները «Արաբական գարնան» լիբիական տարբերակի կիրառման փորձ էր, սակայն լիբիական սցենարը այստեղ չկրկնվեց: Իրականում, Սիրիայում շարժումը սկսվեց Դարաայում երեխաների ձերբակալությունից, որոնք գրաֆիտիով գրել էին պատերին, սակայն շատ շուտով պարզ դարձավ, որ սիրիական շարժման մեջ ներգրավված են բազմաթիվ ուժեր՝ երկրներ, խմբավորումներ, որոնց հետաքրքրությունները ոչ թե Սիրիայում բարեփոխումներն էին, այլ պարզապես իշխանափոխությունը, ալ-Ասադի կառավարության ոչնչացումը[55]: Ինչպես և Լիբիայում, սիրիական իրադարձությունների «իրական» պատկերը մեզ հայտնի չէր, հատկապես սկզբնական շրջանում, երբ ինֆորմացիոն սխալ պատկերաշարի արդյունքում ներկայացվում էին միակողմանի բռնություններ, «ակտիվիստների» և մարդու իրավունքների պաշտպանների կողմից փոխանցվող դժվար ստուգելի տեղեկատվություն և այլն: Քանի որ Սիրիան Իրանի և Հիզբուլլահի միջև հանդիսանում է կենտրոնական միջնորդը, ալ-Ասադի վարչակարգի տապալումը հաղթանակ կլիներ ռազմավարական տեսանկյունից ԱՄՆ-ի, Իսրայելի և Սաուդյան Արաբիայի համար: Ի դեպ, Սաուդյան

---

[54] Նա նաև նշում է Իրաքում սուննիական արմատական խմբավորումների և հատկապես իրաքյան «ալ-Կաիդա»-ի հակաշիայական ակտիվ գործունեության մասին: Այս մասին առավել մանրամասն տես՝ Kenneth Katzman, Iraq: Politics, Governance, and Human Rights, April 26, 2013, Congressional Research Service, http://www.fas.org/sgp/crs/mideast/RS21968.pdf (մուտք՝ 30.04.13):

[55] Containing the “Arab Spring”, Jeremy Salt, *Interface: a journal for and about social movement, Volume 4 (1): 54 - 66 (May 2012), էջ 61-63,* http://www.interfacejournal.net/wordpress/wp-content/uploads/2012/05/Interface-4-1-Salt.pdf (մուտք 15.04.13):

Արաբիան հակասիրիական գործողությունների առաջնայնությունը տվել էր Կատարին՝ մնալով իրադարձությունների ետնաբեմում:

Սիրիայում ալավիական կրոնական քաղաքական վերնախավը[56] դեռևս Հաֆեզ ալ-Ասադի օրոք ցույց էր տալիս իր սերտ հարաբերությունները ավելի շատ շիայականության/իսնաաշարիականության հետ՝ դրանով իսկ ավելի ընդգծելով իրենց ոչ սուննիական լինելու հանգամանքը: Բացի այդ, Սիրիա-Իրան հարաբերությունները դեռևս Իրան-Իրաքյան պատերազմի ժամանակներից, երբ Սիրիան աջակցում էր Իրանին, ռազմավարական ու բարեկամական են եղել, և նրանց հարաբերությունները մինչ օրս էլ շարունակում են ռազմավարական տեսանկյունից դրական մնալ[57]: Սիրիայում «Արաբական գարնան» ընթացքում տեղի ունեցած իրադարձությունների արդյունքում իրավիճակի անկայունության պարագայում հարց է առաջանում, թե տարածաշրջանային որ խաղացողը ինչ դերակատարում կարող է ունենալ: Սակայն Սիրիայի կրոնական առումով բազմաշերտ բազմադավան հասարակության համար ամենից վտանգավորը լինելու է այն, որ Սիրիան կարող է վերածվել շիա-սուննիական հակամարտության թատերաբեմի՝ հաշվի առնելով Սաուդյան Արաբիայի[58], Թուրքիայի և Իրանի նկրտումները:

2010 թ դեկտեմբերից սկսված և մինչ օրս շարունակվող իրադարաձությունները արաբական երկրներում հանգեցրել են էթնո-կրոնական լարվածությունների խորացմանը սուննիների և շիաների միջև: Այս միջկրոնական բաժանումների և

[56] Հոդվածում չենք անդրադառնում Սիրիայում կրոնաքաղաքական իշխանության և ազդեցությունների պատկերին, քանի որ այդ մասին խոսվում է Դավիթ Հովհաննիսյանի հոդվածում, տ՛ս սույն ժողովածուն 4-22 էջեր:

[57] Այս մասին ավելի մանրամասն տես՝ Pat Proctor, The Mythical Shia Crescent, Spring 2008, The US Army Collage Quarterly, Parameters, (pp 30-42), p 31.

[58] Սիրիայում սուննի իսլամիստների ակտիվացումը շատ վտանգավոր է, ինչն էլ իրականում հանգեցրեց Սիրիայում ողբերգական «Արաբական գարնան» սցենարի իրագործմանը:

հակասությունների համար շարժառիթները, բնական է, որ նույնական չէին կարող լինել: Յուրաքանչյուր երկրի շիաները պայքարելու և բողոքելու իրենց դրդապատճառները ունեն, և դրանք համարել մեկ ընդհանրական շարժում, թերևս, սխալ կլինի: Հատկապես պետք է նշել, որ գաղափարական և քարոզչական նպատակներով թե՛ շիայական/իսնաաշարիական իրանական շրջանակների, և թե՛ արաբ-սուննիական շրջանակների կողմից (իհարկե տարբեր շարժառիթներով) օգտագործվող շիաների միասնական լինելու և միևնույն գաղափարական հիմքով պայքարելու շուրջ նույնականացումները արվում են իրենց համար նպաստավոր և շահեկան քարոզչություն իրականացնելու համար: Թեև երկու կողմերն էլ հասկանում են այդ ամենի ոչ իրական լինելը: Հատկապես սիրիական իրադարձությունները որոշակիորեն վկայում են շիայական ազդեցության գոտու արդեն իսկ թուլացման մասին, որն իր ազդեցությունը կգործի նաև լիբանանյան Հիզբուլլահի՝ երկրի ներսում ունեցած դերի և ազդեցության փոփոխության վրա, իսկ Իրաքում հակաշիայական՝ հակակառավարական տրամադրությունների օր-օրի ահագնացումը նույնպես շիայական գոտու համար նպաստավոր չէ: Դեռևս 2005-2006 թթ-ից գիտական շրջանակներում շրջանառվող «շիայական մահիկ», «շիայական զարթոնք» տերմինը արդեն բազմաթիվ վերլուծաբաններ համարում են պարզապես հիշողություն[59]: Սակայն շիայական ազդեցության գոտու վերացման տեսակետներին ի հակառակ կան մի շարք վերլուծություններ, որոնք «Արաբական գարնան» և դրան հաջորդած իրադարձություններից հետո շիայական ազդեցության մասին խոսելիս ներկայացնում են հակառակ տեսակետ: Ըստ այդ վերլուծությունների՝ աշխարհում ստեղծվում են մի շարք

[59] Այս մասին տես՝ Geneive Abdo, The New Sectarianism: The Arab Uprisings and the Rebirth of the Shi'a-Sunni Devide, Analysis Paper, Number 29, April 2013, the Brookings Institutions, http://www.brookings.edu/~/media/research/files/papers/2013/04/sunni%20shia%20abdo/sunni%20shia%20abdo.pdf, ինչպես նաև Pat Proctor, The Mythical Shia Crescent, Spring 2008, The US Army Collage Quarterly, Parameters, pp 30-42 (մուտք՝ 05.05.13):

պաշտպանական և հակահարձակման օջախներ իրանական անվտանգության ծառայությունների և ագենտուրայի «քնած» օջախների ակտիվացմանը զուգահեռ, որոնք կգործեն այն բոլոր երկներում, որտեղ կան շիայական փոքրամասնություններ և որտեղ հնարավոր կլինի սրել սուննի-շիայական հակամարտությունը՝ դրանով իսկ հակակշիռ ստեղծելով աճող սուննիական իսլամիստական ազդեցությանը[60]:

Իհարկե, եթե նայենք այս բոլոր երկրներում «Արաբական գարնան» պատճառ համարվող վերոնշյալ բնութագրիչների ցանկին, որոշակի համընկնումներ կլինեն, այդ թվում և շիայական գործոնը: Սակայն, միանշանակ է այն հանգամանքը, որ «Արաբական գարնան» արդյունքներից մեկը սուննի-շիա հակասությունների խորացումն է և սուննի իսլամիստների կողմից հակաշիայականության քարոզչության ակտիվացումը[61], որը սակայն ավելի շատ չափազանցված է և օգտագործվում է սուննիական շրջանակների կողմից[62] իրենց երկրներում հեղափոխական դրսևորումները մարելու և ճնշելու նպատակով, և տարածաշրջանում իրենց դերի բարձրացման համար:

Այս ամենը նաև ցույց է տալիս Արևմտյան և, մասնավորապես, ԱՄՆ-ի ներկա գերակայությունները տարածաշրջանում, քանի որ

---

[60] Ю.Б.Щегловин, О ситуации вокруг Ирана, Институт Ближнего Востока, http://www.iimes.ru/rus/stat/2012/01-06-12c.htm (մուտք՝ 15.05.13):

[61] Կարծում եմ այստեղ կարևոր է նշել, որ «Արաբական գարուն» կոչված երևույթը իր հետագա իրադարձություններով հանգեցրել է կրոնական պատկանելության կարևորմանը էթնիկ պատկանելությունից, ինչն էլ բնական է, որ ստեղծում է նոր հիմք սուննի-շիա հակասությունների խորացման և տարբեր քաղաքական դրսևորումների համար:

[62] Հետաքրքրական է այս հարցում եվրոպական թինք թանքներից մեկի՝ FRIDE-ի հետազոտող Բարահ Միքաիլի հոդվածը, որտեղ հեղինակը նշում է, որ միջկրոնական լարվածությունները արաբական երկրների ղեկավարները միաժամանակ և՛ զսպում, և՛ ինստրումենտալացնում են: Այս մասին առավել մանրամասն տես՝ Barah Mikail, Sectarianism after the Arab Spring: an Exaggerated Spectre, Policy brief, No 131, June 2012, FRIDE, http://www.isn.ethz.ch/isn/Digital-Library/Articles/Special-Feature/Detail/?lng=en&id=161041&contextid774=161041&contextid775=161035&tabid=1454206054 (15.04.13):

2011թ անհանգստություններից հետո միջկրոնական հակասությունների ակտիվացմանը նաև նպաստեցին աշխարհաքաղաքական ռազմավարությունները, քանի որ տվյալ երկրներում իշխանության վակուումները քաղաքական տարբեր ամբիցիաների և օրակարգերի՝ ծրագրերի ստեղծման լայն հնարավորություններ են ընձեռում և/կամ հակառակը:

ԻՐԱՆԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ «ԱՐԱԲԱԿԱՆ ԳԱՐՆԱՆԸ»

Աննա Գևորգյան

«Իրանը դեմ է դիկտատորներին և աջակցում է ժողովուրդներին, որ պայքարում են իրենց իրավունքների համար[1]»:
Ալի Խամենեի

2010 թվականին արաբական երկրներում սկսված և մինչ օրս շարունակվող գործընթացները արևմտյան որոշ վերլուծաբաններ ու քաղաքական գործիչներ անվանում են «արաբական գարուն»: Չանդրադառնալով այս անվանման վերաբերյալ եղած տարաձայնություններին ու դրա կիրառման նպատակահարմարությանը՝ փաստենք, որ Իրանի Իսլամական Հանրապետության(ԻԻՀ) իշխանությունները նույն այդ իրադարձությունները այլ կերպ են անվանում: Նախ և առաջ, ի տարբերություն արևմտյան վերլուծաբանների ու քաղաքական գործիչների, նրանց համար անընդունելի է արաբական տարբեր երկներում տեղի ունեցող խռովությունների դրդապատճառների ու դրանց մասնակիցների նույնացումը:

Իրանի համար վերոնշյալ իրադարձությունները երկու կարգի են.

1-ին՝ Թունիս, Եգիպտոս, Լիբիա, Եմեն, Բահրեյն, Լիբանան, որտեղ, ըստ Իրանի իշխանությունների տեղի է ունեցել «իսլամական վերածնունդ»,

2-րդ՝ Սիրիա, ուր Թեհրանի բնորոշմամբ ԱՄՆ-ն ներքաղաքական խռովություններ է հրահրում և զինում ահաբեկիչներին: Իրանի ղեկավարությունը փաստում է նաև, որ այն, ինչ կատարվում է արաբական երկրներում, բացի Սիրիայից,

[1]Ալի Խամենեիի 04.02.2011-ի ուրբաթօրյա քարոզի տեքստ, տես՝ http://www.leader.ir/langs/fa/index.php?p=bayanat&id=7772, (մուտք՝ 15.02.2011):

Իրանի իսլամական հեղափոխության հետևանքն ու ազդեցությունն է:

Իրանի ընդդիմությունն էլ, իր հերթին, արաբական ընդվզումները Իրանի ժողովրդի բողոքի ալիքի ազդեցություն է համարում, բայց այս անգամ խոսքը ոչ թե 1979, այլ 2009 թվականի խաղաղ ցույցերի մասին է: Ասել է թե, Իրանի ընդդիմությունը զուգահեռներ է անցկացնում արաբ և իրանցի ժողովուրդների քաղաքացիական ընդվզման միջև:

Արաբական իրադարձություններին Իրանի և՛ իշխանության, և՛ ընդդիմության ներկայացուցիչների կողմից տրված բնորոշումները նպատակ ունեին նախ՝ հիմքեր ստեղծել արաբական երկրների ապագա կառավարությունների և Իրանի միջև փոխհարաբերությունների դաշտի ընդլայնման համար, երկրորդ՝ որոշակի ուղերձ հղել Իրանի հասարակությանը: Այդ ուղերձները մատնանշում էին մի դեպքում, Իրանի Իսլամական Հանրապետության պետական ապարատի կայունությունն ու ընդօրինակման առարկա լինելու գաղափարը, մյուս դեպքում Իրանի ընդդիմության գործողությունների օրինակելի լինելու ու նաև հաջողության հասնելու հույսի վերակենդանացման հնարավորությունը: Այս ուղերձներով, Իրանի իշխանություններն ու ընդդիմությունը փորձում էին հասնել իրենց նպատակներին ներքաղաքական կյանքում:

Թունիս, Եգիպտոս: Թունիսում մանրավաճառ Մուհամեդ Բուազիզիի ինքնահրկիզմանը հետևած բողոքի ալիքի արդյունքում 2011 թվականի հունվարի 15-ին երկրի նախագահ Զեյն ալ- Աբիդին Բեն Ալին, որ ղեկավարում էր երկիրը երեսուն տարի, ստիպված եղավ հրաժարական տալ: Թունիսում սկսված հեղափոխական ընդվզումների հոգեբանական ազդեցության հետևանքով քաղաքացիական շարժում էր սկսվել նաև Եգիպտոսում: Այստեղ ևս երկիրը երեսուն տարի գլխավորած նախագահ Հուսնի Մուբարաքը ստիպված եղավ հեռանալ իր պաշտոնից և հետագայում կանգնեց նաև դատարանի առջև՝ Եգիպտոսի խաղաղ

ցուցարարների դեմ զենք կիրառելու և կոռուպցիայի մեղադրանքներով:

Այս իրադարձությունները ինչպես մարտահրավերներ, այնպես էլ նոր հնարավորություններ էին ընձեռում Իրանի ղեկավարությանը: Մարտահրավերներ, որովհետև արաբական այդ երկրներում բռնկված հեղափոխական տրամադրությունները կարող էին հասնել նաև Իրան, և նոր հնարավորություններ, քանի որ Թունիսի ու Եգիպտոսի նոր կառավարությունների հետ հնարավոր էր ավելի սերտ հարաբերություններ ստեղծել, ինչպես նաև կյանքի կոչել իսլամական հեղափոխությունը «արտահանելու» վերաբերյալ խոմեյնիական գաղափարախոսությունը[2]: Հատկապես, որ Եգիպտոսի պարագայում, Հուսնի Մուբարաքի կառավարության և Իսլամական Իրանի միջև առհասարակ բացակայում էին դիվանագիտական հարաբերությունները[3], և այդ երկրում տեղի ունեցող իրադարձությունները, և մասնավորապես Մուբարաքի իշխանության տապալումը խզված հարաբերությունները վերականգնելու լավ առիթ կարող էին հանդիսանալ:

Վերոնշյալ մարտահրավերները չեզոքացնելու և հնարավոր ձեռքբերումները ավելի շոշափելի դարձնելու նպատակով էլ Իրանի հոգևոր առաջնորդ (Ռահբար) այաթոլլահ Ալի Խամենեին 2011 թվականի փետրվարի 4-ի ուրբաթօրյա քարոզի ժամանակ, անդրադառնալով արաբական երկրներում սկսված հեղափոխություններին, նշեց, որ Իրանի ղեկավարությունը ողջունում է արաբ ժողովուրդների ցուցարարներին[4]:

---

[2] Իմամ Խոմեյնի, «Վելայաթե ֆաղիհ», տես՝ http://imam-khomeini.com/web1/persian/showitem.aspx?cid=1727&pid=2034&h=&f=, (մուտք՝ 15.02.2011):

[3] Իրանի և Եգիպտոսի միջև դիվանագիտական հարաբերությունները խզվել են 1979 թվականին Եգիպտոսի և Իսրայելի միջև Քեմփ Դեյվիդում կնքված հաշտության պայմանագրի պատճառով:

[4] Ալի Խամենեիի 04.02.2011-ի ուրբաթօրյա քարոզի տեքստ, տես՝ http://www.leader.ir/langs/fa/index.php?p=bayanat&id=7772, (մուտք՝ 15.02.2011):

Իր քարոզի առաջին հատվածում Ալի Խամենեին մանրամասն անդրադարձ կատարեց Իսլամական հեղափոխության հաջողության գրավականներին ու նշեց այդ հեղափոխության օրինակելի լինելու հանգամանքը: Նա մասնավորապես ընդգծեց. «Եթե որևէ հեղափոխություն ուզում է ազդեցություն գործել այլ երկրների վրա, այն պետք է որոշակի առանձնահատուկ հատկանիշներ ունենա, որոնցից ամենակարևորներն են հստակ ուրվագծված ուղղությունը, անվախությունն ու կայունությունը[5]»:

Անդրադառնալով Իրանի իսլամական հեղափոխության սկզբնական ժամանակաշրջանին ու նաև ընդգծելով այդ հեղափոխության շնորհիվ Իրանի ժողովրդի աննկուն կամքով ձեռք բերված հաջողությունները՝ Ալի Խամենեին հատկապես կարևորեց այն հանգամանքը, որ բազմաթիվ ազգեր ցանկություն ունեն հետևելու իրանական ժողովրդի օրինակին: Նրա խոսքով. «Երեսուներկու տարվա հսկայական աշխատանքը բոլորին օրհնություն ու Բարձրյալի բարեգթությունն է շնորհել, իսկ նրա (հեղափոխության) հատկանշական ձեռքբերումներն աստիճանաբար հայտնի են դարձել ողջ աշխարհին՝ այսօր իրանական ժողովրդին դարձնելով վառ օրինակ այլ ազգերի աչքերում[6]»:

Երկրի առաջնորդը իր խոսքում անդրադարձ կատարեց նաև 2009-ի նախագահական ընտրություններին հաջորդած իրադարձություններին և դրանք Իրանի թշնամիների ծրագրած հակակառավարական միջոցառումների չհաջողված փորձ համարեց: Նա ընդգծեց, որ «այդ սադրանքի հեղինակներն ու ղեկավարները ինչպես այսօր, այն օրերին էլ երկրից դուրս էին գտնվում, և ոմանք , հանուն սեփական շահերի ու զբաղեցրած դիրքի, նրանց ինտրինգների գերին էին դարձել» [7]:

Այսպիսով, Իրանի հոգևոր առաջնորդը, ուրբաթօրյա իր քարոզի առաջին հատվածում ընդգծելով իսլամական

[5] Նույն տեղում:
[6] Նույն տեղում:
[7] Նույն տեղում:

հեղափոխության հաջողություններն ու երկրում 2009 թվականին տեղի ունեցած հակակառավարական ցույցերը արտաքին ուժերի սադրանք համարելով, փորձ արեց չեզոքացնել արաբական երկրների հեղափոխությունների ազդեցությամբ Իրանի ընդդիմության հետևորդների ակտիվացման հնարավորությունը: Իրանի ներքաղաքական զարգացումների ու Եգիպտոսի ու Թունիսի հեղափոխությունների միջև զուգահեռների բացակայությունը ընգծելու և վերոնշյալ երկրների ցուցարարներին գաղափարապես ուղղորդելու նպատակով էլ Ալի Խամենեին իր քարոզի ողջ երկրորդ հատվածը նվիրեց արաբական այդ երկրների իրադարձությունները իսլամի տեսակետից մեկնաբանելու խնդրին:

Վերլուծելով Եգիպտոսում ու Թունիսում տեղի ունեցած հեղափոխությունների պատճառները՝ Իսլամական հեղափոխության առաջնորդը նշեց, որ թեև արևմտյան փորձագետները այդ երկրների հեղափոխությունների պատճառները տնտեսական ոլորտում են փնտրում, բայց իրականում դրանք վերոնշյալ երկրների ղեկավարների վարած հակաիսլամական ու արևմտամետ քաղաքականության արդյունք պետք է համարել: Նա ընդգծեց Թունիսի ղեկավար Բեն Ալիի՝ հակաիսլամական քաղաքականություն վարելու փաստը և, մասնավորապես, հասարակական վայրերում հիջաբ կրելու ու կրոնական ծիսակատարություններ կատարելու արգելքի առկայությունը Թունիսում: Նրա պնդմամբ. «Թունիսի ժողովրդի ընդվզման գլխավոր պատճառներից մեկը իսլամի բացակայությունն ու նրա պահանջարկն էր երկրում[8]»:

Եգիպտոսի մասին խոսելիս Իրանի հոգևոր առաջնորդը նախ և առաջ անդրադարձավ Եգիպտոսի պատմությանն ու նշեց, որ Եգիպտոսը իսլամի ամենանվիրական օջախներից մեկն է եղել, և որ Եգիպտոսի ժողովուրդը, առաջինը դեմ հանդիման հանդիպելով արևմտյան զավթողական քաղաքականությանը, կարողացել է պահպանել իր իսլամական արժեքներն ու մոտեցումները:

[8] Նույն տեղում:

«Հարուստ պատմական անցյալ ունենանալով, սակայն,-նշեց Ալի Խամենեին,-Եգիպտոսը 30 տարի գտնվում էր մի մարդու ձեռքին, ով սիոնիստների բարեկամն ու ազատասիրության թշնամին էր[9]»:

Իր այս ելույթը Իրանի հոգևոր առաջնորդը ավարտեց Եգիպտոսի ու Թունիսի ժողովուրդներին խորհուրդ տալով լինել աննկուն, պայքարել մինչև վերջ ու հույս հայտնեց, որ իսլամական աստվածաբանները կարևոր դեր կխաղան նրանց ուղղորդելու ու առաջնորդելու գործում[10]:

Եվ այսպես, Իրանի հոգևոր առաջնորդը, «իսլամական վերածնունդ» համարելով Եգիպտոսում ու Թունիսում տեղի ունեցած իրադարձությունները, դրանք յուրահատուկ «իրանական պրիզմայով» անցկացնելով, այդ երկրների և Իրանի միջև ապագա փոխգործակցության համար նոր հարթություն էր ուղենշում: Իրանի հասարակությունն էլ երկրի առաջնորդից իսլամական հեղափոխությանը հավատարիմ մնալու ու արտաքին ուժերի նպատակների համար գործիք չծառայելու կոչ էր ստանում:

Արաբական երկրների իրադարձություններին նույնպիսի գնահատական տվեց նաև Իրանի Մեջլիսի խոսնակ Ալի Լարիջանին: Նա նույնպես Եգիպտոսի և Թունիսի հեղափոխությունները «իսլամական զարթոնք» անվանեց[11]: Այդ երկրների մասին խոսելիս նա կենտրոնացավ այն հանգամանքի վրա, որ ԱՄՆ-ն երկակի ստանդարտներ է կիրառում արաբական երկրների հանդեպ: Նա անընդունելի համարեց այն փաստը, որ ժողովրդավարության տարածման ջատագովը լինելով, ԱՄՆ-ն, սակայն, անտարբեր եղավ Թունիսի ժողովրդի արդարացի պահանջներին ու աջակցեց նաև Մուբարաքին, որ զենք էր կիրառում երիտասարդ ցուցարարներին ցրելու համար[12]: Նրա խոսքով. «Թեև Արևմուտքը փորձում է այլ մեկնաբանություն տալ

[9] Նույն տեղում:

[10] Նույն տեղում:

[11] Ալի Լարիջանիի ելույթը Բաբոլսարի շահիդների հիշատակի արարողության ժամանակ, տես՝
http://www.farsnews.com/newstext.php?nn=8911140293, (մուտք՝ 05.02.2011):

[12] Նույն տեղում:

Մերձավոր Արևելքում տեղի ունեցող իրադարձություններին, բայց բոլորին է հայտնի, որ ցուցարարների կարգախոսները վկայում են, որ նրանց պայքարը հանուն հիջաբի է և ընդդեմ բռնությունների և ԱՄՆ-ի» [13]:

Իրանի իսլամական հեղափոխության 32-րդ տարեդարձին նվիրված հանրահավաքի ժամանակ՝ Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադն էլ անդրադարձավ Եգիպտոսի ու Թունիսի իրադարձություններին, և դրանք Իրանի ժողովրդի՝ ընդդեմ Արևմուտքի մղված պայքարի ազդեցություն համարեց: Նախագահը կարծիք հայտնեց նաև, որ Եգիպտոսի ու Թունիսի ժողովուրդներին առաջնորդել է շիայական տասներկուերորդ «թաքնված» իմամ Մահդին[14]: Այս բնորոշմամբ Ահմադինեժադը ընդգծեց ոչ միայն արաբական երկրների հեղափոխությունների իսլամական լինելը, այլև իսլամական աշխարհի՝ միասնական, «դար ուլ-իսլամ» (իսլամի «աշխարհ») լինելու նրա ընկալումը:

Թեհրանի կենտրոնում գտնվող Ազադի (Ազատության) հրապարակում հավաքված մարդկանց դիմելով՝ նախագահ Ահմադինեժադը նշեց. «Սա գլոբալ հեղափոխություն է, որ իրագործվում է ժամանակի Իմամի կողմից» [15]:

Նույն այդ իրադարձությունները սակայն, բոլորովին այլ մեկնաբանություն ու արձագանք ստացան Իրանի ընդդիմության առաջնորդ Միրհուսեյն Մուսավիի կողմից: Նա ընդդիմության մյուս առաջնորդ Մեհդի Քարուբիի հետ ևս նույն այդ ժամանակշրջանում հանրահավաք էր հրավիրել՝ նվիրված իսլամական հեղափոխության տարեդարձին ու ի պաշտպանություն արաբական երկրների ցուցարարների: Այս հանրահավաքի ընթացքում Միրհուսեյն Մուսավին ընդգծեց, որ

[13] Նույն տեղում:

[14] Ըստ իսնաաշարիական շիա իսլամի՝ Մահդին տասներկուերորդ իմամն է, որ ոչ թե մահացած, այլ թաքնված է, և վերադառնալու է ու արդարություն հաստատի երկրի վրա:

[15] Բահմանի 22-ի տոնակատարության ժամանակ արտասանած ելույթ, տես՝ http://www.president.ir/fa/26781, (մուտք՝ 12.02.2011):

այն, ինչ տեղի է ունենում Մերձավոր Արևելքում, Իրանի ընդդիմության կազմակերպած հետընտրական ցույցերի ազդեցությունն ու հետևանքն է: Նրա խոսքով «Իրանի ժողովրդի «ուր է իմ ձայնը» կարգախոսը Մերձավոր Արևելքի երկրներում վերածվել է «ժողովուրդը պահանջում է իշխանության տապալում» կարգախոսի» [16]:

Նրա համոզմամբ, եթե Եգիպտոսի իշխանությունները արդար ընտրություններ անցկացնելու միջոցով ականջալուր լինեին ժողովրդի կամքին, ապա հետագայում ստիպված չէին լինի լսել, որ ժողովուրդը իշխանության տապալումն է ուզում: Իր ելույթում Մուսավին ջանում էր մաքսիմալ նմանություններ ցույց տալ հետընտրական Իրանի և Եգիպտոսի ու Թունիսի իրադարձությունների մեջ: Նա համեմատեց ոչ միայն Իրանում և Եգիպտոսում անցկացված ընտրությունների բնույթն ու անարդար լինելը, այլև այդտեղ, ինչպես նաև արաբական այլ երկրներում տեղի ունեցող այնպիսի ապօրինություններ, ինչպիսիք են սոցիալական ցանցերից օգտվելու արգելքը, բջջային հեռախոսակապի կաթվածահար վիճակը, բազմաթիվ քաղաքական բանտարկյալների առկայությունը[17]:

Մուսավին իր այս ելույթում որոշակի ուղերձ էր հղում ոչ միայն Իրանի ընդդիմության հետևորդներին՝ կոչ անելով նրանց էլ ավելի ոգևորվել Եգիպտոսի ու Թունիսի ժողովուրդների հաղթանակով ու շարունակել պայքարը, այլև Իրանի իշխանություններին՝ նրանց նախազգուշացնելով Իրանում եգիպտական սցենարի կրկնության հավանականության մասին՝ ժողովրդի ձայնը չլսելու պարագայում:

Եգիպտոսի հեղափոխությունից հետո սակայն Իրանի և Եգիպտոսի ղեկավարների միջև տեղի ունեցած փոխայցելություններն ու փոխադարձ բարեկամական

[16] Միրհուսեյն, «Ժողովրդի ձայնին այն ժամանակ են ականջալուր լինում, երբ արդեն ուշ է լինում», տես՝ http://www.kaleme.com/1389/11/09/klm-45443/, (մուտք՝ 01.02.2011):

[17] Ալի Խամենեիի 04.02.2011-ի ուրբաթօրյա աղոթքի տեքստ, տես՝ http://www.leader.ir/langs/fa/index.php?p=bayanat&id=7772, (մուտք՝ 10.02.2011):

հայտարարությունները վկայում են այն մասին, որ Իրանը Եգիպտոսի հետ հարաբերությունները ջերմացնելու պատրաստակամություն և մեծ ցանկություն ունի և որ Եգիպտոսը վերապահումներով համաձայն է այդ իրողության հետ: Մի կողմից, պաշտոնական Կահիրեն Մուբարաքի կառավարության համեմատ փոխել է իր դիրքորուշումը շիայական ու հակաարևմտյան Իրանի նկատմամբ, մյուս կողմից Եգիպտոսը չի կարող զոհաբերել իր հարաբերությունները Արևմուտքի հետ, քանի որ հսկայական ֆինանսական և այլ տիպի օժանդակություն է ստանում վերջինից: Բացի այդ, «Մուսուլման եղբայրները» չեն կարող թույլ տալ, որ Եգիպտոսը շիայական իսլամի ազդեցության վտանգի առաջ կանգնի: Իսկ դիվանագիտական հարաբերությունների վերականգնումն ու իրանցիների ազատ ելումուտը Եգիպտոս, որոշ սուննի քաղաքական գործիչներ Եգիպտոսում շիայական իսլամի ակտիվացման նախադրյալ են համարում:

Հուսնի Մուբարաքի՝ փետրվարի 11-ին տեղի ունեցած հրաժարականից[18] մի քանի օր անց՝ փետրվարի 22-ին, իրանական երկու ռազմանավ եգիպտական կողմի թույլատրությամբ անցան Սուեզի ջրանցքը՝ ուղևորվելով դեպի Սիրիայի Լաթակիա նավահանգիստ[19]: Սա Իսլամական հեղափոխությունից ի վեր առաջին դեպքն էր, երբ իրանական ռազմանավերին թույլատրվում էր մուտք գործել Սուեզի ջրանցք:

2011 թվականի ապրիլի 28-ին Եգիպտոսի արտգործնախարարության խոսնակ Մենհա Բախումը հայտարարեց. «Մենք Իրանին դիտում ենք որպես հարևան երկիր, որի հետ պիտի նորմալ հարաբերություններ ունենանք: Մենք

[18] Մուբարաքը հրաժարական է տվել, տես՝ http://www.aljazeera.com/news/middleeast/2011/02/201121125158705862.html, (մուտք՝ 12.02.2011):

[19] Իրանական նավերն անցել են Սուեզի ջրանցքը, տես՝ http://hamshahrionline.ir/details/160782, (մուտք՝ 23.02.2011):

Իրանին թշնամի չենք համարում, ինչպես դա անում էր նախորդ ռեժիմը, բայց և ընկեր նույնպես չենք համարում[20]»:

Հուլիսի 22-ին Իրանի արտգործնախարար Ալի Աքբար Սալեհին հայտարարեց այն մասին, որ Իրանի ու Եգիպտոսի հարաբերությունների զարգացումը մինչև դեսպանատների բացման մակարդակի տարածաշրջանին կայունություն ու խաղաղություն կբերի[21]: Նա հավելեց նաև, որ Իրանի ու Եգիպտոսի դիվանագետները բանակցություններ են վարում իրենց երկրների միջև հարաբերությունների նոր էջ բացելու համար[22]:

Թեև Եգիպտոսը փորձում էր հավասարակշռված քաղաքականության սկզբունքով կառուցել իր հարաբերությունները Իրանի հետ, մասնավորապես հայտարարելով, որ «Իրանի հետ հարաբերությունները չպիտի զարգանան ի վնաս Եգիպտոս-Ծոցի արաբական երկրներ հարաբերությունների»[23], բայցևայնպես ստեղծված հարաբերություններն աննախադեպ էին Իսլամական հեղափոխությունից ի վեր:

Իրանի և Եգիպտոսի միջև հետագա հարաբերությունների զարգացման հնարավորությունը Իրանում կապում էին Եգիպտոսի ապագա նախագահի հետ: Նոր նախագահի ընտրվելուց անմիջապես հետո՝ 2012 թ.-ի հունիսի 26-ին, Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադը շնորհավորական նամակ հղեց Մուհամմադ Մուրսիին՝ նրան անվանելով Իրանի եղբայրական

---

[20] Եգիպտոսը ջերմացնում է հարաբերությունները Իսրայելի թշնամիներ Իրանի ու Համմասի հետ, տես՝ http://www.nytimes.com/2011/04/29/world/middleeast/29egypt.html?_r=3, (մուտք՝ 30.04.2011):

[21] Իրանի և Եգիպտոսի հարաբերությունները նպաստում են տարածաշրջանի կայունությանը, տես՝ http://www.presstv.com/detail/190209.html, (մուտք՝ 23.07.2011):

[22] Նույն տեղում:

[23] «Եգիպտոսի հարաբերություններն Իրանի հետ ի վնաս Սաուդյան Արաբիայի»,- վստահեցնում է Արաբական լիգայի նոր ղեկավարը http://english.alarabiya.net/articles/2011/07/04/155952.html, (մուտք՝ 05.07.2011):

երկրի նախագահ[24]: Նույն ուղերձում Իրանի նախագահը իր երկրի և Եգիպտոսի հետագա հարաբերությունների բարելավում էր ակնկալում:

Սեպտեմբերին Եգիպտոսի նախագահ Մուհամմադ Մուրսին ժամանեց Թեհրան՝ մասնակցելու Չմիավորված ազգերի համագումարին: Սա Իսլամական Իրանի պատմության մեջ առաջին դեպքն էր, երբ Եգիպտոսի նախագահը Իրան էր գալիս: Թեև Մուրսին Թեհրանում մի քանի ժամ մնաց միայն, ինչը քննադատության ենթարկվեց որոշ իրանական վերլուծաբանների կողմից, բայց նա հասցրեց մասնակցել Չմիավորված ազգերի համագումարի բացմանը, ինչպես նաև երկկողմ հանդիպում ունենալ Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադի հետ:

Մի կողմից Մուրսիի՝ Թեհրան ժամանելը խոսում էր նրա՝ ԱՄՆ-ից անկախ արտաքին քաղաքականություն վարելու պատրաստակամության մասին, մյուս կողմից, հատկանշական է, որ Թեհրանում ելույթ ունենալով՝ Մուրսին անդրադարձավ Սիրիայի խնդրին և Սիրիայի դաշնակից Իրանում քննադատեց Բաշար ալ-Ասադի վարչակազմին: Նա համոզմունք հայտնեց, որ Սիրիայի ճգնաժամը հնարավոր է լուծել առանց արտաքին միջամտության, բայց և պնդեց, որ Ասադը հեռանալուց բացի այլընտրանք չունի[25]:

Մուրսիի հետ հանդիպման ընթացքում Ահմադինեժադը վստահեցրեց, որ Իրանի Իսլամական Հանրապետությունը պատրաստ է կիսվել իր փորձով ու գիտելիքներով հանուն եղբայրական ժողովրդի բարեկեցության: Նա Իրանն ու Եգիպտոսը տարածաշրջանի ռազմավարական դաշնակիցներ համարեց ու հույս հայտնեց, որ միասին նրանք կարող են կայունություն ու

[24] Ահմադինեժադը շնորհավորել է Մուհամմադ Մուրսիին Եգիպտոսի նախագահի պաշտոնում ընտրվելու կապակցությամբ, շնորհավորանքի տեքստ, տես՝ http://www.president.ir/fa/39176, (մուտք՝ 27.06.2012):

[25] Ուշագրավ է, որ ԻԻՀ պետական հեռուստաընկերությամբ հեռարձակվող Մուրսիի ելույթի ընթացքում արաբերենից պարսկերեն թարգմանող թարգմանիչը Սիրիայի փոխարեն Բահրեյն էր ասում: Տ՛ես http://www.youtube.com/watch?v=7UpveeV7Evs, (մուտք՝ 02.09.2012):

խաղաղություն ապահովել տարածաշրջանում: Մուրսին նույնպես Իրանին իր երկրի ռազմավարական դաշնակիցը համարեց և հույս հայտնեց, որ տարածաշրջանի բոլոր ազգերը միասին կարող են լուծել տարածաշրջանում առկա խնդիրները[26]:

Ուշագրավ է սակայն, որ երկկողմ հանդիպման ժամանակ Մահմուդ Ահմադինեժադն ու Մուհաամմադ Մուրսին այդպես էլ չխոսեցին երկրների մեջև դիվանագիտական հարաբերությունների վերականգման մասին: Թեև Եգիպտոսի հեղափոխությունից ի վեր երկուստեք հայտարարություններ են արվել Կահիրեի և Թեհրանի միջև դիվանագիտական հարաբերությունները վերականգնելու պատրաստակամության մասին, սակայն, փաստ է, որ դրանք դեռ վերականգնված չեն, և ավելին, կողմերը բաց թողեցին դրա մասին հայտարարելու առիթները՝ Մուրսիի և Ահմադինեժադի փոխադարձ այցերը Թեհրան և Կահիրե: Դրա փոխարեն, կողմերը Թեհրանում համաձայնության եկան քառակողմ հանդիպում կազմակերպել Եգիպտոսի, Իրանի, Թուրքիայի ու Սաուդյան Արաբիայի մասնակցությամբ՝ Սիրիայի ճգնաժամի համար լուծումներ գտնելու նպատակով: Սա այն դեպքում, երբ մինչ այդ վերոնշյալ երկրները, առանց Իրանի, արդեն մի քանի անգամ համաժողովներ էին կազմակերպել ու փորձել հանգուցալուծում տալ Սիրիական խնդրին: Իրանին այս նոր հանդիպմանը հրավիրելու փաստը վկայում էր, որ տարածաշրջանի երկրները եկել են այն համոզման, որ հնարավոր չէ քանդել սիրիական ճգնաժամի թնջուկը առանց Թեհրանի հետ փոխգործակցության:

Վերոնշյալ երկրների մասնակցությամբ հրավիրված համաժողովները նույնպես, սակայն, որևէ արդյունք չտվեցին Սիրիական ճգնաժամի լուծման ճանապարհին: Համաժողովի մասնակից երկրների տարբեր դիրքորոշումները Դամասկոսի գործող իշխանության վերաբերյալ ու նրանց հակադրվող շահերը տարածաշրջանային մակարդակում թույլ չտվեցին ընդհանուր

[26] Նախագահ Ահմադինեժադը հանդիպել է Մուհամմադ Մուրսիին, տես՝ http://www.president.ir/fa/41036, (մուտք՝ 01.09.2012):

հայտարարի գալ օրեցօր ահագնացող ապստամբությանը վերջ տալու համար:

Մուրսիի Թեհրան կատարած այցից մի քանի ամիս անց՝ 2013 թվականի փետրվարին, պաշտոնական այցով Կահիրե մեկնեց Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադը: Այս այցը նույնպես աննախադեպ պատմական իրադարձություն էր, քանզի Իրանի իսլամական հեղափոխությունից հետո իրանական առաջին պաշտոնյայի այցելությունն էր Եգիպտոս: Բովանդակային իմաստով, սակայն, այս այցը նույնպես որևէ էական տեղաշարժ չբերեց Իրան-Եգիպտոս փոխհարաբերություններում:

Վերը նշված իրադարձությունները հիմք են տալիս ենթադրելու, որ Եգիպտոսի նոր իշխանությունը մի կողմից, ի տարբերություն նախորդ իշխանության, պատրաստ է փոխհարաբերություններ ունենալ Իրանի Իսլամական Հանրապետության հետ, մյուս կողմից այդ հարաբերությունները ավելի շատ մրցակիցների հարաբերություններ են լինելու, քան դաշնակիցների: Տարածաշրջանում գերիշխող դիրք գրավելու Իրանի նկրտումներն ու Եգիպտոսի ջանքերը՝ վերականգնելու իր ազդեցությունը տարածաշրջանի արաբական երկրների վրա, երկու պետություններին տարածաշրջանային քաղաքականության երկու տարբեր բևեռներում է դնում: Պետք է փաստել սակայն, որ Եգիպտոսի ու Իրանի միջև դիվանագիտական հարաբերությունների վերականգնման հարցում լուրջ արգելքներ չէին լինի, եթե չլինեին Սաուդյան Արաբիայի և Ծոցի այլ արաբական երկրների, ինչպես նաև ԱՄՆ-ի ճնշումները Եգիպտոսի վրա:

Լիբիա, Եմեն, Բահրեյն: Իր ամանորյա[27] ուղերձի ժամանակ երկրի հոգևոր առաջնորդ Ալի Խամենեին նորից խոսեց տարածաշրջանի արաբական երկրներում տեղի ունեցող իրադարձությունների մասին՝ այս անգամ արդեն անդրադառնալով նաև Լիբիային, Եմենին ու Բահրեյնին: Նա նորից

[27] Խոսքն, իհարկե, իրանական ամանորի՝ մարտին նշվող Նորուզի մասին է:

ընդգծեց, որ այն, ինչ տեղի է ունենում տարածաշրջանում ոչ այլ ինչ է, քան համաշխարհային մուսուլմանական ումմայի ստեղծման նախադրյալ[28]: Նա համեմատեց այս իրադարձությունները Իրանի իսլամական հեղափոխության հետ և նշեց, որ կա երկու բաղադրյալ, որոնք նույնացնում են այս իրադարձությունները: Առաջինը, այս շարժումների մեջ ժողովրդի մասնակցությունն է, և երկրորդը, դրանց կրոնական ուղղվածությունը: Այաթոլլահ Ալի Խամենեին ուշադրություն հրավիրեց այն հանգամանքի վրա, որ տարիներ շարունակ բազմաթիվ մտավորականներ ահազանգում էին այդ երկրներում տիրող իրավիճակի մասին, բայց նրանց երբևէ չհաջողվեց անել այն, ինչ արեցին ժողովուրդները:

Հատկանշական է, որ Լիբիայում տեղի ունեցած քաղաքացիական ընդվզումը Խամենեին պայմանավորեց այն փաստով, որ Կադաֆին արևմտամետ քաղաքականություն էր վարում և մասնավորապես, Արևմուտքի դրդմամբ դադարեցրել էր Լիբիայի միջուկային ծրագիրը: Սա, ըստ, Խամենեիի, առաջացրել էր ժողովրդի զայրույթը[29]:

Նա իր աջակցությունը հայտնեց Լիբիայի ընդդիմադիրներին ու նրանց հետևորդներին: Միաժամանակ նա դատապարտեց ինչպես Կադաֆիի, այնպես էլ Արևմուտքի գործողությունները Լիբիայի ժողովրդի դեմ: Նա անընդունելի համարեց այն հանգամանքը, որ ԱՄՆ-ն փորձում է միջամտել Լիբիայի ներքին գործերին, հատկապես, որ դա անում է ոչ թե ընդվզողներին զենքով օգնելով, այլ Լիբիա զորք մտցնելով:

Ինչպես այաթոլլահ Խամենեիի մյուս ելույթները, այս մեկը ևս հակաարևմտյան հռետորաբանությամբ էր հագեցած: Նա քննադատեց ԱՄՆ-ին ոչ միայն արաբական երկրների ներքին գործերին խառնվելու, այլև այդ իրադարձությունները Իրանի հետընտրական զարգացումների հետ համեմատելու համար: Այս

[28] Ալի Խամենեի ամանորյա ուղերձի տեքստ, տես՝ http://www.leader.ir/langs/fa/index.php?p=bayanat&id=7898,(01.04.2011)

[29] Նույն տեղում:

համեմատության վերաբերյալ իր անհամաձայնությունը, սակայն, նա արտահայտեց հետևյալ դիվանագիտական պատասխանի մեջ. «Այո, Թահրիրում հավաքված մարդիկ նույնն են, ինչ Թեհրանի Ազադի հրապարակի ցուցարարները: Այո, դուք ճիշտ եք: Ազադի հրապարակում ամեն տարի փետրվարի 11-ին հավաքվում են մարդիկ և գոչում. «Մահ Ամերիկային» [30]:

Լիբիայում սկսված քաղաքացիական ընդվզման վերաբերյալ իր դիրքորոշումը հայտնեց նաև Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադը: Նա երկրի պետական հեռուստատեսությամբ հեռարձակվող իր ելույթում աջակցություն հայտնեց Լիբիայի ընդդիմադիր ուժերին և դատապարտեց Լիբիայի նախագահ Մուամար Կադաֆիի գործողությունները իր ժողովրդի հանդեպ[31]: Նա մասնավորապես նշեց, որ «անընդունելի է, երբ երկրի ղեկավարությունը լիցքավորում է զենքերը, որոնք ուղղվում են սեփական ժողովրդի դեմ[32]»: Հատկանշական է նաև, որ նույն ելույթում նա հայտարարեց. «Թույլ տվեք, որ մարդիկ խոսեն, ազատ լինեն ու արտահայտեն իրենց կամքը»[33]:

Բահրեյնում 2011 թվականին տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ Իրանի արձագանքը հասկանալու համար, հարկ է ընդգծել, որ Բահրեյնի բնակչության մեծամասնությունը շիա իսլամի հետևորդներն են, մինչդեռ երկիրը ղեկավարում են սուննի մուսուլմանները[34]: Իրաքի սուննի ղեկավար Սադամ Հուսեյնի իշխանության տապալումից և նոր՝ մեծամասամբ շիաներից բաղկացած կառավարության

[30] Նույն տեղում:

[31] Ահմադինեժադի հորդորը Կադաֆիին. «Ականջալուր եղեք ժողովրդի պահանջին», տես՝ http://www.radiofarda.com/content/f4_ahmadinejad_advise_kadhafi_respect_will/2318291.html, (մուտք՝ 25.02.2011):

[32] Նույն տեղում:

[33] Նույն տեղում:

[34] The world factbook, Bahrain, https://www.cia.gov/library/publications/the-world-factbook/geos/ba.html, (մուտք՝ 12.04.2011):

ստեղծումից հետո[35], Բահրեյնը աշխարհի միակ պետությունն է մնացել, որտեղ շիա մեծամասնությունը ղեկավարվում է սուննի փոքրամասնության կողմից[36]: Ժողովրդագրական նման պատկերի համատեքստում Բահրեյնում հասարակության ընդվզումը իշխանության վարած քաղաքականության դեմ նույնացվում է շիաների պայքարի հետ ընդդեմ սուննիների: Այս իմաստով պատահական չէ ոչ Սաուդյան Արաբիայի, ոչ էլ Իրանի ակտիվ մասնակցությունը Բահրեյնի ներքաղաքական կյանքում: Բահրեյնի ժողովրդական ընդվզումը ճնշելու համար երկրի իշխանության խնդրանքով սուննիական Սաուդյան Արաբիան զորք մտցրեց Մանամա[37], ինչին դժգոհությամբ ու զայրույթով արձագանքեց շիայական Իրանը:

Հարկ ենք համարում հիշեցնել նաև, որ հատկապես Բահրեյնի ու Եմենի պարագայում, որտեղ ցուցարարների զգալի մասը շիա մուսուլմաններ էին, Իրանը մեղադրվում էր հակակառավարական ցույցերի մասնակիցներին զինելու ու նրանց ղեկավարելու մեջ[38]: Իրանը մեղադրվում էր տարածաշրջանում տիրող իրավիճակից օգտվելու և սուննի-շիա նոր հակամարտություններ հրահրելու մեջ: Այս մեղադրանքների անհիմն ու շինծու լինելու փաստը ցույց տալու համար Ռահբարը փորձում էր այս երկրների ներքաղաքական կոնֆլիկտները ներկայացնել քաղաքացի-կառավարություն հակամարտության համատեքստում և ժխտել դրանց մեջ առկա ներիսլամական հակամարտության տարրերը: Իսկ Իրանի աջակցությունն էլ այս երկրների ցուցարարներին, ըստ

---

[35] Shias dominate Sunnis in the new Iraq, http://www.cbc.ca/news/world/story/2012/04/03/iraq-shia-domination-grows.html, (մուտք՝ 12.04.2011).

[36] Shiite majority, Sunni rule, http://middleeast.about.com/od/bahrain/a/me080109.htm, (մուտք՝ 12.04.2011).

[37] Saudi Arabian troops enter Bahrain as regime asks for help to quell uprising, Martin Chulov, http://www.guardian.co.uk/world/2011/mar/14/saudi-arabian-troops-enter-bahrain, (մուտք՝ 15.03.2011).

[38] U.S says Iran helps crackdown in Syria, Adam Entous and Matthew Rosenberg, http://online.wsj.com/article/SB10001424052748704547804576261222747330438.html, (մուտք՝ 10.04.2011).

Խամենեիի, պայմանավորված է ոչ թե նրանց շիա իսլամի հետևորդներ լինելու հանգամանքով, այլ այն հանգամանքով, որ Իրանը կանգնած է բոլոր նրանց կողքին, ովքեր օգնության կարիք ունեն հանուն ազատության մղվող պայքարում[39]:

Անդրադառնալով Բահրեյնի իրադարձություններին՝ Իրանի հոգևոր առաջնորդ Ալի Խամենեին ուշադրություն հրավիրեց այն հանգամանքի վրա, որ դրանք ոչնչով չեն տարբերվում մյուս արաբական երկրների խռովություններից: Խամենեիի խոսքով, չի կարելի Բահրեյնում շիա-սուննի հակամարտության տարրեր փնտրել: Այստեղ ևս, ըստ նրա, ժողովուրդը պայքարում է հանուն իր իրավունքների, և ուրեմն Իրանը աջակցում է նրանց:

Սիրիա: Ի տարբերություն արաբական այլ երկրներում տեղի ունեցող իրադարձությունների, որոնք Իրանը մեկնաբանում է որպես «իսլամական վերածնունդ», Սիրիայի դեպքերը Իրանի տեսանկյունից Արևմուտքի կողմից ծրագրված սադրանքներ են: Թեև սիրիական իրադարձություններում տարբեր արևմտյան ուժերի ներգրավվածությունն արդեն գաղտնիք չէ ոչ մեկի համար, սակայն Իրանի դիրքորոշումն այդ միջամտության վերաբերյալ ամենածայրահեղականն է: Այս մոտեցումը պայմանավորված է նախ և առաջ այն հանգամանքով, որ Սիրիան Իրանի ռազմավարական դաշնակիցն է տարածաշրջանում:

Սիրիայի ներկա վարչակազմի հետ Իրանի ունեցած սերտ հարաբերությունները նրան թույլ են տալիս ավելի ապահով ու ուժեղ խաղացող լինել տարածաշրջանում[40]:

Իրանը Սիրիայի, Իրաքի ու Լիբանանի հետ միասին յուրօրինակ «շիայական գոտի» է ստեղծել, որը թույլ է տալիս ակտիվացնել շիայական գործոնը տարածաշրջանում: Եվ այս «շիայական գոտու» մեջ Սիրիան ամենահուսալի ու ամուր օղակն

[39] Իսլամական հեղափոխության տարեդարձին նվիրված Ալի Խամենեիի ելույթի տեքստ, տես՝ http://www.leader.ir/langs/fa/index.php?p=contentShow&id=9093 (մուտք՝21.10.2012):

[40] Syria-Iran Foreign Relations, by Will Fulton, Robert Frasco, Ariel Farra-Wellman, August 15, 2011, at http://www.irantracker.org/foreign-relations/syria-iran-foreign-relations, (մուտք՝18.03.2011).

է, որ թույլ է տալիս Իրանին կապ հաստատել Լիբանանի «Հիզբուլլահ» կազմակերպության հետ, ինչպես նաև արաբական այլ երկրներում շիայական ազդեցության տարածման համար անհրաժեշտ լծակներ ունենալ:

Աշխարհաքաղաքական և կրոնական տեսանկյունից Իրանի համար Սիրիայի վարչակարգի տապալումը լուրջ մարտահրավեր է նշանակում: Եվ պատահական չէ, որ պաշտոնական Թեհրանը շահագրգռված է նպաստելու, որ օր առաջ ճնշվի Սիրիայի ապստամբությունն ու անփոփոխ մնա Սիրիայի գործող վարչակարգը:

Սիրիական ապստամբության մարումը օրերի հարց համարելով՝ սկզբնական շրջանում ոչ միայն Իրանի պաշտոնյաներն էին անարձագանք թողնում այդ իրադարձությունը, այլև ԻԻՀ-ի պետական հեռուստաընկերությունը առհասարակ չէր լուսաբանում Սիրիայում տեղի ունեցող դեպքերը: Հուսալով, որ Սիրիայի իրադարձությունները երկար չեն տևի, և Բաշար ալ-Ասադին կհաջողվի կարճ ժամանակում ճնշել խռովարարներին՝ Իրանը Սիրիայի այս դեպքերն անտեսելու, քողարկելու քաղաքականություն էր վարում: Ապստամբությունը, սակայն, օր-օրի թափ էր հավաքում և որոշ ժամանակ անց Իրանի պաշտոնյաները ստիպված եղան հրապարակային արձագանքել Սիրիայի ներքաղաքական իրավիճակին:

Այաթոլլահ Ալի Խամենեին ուրբաթօրյա քարոզների, ինպես նաև տարբեր հանդիպումների ժամանակ Սիրիային անդրադառնալիս նշում էր, որ Իրանը դեմ է, որ Սիրիայում օտար ուժեր հայտնվեն և որ իր երկիրը մշտապես աջակցելու է Սիրիային[41]: Սիրիայում տեղի ունեցող իրադարձությունները նրա

[41]Իսլամական հեղափոխության տարեդարձին նվիրված Ալի Խամենեիի ելույթի տեքստ, տես՝ http://www.leader.ir/langs/fa/index.php?p=contentShow&id=9093 (մուտք՝21.10.2012):

բնորոշմամբ «ԱՄՆ-ի՝ տարածաշրջանում կրած պարտությունների համար վրեժխնդրության արդյունք է» [42]:

Հատկանշական է, որ եթե ապստամբության սկզբնական ամիսների ընթացքում, պաշտոնական Թեհրանը իր բացահայտ համակրանքն ու աջակցությունն էր ցույց տալիս Սիրիային ու նրա ղեկավար Բաշար ալ-Ասադին, ապա մի քանի ամիս անց, երբ միջազգային հանրությունն ավելի ու ավելի էր խոսում Սիրիայի նախագահի՝ իր ժողովրդի հանդեպ կիրառած անընդունելի բռնությունների մասին, Թեհրանը փոքր–ինչ փոխեց իր հռետորաբանությունը: Ճիշտ է, իրանցի պաշտոնյաները հայտարարում էին, որ դեմ են Սիրիայի խնդրի ռազմական լուծմանն ու շահագրգռված են Սիրիայում օր առաջ խաղաղության հաստատմամբ, բայց և մերթընդմերթ դատապարտում էին ալ-Ասադի գործողություններն ու կոչ անում նրան լսել սեփական ժողովրդի ձայնը: Խռովությունների սկզբնական փուլում Սիրիայում տեղի ունեցող իրադարձություններին անդրադառնալիս Իրանի իշխանություններն օգտագործում էին ծայրահեղ հակաարևմտյան հռետորաբանություն և անտեսում էին այս գործողություններում Սիրիայի ժողովրդի մասնակցության փաստը: Սիրիայի խռովությունները նրանք վերագրում էին Արևմուտքի վարած «սադրիչ» քաղաքականությանը, իսկ ցուցարարներին անվանում էին ահաբեկիչներ: Իրանի արտգործնախարար Ալի Աքբար Սալեհին մամլո ասուլիսներից մեկի ժամանակ կարծիք հայտնեց, թե «Արևմուտքը ձգտում է անկայունություն ստեղծել Սիրիայում»[43]: Երկրի նախագահ Մահմուդ Ահմադինեժադն էլ հայտարարեց, որ Սիրիայի իշխանություններն ու հասարակությունը ի վիճակի են առանց որևէ մեկի միջնորդության լուծել իրենց խնդիրները և որ

[42]Այաթոլլահ Ալի Խամենեի. «Սիրիայում տեղի ունեցող իրադարձությունները ԱՄՆ-ի՝ տարածաշրջանում կրած պարտությունների համար վրեժխնդրության արդյունք է» http://www.leader.ir/langs/fa/index.php?p=contentShow&id=9074

[43]Գերմանական «Շպիգել» ամսագրի հարցազրույցը արտգործնախարար Սալեհիի հետ, տես http://www.iranembassy.de/fa/component/content/article/2-uncategorised/522-l, (մուտք՝ 15.10.2012).

Արևմուտքը իրավունք չունի խառնվելու Սիրիայի ներքին գործերին[44]:

Արդեն 2011 թվականի օգոստոսին, սակայն, ԻԻՀ արտգործնախարար Սալեհին հայտարարեց, որ Իրանը հորդորում է Սիրիայի ղեկավարներին ուժ չկիրառել ժողովրդի հանդեպ: Հետաքրքիր է նաև, որ Իրանի ներսում Սիրիայի ներքաղաքական զարգացումներին զուգընթաց իշխանության տարբեր ներկայացուցիչներ սկսել էին ավելի ու ավելի հակասական տեսակետներ հայտնել Իրանի և Սիրիայի վարչակարգի փոխհարաբերությունների վերաբերյալ: Մինչ երկրի հոգևոր առաջնորդ Ալի Խամենեին շարունակում էր Սիրիայում տեղի ունեցող գործողությունները համարել հակասիոնիստական պայքար և աներկբա աջակցություն ցույց տալ Բաշար ալ-Ասադի իշխանությանը, մի շարք բարձրաստիճան պաշտոնյաներ կասկածի տակ էին դնում այդ քաղաքականության նպատակահարմարությունը: Նրանցից ոմանք, այդ թվում նաև այնպիսի ազդեցիկ քաղաքական գործիչ, ինչպիսին է Հաշեմի Ռաֆսանջանին, վիճարկում էին այն քաղաքականությունը, որի արդյունքում Իրանը գրեթե միակ պետությունն էր, որ աջակցում էր ալ-Ասադին այն դեպքում, երբ ողջ աշխարհը դատապարտում էր նրա՝ մարդկության դեմ գործած հանցանքները: Որոշ քաղաքական գործիչներ ու պատգամավորներ պնդում էին, որ Իրանը պիտի աջակցի Սիրիայի իշխանություններին, բայց մինչ այն պահը, երբ վերջինս ուժ կկիրառի խաղաղ բնակչության հանդեպ:

Իրանի հռետորաբանությունն իհարկե ցույց էր տալիս, որ ԻԻՀ-ն Սիրիայի խնդրի՝ բացառապես խաղաղ ճանապարհով լուծման կողմնակից է, բայց քանի դեռ արևմտյան երկրները շարունակում էին զինել Սիրիայի ապստամբներին, Իրանն էլ չէր դադարեցնում իր ռազմական ներգրավվածությունն այս խնդրում: 2012 թ.-ի մայիսի 28-ին իրանական ISNA լրատվական գործակալությունն իր վեբ-կայքում տեղադրել էր ԻՀՊԿ-ի Ղուդսի զորքերի

[44]http://aftabnews.ir/fa/news/173579 (մուտք՝ 20.10.2012)

հրամանատարի տեղակալ Իսմայիլ Ղաանիի հայտարարությունն այն մասին, որ «մինչ իրանական զորքերի միջամտությունը բազմաթիվ մարդիկ են սպանվել Սիրիայում ընդդիմության կողմից, բայց Իրանի իսլամական հանրապետության ֆիզիկական և ոչ-ֆիզիկական ներկայությունն այստեղ բազմաթիվ արհավիրքներ է կասեցրել»: Այս հայտարարությունը, որ առաջինն էր, որում իրանական պաշտոնյան խոսում էր իր երկրի զորքերի ներգրավվածության մասին Սիրիայի իրադարձություններում, շատ արագ հանվեց վերոնշյալ կայքից, այնպես ինչպես ջնջվեց YouTube կայքում հայտնված մի տեսանյութ, որտեղ նկարահանված էին Սիրիայում կռվող իրանցի զինվորականները: Այս գործողությունները, ինչպես նաև իրանցի պաշտոնյաների ելույթները ցույց են տալիս, որ Իրանն ամեն կերպ փորձում էր կոծկել իր ռազմական ներգրավվածությունը Սիրիայում, ինչը նրան թույլ էր տալիս ավելի ամուր դիրքերից պահանջել օտար ուժերի դուրսբերումը այդ երկրից ու հավակնել միջնորդի դեր ստանձնել Բաշար ալ-Ասադի կառավարության և ընդդիմության միջև:

Հարկ է նշել, որ Սիրիայի խնդրի հետ կապված էլ ավելի լարվեցին Իրանի և Թուրքիայի հարաբերությունները, որոնք սրվել էին արաբական երկրներում սկսված իրադարձությունների արդյունքում: Տարածաշրջանի արաբական երկրներում տեղի ունեցող իրադարձությունները հակադիր մեկնաբանություններ էին ստանում Իրանի և Թուրքիայի իշխանությունների կողմից: Եթե Իրանը, ինչպես նշեցինք վերևում, դրանք «իսլամական զարթոնք» էր անվանում, և համոզմունք հայտնում, որ այդ երկրներում ձևավորվելիք նոր կառավարությունները ընդօրինակելու էին պետության «իրանական մոդելը», ապա Թուրքիան նույն այդ երկրներում պետականության «թուրքական մոդելի» կիրառման հավանականություն էր տեսնում, քանի որ ապստամբություններն ընկալում էր որպես հանուն

ժողովրդավարության մղվող պայքար[45]: Իսկ պետության մոդելների տարբերության հիմքում ընկած է «իրանական» և «թուրքական» իսլամների տարբերությունը, հակամարտությունն ու տարածաշրջանում ազդեցության գործոնը մեծացնելու համար տեղի ունեցող մրցավազքը:

Սիրիայի իրադարձությունների հետ սակայն, Իրանի և Թուրքիայի շահերի բախումը կոնկրետ հարթակ ձեռք բերեց: Մինչ Իրանը Արևմուտքին մեղադրում էր Սիրիայում սադրանքներ իրականացնելու մեջ ու ֆինանսապես, մարդկային ռեսուրսներով ու նաև զինամթերքով օգնում Բաշար ալ-Ասադի իշխանությանը[46], Թուրքիան խոսում էր Սիրիայի ընդդիմության ընդվզման մասին ընդդեմ դիկտատորական ռեժիմի և նույնանման ռեսուրսներով օգնում զինված ապստամբներին:

Երկու երկրների միջև հակասությունները Սիրիայի խնդրի հետ կապված ավելի շոշափելի դարձան «Սիրիայի բարեկամներ[47]» կոչվող խմբի ձևավորման ու նրա կողմից մի շարք կոնֆերանսներ անցկացնելուն զուգահեռ:

«Սիրիայի բարեկամներ» կոչվող առաջին կոնֆերանսը բացվեց փետրվարի 24-ին Թունիսում, որին մասնակցում էին տարածաշրջանի մի շարք երկրներ, այդ թվում նաև Թուրքիան: Իրանում խիստ բացասաբար ընդունեցին «Սիրիայի բարեկամների» հավաքը, և հատկապես նրանում Թուրքիայի մասնակցությունը:

Ստամբուլում կայացած «Սիրիայի բարեկամների» երկրորդ համաժողովի վերաբերյալ Ալի Լարիջանին երկրի Մեջլիսում

---

[45] Erdogan pitches Turkey's democratic model on 'Arab Spring' tour, by Alexander Christie-Miller, http://www.csmonitor.com/World/Middle-East/2011/0916/Erdogan-pitches-Turkey-s-democratic-model-on-Arab-Spring-tour (մուտք՝ 20.05.2012).

[46] Թեև պաշտոնական Իրանը հերքում էր Սիրիայում՝ իր զորքերի ներկայության մասին լուրերը, սակայն տարբեր աղբյուրներ, ինչպես նաև համացանցում հայտնված ու շատ արագ անհետացած վիդեոներ ապացուցում էին ճիշտ հակառակը:

[47] Խմբի անդամ էին մեկ տասնյակից ավելի պետություններ, այդ թվում Ֆրանսիան, ԱՄՆ-ը, Թուրքիան և Եգիպտոսը:

ելույթի ժամանակ հայտարարեց, թե վերոնշյալ կոնֆերանսն իրականում պիտի «Իսրայելի կաշառատուները» անունը կրեր[48]: Նա կոնֆերանսի մասնակիցներին մեղադրում էր Արևմուտքի խամաճիկները լինելու մեջ ու հռետորական հարց բարձրացնում.«Եթե այդքան հետաքրքրված եք Սիրիայում ժողովրդավարության հաստատմամբ, ապա ինչու եք լռում Բահրեյնի դիկտատուրայի վերաբերյալ»[49]:

Իրանը դրական էր արձագանքում ՄԱԿ-ի ջանքերին՝ ուղղված Սիրիայի խնդրի կարգավորմանը, սակայն նշում էր, որ ցանկացած բանակցային գործընթաց, որում ընդգրկված չեն լինի Սիրիայի հակամարտող կողմերն ու տարածաշրջանի ակտիվ դերակատարները, դատապարտված է ձախողման: Իրանը վստահություն էր հայտնում, որ խնդիրը կարող է լուծվել միայն Սիրիա-Սիրիա, ասել է թե իշխանություն-ընդդիմություն երկխոսության արդյունքում և դրսից ռազմական միջամտության ցանկացած փորձ հղի է անդառնալի հետևանքներով ոչ միայն Սիրիայի, այլև ողջ տարածաշրջանի և աշխարհի համար: Իրանն անընդունելի էր համարում այն հանգամանքը, որ արևմտյան երկրներն ու միջազգային կառույցները թեև շարունակ խոսում էին խնդրի խաղաղ կարգավորման անհրաժեշտության մասին, սակայն չէին դադարում զենք մատակարարել զինյալներին: ՄԱԿ-ի Սիրիայի հարցով հատուկ հանձնակատար Քոֆի Անանի՝ Սիրիայի հարցի կարգավորման ծրագրի մասին, ՄԱԿ-ում Իրանի ներկայացուցիչ Մոհամմադ Խազային հայտարարեց, որ իրենց կարծիքով դա Սիրիական ճգնաժամից դուրս գալու լավագույն տարբերակն է:

Ի տարբերություն Իրանի իշխանության, երկրի ընդդիմությունը իր պաշտոնական կայքէջում Հույսի կանաչ շարժման պլանավորման կոմիտեի անունից մի ուղերձ հրապարակեց, որտեղ ասվում էր, որ Իրանի ընդդիմադիր

[48] Կոնֆերանսի իրական անվանումը պիտի «Իսրայելի կաշառատուները» լիներ, http://www.equity.ir/fa/component/content/article/503 (մուտք՝ 05.05.2012).
[49] Նույն տեղում:

շարժումը աջակցում ու ողջունում է Սիրիայի ցուցարարներին[50]: Ուղերձում մասնավորապես ասվում էր. «Մենք անհամբեր սպասում ենք Սիրիայի ժողովրդի ազատագրմանը, որ կբերի ժողովրդավարության և արժանապատվության հաստատման ձեր երկրում»[51]: Ուղերձում նաև քննադատվում էին Իրանի իշխանությունները, որ սատարում են Բաշար ալ-Ասադին և օգնում նրան ճնշել ցուցարարներին: Հատկանաշական է նաև, որ ընդդիմությունը Սիրիայի իրադարձությունները դիտում էր արաբական մյուս երկրներում տեղի ունեցող դեպքերի համատեքստում, և դրանք բոլորը լավ առիթ համարում տարածաշրջանի համար պայծառ ապագա կառուցելու համար:

Իրանի ընդդիմությունը, իր աջակցությունը հայտնելով Սիրիայի ցուցարարներին, նպատակ ուներ ցույց տալ, որ կանգնած է հանուն ժողովրդավարության և ազատության պայքարող ցանկացած հասարակության կողքին, անգամ եթե դա մի հասարուկություն է, որի ղեկավարները իրենց երկրի դաշնակիցներն են: Մյուս կողմից ակնհայտ է նաև, որ Իրանի ընդդիմությունը Բաշար ալ-Ասադին համարում է ոչ այնքան Իրանի, որքան Իրանի ներկայիս իշխանությունների դաշնակից՝ այդպիսով որոշակի սուբյեկտիվ կարծիք ունենալով նրա ու համապատասխանաբար նրա դեմ պայքարողների մասին:

Այսպիսով, կարելի է փաստել, որ Իրանի իշխանությունների արձագանքը արաբական երկրներում տեղի ունեցող իրադարձություններին, նախ և առաջ պայմանավորված էր երկրի ներսում սեփական դիրքերի ամրապնդման ցանկությամբ, ինչպես նաև այդ իրադարձությունների «իրանական սցենարի» կանխման անհրաժեշտությամբ: Մյուս կողմից, «Արաբական գարուն» տարածված անվան փոխարեն «իսլամական վերածնունդ» խորագիրը տալով արաբական երկրների վերոնշյալ գործընթացներին, Իրանը մեկ անգամ ևս հիշեցնում էր

[50]«Հույսի կանաչ ճանապարհ» շարժման խորհրդի հայտարարությունը տես՝ http://www.kaleme.com/1390/07/14/klm-75648/, (մուտք՝ 10.10.2011):

[51] Նույն տեղում:

իսլամական աշխարհին իսլամի[52] հովանու ներքո համախմբվելու և մուսուլմանական ումմայի վերածննդի անհրաժեշտության մասին: Օգտագործելով հակաարևմտյան հռետորաբանություն արաբական աշխարհում տեղի ունեցող ապստամբությունները մեկնաբանելիս՝ պաշտոնական Թեհրանը փորձում էր ետ պահել արաբական երկրների ցուցարարներին Արևմուտքի հետ հարաբերություններ ստեղծելու հնարավոր մտադրությունից, և նրանց կողմնորոշել դեպի իսլամական Իրան:

Պետք է ընդգծել նաև, որ «Արաբական գարնան» իրադարձություններին արձագանքելիս Իրանի Իսլամական Հանրապետության արտաքին քաղաքականության հեղափոխական գաղափարախոսությունը շատ հաճախ չէր կարողանում խուսափել «Realpolitik»-ի թելադրած կանոնների ազդեցությունից: Այսպես, ԻԻՀ-ն ջերմեռանդորեն աջակցում էր այն երկրների հեղափոխականներին, որոնց իշխանությունների հետ հակասություններ ուներ կրոնական ու աշխարհաքաղաքական մակարդակներում (Եգիպտոս, Թունիս, Բահրեյն, Եմեն, Լիբիա) և դատապարտում էր իր դաշնակից երկրի ապստամբներին (Սիրիա):

Ի մի բերելով վերը ասվածը՝ կարելի է փաստել, որ «Արաբական գարնան» համատեքստում Իրանի համար ավելի մեծ կարևորություն ունեն այն երկրների իրադարձությունները, որտեղ հնարավոր է ակտիվացնել իրանական ազդեցությունը ընդդեմ Եգիպտոսի, Թուրքիայի և Սաուդյան Արաբիայի.դրանք են Սիրիան, Եգիպտոսը, Բահրեյնը:

Երկրի ընդդիմությունն էլ, իր հակակառավարական գործողությունները արաբական հեղափոխությունների նախակարապետը համարելով, փորձում էր բարձրացնել «Կանաչ շարժում» կոչվող հոսանքի վարկանիշը երկրի ներսում ու տարածաշրջանում, ինչպես նաև թուլացնել երկրի իշխանության դիրքերը՝ նրանց արաբական երկրների տապալված

[52] Պետք է ընդգծել, որ Ալի Խամենեին իսլամ ասելով, իսլամի շիայական ուղղությունն ի նկատի ունի:

կառավարությունների հետ համեմատելով: «Կանաչ շարժումն» իհարկե տարբեր պատճառներով չկարողացավ կամ ավելի ճիշտ նրան թույլ չտրվեց [53] վերակազմավորվել ու բողոքի նոր ալիք բարձրացնել: Իսկ Իրանի իշխանության՝ «Արաբական գարնանը» տված արձագանքների արդյունքում ԻԻՀ-ի արտաքին քաղաքականության ոլորտում տեղի ունեցան իրադարձություններ, որոնք թեև շրջադարձային փոփոխությունների չբերեցին Իրանի և արաբական երկրների փոխհարաբերությունների մեջ, սակայն էական առաջընթաց գրանցեցին նրանց հարաբերություններում:

[53] Իրանի ընդդիմության հանրահավաքները «Արաբական գարնան» թեժ ժամանակահատվածում ճնշվում էին երկրի իշխանությունների կողմից առանձնակի խստությամբ. Ընդդիմության հավաքներին մասնակցած բազմաթիվ քաղաքացիներ ձերբակալվել են ու ազատազրկման դատապարտվել, իսկ շարժման առաջնորդները տնային կալանքի տակ են առ այսօր:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՆԵՐՈՒԺԸ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ ՆԱԽՔԱՆ «ԱՐԱԲԱԿԱՆ ԳԱՐՈՒՆԸ» (ԸՍՏ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՐՑՄԱՆ (WVS) 2008 Թ. ՏՎՅԱԼՆԵՐԻ)

Տիգրան Մաթոսյան

2011 թվականին Եգիպտոսում տեղի ունեցած հեղափոխության/հեղաշրջման պատճառների մասին խոսելիս վերլուծաբանները որպես կանոն շեշտում են դրանցից մի քանիսը՝ աղքատություն, մեծածավալ գործազրկություն, կոռուպցիա, ինչպես նաև Հոսնի Մուբարաքի երեսնամյա կառավարման ավտորիտար բնույթը: Թեև պատճառների լայն ներկապնակի մասին է վկայում նաև Թահրիրի ցուցարարների ամենահայտնի կարգախոսը՝ «Հաց, ազատություն, սոցիալական արդարություն»[1], այնուամենայնիվ, մինչ օրս հստակ չէ, թե վերոհիշյալ պատճառներից ո՞րն էր ավելի ծանրակշիռ: Աղքատությամբ պայմանավորված հուսահատությունն էր արդյո՞ք Եգիպտոսի տարբեր քաղաքներում մարդկանց փողոց դուրս մղող որոշիչ ուժը: Գուցե աղքատությունը մասնակի՞ գործոն էր, իսկ ցուցարարներին առաջնորդող հիմնական պահանջները զուտ զաղափարակա՞ն էին: Գուցե գործոններից յուրաքանչյուրը հավասա՞ր կշիռ ուներ:

Այս հարցերին պատասխան տալու համար անհրաժեշտ է առնվազն տեղեկություններ ունենալ քաղաքական ակտիվություն ցուցաբերած մարդկանց սոցիալական պատկանելության և արժեքային կողմնորոշումների վերաբերյալ: (Ընդ որում, նման տվյալների ձեռքբերումը կարող է որոշակի բարդություններ առաջացնել՝ հաշվի առնելով ուսումնասիրվող երևույթի բնույթը:) Խնդրի լուծումներից մեկը, թերևս, մինչև 2011 թվականը Եգիպտոսում քաղաքականապես ակտիվ հասարակական շերտի ուսումնասիրումն է, քանզի հավանականությունը մեծ է, որ 2011 թ. իրադարձությունների մասնակիցները հենց այս շերտին

[1] Mehrez S., “Watching” Tahrir, *Global Dialogue. Newsletter for the International Sociological Association*. Volume 2, Issue 3, p. 5.

պատկանող մարդիկ են: Նման հնարավորություն է ընձեռում 2008 թվականին Եգիպտոսում Արժեքների համաշխարհային հարցում (World Values Survey) նախագծի շրջանակներում իրականացված քանակական ուսումնասիրությունը[2], որը կարող է լույս սփռել եգիպտական հեղափոխության/հեղաշրջման ակտիվ մասնակիցների ով լինելու խնդրի, հետևաբար՝ նրանց գործողությունների հնարավոր դրդապատճառների վրա:

Քաղաքական ակտիվությունը Եգիպտոսում 2008 թվականին

Եգիպտոսում անցկացված համաշխարհային արժեքների հարցումը (այսուհետ՝ WVS) բացահայտում է այն փաստը, որ հարցվածների մի փոքր հատվածը՝ մոտավորապես 10 տոկոս, քաղաքական մասնակցության պոտենցիալ ունի: Մասնավորապես, որպես քաղաքական մասնակցության ցուցիչ է ընտրվել հարցվածներին ուղղված հետևյալ հարցը. «Քաղաքական ակտիվության ո՞ր տեսակներին եք մասնակցել, կամ կմասնակցեիք, կամ երբեք չէիք մասնակցի»՝ իր երեք ենթահարցերով. «Որևէ միջնորդություն ստորագրելը» (այլ կերպ ասած՝ «Ստորագրահավաքի մասնակցելը»), «Որևէ բոյկոտի միանալը» և «Խաղաղ հանրահավաքների մասնակցելը»:

Ինչպես կարելի է տեսնել ստորև ներկայացված աղյուսակներից (1, 2, 3), մինչ հարցումը, եգիպտոսի բնակչության

[2] WVS-ը միջազգային ընդգրկում ունեցող հետազոտական նախագիծ է, որի նպատակն է ուսումնասիրել մարդկանց արժեքային կողմնորշումները, վերաբերմունքը և ընկալումները տարբեր երևույթների նկատմամբ: Հետազոտությունն անցկացվում է 1981 թ.-ից սկսած և մինչ օրս ընդգրկել է ավելի քան 100 երկիր: Ավելի մանրամասն տե՛ս նախագծի պաշտոնական կայքը՝ http://www.worldvaluessurvey.org/ (մուտք՝ 24.05.2012):
2008 թ.-ին Եգիպտոսում WVS-ի կողմից անցկացված հարցմանը մասնակցել է 3050 քաղաքացի: Հարցումը ներկայացուցչական է եղել երկրի ողջ տարածքի համար (բացառությամբ հինգ սահմանամերձ նահանգների, ուր բնակվում է Եգիպտոսի բնակչության ընդմանեը 1.8%-ը): Ընտրանքի և հարցման մեթոդաբանության այլ հարցերի վերաբերյալ մանրամասն տես Եգիպտոսին վերաբերող փաստաթուղթը WVS-ի պաշտոնական կայքի հետևյալ բաժնում՝ http://www.wvsevsdb.com/wvs/WVSDocumentation.jsp (մուտք՝ 24.05.2012):

ցուցաբերած քաղաքական ակտիվությունը բավականին փոքր է եղել, սակայն հետագայում սեփական մասնակցությունը հնարավոր համարող մարդկանց քանակը մի քանի անգամ շատ է: Օրինակ՝ միջնորդություն ստորագրելու պատրաստակամություն ունեցող մարդիկ կազմում են 14 տոկոս, բոյկոտի միանալու և խաղաղ հանրահավաքի պատրաստակամություն ունեցողները՝ 7-ական տոկոս: Աղյուսակները նաև բացահայտում են այն իրողությունը, որ Եգիպտոսի բնակչության ճնշող մեծամասնությունը 2008 թվականի դրությամբ պատրաստ չի եղել քաղաքական ակտիվության: Այս հանգամանքը կարող է հուշել այն մասին, որ 2011 թ. բողոքի ցույցերը համատարած բնույթ չեն ունեցել, և բնակչության մեծագույն մասը գտնվել է դիտորդի կարգավիճակում:

Քաղաքական ակտիվության ո՞ր տեսակներին եք մասնակցել, կամ կմասնակցեիք, կամ երբեք չէիք մասնակցի[3]*:*

(Աղյուսակ 1)

Որևէ միջնորդություն ստորագրելը	
Ստորագրել եմ	6.4
Կարող եմ ստորագրել	14.1
Երբեք չեմ ստորագրի	79.5

(Աղյուսակ 2)

Որևէ բոյկոտի միանալը	
Միացել եմ	1.2
Կարող եմ միանալ	7.3
Երբեք չեմ միանա	91.5

(Աղյուսակ 3)

Խաղաղ հանրահավաքներին մասնակցելը	
Մասնակցել եմ	1.4
Կարող եմ մասնակցել	6.8

[3] Տվյալները բերված են ըստ World Values Survey (2009). 1981-2008 Official Aggregate v.20090901. World Values Survey Association (www.worldvaluessurvey.org). Aggregate File Producer: ASEP/JDS, Madrid (այսուհետ՝ World Values Survey 2009):

Երբեք չեմ մասնակցի	91.8

Այնուամենայիվ, հետաքրքիր կլիներ հասկանալ, թե ովքեր են այն մարդիկ, որոնք երբևիցե մասնակցել էին կամ ապագայում պատրաստ էին մասնակցել քաղաքական վերոհիշյալ գործողություններին: Այդ մարդկանց մեջ կան կանայք, արդյո՞ք նրանք երիտասարդ են, ի՞նչ կրթություն ունեն, որտե՞ղ են բնակվում և ի՞նչ սոցիալական խավի են պատկանում:

Քաղաքական մասնակցության ներուժ ունեցող եգիպտացիների սեռատարիքային կազմը և աշխարհագրական տեղաբաշխվածությունը

Հետաքրքիր է, որ պատրիարխալ ավանդույթներ ունեցող Եգիպտոսում քաղաքական ակտիվություն ցուցաբերող մարդկանց ուղիղ կեսը կանայք են: Ստորև ներկայացված աղյուսակներում (4, 5, 6)[4] կարելի է տեսնել, որ քաղաքական մասնակցության հարցում իգական և արական սեռի ներկայացուցիչները հավասար դիրքերում են. ինչպես միջնորդություններ ստորագրելու, այնպես էլ բոյկոտներին և հանրահավաքներին մասնակցելու ներուժ ունեցողների մոտավորապես կեսը կանայք են:

(Աղյուսակ 4)

Որևէ միջնորդություն ստորագրելը	*Արական*	*Իգական*
Ստորագրել եմ	51	49
Կարող եմ ստորագրել	49.2	50.8
Երբեք չեմ ստորագրի	35.3	64.7

(Աղյուսակ 5)

Որևէ բոյկոտի միանալը	*Արական*	*Իգական*
Միացել եմ	47.2	52.8
Կարող եմ միանալ	46.4	53.6
Երբեք չեմ միանա	37.5	62.5

[4] World Values Survey 2009.

(Աղյուսակ 6)

Խաղաղ հանրահավաքներին մասնակցելը	*Արական*	*Իգական*
Մասնակցել եմ	53.5	46.5
Կարող եմ մասնակցել	54.8	45.2
Երբեք չեմ մասնակցի	36.8	63.2

Եգիպտոսում 2011 թվականի սկզբին տեղի ունեցած իրադարձությունները վավերացրած տեսանյութերը և լուսանկարները ևս կարող են հաստատել իգական սեռի քաղաքական ակտիվությունը: Դրանք կարող են խոսել նաև այն իրողության մասին, որ եգիպտական հեղափոխության/ հեղաշրջման շարժիչ ուժը երիտասարդներն էին: Դրա մասին են հուշում նաև 2008 թվականի տվյալները: Այսպես, քաղաքական մասնակցություն ցուցաբերելու ներուժ ունեցող մարդկանց մոտավորապես կեսը 35 տարեկանից ցածր է: Հատկապես խաղաղ հանրահավաքների դեպքում, նման միջոցառման երբևիցե մասնակցած մարդկանց 63 տոկոսն է 35 տարեկանից ցածր, իսկ ապագայում մասնակցելու պատրաստամություն հայտնածների 52 տոկոսը (աղյուսակներ 7, 8, 9)[5]:

(Աղյուսակ 7)

Որևէ միջնորդություն ստորագրելը	*Մինչև 25*	*26-35*	*36-48*	*49-60*	*61-75*	*75-ից բարձր*
Ստորագրել եմ	16.3	21.9	26.5	21.9	11.7	1.5
Կարող եմ ստորագրել	16.6	29.8	28.9	16.8	6.8	1.2
Երբեք չեմ ստորագրի	15.1	28	27.3	17.7	10.3	1.6

[5] World Values Survey 2009.

(Աղյուսակ 8)

Որևէ բոյկոտի միանալը	*Մինչև 25*	*26-35*	*36-48*	*49-60*	*61-75*	*75-ից բարձր*
Միացել եմ	30.6	33.3	11.1	8.3	13.9	2.8
Կարող եմ միանալ	19.6	31.3	29	13.8	5.8	0.4
Երբեք չեմ միանա	14.9	27.5	27.6	18.3	10.1	1.6

(Աղյուսակ 9)

Խաղաղ հանրահավաքներին մասնակցելը	*Մինչև 25*	*26-35*	*36-48*	*49-60*	*61-75*	*75-ից բարձր*
Մասնակցել եմ	44.2	18.6	11.6	11.6	9.3	4.7
Կարող եմ մասնակցել	23.6	28.8	28.8	13	4.8	1
Երբեք չեմ մասնակցի	15.4	27.8	27.5	17.9	9.9	1.5

Ստորև ներկայացված աղյուսակը (10) ցույց է տալիս, որ քաղաքական մասնակցության ներուժը հիմնականում կուտակված է մի քանի խոշոր կենտրոններում, մասնավորապես, մայրաքաղաք Կահիրեում, Ալեքսանդրիա, Շարկիա, Դաքահլիա և Կալյուբիա նահանգներում: Հատկապես աչքի է ընկնում մայրաքաղաքը (Կահիրեն և Գիզան միասին վերցրած), որտեղ, օրինակ, կենտրոնացած է խաղաղ ցույցերին մասնակցածների և մասնակցելու պատրաստակամություն ունեցողների շուրջ 40 տոկոսը: Խաղաղ ցույցերի հավանական մասնակիցների քանակով երկրորդ և երրորդ տեղերում են համապատասխանաբար Ալեքսանդրիան՝ 13 և Շարկիան՝ 11 տոկոս:

Մինչդեռ քաղաքական պասիվությամբ Եգիպտոսի առավել աչքի ընկնող նահանգներն են Սուեզը, Քաֆր ալ-Շեյխը, Իսմայիլիան և Լուքսորը:

(Աղյուսակ 10)[6]

	Որևէ միջնորդություն ստորագրելը		Որևէ բոյկոտի միանալը		Խաղաղ հանրահավաք-ներին մասնակցելը	
Նահանգ	Ստորագրել եմ	Կարող եմ ստորագրել	Միացել եմ	Կարող եմ միանալ	Մասնակցել եմ	Կարող եմ մասնակցել
Կահիրե	14.8	24.5	13.9	22.8	27.9	19.7
Ալեքսանդրիա	9.7	11.9	5.6	12.5	4.7	13
Պորտ Սաիդ	1	2.6	5.6	3.6	2.3	2.4
Սուեզ	0	0.5	0	0.4	0	0.5
Դամիետա	0.5	3.7	0	1.8	0	1.4
Դակահլիա	5.6	5.1	5.6	4.9	7	5.3
Շարկիյա	4.1	14	5.6	14.3	2.3	11.5
Կալյուբիա	13.3	2.6	11.1	4.5	9.3	6.3
Քաֆր ալ-Շեյխ	0.5	0.9	0	0.4	0	0.5
Ղարբիա	10.7	3.3	2.8	0.9	2.3	1.4
Մենուֆիա	3.1	3	5.6	1.3	0	1
Բուհեյրա	3.1	4.2	8.3	7.1	7	4.3
Իսմայիլիա	2.0	1.2	0	0	0	0
Գիզա	7.7	7.9	11.1	12.9	9.3	18.8
Բանի Սուեյֆ	4.6	1.9	8.3	0.9	11.6	1.4
Ֆայում	2.6	0.9	2.8	0	2.3	0
Մինյա	4.6	1.4	5.6	4	9.3	1.9
Ասյուտ	1.5	1.9	0	3.1	0	3.8
Սոհագ	4.1	5.6	2.8	1.8	0	2.4
Կինա	4.1	1.6	5.6	0.4	2.3	1
Ասուան	0	0.5	0	0.9	2.3	1.9
Լուքսոր	2.6	0.9	0	1.3	0	1.4

[6] World Values Survey 2009.

Քաղաքական մասնակցության ներուժ ունեցող եգիպտացիների սոցիալական կազմը

Ուշագրավ են քաղաքական մասնակցության ներուժ ունեցող մարդկանց պատասխանները իրենց եկամուտների և սոցիալական պատկանելության վերաբերյալ: Դրանք թույլ են տալիս նախնական ենթադրություն անել առ այն, որ 2011 թվականի դեպքերի ակտիվ մասնակիցների մեծամասնության համար բողոքի գործողությունների հիմնական դրդապատճառ կարող էր հանդիսանալ ոչ թե «հացը», այլ «ազատությունը» կամ «սոցիալական արդարությունը»: Մասնավորապես, 2008 թվականի դրությամբ քաղաքականապես ակտիվ զանգվածի եկամուտները զգալիորեն գերազանցում են եգիպտական ընդհանուր եկամուտների միջինը, իսկ այս նույն զանգվածի մի զգալի հատվածը, սեփական իսկ ինքնագնահատմամբ, պատկանում է եգիպտական միջին խավի տարբեր հատվածներին:

Այսպես, WVS-ը եգիպտացի հարցվողներին խնդրել էր նշել իրենց եկամուտների չափը 1-ից 10 բալանոց սանդղակի վրա, որտեղ 1-ը նշանակում էր ամենացածր եկամուտը, իսկ 10-ը՝ ամենաբարձր: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ եգիպտական բոլոր եկամուտների միջինը (M) թեքված է դեպի նվազագույն բևեռը (M=3.86 SD=1.935): Մինչդեռ, քաղաքական ակտիվության ներուժ ունեցող հարցվածների եկամուտների միջինը ավելի բարձր է համընդհանուր եգիպտական միջինից: Ինչպես կարելի է տեսնել ստորև ներկայացված աղյուսակներում (11, 12, 13)[7], օրինակ, միջնորդություն ստորագրածների և ստորագրելու պատրաստակամություն ունեցողների եկամուտների միջինը (M) համապատասխանաբար 4.92 և 4.52 է: Այս ցուցանիշները բարձր են նաև քաղաքականապես պասիվ խմբի եկամուտների միջինից՝ (M=4.32): Տարբերությունն ավելի ակնհայտ է հանրահավաքների պարագայում: Այստեղ, խաղաղ

[7] World Values Survey 2009.

հանրահավաքներին մասնակցածների և մասնակցության պատրաստակամություն հայտնածների եկամուտների միջինը (M) համապատասխանաբար 5 և 4.45 է՝ համեմատած հանրահավաքների առումով պասիվ կեցվածք ունեցողների եկամուտների հետ՝ 3.8.

(Աղյուսակ 11)

Որևէ միջնորդություն ստորագրելը	*Եկամուտների միջինը 1-ից (ամենացածր) 10 (ամենաբարձր) բալանոց սանդղակով*
Ստորագրել եմ	M=4.92 (SD=2.358)
Կարող եմ ստորագրել	M=4.52 (SD=2.19)
Երբեք չեմ ստորագրի	M=4.32 (SD=2.205)

(Աղյուսակ 12)

Որևէ բոյկոտի միանալը	*Եկամուտների միջինը 1-ից (ամենացածր) 10 (ամենաբարձր) բալանոց սանդղակով*
Միացել եմ	M=4.72 (SD=2.336)
Կարող եմ միանալ	M=4.74 (SD=2.238)
Երբեք չեմ միանա	M=4.42 (SD=2.239)

(Աղյուսակ 13)

Խաղաղ հանրահավաքներին մասնակցելը	*Եկամուտների միջինը 1-ից (ամենացածր) 10 (ամենաբարձր) բալանոց սանդղակով*
Մասնակցել եմ	M=5 (SD=1.65)
Կարող եմ մասնակցել	M=4.45 (SD=1.88)
Երբեք չեմ մասնակցի	M=3.8 (SD=1.93)

Հետաքրքիր է նաև, թե քաղաքականապես ակտիվ եգիպտացիներն իրենք իրենց որ սոցիալական խավի ներկայացուցիչ են համարում: WVS-ի կողմից այս հարցին տրված պատասխանները ևս ամրապնդում են եգիպտական իրադարձություններում գաղափարական գործոնների մեծ կշիռ ունենալու հիպոթեզը: Մասնավորապես, WVS-ը եգիպտացիներին

խնդրել էր նշել, թե նշված հինգ սոցիալական խավերից (1. վերին խավ, 2. վերին միջին խավ, 3. ստորին միջին խավ, 4. աշխատավորական խավ և 5. ստորին խավ) իրենք իրենց որի՞ն են դասում: Ինչպես կարելի է նկատել ստորև ներկայացված աղյուսակում (14), Եգիպտոսի բնակչության մեջ ամենամեծ տեսակարար կշիռն ունի ստորին միջին խավը՝ 45 տոկոս, որին հաջորդում են ստորին և աշխատավորական խավերը՝ համապատասխանաբար 21 և 19 տոկոս:

(Աղյուսակ 14)[8]

Վերին խավ	0.9
Վերին միջին խավ	13.3
Ստորին միջին խավ	44.9
Աշխատավորական խավ	19.4
Ստորին խավ	21.5

Ինչպես կարելի է տեսնել հաջորդ աղյուսակներում (15, 16, 17)[9], քաղաքականապես ակտիվ եգիպտացիների ճնշող մեծամասնությունը պատկանում է միջին խավին, որտեղ, իր հերթին, գերակշռում է ստորին միջին խավը: Օրինակ՝ որևէ բոյկոտի միացած կամ միանալու պատրաստակամություն ունեցող մարդկանց մոտավորապես երկու երրորդը միջին խավին է պատկանում: Նույն ցուցանիշը վերաբերում է խաղաղ հանրահավաքներին մասնակցությանը: Մինչդեռ ստորին և աշխատավորական խավերը թեև զգալի ներկայություն ունեն, սակայն մեծամասնություն չեն կազմում: Չնչին է նաև վերին խավի քաղաքական մասնակցության աստիճանը:

(Աղյուսակ 15)

Որևէ միջնորդություն ստորագրելը	*Վերին խավ*	*Վերին միջին խավ*	*Ստորին միջին խավ*	*Աշխատավորական խավ*	*Ստորին խավ*
Ստորագրել եմ	2.1	13.3	45.6	21.5	17.4
Կարող եմ	0.2	18.6	43.4	24.2	13.5

[8] World Values Survey 2009.

[9] Նույն տեղում:

ստորագրել					
Երբեք չեմ ստորագրի	80.8	73.9	79.9	75.3	86

(Աղյուսակ 16)

Որևէ բոյկոտի միանալը	*Վերին խավ*	*Վերին միջին խավ*	*Ստորին միջին խավ*	*Աշխատավորական խավ*	*Ստորին խավ*
Միացել եմ	0	31.4	54.3	8.6	5.7
Կարող եմ միանալ	0	20.5	48.2	19.2	12.1
Երբեք չեմ միանա	0.9	12.5	44.6	19.5	22.5

(Աղյուսակ 17)

Խաղաղ հանրահավաքների և մասնակցելը	*Վերին խավ*	*Վերին միջին խավ*	*Ստորին միջին խավ*	*Աշխատավորական խավ*	*Ստորին խավ*
Մասնակցել եմ	0	35.7	47.6	7.1	9.5
Կարող եմ մասնակցել	1	20.7	49	15.9	13.5
Երբեք չեմ մասնակցի	0.9	12.4	44.6	19.8	22.3

Քաղաքական մասնակցության ներուժ ունեցող հատվածի կրթական ցենզը

Քաղաքականապես ակտիվ եգիպտացիների սոցիալական պատկանելության կարևոր ցուցիչ կարող է հանդիսանալ նաև նրանց կրթական ցենզը: Տվյալները կրկին ամրապնդում են գաղափարական շարժման թեզը: Բանն այն է, որ քաղաքական ակտիվության ներուժ ունեցողների մեջ զգալի չէ կրթություն չունեցողների թիվը, մինչդեռ շոշափելի ներկայություն ունեն բարձրագույն կրթությամբ եգիպտացիները (աղյուսակներ 17, 18, 19)[10]: Օրինակ՝ բոյկոտների և խաղաղ ցույցերի մասնակցած կամ

[10] World Values Survey 2009.

մասնակցության պատրաստակամություն ունեցող եգիպտացիների շրջանում ընդհանրապես որևէ ֆորմալ կրթություն չունեցողների թիվը տատանվում է 10 տոկոսի շրջակայքում: Մինչդեռ բոյկոտների պարագայում մասնակցածների և մասնակցության պատրաստակամություն հայտնածների մեջ բարձրագույն կրթություն ունեցող մարդիկ կազմում են համապատասխանաբար 36 և 28 տոկոս, իսկ խաղաղ հանրահավաքների դեպքում՝ 44 և 28 տոկոս: (Նշենք, որ ընդհանրապես ֆորմալ կրթություն չի ստացել Եգիպտոսում բոլոր հարցվածների 29 տոկոսը, իսկ բարձրագույն կրթություն ունեցողների թիվը կազմել է 13 տոկոս:) Ամեն դեպքում, կարելի է ասել, որ քաղաքական ակտիվություն ունեցող մարդկանց շուրջ կեսը առնվազն լրիվ միջնակարգ կրթություն ունի:

(Աղյուսակ 18)

Որևէ միջնորդություն ստորագրելը	*Ֆորմալ կրթության բացակայություն*	*Տարրական կրթություն – ոչ լրիվ միջնակարգ*	*Լրիվ միջնակարգ*	*Համալսարանական կրթություն՝ աստիճանով*
Ստորագրել եմ	19.4	33.2	26	21.4
Կարող եմ ստորագրել	13.8	30.1	32.4	23.8
Երբեք չեմ ստորագրի	32.7	29.4	27.3	10.6

(Աղյուսակ 19)

Որևէ բոյկոտի միանալը	*Ֆորմալ կրթության բացակայություն*	*Տարրական կրթություն – ոչ լրիվ միջնակարգ*	*Լրիվ միջնակարգ*	*Համալսարանական կրթություն՝ աստիճանով*
Միացել եմ	11.1	22.3	30.6	36.1
Կարող եմ միանալ	10.3	26.4	35.7	27.7
Երբեք չեմ միանա	30.9	30.2	27.3	11.6

(Աղյուսակ 20)

Խաղաղ հանրահավաքներին մասնակցելը	*Ֆորմալ կրթության բացակայություն*	*Տարրական կրթություն – ոչ լրիվ միջնակարգ*	*Լրիվ միջնակարգ*	*Համալսարանական կրթություն՝ աստիճանով*
Մասնակցել եմ	9.3	14	32.6	44.2
Կարող եմ մասնակցել	8.7	30.3	33.2	27.9
Երբեք չեմ մասնակցի	31	29.9	27.5	11.5

Ընդհանրապես, «Արաբական գարնան» տարբեր դրսևորումները նկարագրելիս լրագրողները և վերլուծաբանները շեշտադրում են համացանցի և սոցիալական տարբեր ցանցերի դերակատարությունը: Այս առումով բացառություն չէ նաև Եգիպտոսը: WVS-ի տվյալները կարող են լույս սփռել այն հարցի վրա, թե եգիպտական իրադարձություններից մոտ երկու տարի առաջ համացանցն ինչ դերակատարություն ուներ որպես հաղորդակցության և լրատվություն ստանալու միջոց ընդհանրապես Եգիպտոսում և մասնավորապես քաղաքական ակտիվության ներուժ ունեցող մարդկանց համար: WVS-ի տվյալներից, օրինակ, մենք իմանում ենք, որ 2008 թվականին Եգիպտոսում համացանցից և էլփոստից օգտվողները կազմել են ընդամենը 9 տոկոս: Տեղեկատվություն ստանալու հիմնական միջոց են հանդիսացել հեռուստատեսությունը և զրույցները ընկերների և գործընկերների հետ (աղյուսակ 21): (Նշենք, որ համակարգիչ օգտագործողների թիվը Եգիպտոսում ևս բավականին սահմանափակ է. հարցվածների 77 տոկոսը պատասխանել է, որ ընդհանրապես համակարգիչ չի օգտագործում, ևս 4 տոկոսը ասել է, թե չգիտի՝ դա ինչ է):

(Աղյուսակ 21)[11]

Տեղեկատվություն ստանալու	*Անցյալ շաբաթ*	*Անցյալ շաբաթ*

[11] World Values Survey 2009.

աղբյուրները	*օգտագործել եմ*	*չեմ օգտագործել*
Օրաթերթ	24.2	75.8
Նորությունների հեռուստա-ռադիո հաղորդումներ	79.3	20.7
Տպագիր ամսագրեր	6.3	93.7
Վերլուծական հեռուստա-ռադիո ծրագրեր	53.9	46.1
Գրքեր	9.9	90.1
Ինտերնետ, էլփոստ	8.9	91.9
Զրույցներ ընկերների կամ գործընկերների հետ	69.3	30.7

Համեմատելով համընդհանուր եգիպտական տվյալները քաղաքականապես ակտիվ ռեսպոնդենտների տվյալների հետ՝ կարելի է եզրակացնել, որ համացանցի օգտագործման աստիճանը վերջիններիս շրջանում մի քանի անգամ ավելի բարձր է: Օրինակ՝ հանրահավաքներին մասնակցածների և մասնակցության պատրաստակամություն հայտնածների շրջանում ինտերնետ և էլփոստ օգտագործողները կազմում են համապատասխանաբար 35 և 20 տոկոս: Հանրահավաքների դեպքում այդ ցուցանիշը կազմում է 34 և 20 տոկոս: Սա նշանակում է, որ արդեն 2011 թվականին, համացանցը կարող էր զգալի դերակատարություն ունենալ քաղաքական մոբիլիզացիայի համար: (Ստորև ներկայացվող աղյուսակներում (22, 23, 24)[12] բերվում են նաև օրաթերթերին և գրքերին վերաբերող տվյալները, քանի որ դրանք ևս կրթական ցենզի ցուցիչներ են հանդիսանում):

(Աղյուսակ 22)

Որևէ միջնորդություն ստորագրելը	*Օրաթերթ*	*Գրքեր*	*Ինտերնետ, էլփոստ*
Ստորագրել եմ	39.1	14.7	14.4
Կարող եմ ստորագրել	36.3	18.8	19.1
Երբեք չեմ ստորագրի	20.8	7.9	6.7

[12] World Values Survey 2009.

(Աղյուսակ 23)

Որևէ բոյկոտի միանալը	*Օրաթերթ*	*Գրքեր*	*Ինտերնետ, Էլփոստ*
Միացել եմ	51.4	39.4	35.5
Կարող եմ միանալ	41.9	17.1	20.5
Երբեք չեմ միանա	22.3	8.9	7.6

(Աղյուսակ 24)

Խաղաղ հանրահավաքների և մասնակցելը	*Օրաթերթ*	*Գրքեր*	*Ինտերնետ, Էլփոստ*
Մասնակցել եմ	58.5	29.3	34.1
Կարող եմ մասնակցել	42.3	22.6	22.3
Երբեք չեմ մասնակցի	22.2	8.6	7.5

Հասարակության տարբեր խմբերի կրթական ցենզի ոչ ուղղակի ցուցիչ թերևս կարող է հանդիսանալ նաև այդ խմբերում առկա ճակատագրապաշտության՝ ֆատալիզմի մակարդակը: Կարելի է ենթադրել՝ որքան ցածր է մարդու գիտելիքների մակարդակը, այնքան ցածր է վստահությունը սեփական ուժերի նկատմամբ և այնքան մեծ ապավինումը ճակատագրին կամ գերբնական երևույթներին: Ընդհանուր առմամբ, Եգիպտոսը կարելի է համարել մեծապես ճակատագրապաշտական երկիր, քանի որ WVS-ին մասնակցած բոլոր եգիպտացիների ճակատագրապաշտության մակարդակի միջինը (M) 10 բալանոց սանդղակով (որտեղ 1-ը նշանակում է «Ամեն ինչ կանխորոշված է ճակատագրով», իսկ 10-ը՝ «Մարդն ինքն է իր ճակատագրի տերը») կազմում է 2.69 (SD=2.92):

Սակայն, հետաքրքիր է, որ քաղաքական ակտիվության ներուժ ունեցող եգիպտացիների վստահությունը սեփական ուժերի նկատմամբ ավելի բարձր է: Օրինակ՝ այս հարցում խաղաղ հանրահավաքներին մասնակցելու պատրաստակամություն

ունեցող մարդկանց միջին ցուցանիշը (M) 3.49 է՝ մասնակցության ցանկություն չունեցողների 2.62-ի դիմաց (p=.000): Վիճակագրորեն նույն նշանակալի տարբերությունը պահպանվում է նաև քաղաքական ակտիվության մյուս երկու ձևերի դեպքում:

Կողմնորոշում դեպի նյութական/իդեալիստական արժեքները

WVS-ի հեղինակները, միացնելով 12 հարց (օրինակ՝ վերաբերմունքը բնապահպանական հարցերին, վերաբերմունքը ազատ ինքնարտահայտմանը և այլն), ստեղծել են մեկ միասնական ցուցիչ, որը թույլ է տալիս պատկերացում կազմել՝ արդյոք հարցվողներն իրենց կողմնորոշումներով ավելի հակված են դեպի նյութական («մատերիալիստական»), թե հետնյութական («պոստմատերիալիստական», այլ կերպ՝ իդեալիստական) արժեքները: Եգիպտոսի քաղաքականապես ակտիվ փոքրամասնության և քաղաքականապես պասիվ մեծամասնության պատասխանների համադրության արդյունքում ի հայտ է գալիս այն իրողությունը, որ երկու խմբերի կողմնորոշումներում վիճակագրորեն նշանակալի տարբերություն գոյություն ունի: Օրինակ՝ 5 բալանոց սանդղակով, որտեղ 1-ը նշանակում է մատերիալիստական կողմնորոշում, իսկ 5-ը՝ հետ-մատերիալիստական, խաղաղ հանրահավաքներին մասնակցելու պատրաստակամություն ունեցող մարդկանց միջին ցուցանիշը (M) 1.85 է՝ մասնակցության ցանկություն չունեցողների 1.43-ի դիմաց (p=.000): Մոտավորապես նույն տարբերությունը գործում է քաղաքական ակտիվության մյուս երկու դրսևորումների դեպքում:

Քաղաքական ակտիվության ներուժ ունեցող փոքրամասնության համեմատաբար ավելի մեծ կողմնորոշումը դեպի հետմատերիալիստական արժեքները ևս մեկ անուղղակի ապացույց է այն ենթադրության, որ 2011 թվականի իրադարձությունների շարժիչ հիմնական ուժը կարող էր գաղափարական լինել:

Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ վերոհիշյալ տարբերությունների հետ մեկտեղ, որոշ ոլորտներում

քաղաքականապես ակտիվ և պասիվ հատվածները նույնական բնութագրերն ունեն: Օրինակ՝ նույն WVS-ից պարզ է դառնում, որ Եգիպտոսը միջանձնային վստահության առումով բավականին ցածր սոցիալական կապիտալ ունեցող երկիր է: Միջանձնային վստահության ցածր մակարդակը քաղաքականապես ակտիվ և պասիվ հատվածների միջև չի տարբերվում: Օրինակ՝ հանրահավաքներին մասնակցելու ցանկություն հայտնած մարդկանց շրջանում վստահության միջինը (M) 1-ից 10 բալանոց սանդղակով (1-ը վստահության ամենացածր, 10-ը՝ ամենաբարձր աստիճանը) 1.80 է՝ մասնակցության ցանկություն չունեցողների 1.82-ի դիմաց (p=.650): Հավասարապես բարձր է նաև երկու խմբերի կրոնականության մակարդակը: «Ի՞նչ տեղ է գրավում Աստված Ձեր կյանքում» հարցին, երկու խմբի ներկայացուցիչների միջինը (M) 1-ից 10 բալանոց սանդղակով միմյանցից վիճակագրորեն չի տարբերվում՝ հանրահավաքներին մասնակցելու ցանկություն հայտնած մարդկանց շրջանում կազմելով 9.88, մասնակցության ցանկություն չունեցողների շրջանում՝ 9.91 (p=610):

Ամփոփում

Սույն հոդվածի հիմքում ընկած էր այն ենթադրությունը, համաձայն որի 2011 թվականի հունվար-փետրվար ամիսներին Եգիպտոսում տեղի ունեցած իրադարձությունների ակտիվ մասնակիցներին հատուկ էին այն նույն հատկանիշները, որոնք բնութագրում են WVS կողմից 2008 թվականին Եգիպտոսում բացահայտած քաղաքանապես ակտիվ զանգվածին:

Հոդվածը քանակական տվյալների վերլուծության միջոցով փորձում է փաստարկել, որ թահրիրյան «Հաց, ազատություն, սոցիալական արդարություն» կարգախոսում վերջին երկու գաղափարները կարող էին ավելի ծանրակշիռ դեր ունենալ, քան նյութական պահանջները: Այսպիսի ենթադրության համար հիմք կարող են հանդիսանալ հետևյալ բացահայտումները: Քաղաքական մասնակցության ներուժ ունեցող եգիպտացիների հատվածը, քաղաքականապես պասիվ հատվածի հետ համեմատած, ավելի բարձր կրթական ցենզ ունի, ավելի շատ է

կողմնորոշված դեպի ոչ նյութական արժեքները, ավելի բարձր եկամուտներ ունի և ավելի բարձր սոցիալական դիրքի է պատկանում (համաձայն սեփական ինքնագնահատման): Քաղաքականապես ակտիվ զանգվածը նաև հավասարապես ընդգրկում է ինչպես արական, այնպես էլ իգական սեռի ներկայացուցիչներին և գլխավորապես բաղկացած է երիտասարդ մարդկանցից:

ԱՄՆ-Ի ԱՐՁԱԳԱՆՔԸ «ԱՐԱԲԱԿԱՆ ԳԱՐՆԱՆԸ»

Անի Գրիգորյան

2011 թ. սկիզբը Մերձավոր Արևելքում նշանավորվեց քաղաքական անհանգստությունների և փոփոխությունների մեծ ալիքով, որը սկիզբ առավ Թունիսում՝ տարածվելով դեպի Եգիպտոս, Լիբիա, Սիրիա և տարածաշրջանի այլ երկրներ: Այս իրադարձությունները հայտնի են «Արաբական գարուն» անվանումով: Բողոքի ցույցերն ուղղված էին գործող իշխանությունների դեմ: Ցուցարարները պահանջում էին նոր և արդար իշխանություն, մարդու իրավունքների պաշտպանություն, արժանավայել կյանք: Արաբական երկրներում տեղի ունեցող իրադարձությունների պայմաններում, սեփական տնտեսական, քաղաքական, ինչպես նաև ռազմավարական շահերը հաշվի առնելով, ԱՄՆ-ը չէր կարող չեզոք քաղաքականություն վարել տարածաշրջանում: Ուսումնասիրելով պաշտոնական Վաշինգթոնի, իսկ մասնավորապես, նախագահ Բարաք Օբամայի և պետքարտուղար Հիլարի Քլինթոնի կողմից հնչեցված հայտարարությունները՝ հասկանալի է դառնում, որ ԱՄՆ-ի ներգրավվածությունը «Արաբական գարնան» գործընթացներում առնչվում է հետևյալ բնագավառներին.

- մարդու իրավունքների պաշտպանություն,
- ժողովրդավարական կարգերի հաստատում,
- ազատ համագործակցության գոտու ստեղծում:

Թունիս

Մերձավոր Արևելքում անհանգստությունները սկսվեցին Թունիսից: 2010 թ. դեկտեմբերին մանրավաճառ Մուհամմեդ Բուազիզին ինքնահրկիզվեց՝ այդպես իր բողոքը հայտնելով երկրում տիրող անհավասարության և անարդարության դեմ: Այս իրադարձությունը զանգվածային բողոքի ցույցերի սկիզբ հանդիսացավ, որն աստիճանաբար տարածվեց այլ արաբական երկրներ: Դրանց առաջացման համար Թունիսում գոյություն

ունեին մի շարք նախադրյալներ՝ փոքր տարածք, կիրթ միջին խավ, կանանց հասարակական և տնտեսական ազատություն, սերտ համագործակցություն Եվրոպայի մի շարք երկրների՝ մասնավորապես՝ Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի, ինչպես նաև ԱՄՆ-ի հետ: Չնայած Թունիսի հետ սերտ համագործակցությանը՝ ԱՄՆ պաշտոնյաները պարբերաբար քննադատությամբ են հանդես եկել Թունիսի նախագահ Բեն Ալիի վարչակարգի վերաբերյալ՝ շեշտելով ազատ խոսքի, արդար և թափանցիկ ընտրությունների, ինչպես նաև քաղաքական իրավունքի բացակայությունը: Թունիսի և ԱՄՆ-ի հարաբերությունները նշանավորվում են բազմամյա համագործակցությամբ, որն արտահայտվել է ԱՄՆ-ի կողմից Թունիսին տրամադրած ռազմական և ֆինանսական աջակցությամբ:

2011թ. հոկտեմբերի 7-ին Թունիսի վարչապետի հետ հանդիպման ժամանակ նախագահ Օբաման հույս հայտնեց, որ Թունիսի և ԱՄՆ-ի միջև երկարամյա համագործակցությունը կշարունակվի նաև ապագայում: Նա նաև նկատեց, որ անցումը քաղաքական նոր համակարգի անխուսափելի է դարձնում բարեփոխումները նաև տնտեսական համակարգում[1]: ԱՄՆ-ի Պետդեպարտամենտի հրապարակած տվյալների համաձայն՝ 2011թ. հեղափոխությունից ի վեր ԱՄՆ-ն Թունիսին տրամադրել է ավելի քան 350 միլիոն դոլար՝ ուղղված վերջինի տնտեսության և մասնավոր սեկտորի զարգացմանը, խաղաղության հաստատմանն ու կայունացմանը, ինչպես նաև ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կառուցմանը[2]:

2011թ. հոկտեմբերի 23-ին նախագահ Օբաման Թունիսի ժողովրդին շնորհավորական խոսքով դիմեց առաջին ժողովրդավարական ընտրությունների կապակցությամբ՝ նշելով,

[1]Remarks by Barack Obama, Prime Minister Essebsi of Tunisia, http://iipdigital.usembassy.gov/st/english/texttrans/2011/10/20111007184707su0.5000814.html#axzzlovLJRiLh(մուտք՝25.03.2013թ.)

[2]US Govenrment Assistance to Tunisia, http://www.state.gov/s/d/met/releases/198355.htm (մուտք՝06.05.2013թ.)

որ դա կարևոր քայլ էր, «որը փոխեց պատմության ընթացքը և սկիզբ դրեց Թունիսի զարգացմանը և բարգավաճմանը»[3]:

2012թ. փետրվարի 25-ին Թունիսի վարչապետ Մունսեֆ Մարզուկիի հետ հանդիպումից հետո ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնը հայտարարեց, որ Թունիսի հեղափոխությունը դրական ազդեցություն է ունեցել թունիսցիների կյանքի վրա, որտեղ քաղաքական գործընթացները հարթ էին ընթանում, և ժողովրդավարացումը կարելի էր համարել հաջողված: Նա նաև նշեց, որ «Թունիսն ունի ԱՄՆ լիակատար աջակցությունը երկիրը ոտքի կանգնեցնելու գործընթացում»[4]:

Թունիսի դեպքում անցումը դեպի ժողովրդավարություն և կայունացում նկատելի է: Սակայն 2013 թ. փետրվարին ընդդիմադիր ուժերի առաջնորդի՝ Շուքրի Բելաիդի սպանությունից հետո կրկին անհանգստություններ նկատվեցին: Սա հիմք է տալիս ենթադրելու, որ կայունությունը և խաղաղությունը երկրում մակերեսային է, իսկ յուրաքանչյուր արտակարգ իրավիճակի պայմաններում հետևանքները կարող են անկանխատեսելի լինել և լայնածավալ անկարգություններ հրահրել:

Եգիպտոս

Թունիսում սկիզբ առած ապստամբական տրամադրություններն իրենց արտահայտությունը գտան նաև Եգիպտոսում: 2011 թ. հունվարի վերջին ժողովուրդը ոտքի կանգնեց՝ պահանջելով երկրում արդարության վերականգնում և Եգիպտոսի՝ ավելի քան 30 տարի նախագահի պաշտոնը զբաղեցրած Հուսնի Մուբարաքի հեռացումը իշխանությունից: Նրա ձերբակալությունից հետո իշխանությունը ժամանակավորապես անցավ Զինված Ուժերի Գերագույն Խորհրդի ձեռքը: Այս

[3] Barack Obama, Elections in Tunisia, The White House, http://www.whitehouse.gov /the-press-office/2011/10/23/statement-president-elections-tunisia(մուտք՝ 13.07.2012թ.)
[4] Clinton Remarks After Meeting with Tunisian President Marzouki, U.S. Department of State, http://iipdigital.usembassy.gov/st/english/texttrans /2012/02/20120225151619su5.215961e-02.html#axzz2UEqbJKes (մուտք՝ 16.03.2012թ.)

իրադարձություններին ԱՄՆ-ի պատասխանը չուշացավ: Մասնավորապես, 2011 թ. փետրվարի 1-ի հայտարարությամբ նախագահ Օբաման իր աջակցությունը հայտնեց ցուցարարներին: Նրա համոզմամբ միայն Եգիպտոսի ժողովուրդն էր իրավասու իր հայրենիքում իրականացնել փոփոխություններ՝ իր ձգտումներին և պահանջներին համաձայն: Նա մասնավորապես նշեց. «ԱՄՆ-ն շարունակում է մնալ Եգիպտոսի ընկերը և գործընկերը: Մենք պատրաստ ենք տրամադրել անհրաժեշտ օգնություն՝ ապահովելու համար անցումը ժողովրդավրության[5]»: Գրեթե նույն տեքստով հանդես եկավ նաև ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնը Եգիպտոսի արտգործնախարար Նաբիլ ալ-Արաբիի հետ հանդիպման ժամանակ (մարտի 15, 2011 թ., Կահիրե)՝ նշելով, որ Եգիպտոսը՝ որպես ԱՄՆ-ի հավատարիմ դաշնակից և վստահելի երկիր, կարող էր ակնակալել ԱՄՆ-ի լիակատար աջակցությունը: Նույն հանդիպման շրջանակներում Հիլարի Քլինթոնը կարևորեց Եգիպտոսի տնտեսական ոլորտի բարեփոխումները, ինչի նպատակով ԱՄՆ-ն խոստացավ տրամադրել 90 միլիոն ԱՄՆ դոլար կարճաժամկետ ծրագրերի իրականացման համար[6]:

Այնուամենայնիվ, իրադարձությունների զարգացման այս փուլում չի բացառվում ԱՄՆ-Եգիպտոս հարաբերությունների վատթարացումը: 1980-ականներից ի վեր ԱՄՆ-ն Եգիպտոսին տրամադրել է 28 մլրդ դոլար[7], ինչի շնորհիվ Եգիպտոսի տնտեսությունը զգալի աճ էր գրանցել: Սակայն, մյուս կողմից, ԱՄՆ-ի միջնորդությամբ 1979թ. կնքվել էր հաշտության պայմանագիր Եգիպտոսի և Իսրայելի միջև, որով Եգիպտոսին հետ վերադարձվեցին 1973 թ. կորցրած տարածքները, ինչպես նաև Եգիպտոսը ստացավ տարեկան 2 միլիարդ օգնության երաշխիք: Եգիպտոսում հակասիոնիստական տրամադրվածության

[5] President Barack Obama's speech, Grand Foyer, http://www.whitehouse.gov/the-press-office/2011/02/01/remarks-president-situation-egypt (մուտք՝ 15.04.2012 թ.)

[6] Clinton's remarks with Egyptian Foreign Minister Nabil Al-Araby, http://www.cfr.org/egypt/clintons-remarks-egyptian-foreign-minister-nabil-al-araby-march-2011/p24390 (մուտք՝ 15.04.2012 թ.)

[7] U.S. Relations with Egypt, state.gov/r/pa/ei/bgn/5309.htm (մուտք՝ 27.11.2012 թ.)

լավագույն օրինակ է Եգիպտոսի նախագահ Մուհամմեդ Մուրսիի վիրավորական արտահայտությունները Իսրայելի վերաբերյալ 2013 թ. հունվարին CNN հեռուստատեսությանը տված իր հարցազրույցի շրջանակում: Ավելին, պաղեստինցիներին համարելով եգիպտացիների եղբայրը՝ Մուրսին հավելեց. «Պաղեստինցիները ունեն լիակատար իրավունք՝ կայացնելու որոշում իրենց ապագայի վերաբերյալ[8]»:

Այս հարցազրույցի շրջանակներում նախագահ Մուրսին անդրադարձավ նաև ԱՄՆ-ի հետ հարաբերություններին՝ նշելով, որ Եգիպտոսի հետագա զարգացման և կայունացման ուղղությամբ երկու կողմերի միջև բանակցային գործընթացները շարունակվում էին: Չնայած Մուրսիի այս հայտարարությանը, իրադարձությունները Եգիպտոսում ապացուցեցին, որ Եգիպտոսում իրավիճակը շարունակում է լարված մնալ: Այսպես, 2012թ. սեպտեմբերին Եգիպտոսում, ինչպես նաև Թունիսում և Լիբիայում ԱՄՆ-ի դեսպանատների վրա հարձակումները վկայում են այն մասին, որ իսլամիստները պատրաստ են ավելի կոշտ քայլերի դիմելու: Այս հարձակումների վերաբերյալ նախագահ Օբամայի հայտարությունն ուսումնասիրելիս պարզ է դառնում, որ ամերիկյան կողմը մտավախություն ունի, որ այս անհանգստությունները դեռ կշարունակվեն և կտարածվեն նաև այլ երկրներում[9]:

Եգիպտոսում իրավիճակը շտկելու նպատակով 2012 թ. հուլիսին Կահիրեում ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնը հանդիպում ունեցավ նորընտիր նախագահ Մուհամմեդ Մուրսիի հետ, որի ընթացքում քննարկվեցին 3 հիմնական կետեր՝ տնտեսական զարգացում, կայունացում և ժողովրդավարության ամրապնդում: Հետագա անհանգստություններից խուսափելու և իրավիճակը կայունացնելու նպատակով Հիլարի Քլինթոնն

[8] Interview with Egypt President Mohamed Morsi, http://edition.cnn.com/TRANSCRIPTS/1301/12/sitroom.01.html (մուտք՝26.03.2013 թ.)

[9] President Obama's Remark on the Attack on U.S. Embassy, http://www.whitehouse.gov/the-press-office/2012/09/12/remarks-president-deaths-us-embassy-staff-libya (մուտք՝ 05.05.2013թ.)

առաջարկեց մի շարք ռազմական պաշտոնյաների հեռացնել պաշտոնից: Ինչ վերաբերում է տնտեսության վերականգնմանը, պետքարտուղարը հայտարարեց, որ ԱՄՆ-ն հաստատում է իր ֆինանսական օգնությունը Եգիպտոսին[10]:

2013 թ. սկզբին ԱՄՆ-ն հաստատեց Եգիպտոսին տրամադրվող ամենամյա օգնությունը, ընդ որում՝ այդ օգնության զգալի մասն ուղղված է ռազմական ոլորտի հզորացմանը[11]: Եգիպտոսին լայնածավալ ռազմական օգնություն տրամադրելու ավանդույթը նկատելի էր նաև Մուբարաքի իշխանության օրոք: Ստացվում է, որ ԱՄՆ-ի կողմից տարբերակում չի դրվում մուբարաքյան և այժմյան Եգիպտոսի միջև: Հետևաբար, կարելի նշել, որ Օբամայի վարչակարգը Եգիպտոսում տիրող իրավիճակը կամ ըստ արժանվույն չի գնահատում, կամ էլ նրանց ձեռնտու է այսպիսի քաղաքականություն վարելը, քանի որ Եգիպտոսում ձևավորված իշխանությունը իր գործունեությամբ ընդհանուր առմամբ բավարարում է ԱՄՆ-ի պահանջներին: Սակայն երկրի ծանր տնտեսական և սոցիալական վիճակը, որն «Արաբական գարնան» իրադարձություններից հետո էլ ավելի է սրվել, ստիպում է ժողովրդին շարունակել բողոքի ցույցերը՝ միաժամանակ խորացնելով նրանց հակակրանքը ինչպես Եգիպտոսում ձևավորված նոր վարչակարգի, այնպես էլ ԱՄՆ-ի նկատմամբ:

Լիբիա

Հեղափոխական ալիքներից զերծ չմնաց նաև Լիբիան: Այստեղ տիրող իրավիճակի վերաբերյալ նախագահ Օբաման պաշտոնական հայտարարությամբ հանդես եկավ 2011 թ. մարտի 18-ին, որտեղ նա դատապարտեց Լիբիայի իշխանություններին՝ մասնավորապես նշելով, որ նրանք ապստամբներին դիմավորեցին «երկաթյա բռունցքով»[12]: Նախագահ Մուամար

[10] Hilary Clinton's visit to Egypt, http://iipdigital.usembassy.gov/st/english/article/2012/07/201207159065.html#axzz26v86Gde2 (մուտք՝ 20.09.2012թ.)
[11]Congressional Budget Justification, Volume 2, Foreign Operations, p. 148, http://www.state.gov/documents/organization/185014.pdf (մուտք՝ 08.06.2013թ.)
[12]Remarks by President Obama on the Situation in Libya, http://www.whitehouse.gov/

Կադաֆին, ով արդեն չորս տասնամյակ իշխում էր Լիբիայում, ձեռնամուխ եղավ ապստամբական շարժումներն ամենադաժան ձևով ճնշելուն՝ կիրառելով զանգվածային ձերբակալություններ, սպանություններ, հարձակումներ հիվանդանոցների վրա, հիվանդների առևանգում և այլն:

Ստեղծված պայմաններում ԱՄՆ-ն և ԵՄ-ն պարբերաբար հայտարարություններով հանդես եկան՝ հորդորելով Կադաֆիին վերջ դնել բռնություններին, սակայն նրանց հորդորները մնացին անարդյունք: Այս իրադարձություններին ԱՄՆ-ի առաջին արձագանքը 2011 թ. փետրվարին Լիբիայում իր դեսպանատան փակումն էր, ինչպես նաև ԱՄՆ քաղաքացիների էվակուացումը: Ի պատասխան Կադաֆիի ագրեսիայի՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի նախաձեռնությամբ սառեցվեցին նրա ավելի քան 33 մլրդ արժողությամբ ակտիվները, կիրառվեց մի շարք պատժամիջոցներ, էմբարգո դրվեց զենքի վրա: Նախագահ Օբաման քննադատաբար արտահայտվեց Կադաֆիի մասին՝ մեջբերելով վերջինի խոսքերը, թե «ոչ մի զիջում և ներում չի լինելու» իր վարչակարգի դեմ հանդես եկող մարդկանց նկատմամբ[13]: Հատկանշական է, որ իր ելույթներում Օբաման մշտապես նշում էր միջազգային կառույցների՝ մասնավորապես Եվրամիության և Արաբական պետությունների լիգայի հետ իր համակարծիք լինելու փաստը, ինչպես նաև այն, որ ԱՄՆ-ի կողմից ձեռնարկված ցանկացած քայլ բխում էր ընդհանուր շահերից և համաձայնեցվում վերը նշված կառույցների հետ: Ավելին, նրա համոզմամբ այլևս անխուսափելի էր ռազմական ներխուժումը Լիբիա, ինչը բացառապես ուղղված էր նրա ժողովրդի անվտանգության ու ազատության ապահովմանը: Այս կապակցությամբ ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնը 2012 թ. մարտի 19-ին ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդում հայտարարությամբ հանդես եկավ, ըստ որի՝ ԱՄՆ-ն իր համաձայնությունն էր հայտնում կոալիցիայի ընդունած որոշմանը. այն է՝ կիրառել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1973 բանաձևը: Այդ բանաձևի համաձայն Լիբիայի օդային տարածքը

the-press-office/2011/03/18/remarks-president-situation-libya (մուտք՝15.07.2012թ.)

[13] Տե՛ս նույն տեղում

հայտարարվեց անթռիչք գոտի, սառեցվեցին իշխանության ներկայացուցիչների հաշիվները, խստացվեց զենքի էմբարգոն[14]: Նախագահ Օբաման կարևորեց արաբական երկրների առաջնորդների ակտիվ ներգրավվածությունը այս գործողություններում[15]: Այնուամենայնիվ, ինչպես պարզ է դառնում Քլինթոնի ելույթից, և՛ կոալիցիան[16], և՛ ԱՄՆ-ն ձգտում էին իրավիճակը հարթել խաղաղ բանակցությունների և դիվանագիտության ճանապարհով, սակայն Կադաֆիի գործելաոճը նրանց ստիպեց կիրառել ռազմական ուժ, ինչի արդյունքում հաջողվեց տապալել Կադաֆիի ռեժիմը:

ԱՄՆ-ը Լիբիայի հետ կապված հստակ ուրվագծված նպատակներ և շահեր ունի: Կադաֆիի դեմ պայքար ծավալելու առաջին պատճառն այն էր, որ դրանով ԱՄՆ փորձում էր ապահովագրել իրեն Կադաֆիի կողմից եկող իրական վտանգից, կանխել նրա ուղղակի և անուղղակի քայլերն ընդդեմ ամերիկյան ժողովրդի: Երբ 2005 թ. Լիբիան վերջնականապես հրաժարվեց միջուկային ծրագրի գաղափարից, հող ստեղծվեց նրան ինտեգրել միջազգային հանրությանը: Սակայն Կադաֆիի վարած ինքնուրույն քաղաքականությունը, որը, մեղմ ասած, չէր համապատասխանում տարածաշրջանում ԱՄՆ-ի հետապնդած շահերին, ստիպեց ձեռնարկել առավել կոշտ միջոցառումներ: ՆԱՏՕ-ի հետ համատեղ ուժերով Լիբիայի օդային տարածքը հայտարարվեց ոչ-թռիչքային գոտի, շարունակվեց ճնշումը Կադաֆիի և նրա կողմնակիցների վրա, ինչպես նաև խորացվեց նրանց մեկուսացումը: Քլինթոնը որակեց սա որպես «Լիբիայի քաղաքացիների անվտանգության ապահովմանն ուղղված միջազգային քայլ» և հայտարարեց, թե «ԱՄՆ-ն պաշտպանում է ինքնիշխան, կայուն և ամբողջական Լիբիայի կառուցման

[14] UN Security Council Resolution 1973(Libya), http://www.cfr.org/libya/un-security-council-resolution-1973-libya/p24426, (մուտք՝ 14.09.2012թ.)

[15] Clinton's Remarks on UNSC Resolution 1973 Regarding Syria, http://www.cfr.org/libya/clintons-remarks-unsc-resolution-1973-regarding-libya-march-2011/p24437 (մուտք՝ 18.05.2012թ.)

[16] «Արաբական պետությունների լիգա», ԵՄ, ԱՄՆ:

գաղափարը և աջակցում միջազգային կառույցների՝ ՆԱՏՕ-ի, Եվրամիության, ՄԱԿ-ի ձեռնարկած միջոցառումներին այս ուղղությամբ[17]»: Ի վերջո, ՆԱՏՕ-ի ուժերի օգնությամբ Լիբիան առավել քան 40 տարի ղեկավարած Մուամար Կադաֆիի վարչակարգը տապալվեց, իսկ ԱՄՆ-ն առավել ազատ գործելու հնարավորություն ստացավ:

Բայցևայնպես, Լիբիայում անհանգստությունները նկատելի են մինչ օրս: Այս իրավիճակը շտկելու նպատակով ԱՄՆ-ն շարունակում է սերտ համագործակցել Լիբիայի իշխանությունների հետ: Մասնավորապես, 2013 թ. մարտին հանդիպում տեղի ունեցավ ԱՄՆ-ի պետքարտուղար Ջոն Քերիի և Լիբիայի վարչապետ Ալի Զեյդանի միջև: Հանդիպման շրջանակներում Ջոն Քերին հայտարարեց, որ Միացյալ Նահանգները կշարունակի օգնություն տրամադրել երկրի անվտանգությունը ապահովելու, նախկին վարչակարգից մնացած քիմիական զենքերը տնօրինելու, ինչպես նաև երկրում առկա տնտեսական վիճակը բարելավելու նպատակով[18]: Ավելին, Լիբիայի հետ վերականգնվեցին նաև դիվանագիտական հարաբերությունները: Ինչպես հայտնի է, 2013 թ. մարտի 13-ին նախագահ Օբամայի որոշմամբ Դեբորա Ջոնսը նշանակվեց Լիբիայում ԱՄՆ-ի դեսպան[19]:

Սիրիա

Արաբական աշխարհի հեղափոխական տրամադրությունները իրենց արձագանքը ստացան նաև Սիրիայում: Եթե նախորդ երեք երկրների դեպքում հնարավոր էր իրականացնել իշխանափոխությունը և համեմատաբար կայունացնել

[17] Clinton's Remarks on UNSC Resolution 1973 Regarding Syria, http://www.cfr.org/libya/clintons-remarks-unsc-resolution-1973-regarding-libya-march-2011/p24437 (մուտք՝ 18.05.2012թ.)

[18] Remarks With Libyan Prime Minister Ali Zeidan, http://www.state.gov/secretary/remarks/2013/03/206147.htm (մուտք՝ 13.04.2013թ.)

[19] President Obama Announces More Key Administration Posts, http://www.whitehouse.gov/the-press-office/2013/03/13/president-obama-announces-more-key-administration-posts (մուտք՝18.03.2013թ.)

իրավիճակը, ապա Սիրիայի դեպքում այդ անհանգստությունները վերաճեցին պատերազմի, որը շարունակվում է մինչ օրս:

Սիրիայում հանրային ցույցերին և ապստամբությանն ի պատասխան՝ պաշտոնական Վաշինգթոնը շարունակաբար հայտարարություններով դիմել է Սիրիայի նախագահ Բաշար ալ-Ասադին՝ պահանջելով դադարեցնել բռնությունները և պայմաններ ստեղծել երկրում ժողովրդավարություն հաստատելու համար:

Մասնավորապես, 2011 թ. ապրիլի 22-ին Օբաման հայտարարությամբ հանդես եկավ, որտեղ խիստ քննադատեց ալ-Ասադի որդեգրած քաղաքականությունը, նրա կողմից իրականացվող բռնություններն իր ժողովրդի նկատմամբ, ինչպես նաև Իրանի օգնությանը դիմելու նրա փորձերը. «Իր ժողովրդի ձայնը լսելու փոխարեն, ալ-Ասադը մեղադրում է օտարներին և դիմում Իրանի օգնությանը իր քաղաքացիներին ճնշելու նպատակով[20]»: Այս հայտարարությունը զարմանալի չէ, իսկ դրա տեքստը ավելի քան տրամաբանական է: Այն է՝ Սիրիա-Իրան համագործակցությունը ցանկալի չէ ԱՄՆ-ի համար՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սիրիան Իրանի անկյունաքարային հենակետն է տարածաշրջանում, ում օգնությամբ Իրանը ապահովում է իր ներկայությունը արաբական երկրներում: Հետևաբար, Սիրիայի թուլացումով զգալի կնվազի Իրանի դերակատարությունը տարածաշրջանում: Սիրիայի թուլացումը նաև ենթադրում է տարածաշրջանում Ռուսաստանի և Չինաստանի շահերի ոտնահարում, իսկ այս երկու գերտերությունների համար Մերձավոր Արևելքը կարևոր մարտավարական, տնտեսական և էներգետիկ նշանակություն ունի: Եվ պատահական չէ, որ Արևմուտքը ու մասնավորապես ԱՄՆ-ն Իրան-Ռուսաստան-Չինաստան դաշինքին հաճախ մեղադրում են սիրիական ճգնաժամի կարգավորման գործընթացը խոչընդոտելու մեջ:

[20] A Statement by President Obama on Syria, http://www.whitehouse.gov/blog/2011/04/22/statement-president-obama-syria (մուտք՝ 09.03.2012թ.)

Անդրադառնալով ԱՄՆ-ի վարած քաղաքականությանը այս հիմնահարցի ուղղությամբ՝ նշենք, որ 2011 թ. օգոստոսի 18-ին Սիրիային ուղղված իր ելույթի ընթացքում Օբաման ընդգծեց, որ ԱՄՆ-ը Սիրիային չէր պարտադրում ժողովրդավարություն: «Յուրաքանչյուր սիրիացի ինքն է ընտրելու իր առաջնորդին և մենք կհարգենք նրա ցանկությունը. ոչ մի արտաքին միջամտություն[21]»: Սակայն մյուս կողմից էլ հենց նույն ելույթի ժամանակ նախագահ Օբաման պաշտոնապես հայտարարեց «աննախադեպ սանկցիաների» իրականացման մասին ընդդեմ Սիրիայի իշխող վարչակարգի՝ այն ֆինանսապես մեկուսացնելու նպատակով: Մասնավորապես, սառեցվեցին Սիրիայի կառավարության ակտիվները, արգելվեց այդ երկրում ներդրումներ կատարել, ինչպես նաև ԱՄՆ ներկրել սիրիական նավթ[22]: Նույն օրը ԱՄՆ-ի պետքարտուղար Հիլարի Քլինթոնը հայտարարեց, որ նախագահ Օբամայի կողմից ձեռնարկված քայլերն ուղղված էին ռեժիմի հետագա մեկուսացմանը, սակայն մյուս կողմից էլ նշեց. «Մենք միջոցներ կձեռնարկենք մեղմացնելու այդ սանկցիաների բացասական ազդեցությունը Սիրիայի ժողովրդի վրա[23]»: ԱՄՆ-ի կառավարությունը հնարավոր յուրաքանչյուր քայլի դիմում է ալ-Ասադին իշխանությունից հեռացնելու նպատակով՝ մշտապես նշելով, որ դրանք ուղղված են գործող իշխանությանը և նպատակ չունեն վնաս հասցնելու խաղաղ քաղաքացիներին:

Սիրիայի ֆինանսական մեկուսացմանը հաջորդեց դիվանագիտական մեկուսացումը: Դեռ 2012 թ. հունվարի 31-ին պետքարտուղար Հիլարի Քլինթոնը հայտարարեց Սիրիայում ԱՄՆ-ի դեսպանատան փակման մասին: Պաշտոնական Վաշինգթոնի այս քայլը հստակ ուղերձ էր ալ-Ասադին, որ ԱՄՆ-ն

[21] Statement by President Obama on the Situation in Syria, http://www.whitehouse.gov /the-press-office/2011/08/18/statement-president-obama-situation-syria (մուտք՝09.03.2012թ.)

[22] Տե՛ս նույն տեղում

[23] Clinton's Remarks on the Situation in Syria, http://www.cfr.org/syria/clintons-remarks-situation-syria-august-2011/p25664 (մուտք՝09.03.2012թ.)

այլևս չի ճանաչում նրա իշխանությունը և պատրաստ է առավել կոշտ քայլերի նրան իշխանությունից հեռացնելու համար:

Հարկ է նշել, որ Սիրիայում տիրող իրավիճակը հաճախ նույնացվում էր Լիբիայի հետ և կարծիքներ էին հնչում, որ Սիրիայում հետագա իրադարձությունները կարող են զարգանալ լիբիական սցենարով: Այդ առիթով 2012 թ. մարտի 18-ին Հիլարի Քլինթոնը նշեց, որ այդ համեմատությունները սխալ էին, և որ Սիրիայում առաջացած խնդիրները պահանջում էին համապատասխան լուծումներ: Նա նաև անդրադարձավ Սիրիայում տարբեր կրոնական պատկանելություն ունեցող քաղաքացիներին՝ ալավիներին, սուննի մուսուլմաններին, քրիստոնյաներին՝ նշելով, որ վերջիններիս նկատմամբ դիրքորոշումը նույնը կմնա նոր իշխանության օրոք, և նրանք պետք է համերաշխ գոյակցեն հանուն ավելի հզոր Սիրիայի[24]:

Սիրիայի հիմնախնդիրը լուծելու նպատակով 2012 թ. փետրվարի 24-ին Թունիսում կազմակերպվեց «Սիրիայի բարեկամների» խմբի հանդիպումը[25], որի հիմնական նպատակն էր ուղիներ մշակել սիրիական հիմնախնդրի լուծման համար:: Հանդիպման ընթացքում ԱՄՆ ներկայացնող Հիլարի Քլինթոնը առաջ քաշեց խնդրի լուծման երեք հիմնական ուղղություն.

1. ուժեղացնել գործող իշխանությունների վրա ճնշումները,
2. տրամադրել հումանիտար օգնություն,
3. հող պատրաստել ժողովրդավարական կարգեր հաստատելու համար[26]:

2013 թ. մարտի 6-ին ունեցած ելույթի ընթացքում Օբաման բացառեց Սիրիայի խնդրի միանշանակ լուծումը ռազմական ներխուժման ճանապարհով, առավել ևս անհնար համարեց ԱՄՆ-

[24] U.S. State Department Statement on Embassy Closure in Syria, http://www.cfr.org/syria/us-state-department-statement-embassy-closure-syria-february-2012 com/2012/02/06/us/syria-embassy-closed(մուտք՝ 10.03.2012 թ.)

[25] Սիրիայի բարեկամների խմբի անդամ-երկրներն էին Թուրքիան, Հորդանան, Գերմանիա, Ֆրանսիա, Սաուդյան Արաբիա, Մեծ Բրիտանիա, Իտալիա, Միացյալ Արաբական Էմիրություններ, Եգիպտոս, Կատար և ԱՄՆ:

[26] http://www.cfr.org/syria/clintons-remarks-friends-syrian-people-meeting-february-2012/p27482

ի կողմից ռազմական գործողություններ միայնակ ծավալելը: Նրա համոզմամբ՝ Միացյալ Նահանգների ներխուժումը Սիրիա ցանկալի չէ, ավելին, նա կողմ է հանդես գալիս հարցի դիվանագիտական լուծմանը: Սիրիայում ռազմական միջամտությունը քիչ հավանական է, քանի որ դրա համար անհրաժեշտ է ունենալ Ռուսաստանի, Չինաստանի, ինչպես նաև Իրանի հավանությունը, իսկ վերջիններս շարունակաբար վետո են դնում Սիրիայի դեմ պատժամիջոցների վրա: Այնուամենայնիվ, թեև նախապես նախագահ Օբաման միանշանակ մերժում էր սիրիական ընդդիմությանը զենք տրամադրել, 2013 թ. մայիսի 2-ին Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի պաշտպանության նախարար Ֆիլիպ Համմոնդի և Չաք Հեյգելի մասնակցությամբ մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարվեց, որ երկու կողմերը սկսել են բանակցությունները սիրիական ընդդիմությանը զենք տրամադրելու վերաբերյալ[27]: Այս գործընթացը դեռևս բանակցային փուլում է, իսկ նախագահ Օբաման հստակ դիրքորոշում չի արտահայտել այս կապակցությամբ:

2013 թ. մայիսին հանդիպում տեղի ունեցավ ԱՄՆ պետքարտուղար Ջոն Քերիի և ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովի միջև: Այդ հանդիպման արդյունքում որոշում կայացվեց բանակցությունների նոր փուլ սկսել Սիրիայի նախագահ Բաշար ալ-Ասադի հետ, որն ուղղված կլինի 2012 թ. ընդունված Սիրիայի հարցերով Ժնևյան կոմյունիկեի իրականացմանը[28]: Այդ կոմյունիկեում նախատեսվում է ստեղծել անցումային իշխանություն՝ բաղկացած ներկա վարչակարգի և ընդդիմության ներկայացուցիչներից, ընդ որում՝ Սիրիայի հասարակության բոլոր շերտերը պետք է ընդգրկված լինեն այսպես կոչված «Ազգային երկխոսության» գործընթացում: Հարկ եղած դեպքում նախատեսվում է վերանայել երկրի Սահմանադրությունը, ինչպես

[27] Joint Press Conference with Secretary Hagel and Secretary Hammond from the Pentagon, http://www.defense.gov/transcripts/transcript.aspx?transcriptid=5231 (մուտք՝ 18.05.2013թ.)

[28]Remarks With Russian Foreign Minister Sergey Lavrov, http://www.state.gov/secretary/remarks/2013/05/209117.htm (մուտք՝10.05.2013թ.)

նաև իրավական համակարգը[29]: Սիրիական ճգնաժամի կարգավորման հարցով նմանատիպ նախաձեռնություններ, ինչպես արդեն համոզվեցինք, շատ են իրականացվել, սակայն՝ ապարդյուն:

Իրավիճակը Մերձավոր Արևելքում այսօր էլ շարունակում է մնալ անկանխատեսելի և պայթյունավտանգ: Ներկայում միջազգային հասարակության ուշադրության կենտրոնում է սիրիական ճգնաժամը: Այս հարցի կարգավորման գործընթացում ներգրավված մեծ տերությունները լուծումը տեսնում են բանակցային ճանապարհով, թեև մինչ այժմ այդ մոտեցումը շոշափելի արդյունքի չի հանգեցրել: Թունիսի, Եգիպտոսի և Լիբիայի վերաբերյալ կարելի է նշել, որ անցումը նոր կարգերի պայմանականորեն ավարտված է համարվում: Քննարկված բոլոր երկրներում զանգվածային անհանգստություններն ու դժգոհությունները դեռևս շարունակվում են, ինչը ցույց է տալիս, որ վերջին երկու տարվա ընթացքում այս տարածաշրջանում տեղի ունեցող քաղաքական, հասարակական, տնտեսական գործընթացները, որոնք հսկայական մարդկային և ֆինանսական ռեսուրսներ խլեցին, դեռ չեն տվել սպասված արդյունքները:

[29]Action Group for Syria, Final Communiqué 30.06.2012, http://www.un.org/News /dh/infocus/Syria/FinalCommuniqueActionGroupforSyria.pdf (մուտք՝ 10.05.2013թ.)

«ԱԼ-ԿԱԻԴԱ»-Ի ՋԻՀԱԴԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՆՈՐ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ 21-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ. ԱԲՈՒ ՄՈՒՍԱԲ ԱՍ-ՍՈՒՐԻԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Սարգիս Գրիգորյան

Եթե 20-րդ դարի երկրորդ կեսին ջիհադական[1] պայքարի հիմնական ձևը գաղտնի կազմակերպությունն էր, որին փոխարինելու եկան ռազմական ճամբարները, ապա 21-րդ դարի սկզբից ջիհադի գաղափարախոսության մեջ տեղի ունեցան որոշակի փոփոխություններ, որոնք այդ գաղափարախոսության հետևորդներին ուղղորդում են ռազմավարական և մարտավարական ինքնուրույնության, ինչն այսօր առավել դժվարացնում է ջիհադական ճյուղավորումների հետապնդումը, զինաթափումն ու չեզոքացումը:

Իսլամում սուննիական արմատական հայացքների դրսևորման հիմնական ձևերից են «ջիհադ»-ի հայեցակարգի տեսական հիմնավորումն ու գործնական կիրառումը: Այն միշտ ակտուալ է եղել արմատական մուսուլմանական շրջանակներում, իսկ իսլամական ավանդույթը հարուստ է ռազմական ջիհադին («փոքր ջիհադ») վերաբերող աշխատություններով, ինչը չի կարելի ասել հոգևոր, ներքին ջիհադի («մեծ ջիհադ») մասին: Սա վկայում է այն մասին, որ ռազմական ջիհադի գաղափարախոսությունը միշտ

[1] «Ջա-հա-դա» բայը արաբերենից թարգմանաբար նշանակում է ջանալ, ջանք թափել, հաղթահարել դժվարություններ և այլն: Այս տերմինը օգտագործվել է Ղուրանում և Սուննայում, սակայն կրոնահիրավական վերջնական ձևակերպում «ջիհադը» ստացավ 12-14-րդ դդ., որը, կապված կոնկրետ ժամանակաշրջանի պահանջմունքների հետ, փոքր ինչ վերաձևակերպվեց և լրացվեց: Ջիհադը ներկայացվեց որպես ուժերի լարում, սեփական կյանքի և ունեցվածքի գնով զոհաբերություն, հավատքի, Աստծո և նրա մարգարեի համար պայքար: Ջիհադի իրականացումը դիտարկվեց որպես յուրաքանչյուր իրական մուսուլմանի բացարձակ պարտականություն, մինչդեռ ջիհադից հրաժարվելը բնորոշվեց որպես մուսուլման լինելու ցանկության բացակայություն, դրանից բխող հետևանքներով. պատիժ կյանքի ընթացքում, անդրաշխարհում և այլն, մինչդեռ այն հավատացյալները, ովքեր ջիհադ են իրականացնում, օգտվելու են կյանքի ընթացքում և դրանից հետո պատրաստված բոլոր բարիքներից:

եղել է մուսուլմանների, առավել ևս ծայրահեղ արմատական մուսուլմանների ուշադրության կենտրոնում:

Ընդհանրապես «իսլամական ծայրահեղականություն» հասկացության գիտական հիմնավորման և նրա զանազան դրսևորումների դասակարգման վերջնական տարբերակում չկա[2]: Այս ոլորտի հետ առնչվող հետազոտությունների ընդհանրական եզրակացությունն այն է, որ իսլամում ծայրահեղականությունը հասկացվում է որպես քաղաքական իշխանություն ձեռք բերելու համար իսլամական արմատական զանազան խմբավորումների կողմից պայքարի այնպիսի մեթոդների կիրառում, որոնք միջազգային իրավունքի տեսակետից դիտվում են օրենքի սահմաններից դուրս[3]:

Ըստ իսլամական արմատականների՝ մուսուլմանների հայրենիքը այնտեղ է, որտեղ իշխում են շարիաթի օրենքները[4]: Ծայրահեղականները ոչ միայն ցանկանում են հասնել իսլամական պետության հաստատմանը, այլև նրանք ձգտում են իսլամականացմանը, համաշխարհային մասշտաբով շարիաթի նորմերի հաստատմանը, ընդ որում անհապաղ: Մուսուլման ծայրահեղականների տեսանկյունից շարիաթի օրենքների վրա

[2] Арухов З.С., Экстремизм в современном исламе, Махачкала: «Кавказ», 1999; Грачев А.С., Тупики политического насилия. Экстремизм и терротизм на слижбе международной реакции, М., 1982; Добаев И.П., Исламский радикализм в международной политике, Ростов-на-Дону: Ростиздат, 2000, стр. 13-14; Коровиков А.В., Исламский экстремизм в арабских странах, АН СССР, Ин-т востоковедения, М.: Наука, 1990; Морозов И.Л., Левый экстремизм в современном обществе: особенности стратегии и тактики, Полис.-1998.-N3; Исламский экстремизм и фундаментализм как угроза национальной безопасности России, Научный отчет Российского института стратегических исследований, под. общ. ред. Кожокина Е.М., М., 1995; և այլն:

[3] Исламский экстремизм и фундаментализм как угроза национальной безопасности России, Научный отчет Российского института стратегических исследований, под. общ. ред. Кожокина Е.М., М., 1995, стр. 14.

[4] Смирнов С., Экстремизм в исламе: истоки и тенденции, Континент (Алматы), 2000, N18 (31), 20 сентября-2 октября.

կառուցված իսլամական պետության ստեղծման համար ուժային պայքարն արդարացված է[5]:

20-րդ դարի երկրորդ կեսից իսլամում սկսվեց կրոնաքաղաքական շարժումների միաժամանակյա ակտիվություն, ինչի վրա իր ազդեցությունը թողեց այդ ժամանակվա իսլամական արմատական գաղափարախոսների (Հասան ալ-Բաննա, Սաիդ Կուտբ, Աբու ալ-Ալա Մաուդուդի և այլն) կողմից առաջ քաշված ջիհադական պայքարի նոր գաղափարները: 1980-90-ական թթ.-ին ռազմական ջիհադի գաղափարախոսության մեջ նկատվեց հենց մուսուլմանների նկատմամբ զինված պայքարի ամրագրումը, որն իրականացվում էր բռնության միջոցով (ռազմական, ահաբեկչական գործողություններ և այլն)[6]:

1979 թ-ին «մուսուլմանական» Աֆղանստան մուտք գործած սովետական «անհավատ» զորքերի դեմ պայքարելու համար աշխարհի տարբեր վայրերից սկսեցին հավաքագրվել մուսուլմաններ: Աբդալլահ Ազզամի և Ուսամա բեն Լադենի կողմից ստեղծված «ալ-Կաիդա»[7] իսլամական ծայրահեղական կառույցը ստանձնեց ռազմական ճամբարներում մուջահիդների կենտրոնացման, նրանց մարտական պատրաստության և ջիհադական պայքարին ներգրավելու աշխատանքները[8]: Բեն Լադենի կողմից առաջ քաշվեց «գլոբալ ջիհադի» հայեցակարգը, համաձայն որի՝ ջիհադական պայքարն անհավատների դեմ պետք է իրականացվի ամբողջ աշխարհով, ինչը նոր երևույթ էր մուսուլմանական արմատական գաղափարախոսության մեջ: Եթե նախկինում ջիհադական պայքար իրականացնող

[5] Ամմարա Մ., Ալ Ֆարիդա ալ-Ղաիբա, Արդ ուա Հիուար ուա Թաքիիմ, ալ-Կահիրա, 1980, էջ. 29-30:

[6] Игнатенко А., Исламский радикализм как побочный эффект «холодной войны», Центральная Азия и Кавказ, Швеция, (Луело), 2001. N1 (13), стр. 121-122.

[7] 2011թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչական գործողությունից հետո «ալ-Կաիդա» կազմակերպությունը վերածվեց յուրահատուկ տեքստի, որի շուրջ ձևավորվեց նույն անունը կրող ցանց: Ստորև «ալ-Կաիդա» եզրը օգտագործվում է այդ իմաստով:

[8] Кепель Ж., Джихад: Экспансия и закат исламизма, М. 2004, стр. 135-148.

խմբավորումները հարձակումներ էին կատարում լոկալ («մերձավոր») նշանակետերի վրա, ապա «ալ-Կաիդա»-ն միաժամանակյա հարձակումներ գործեց ԱՄՆ-ում տեղակայված օբյեկտների վրա՝ այդ գործողություններով ուղերձ հղելով իր հետ կապված խմբավորումներին, որ հեռավոր նշանակետերի վրա նույնպես կարելի է հաջող հարձակումներ իրականացնել, ինչը և ազդեց այդ խմբավորումների ռազմավարության փոփոխության և նշանակետերի ընտրության վրա:

2001 թ-ի սեպտեմբերի 11-ին ԱՄՆ-ի նկատմամբ ահաբեկչական գործողություններ իրականացրած «ալ-Կաիդա»-ն մարտահրավեր նետեց գոյություն ունեցող կարգերին՝ անմիջապես սպառնալով ԱՄՆ-ին և Արևմուտքին՝ հիշեցնելով, որ իսլամական ծայրահեղ արմատականությունը ի վիճակի է ազդել համաշխարհային զարգացումների վրա:

Համաշխարհային ահաբեկչության դեմ պայքարի համատեքստում կոալիցիոն ուժերի կողմից որպես թիրախ ընտրվեց «ալ-Կաիդա» կազմակերպությունը, նրա ղեկավար շրջանակն ու անդամները, կազմակերպության և նրան հարող իսլամական ծայրահեղ արմատական կառույցների տեղակայման, ռազմական պատրաստության ճամբարները, ֆինանսավորման աղբյուրները և այլն: Արդյունքն այն եղավ, որ Աֆղանստանում «ալ-Կաիդա»-ին թաքստոց տրամադրած «Տալիբան» շարժումը կորցրեց իր իշխանությունը, իսկ «ալ-Կաիդա»-ի հանդեպ ամբողջ աշխարհով ծավալված հետապնդումների արդյունքում լուրջ հարված հասցվեց կազմակերպության ենթակառուցվածքներին, ղեկավարությանը, ֆինանսական ռեսուրսներին և այլն[9]:

«ալ-Կաիդա»-ի դիրքերի թուլացմանը զուգընթաց ավելացան դժգոհությունները խմբավորման կողմից տարվող պայքարի և ռազմավարական ուղղությունների նկատմամբ, որոնք արտահայտվեցին ինչպես չափավոր, այնպես էլ ծայրահեղ արմատականների շրջանում: Նույնիսկ «ալ-Կաիդա»-ի ներսում հնչեցին քննադատություններ ուղղված կազմակերպության առաջնորդների հասցեին՝ մեղադրելով նրանց 2001 թ-ի

[9] Bonney R., Jihad from Quran to bin Laden, New York: Palgrave Macmillan. pp. 359-364.

սեպտեմբերի 11-ին ԱՄՆ նկատմամբ իրականացված աննպատակ ու անհեռատես գործողությունների իրականացման մեջ, ինչը մեծ հաշվով վնասեց ծայրահեղ իսլամական արմատականությանն ու նրա կողմից իրականացվող ջիհադական պայքարին[10]:

21-րդ դարի սկզբին «ալ-Կաիդա»-ի ղեկավարության կողմից որոշակի փոփոխությունների ենթարկվեց դեռևս 1980-ական թթ-ին Աբդալլահ Ազզամի և Ուսամա բեն Լադենի կողմից մշակված «գլոբալ ջիհադի» ռազմավարությունը՝ իր ազդեցությունն ունենալով իսլամականների կողմից «հեռավոր» և «մերձավոր» թշնամիների դեմ ջիհադի պայքարի իրականացման մարտավարության վրա:

Եթե Ուսամա բեն Լադենի ուղերձների մոտ 70 տոկոսը նվիրված էր «հեռավոր թշնամու»՝ ԱՄՆ-ի և նրա դաշնակիցների դեմ պայքարին, և միայն ուղերձների մոտ 10 տոկոսն էր անդրադառնում «մերձավոր թշնամուն» [11], ապա «ջիհադի» գաղափարախոսության արդի հեղինակներից շատերը (Այման ազ-Զաուահիրի, Սայֆ ալ-Ադլ, Աբու Յահյա ալ-Լիբի, Աբու Մուսաբ աս-Սուրի և այլոք) իրենց աշխատություններում[12] կարևորում են «մերձավոր թշնամու» դեմ մղվող պայքարը: Նույնիսկ «ալ-Կաիդա»-ի ներսում, հենց Ուսամա բեն Լադենի հետ հակասություններ առաջացան կապված «հեռավոր», թե «մերձավոր» թշնամիների դեմ պայքար ծավալելու հարցի հետ (օրինակ 2001 թ-ի սեպտեմբերի 11-ից հետո թիրախների ընտրության հարցում Բեն Լադենի և Աբու Մուհամմադ ալ-

[10] Lia B., Hegghammer Th., "Jihadi Strategic Studies-The alleged al-Qaida policy study preceeding the Madrid bombings", Studies in Conflict and Terrorism, 27 (5), September-October, 2004. pp 355-375.

[11] Murad Batal al-Shishani, Understanding Strategic Change in al-Qaeda's Central Leadership after Bin Laden, Terrorism Monitor, The Jamestown Foundation, Volume IX, Issue 23, June, 2011, pp. 7-8.

[12] Աբու Մուսաբ աս-Սուրի, Դաուա ալ-Մուքաուամա ալ-Իսլամիա ալ-Ալամիա, դեկտեմբեր, 2004 թ. http://archive.org/stream/Dawaaah/DAWH#page/n24/mode/2up (մուտք՝20.04.2013), Սայֆ Ալ-Ադլ, Ալ-Ամն ուա Ալ-Իսթիխբարաթ, http://www.ansar1.info/showthread.php?t=33433 (մուտք՝20.04.2013):

Մասրիի միջև ծագած հակասությունը [13]): «ալ-Կաիդա»-ի առաջնորդների կողմից կարևորվում էր նաև «անհատական ջիհադի» մարտավարությունը, ինչը, այնուամենայնիվ ենթադրում էր, որ «ալ-Կաիդա»-ն շարունակելու էր իր ուշադրության կենտրոնում պահել «հեռավոր» թշնամու դեմ պայքարը: Այս համատեքստում կազմակերպության առաջնորդներից Աբու Աբդ ալ-Ռահման Աթիա ալ-Լիբիի, Աբուլ Մաջիդի և այլոց «անհատական ջիհադին» առնչվող գաղափարները լայն տարածում գտան 21-րդ դարի առաջին տասնամյակի ընթացքում[14]:

«ալ-Կաիդա»-ն ուսումնասիրում է 4-րդ սերնդի պատերազմ վարելու փորձը (4-րդ սերնդի պատերազմում հակամարտող կողմերի ռեսուրսներն ու հնարավորությունները էականորեն տարբերվում են. այն իր մեջ ներառում է ռազմական առաջադրանքի իրականացման հրաման (mission type order), լոգիստիկ կենտրոնականացված համակարգից կախվածության թուլացում, պատերազմական գործողություններում մանևրելու կարողություն, հակառակորդի ուժերի ներքին կառուցվածքի կազմաքանդում, այլ ոչ թե նրա անմիջական ֆիզիկական ոչնչացմանն ուղղված գործողությունների իրականացում[15]:

4-րդ սերնդի պատերազմի կարևորագույն սկզբունքներից է նաև հակառակորդի հզորության և ուժի օգտագործումն իր իսկ դեմ՝ հատկապես այն ոչ մուսուլմանական երկրներում, որտեղ հենց իսլամական ծայրահեղական գաղափարներ կրող մուսուլմանների իրավունքները պաշտպանված են ժողովրդավարական հասարակությանը հատուկ իրավական նորմերով, հասարակական ինստիտուտներով և այլն[16]:

---

[13] Murad Batal al-Shishani, Understanding Strategic Change in al-Qaeda's Central Leadership after Bin Laden, Terrorism Monitor, The Jamestown Foundation, Volume IX, Issue 23, June, 2011, p. 8.

[14] Նույն տեղում. է. 8-9.

[15] Chesnutt M. J., Defeating the United States with radiological weapons in fourth generation warfare, Maxwell Air Force Base, Alabama, 2003, p. 4-6.

[16] Lind W. S., Nightengale K., Schmitt J. F., Sutton J. W., Wilso G. I., The Changing Face of War: Into the Fourth Generation, Marine Corps Gazette, 1989, p. 22-26.

21-րդ դարի սկզբին ծավալված միջազգային ահաբեկչության դեմ պայքարը թուլացրեց «ալ-Կաիդա»-ի դիրքերը: Կազմակերպության ղեկավար շրջանակները սկսեցին լրջորեն մտածել կառուցվածքային և մարտավարական փոփոխությունների մասին: Ստեղծված պայմանները լավ գիտակցելով՝ «ալ-Կաիդա»-ի նոր սերնդի ներկայացուցիչների կողմից առաջ քաշվեցին գաղափարներ, որոնք ուղղված էին առկա իրողության պայմաններում «ալ-Կաիդա»-ի կառուցվածքային, մարդկային և ֆինանսական համակարգը պահպանելուն և ջիհադական պայքարին նոր լիցք ու թափ հաղորդելուն: Այս համատեքստում «ալ-Կաիդա»-ի նոր սերնդի գաղափարախոսների շրջանում աչքի ընկավ Աբու Մուսաբ աս-Սուրին, ով Աբդալլահ Ազզամի և Ուսամա բեն Լադենի հետ միասին հանդիսանում է ժամանակակից ջիհադի գաղափարախոսության կարևորագույն դեմքերից մեկը: աս-Սուրիի կողմից հեղինակվել են մեծ քանակությամբ աշխատություններ[17], որոնք ջիհադական պայքարի գաղափարախոսության կարևոր բաղկացուցիչներից են[18]:

Աբու Մուսաբ աս-Սուրին կոչ էր անում պայքարել գաղութարարների, նրանց աջակցող մուսուլման հավատուրացների և մուսուլմանական հողերը զավթած անհավատների զինուժի դեմ և պնդում էր, որ այդ պայքարն արդյունավետ կհամարվի, եթե հարձակումները զանգվածային զոհերի պատճառ դառնան արևմտյան երկրներում: Ըստ աս-Սուրիի, զանգվածային զոհերի կարելի է հասնել միայն որպես հարձակման թիրախ մարդկանց զանգվածային կուտակումներն ընտրելով, ինչը դյուրին կարող էր լինել, քանի որ կան բազմաթիվ նման օբյեկտներ, ինչպես օրինակ լեփ-լեցուն մարզադաշտերը, ամենամյա մարդաշատ մարզական միջոցառումները, միջազգային

[17] Դաուա ալ-Մուքաուամա ալ-Իսլամիա ալ-Ալամիա, Դաուռա ֆի Ֆան ալ-Թաջնիդ և այլն

[18] Lia B., Hegghammer Th., “Jihadi Strategic Studies-The alleged al-Qaida policy study preceeding the Madrid bombings”, Studies in Conflict and Terrorism, 27 (5), September-October, 2004. pp.355-375.

խոշոր ցուցահանդեսները, մարդաշատ շուկաները, բիզնես կենտրոնները, երկնաքերերը և այլն[19]:

աս-Սուրին տվեց «ալ-Կաիդա»-ի և նրան հարող կազմակերպությունների կողմից տարբեր մուսուլմանական երկրներում համապետական ընտրությունների վրա ազդելու հնարավորությունների վերաբերյալ իր տեսակետները՝ սահմանելով գլոբալ իսլամական դիմակայության կառույցների օպերատիվ մեխանիզմները, նրանց ռազմական, գաղափարական և գործնական հայեցակարգերը՝ մատնանշելով, թե ինչպես կարելի է ստանալ ջիհադի պայքարին միլիոնավոր մուսուլմանների համակրանքը: Նա մանրակրկիտ շարադրում է մուսուլման երիտասարդների կողմից ջիհադի պայքարին սեփական ուժերով նախապատրաստվելու մանրամասները, իսլամական բջիջների կողմից անհավատների նկատմամբ անհատական գործողությունների իրականացումը՝ սահմանելով այդ բջիջների կողմից մշակված գործողությունների ընդհանուր մեթոդները: աս-Սուրին, իսլամական դիմակայության կառույցների մեջ ներառելով փորձառություն չունեցող անհատ ջիհադականներից մինչև բարձր մակարդակի պատրաստություն անցած իսլամականներին, պնդում էր, որ նրանք ունակ են իրականացնել պարզունակ գործողություններ ռազմական առումով սահմանափակ հնարավորությունների և միջոցների սակավության դեպքում: Այդ գործողությունները կարևոր նշանակություն կարող են ունենալ, հատկապես մուսուլմանների դիմակայության վճռական փուլում[20]:

Հայացք նետելով 1963-2001 թթ ընկած ժամանակահատվածում ջիհադական պայքարի կողմից որդեգրած մեթոդների վրա՝ աս-Սուրին ջիհադական պայքար իրականացնող կազմակերպությունները բաժանում է հետևյալ խմբերի.

1. Գաղտնի ռազմական կառույցներ:

---

[19] Lia B., Architect of global jihad: The life of Al Qaeda Strategist Abu Mus'ab Al-Suri. Columbia University Press, 2008, pp. 410-412.

[20] Աբու Մուսաբ աս-Սուրի, Դաուա ալ-Մուքաուամա ալ-Իսլամիա ալ-Ալամիա, Դեկտեմբեր, 2004 թ., էջ 429. http://archive.org/stream/Dawaaah/DAWH#page/n24/mode/2up, (մուտք՝ 25.04.2013):

2. Բաց ռազմաճակատներում (հակամարտություններ) գործող կառույցներ:

3. Իրենցից փոքր բջիջներ ներկայացնող և անհատական ջիհադ իրականացնող կառույցներ[21]:

Ընդհանուր առմամբ այս կառույցները վերոհիշյալ ժամանակահատվածում (1963-2001 թթ) իրականացրած ջիհադական պայքարում հաջողություններ չեն արձանագրել, ինչի պատճառը աս-Սուրին տեսնում է ոչ միայն նրանց կառուցվածքային խնդիրների մեջ, այլ նաև արդի ժամանակների արմատական և հեղափոխական փոփոխությունների և նախադրյալների մեջ, որոնք փոփոխել են պատմության ընթացքը, փոխում են ներկան և հետևաբար նաև կփոխեն ապագան[22]:

2004 թ-ին իսպանացի հետազոտողները լրատվամիջոցներին հայտնեցին, որ աս-Սուրին դարձել է առանցքային դերակատար «ալ-Կաիդա»-ի ներսում ստեղծված և Բեն Լադենին հակադրվող ճյուղավորման մեջ[23]: աս-Սուրիի և Այման ազ-Զաուահիրիի հարաբերությունների ջերմացման ֆոնի ներքո էլ ավելի են խարխլվում աս-Սուրիի և «ալ-Կաիդա»-ի ներսում սառուդական խմբավորման կապերը, որոնց պատճառները շատ էին. օրինակ՝ սառուդական ջիհադականների կողմից սառուդական վարչախմբի դեմ պայքարելու ցանկության բացակայությունն, ըստ աս-Սուրիի, էլ ավելի էր նսեմացնում «խաչակիրների» դեմ պայքարելու ռազմավարության հիմքերը[24]: Բացի այդ, աս-Սուրին բացասաբար էր վերաբերվում ջիհադական պայքարում «Տալիբան» շարժման դերակատարման ակտիվության նկատմամբ Բեն Լադենի անվստահությանը, որով, Բեն Լադենը վտանգում էր արաբական ջիհադական ներկայությունը Աֆղանստանում[25]:

---

[21] Նույն տեղում. էջ. 1356-1362:

[22] Նույն տեղում:

[23] Rotella S., Terrorism Suspects Traced to Iran, The New York Times, 1 August, 2004.

[24] Lia B., Architect of global jihad: The life of Al Qaeda Strategist Abu Mus'ab Al-Suri. Columbia University Press, 2008, pp. 278-279.

[25] Umar Abd al-Hakim, Afghanistan, The Taleban and The Battle of Islam Today, p. 25.

աս-Սուրին կարծում էր, որ պետք է լինի գործողությունների մի ուղեցույց, որով կարող էր առաջնորդվել յուրաքանչյուր ճյուղավորում կամ անհատ՝ միանալով ջիհադի պայքարին: Նա պնդում էր, որ ջիհադական շարժումը այսօր պետք է խուսափի ներքին կազմակերպչական կապերից և որևիցե կենտրոնական կառույցի կազմում լինելուց: Ջիհադի առաջնորդները կարող են միայն ուղղորդել ջիհադականներին իրենց հայտարարություններով, իսկ գործողությունների մակարդակում նրանց մեջ որևէ կապ չպետք է լինի:

Ըստ աս-Սուրիի՝ սկզբնական շրջանում հմուտ ջիհադականի աջակցությունը թույլատրելի է, սակայն բուն գործողությունների ժամանակ առաջնորդը պետք է հեռանա այլ երկիր, անցնի ընդհատակ կամ էլ վերածվի նահատակի: Բոլոր ջիհադական ճյուղավորումները պետք է ինքնաֆինանսավորվեն: Բոլոր ջիհադականները պետք է համախմբվեն ընդհանուր նպատակի, դրան հասնելու հայեցակարգային մոտեցումների ու ջիհադական գաղափարախոսության շուրջ: Նորեկները պետք է ինքնուրույն զբաղվեն իրենց պատրաստությամբ՝ օգտագործելով սեփական ռեսուրսները: աս-Սուրին գտնում է, որ անհատական ահաբեկչությունը պետք է զուգակցվի բաց ռազմաճակատներում իրականացվող ջիհադի հետ:

աս-Սուրիի կողմից առաջ քաշված իսլամական դիմակայության կոչի ռազմական մարտավարությունը հիմնվում էր 2 տիպի ջիհադի վրա.

1. Անհատական ահաբեկչական ջիհադ և սակավաթիվ, միմյանցից անկախ խմբերի գաղտնի գործողությունների ակտիվություն, որը ենթադրում է պարտիզանական պայքարի միջոցով թշնամու դիրքերի կազմաքանդում:

2. Անհրաժեշտ նախադրյալների առկայությամբ բաց ռազմաճակատներում ջիհադին մասնակցություն, որը իր հերթին ենթադրում է տարածքների վերահսկողություն, որոնց ազատագրումից հետո կսահմանվեն շարիաթի օրենքները[26]:

[26] Աբու Մուսաբ աս-Սուրի, Դաուա ալ-Մուքաուամա ալ-Իսլամիա ալ-Ալամիա, դեկտեմբեր, 2004 թ., էջ. 1367-1373, http://archive.org/stream/Dawaaah/DAWH#page/

Ըստ աս-Սուրիի՝ առկա իրավիճակում մուսուլմանների կողմից ԱՄՆ և նրա դաշնակիցների դեմ ծավալվող իսլամական դիմակայության ռազմական ակտիվությունը պետք է իրականացվի պարտիզանական մարտերի, քաղաքացիական ահաբեկչության, միմյանցից անկախ և անջատ սակավաթիվ խմբերի և գաղտնի մեթոդների կիրառմամբ անհատական գործողությունների շրջանակներում: Ջիհադի և իսլամական դիմակայության օգտին ուժային հավասարակշռության ցանկացած փոփոխություն կնվազեցնի ամերիկյան ազդեցությունը, կավելացնի բաց ռազմաճակատներում գործելու հնարավորությունը՝ նպաստավոր պայմաններ ստեղծելով իսլամական տարածքների ազատագրման ու այստեղ շարիաթի օրենքների ամրագրման համար[27]:

աս-Սուրին առաջարկում է նոր սերնդի ջիհադական պայքարի բանաձև «նիզամ լա թանզիմ» (համակարգ, ոչ թե կազմակերպություն): Այն ենթադրում է գործողությունների համակարգ, այլ ոչ թե կենտրոնացված, գաղտնի կազմակերպություն գործողություններ իրականացնելու համար («նիզամ ամալ ուա լեյսա թանզիմ լիլ ամալ»), որի էությունը կայանում է նրանում, որ բոլոր անհատ ջիհադականների, ջիհադական խմբավորումների ու բջիջների միջև կապը պետք է խարսխվի հետևյալ երեք ընդհանուր սկզբունքների վրա.

1. Ընդհանուր անվանում և Աստծուն տրված անհատական երդում:

2. Ընդհանուր գաղափարախոսություն, քաղաքական ու կրոնահիրավական ծրագիր և Աստծուն տրված երդում այդ սկզբունքներին հավատարիմ մնալու մասին:

3. Ընդհանուր նպատակ, որն է՝ դիմակայել նվաճողներին և նրանց դաշինքներին: Հավատարմության երդում Աստծուն

n24/mode/2up, (մուտք՝ 25.04.2013):

[27] Նույն տեղում:

նվաճողների հանդեպ ջիհադի պայքար իրականացնելու, Աստծո իշխանությունը երկրի վրա հետագայում կառուցելու մասին[28]:

Ըստ աս-Սուրիի՝ հնարավոր է անհատական ջիհադ իրականացնել մուսուլմանական երկրներում և, ընդհանրապես, աշխարհի տարբեր հատվածներում, քանի որ այն չի պահանջում որոշակի պայմանների առկայություն, իսկ բաց ռազմաճակատների ջիհադի հաջող իրականացումը կախված է որոշ ռազմավարական նախադրյալների գոյության հետ (աշխարհագրական և քաղաքական նախադրյալներ, բնակչության գործոն):

Նրա կողմից մշակվեց ժամանակակից պայմաններում ջիհադի գաղափարախոսության գործնական կիրառման խնդիրները, տրվեց տարբեր ժամանակներում իրականացված ջիհադական պայքարի վերլուծություն՝ ներկայացնելով նրա թույլ և ուժեղ կողմերը: աս-Սուրին պնդում էր, որ ԱՄՆ-ն ամբողջովին վերահսկում է օդային տարածքը, իսկ դա նշանակում է, որ աֆղանական դժվարամատչելի լեռները արդեն չեն կարող լինել ապահով թաքստոցներ:

աս-Սուրին գալիս է այն եզրակացության, որ սեպտեմբերի 11-ից հետո խմբային ռազմական գործողությունների իրականացումը կոնկրետ տարածքներում անհնարին է, իսկ նոր Աֆղանստան չի լինելու, ուստի ապագա ջիհադը պետք է իրականացվի փոքր, շարժունակ և որևէ համակարգված կառույցի անդամ չհանդիսացող խմբերի կողմից[29]:

Ամերիկյան օդուժի կողմից ջիհադականների ռազմական ճամբարների և տեղակայման վայրերի ռմբակոծությունից հետո աս-Սուրին գիտակցեց, որ ջիհադականների համար կառուցված ռազմական ճամբարների ժամանակաշրջանն ավարտվեց՝ առաջարկելով ջիհադական խմբերին ռազմական

[28] Աբու Մուսաբ աս-Սուրի, Դաուա ալ-Մուքաուամա ալ-Իսլամիա ալ-Ալամիա, դեկտեմբեր, 2004 թ., էջ. 1405-1406, http://archive.org/stream/Dawaaah/DAWH#page/n24/mode/2up, (մուտք՝ 25.04.2013):

[29] http://www.memrijttm.org/content/en/blog_personal.htm?id=3614%C2%B6m=JT (մուտք՝ 14.05.2013):

պատրաստությունն անցնել առավել քողարկված և դժվարամատչելի վայրերում, որոնք որոշ ժամանակ հետո պետք է անմիջապես լքել: Սակայն, ինչպես պնդում էր աս-Սուրին, ջիհադական ղեկավարության կողմից դեռևս շարունակվում էր գոյություն ունեցող ճանբարներում ռազմական պատրաստություն անցնելու պրակտիկան՝ հաշվի չառնելով նորագույն տեխնոլոգիաների առկայությունը[30]:

Ջիհադականների նոր սերնդի ստեղծագործություններում շատ են մեջբերումները աս-Սուրիի աշխատություններից[31]: աս-Սուրին պնդում էր, որ էներգակիրները և նրանց մատակարարումը արևմուտքի համար մեծ նշանակություն ունեն և կարող են հարմար թիրախ հանդիսանալ ահաբեկչական գործողության համար, իսկ նմանատիպ օբյեկտների վրա հարձակումները խրախուսվում էին ինչպես Բեն Լադենի [32], այպես էլ ազ-Զաուահիրիի կողմից[33]:

Եթե Բեն Լադենը կոչ էր անում «գլոբալ ջիհադ» սկսել ԱՄՆ-ի դեմ գաղափարական պատճառով, քանի որ ըստ նրա՝ ԱՄՆ-ն հանդիսանում էր իսլամի գլխավոր թշնամին, ապա աս-Սուրին փորձում էր բացատրել, թե ինչու է ռազմավարության իմաստով անհրաժեշտ ընտրել ջիհադի գլոբալ տեսակը, և ինչու ջիհադի հին ձևերը արդյունավետ չեն:

աս-Սուրիի կողմից կարևորվում էր նաև ջիհադի գաղափարների տարածումը ժամանակակից տեխնոլոգիաների օգնությամբ: Ներկայումս համացանցը լայնորեն օգտագործվում է «ալ-Կաիդա»-ի և նրան հարող գլոբալ ջիհադականների կողմից,

---

[30] Աբու Մուսաբ աս-Սուրի, Դաուա ալ-Մուքաուամա ալ-Իսլամիա ալ-Ալամիա, Դեկտեմբեր, 2004 թ., է. 1425-1426. http://archive.org/stream/Dawaaah/DAWH#page/n24/mode/2up, (մուտք՝ 25.04.2013):

[31] Drennan S., Black A., "Fourth Generation Warfare and the International Jihad", Jane's Intelligence Review. October, 2006, pp. 18-23.

[32] «Bin laden' tape urges oil attack», BBC News, 16.12.2004 http://news.bbc.co.uk/2/hi/middle east/4101021.stm, (մուտք՝ 20.04.2013):

[33] Ulph S., "Al-Zawahiri Encourages Targeting of Gulf Oil", Terrorism Focus, Vol.2, Issue 23, 16/12/2005, http://www.jamestown.org/programs/gta/single/?tx ttnews%5Btt news%5D=627&tx ttnews%5 BbackPid%5D=238&no cach=1, (մուտք՝20.04.2013):

որը վերածվել է գաղափարական պայքարի բավական արդյունավետ միջոցի՝ ծայրահեղականների հավաքագրման և պատրաստման վիրտուալ տարածքի: Արդյունքում՝ լայն տարածում ունեցող սոցիալական մեդիա դաշտում (Ֆեյսբուք, Յութուբ, Թվիթեր և այլն) առաջացել են ջիհադի քարոզչության հարյուրավոր վիրտուալ խմբեր, ստեղծվում են իսլամական ֆորումներ, ինչը վկայում է այն մասին, որ տեղեկատվական-վիրտուալ ջիհադը դարձել է «ալ-Կաիդա»-ի և նրան հարող գլոբալ ջիհադական խմբերի տեղեկատվական ռազմավարության հիմնասյուներից մեկը:

21-րդ դարի սկզբին ծայրահեղ իսլամական գաղափարախոսների կողմից առաջ քաշված անհատական ջիհադի և սակավաթիվ, գաղտնի խմբերի կողմից ջիհադի մարտավարություններն իրենց կիրառումը գտան աշխարհի տարբեր հատվածներում (գործողություններ մահապարտ ահաբեկիչների մասնակցությամբ, ահաբեկչություններ Մադրիդում, Լոնդոնում), իսկ սեպտեմբերի 11-ից հետո միջազգային ահաբեկչության դեմ պայքարի համատեքստում մուսուլմանական աշխարհի տարբեր հատվածներում արևմտյան կոալիցիոն ուժերի հայտնվելը հնարավորություն է տալիս ցանցային կառույցի վերածված «ալ-Կաիդա»-ին և նրան հարող իսլամական ծայրահեղ արմատական խմբավորումներին բաց ռազմաճակատներում ակտիվ պայքարելու և հետագայում այս տարածքներում շարիաթի օրենքների վրա հիմնված իսլամական պետություն ստեղծելու ծրագրերի իրականացման համար (Իրաք, Աֆղանստան, Մալի):

2010 թ-ից իսլամական աշխարհում ծավալվող այսպես կոչված «Արաբական գարուն»-ը խաթարեց երկար տարիներ տրանսֆորմացիոն գործընթացներից զերծ մնացած մուսուլմանական մի շարք երկրների անդորրը: 2010 թ-ի վերջից արաբական երկրներում սկսված զանգվածային շարժումների ու ցույցերի արդյունքում Թունիսում, Եգիպտոսում, Լիբիայում տապալվեցին ավտորիտար վարչակարգերը, հակակառավարական ցույցեր անցկացվեցին Ալժիրում,

Մարոկոյում, Մավրիտանիայում, Հորդանանում, Իրաքում, Եմենում, Բահրեյնում, Սուդանում, Լիբանանում, բարդ իրավիճակ ստեղծվեց Քուվեյթում և Սաուդյան Արաբիայում, ճգնաժամի մեջ է հայտնվել Սիրիան: Այս գործընթացներում նկատելի է իսլամական արմատական կազմակերպությունների, հատկապես ծայրահեղ արմատական խմբավորումների ակտիվ դերակատարումը միջինասիական, հյուսիսաֆրիկյան, կենտրոնասիական և այլ տարածաշրջաններում:

21-րդ դարի առաջին տասնամյակի ընթացքում իսլամական արմատական գաղափարախոսների, հատկապես Աբու Մուսաբ աս-Սուրիի կողմից մշակված նոր գաղափարական հիմնադրույթները հիմք հանդիսացան 2010 թ-ից ծավալված «Արաբական գարնան» արդյունքում «ալ-Կաիդա»-ի կամ նրան հարող իսլամական ծայրահեղական կառույցների ներկայիս սերնդի ակտիվության համար՝ նոր թափ հաղորդելով այժմյան ջիհադական պայքարին:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔԸ «ԱՐԱԲԱԿԱՆ ԳԱՐՆԱՆԸ»

Շուշանիկ Ղազարյան

1995 թ. Եվրոպական Միության (ԵՄ) և Միջերկրական ծովի ավազանի երկրների միջև սկսվեց Բարսելոնյան գործընթացը, որի հիմքում ընկած է քաղաքական, տնտեսական և սոցիալ-մշակութային համագործակցությունը: Բարսելոնյան գործընթացը տարածաշրջանում միակ ֆորումն է, որտեղ եվրա-միջերկրական գործընկերները կարող են քաղաքական, տնտեսական և մշակութային երկխոսության մեջ մտնել: Սակայն 2010 թ. Թունիսի հեղափոխությունից ի վեր՝ Մերձավոր Արևելքի և Հս. Աֆրիկայի քաղաքական իրավիճակի կտրուկ փոփոխությունն ու այսպես կոչված «Արաբական գարունը» մարտահրավերներ նետեցին համաշխարհային հանրությանը, այդ թվում նաև ԵՄ-ին:

Սույն հոդվածում մենք կանդրադառնանք Բարսելոնյան գործընթացին և Միջերկրական միությանը, դրանց համագործակցության ձևաչափերին մինչև այսպես կոչված «Արաբական գարնան» իրադարձությունները: Կվերլուծենք «Արաբական գարնանը» անմիջապես հաջորդած ԵՄ-ն քաղաքականության փոփոխությունները՝ ցույց տալով համագործակցության նոր միտումները՝ տնտեսական համագործակցության պայմանավորվածությունը այդ երկրների ներքաղաքական անցումային իրադարձություններով:

1995թ. սկսվեց Բարսելոնյան գործընթացը, որի նպատակն էր. «Քաղաքական, տնտեսական և սոցիալ–մշակութային երկխոսության միջոցով ստեղծել բազմակողմանի համագործակցություն՝ խաղաղ, կայուն և զարգացող տարածաշրջան կառուցելու համար»:[1] Սա առաջին

[1] The Barcelona Process, http://eeas.europa.eu/euromed/barcelona_en.htm (մուտք՝ 16.04.2013):

բազմակողմանի համագործակցությունն էր ԵՄ-ի և միջերկրածովյան երկրների միջև:

Այս համագործակցության նպատակները երեք խմբի էին բաժանված՝

ա) Քաղաքականություն և անվտանգություն

Այս երկխոսությունը վերաբերվում էր ահաբեկչության դեմ պայքարին, ճգնաժամերի կառավարմանը և կոնֆլիկտների կանխարգելմանը, խորհրդարանական համագործակցությանը, որոնց հիմքում ընկած են քաղաքական բարեփոխումներ:

բ) Ֆինանսական և տնտեսական

Այս համագործակցությունը երեք հիմքերի վրա պետք է ընթանար՝ տնտեսական, կարևոր սեկտորներում բարեփոխումներ և ազատ առևտրի գոտու ստեղծում:

գ) Հասարակական և մշակութային

Այս համագործակցության նպատակն էր ստեղծել մշակութային երկխոսություն և ապահովել մարդու իրավունքների պաշտպանությունը:[2]

Բարսելոնյան գործընթացին զուգընթաց՝ 2004 թ. ստեղծվեց Եվրոպական հարևանության քաղաքականությունը (ԵՀՔ), որն ավելի հստակեցրեց ԵՄ-ի հարաբերությունները Հս. Աֆրիկայի և Մերձավոր Արևելքի երկրների հետ:

Մինչ «Արաբական գարնան» իրադարձությունները, ԵՄ-ը ԵՀՔ-ն երեք ռազմավարական փաստաթուղթ է հրատարակել՝ «Երկկողմանի գործողությունների ծրագիրը» (2004թ.), «Համագործակցության համաձայնագիրը» (2006թ.) և «Երկրի ռազմավարական փաստաթուղթը» (2007 թ.): Այս փաստաթղթերից յուրաքանչյուրը հստակորեն ընդգծում է ԵՄ-ի դեմ առ դեմ հարաբերությունները Մերձավոր Արևելքի և Հս. Աֆրիկայի երկրների հետ:[3]

---

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] COMMISSION OF THE EUROPEAN COMMUNITIES, Wider Europe—Neighbourhood: A New Framework for Relations with our Eastern and Southern Neighbours, COM(2003) 104 final , Brussels, 11.3.2003, http://ec.europa.eu/world/enp/pdf/com03_104_en.pdf (մուտք՝ 23.04.2013):

Սակայն, 2005 թ. նոյեմբերի 28–29 Բարսելոնայում տեղի ունեցած կոնֆերանսի ժամանակ Բարսելոնյան գործընթացի արդյունքները հետևյալ կերպ գնահատվեցին ԵՄ անդամ–երկրների նախարարների կողմից. «Քաղաքական և անվտանգության համագործակցությունը պաշտոնական մակարդակով աճել է, չնայած աճի արագությունը ավելի դանդաղ է, քան սպասվում էր: Համագործակցությունը ոչ մի ուղիղ ազդեցություն չի թողել տարածաշրջանի չլուծված կոնֆլիկտների վրա»: [4]

Մի քանի այլ գնահատականներ նույնպես կան Բարսելոնյան գործընթացի վերաբերյալ, որոնց համաձայն՝ գրեթե ոչինչ չի արվել, մասնավորապես քաղաքական և անվտանգության հարցերում: Կոնֆերանսի ժամանակ այս գործընթացի ամբողջական եզրակացությունը հետևյալն էր. «Մենք չենք կարող ասել, որ Բարսելոնյան գործընթացը ժողովրդի հույսերն ու պահանջները արդարացրեց: Հիմնականում կարող ենք խոսել անկատար խոստումների և զգալի թերությունների մասին»:[5]

Բարսելոնյան գործընթացի արդյունքում տարածաշրջանը պետք է ավելի կայուն, ապահով և խաղաղ լիներ, ինչն, իրականում, խթանեց տրանսֆորմացիոն գործընթացները տարածաշրջանում: Նույն կերպ կարելի է գնահատել 2004 թ. սկսված ԵՀՔ ծրագիրը:

2007 թ. Ֆրանսիայի նախագահ Ն. Սարկոզին առաջարկեց ստեղծել Միջերկրական միություն:[6] Ֆրանսիան ցանկանում էր կրկին հաստատվել տարածաշրջանում: Միջերկրական միության վերաբերյալ Սարկոզիի առաջարկը դրական արձագանքներ չստացավ: Կարճ ժամանակ անց նրա առաջարկը քննադատության արժանացավ Գերմանիայի կանցլեր Ա. Մերկելի

[4] Praussello F., Euro-Mediterranean Partnership in the Aftermath of the Arab Spring, FrancoAngeli, 2011, pp. 342.

[5] Նույն տեղում:

[6] Alonso P., The Union of the Mediterranean, a sinking ship?, 2 march, 2011, http://owni.eu/2011/03/02/the union-for-the-mediterranean-a-sinking-ship (մուտք՝ 26.04.2013):

կողմից. «Սա վտանգավոր իրավիճակ կստեղծի: Կստեղծվի մի իրավիճակ, որը Գերմանիային կմոտեցնի Կենտրոնական և Արևելյան Եվրոպային, իսկ Ֆրանսիային՝ Միջերկրականին»:[7] Գերմանիան որոշ ժամանակ այս դիրքորոշումը պահում էր: Ա. Մերկելը կարծում էր, որ Բարսելոնյան գործընթացը ԵՄ-ն ընդհանուր ծրագիրն էր, որը կքայքայվի միակողմանի մոտեցումից: Քայքայելով Բարսելոնյան գործընթացը՝ ԵՄ-ն բազմակողմանի քաղաքականությունը Միջերկրական ծովի երկրների հետ դառնում էր Սարկոզիի անձնական նախագիծը[8]:

Այնուամենայնիվ, 2008 թ. ստեղծվեց Միջերկրական միությունը, որն ավելի բարդացրեց իրավիճակը: Քանի որ Միջերկրական միությունը, շեշտը դնելով տնտեսական համագործակցության վրա, անտեսում էր տարածաշրջանի քաղաքական խնդիրները և դրանց լուծումների անհրաժեշտությունը, որն էլ հանգեցրեց 2010թ. թունիսյան հեղափոխությանը և «Արաբական գարնանը»:

«Արաբական գարունը» կարևոր փոփոխություն մտցրեց ԵՄ-ն քաղաքականության մեջ: Տարիներ շարունակ ԵՄ-ը համարվում էր տնտեսական «հսկա» և քաղաքական «թզուկ», իսկ Թունիսի հեղափոխությունը քաղաքական առաջատար լինելու հնարավորություն ստեղծեց ԵՄ-ն համար:

Քաղաքական առաջատարություն ձեռք բերելու ճանապարհին ԵՄ-ը պետք է իր տնտեսական և առևտրային զարգացման աջակցությունը, որն առավել երկարատև գործընթաց է, զուգորդի արտաքին և տեխնիկական կարճաժամկետ օգնությունների հետ՝ հաշվի առնելով այդ երկրների քաղաքական հետագա զարգացումները անցումային ժողովրդավարացման ճանապարհին:

2011 թ. մարտի 8-ին ԵՄ-ն արտաքին և անվտանգության քաղաքականության բարձրագույն ներկայացուցիչ Քեթրին Էշթոնը

[7] Մեջբերում ըստ՝ Ilievska F., Restarting the Mediterranean Union?!, Analytical Journal, vol.4, issue 2, Analytica, Skopje, December 2011, p.7 http://www.analyticalmk.com/files/2012/01/journal_vol4_issue2.pdf (մուտք՝ 27.04.2013):
[8] Նույն տեղում էջ.7-8:

և Եվրոպական Հանձնաժողովը առաջարկեցին «Հվ. Միջերկրականի հետ համագործակցություն» կոմյունիկեն:[9] Այս համագործակցությունը վերաբերվում էր քաղաքական մասնակցությանը, ազատության և աշխատանքի հնարավորություններին: Նոր համագործակցության համար ժողովրդավարությունը և մարդու իրավունքները առաջնային տեղ էին զբաղեցնում: Համագործակցությունից երկու ամիս անց ԵՄ-ն ԵՀՔ-ն ներքո հաստատվեց «Նոր արձագանք փոփոխվող հարևանությանը» կոմյունիկեն, որտեղ ամբողջովին վերանայվեց ԵՀՔ-ը:[10] Ինչպես ԵՄ-ն եվրահանձնակատար Ստեֆան Ֆյուլեն իր՝ 2012 թ. հունվարի 9–ի ճառում նշեց. «Արաբական գարուն» երևույթը ստիպեց ԵՄ-ը փոխել իր քաղաքականությունը Հվ. Միջերկրականի նկատմամբ, քանի–որ այն տարածաշրջանը վերածեց դրամատիկ զարգացումների թատերաբեմի»:[11]

Այս կոմյունիկեյում ԵՄ-ը նոր մոտեցում էր մշակել իր Հս. Աֆրիկայի և Մերձավոր Արևելքի հարևանների նկատմամբ: Մինչ անցյալում ԵՄ-ը կարևորում էր տարածաշրջանի կայունությունն ու անվտանգությունը՝ նույնիսկ աշխատելով ավտորիտար համակարգերի հետ, ապա նոր մոտեցումը, միանշանակ, խոստանում էր աջակցել շարունակվող անցումային գործընթացներին տվյալ երկրներում:

Աջակցություն իրականացնելու համար՝ ԵՄ-ն նոր ռազմավարությունը ընդգծում էր երեք նոր կետեր, որոնք հետևյալն էին.

1. աջակցել «խորը» ժողովրդավարության կառուցմանը, որը նշանակում էր ոչ միայն ժողովրդավարական

[9] JOINT COMMUNICATION TO THE EUROPEAN PARLIAMENT, THE COUNCIL, THE EUROPEAN ECONOMIC AND SOCIAL COMMITTEE AND THE COMMITTEE OF THE REGIONS, A new response to a changing Neighbourhood, COM(2011) 303, Brussels, 25/05/2011, http://ec.europa.eu/world/enp/pdf/com_11_303_en.pdf (մուտք՝ 26.04.2013):

[10] Նույն տեղում:

[11] . Füle Š., SPEECH/12/66, Arab Spring Conference, February 2012 http://europa.eu/rapid/pressReleasesAction.do?reference=SPEECH/12/66&format=HTML&aged=0&language=EN&guiLanguage=fr (մուտք՝ 25.04.2013):

սահմանադրություն գրել և անցկացնել ազատ և արդար ընտրություններ, այլ նաև ապահովել խոսքի ազատության, զարգացող հասարակության և ժողովրդավարության հաստատման համար բոլոր մնացած գործառույթները,

2. գործընթացի որպես կարևոր մաս՝ ստեղծել համագործակցություն, որը կենտրոնացած կլինի քաղաքացիական համագործակցության և զարգացման վրա,
3. ապահովել տնտեսական աճն ու զարգացումը, առանց որի ժողովրդավարությունը չի կարող արմատավորվել: Այս հարցում բուն մարտահրավերը աշխատատեղեր ստեղծելն էր:[12]

Ինչպես եվրահանձնակատար Ստեֆան Ֆյուլեն 2012 թ. փետրվարի 3-ին Գերմանիայում նշեց. «Այս որոշումները ապացուցում են ԵՄ–ի լուրջ հանձնառությունը հարևան գործընկերների նկատմամբ: Աշխատատեղեր ստեղծելը, կեցության բարելավումը, համալսարանական համագործակցությունը և հասարակությանը ձայն տալը կաջակցի անցումային փուլին»:[13]

Այս նպատակներին հասնելու համար ԵՄ-ն՝ ԵՀՔ մեջ հետևյալ սկզբունքներն է մտցրել.

1. «More- for-more» սկզբունքի հիմքում ընկած են բարեփոխումները, որոնց համար հիմնական պայման է հանդիսանում ազատ և արդար ընտրությունների անցկացումը:

2011-2013 թթ. համար, «More-for-more» սկզբունքի ներքո, հետևյալ չափի ֆինանսական աջակցություն է հատկացվել.

- Թունիս՝ 240 մլն. եվրոյից աջակցությունը հասել է 400 մլն.-ի
- Ալժիր՝ 172 մլն. եվրո,
- Հորդանան՝ 223 մլն. եվրո,
- Եգիպտոս՝ 227 մլն. եվրո,
- Եմեն՝ 60 մլն. եվրո,

[12] JOINT COMMUNICATION TO THE EUROPEAN PARLIAMENT, THE COUNCIL, THE EUROPEAN ECONOMIC AND SOCIAL COMMITTEE AND THE COMMITTEE OF THE REGIONS, A new response to a changing Neighbourhood, COM(2011) 303, Brussels, 25/05/2011, http://ec.europa.eu/world/enp/pdf/com_11_303_en.pdf (մուտք՝ 26.04.2013):

[13] Նույն տեղում:

• Լիբիա՝ 155 մլն. եվրո:[14]

Այս ամենին զուգահեռ ԵՄ-ը որոշակի քայլեր է ձեռնարկում այդ երկրների համար ԵՄ-ն ներքին շուկա մուտքի հեշտացման ուղղությամբ: Այս հարցում առաջնային դեր է խաղում խորը և բազմակողմանի առևտրի գոտու ստեղծումը, որը հնարավորություն կտա ինտեգրվել ԵՄ-ն ներքին շուկա:

2011 թ. սեպտեմբերին ԵՄ-ը «Արաբական գարնան» երկրներին ֆինանսական աջակցության մի նոր փաթեթ առաջարկեց, որը կոչվում է «SPRING» (Support for Partnership, Reform and Inclusive Growth), որի բյուջեն 2011-2012 թթ. համար 350մլն. եվրո էր և պիտի գործեր «More- for-more» սկզբունքի ներքո:[15]

2. «Less-for-less» սկզբունքի հիմքը հետևյալն է՝ ինչքան այս երկրները ոտնահարեն մարդու իրավունքները, ԵՄ-ն այնքան պատժամիջոցներ կկիրառի և նույնիսկ կդադարեցնի երկկողմանի կապերը:

Այս պատժամիջոցներից են անձնական հաշիվների սառեցումը, ճանապարհորդական արգելքները և զենքի վրա էմբարգոյի կիրառումը: Նշենք, որ Սիրիայի դեպքում պատժամիջոցները ավելի շատ են, որոնք ներառում են նաև արգելք հում նավթի և որոշ ֆինանսական ծառայությունների վրա:

Այսպիսով, վերոշարադրյալը ցույց է տալիս, որ ԵՄ-ն ֆինանսատնտեսական քաղաքականության նոր սկզբունքների համաձայն՝ մարդու իրավունքները և ժողովրդավարացման գործընթացները որոշակիորեն պայմանավորելու են ԵՄ-ն աջակցության հնարավորությունները, չափը, ինչպես նաև պատժամիջոցների կիրառումը:

ԵՄ-ն՝ «Արաբական գարնան» երկրների նկատմամբ տնտեսական աջակցության վերաբերյալ որոշակի պատկերացում

[14] EU response to the Arab Spring, MEMO/11/918, Brussels, 16 December 2011, http://europa.eu/rapid/press-release_MEMO-11-918_en.htm (մուտք՝ 26.04.2013):

[15] EU response to the Arab Spring: The Spring Programme, MEMO/11/636 Brussels, 27 September 2011, http://europa.eu/rapid/press-release_MEMO-11-636_en.htm (մուտք՝ 26.04.2013):

կազմելուց հետո, փորձենք անդրադառնալ ԵՄ-ն քաղաքական արձագանքին առանձին երկրներում:

Թունիս

Բեն Ալիի հեռանալուց հետո ԵՄ-ը ողջունեց ռեժիմի փոփոխությունը և ժողովրդարավարացման ճանապարհով գնալու կոչ արեց նոր իշխանություններին: Այնուամենայնիվ, եվրոպական ազդեցությունը այնքան էլ բարեհաջող ձևով իրեն չդրսևորեց՝ իր անդամ-երկրների (մասնավորապես Ֆրանսիա) պատճառով: Անդամ-երկրներից շատերը սերտ հարաբերությունների մեջ էին Բեն Ալիի հետ և աջակցում էին ռեժիմին: Այս ամենից հետո ԵՄ-ը չափազանց զգույշ էր իր հայտարարությունների մեջ. օրինակ 2011թ. հունվարի 17-ի հայտարարությունը հետևյալն էր. «Այս կրիտիկական պահին ԵՄ-ն հաստատում է իր օգնությունը Թունիսի ժողովրդին: Մենք կոչ ենք անում դադարեցնել այն բոլոր գործողությունները, որոնք կսպառնան երկրի անվտանգությանը»:[16] Ք. Էշթոնի հայտարարությունը վկայում էր այն մասին, որ ԵՄ-ը փորձում էր իր դիրքերը հաստատել՝ ելնելով իրադարձությունների ամենօրյա փոփոխություններից:

Թունիսը շարունակում էր «raison d'État»-ի (պետության շահ) տեսանկյունից դիտարկվել Արևմուտքի կողմից: Նախկինում այն ընդունում էր Բեն Ալիի ռեժիմի կողմից մարդու իրավունքների ոտնահարումը երկու պատճառով՝ տնտեսական կայունություն և 2001թ.-ից ի վեր՝ իսլամական ռադիկալիզմի հսկողությունը Թունիսում:

Ֆրանսիայի դիրքորոշումը շատ յուրահատուկ և հակասական էր: Շարժման սկզբնական շրջանում Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Էյլոթ Մարին օգնություն առաջարկեց Բեն Ալիին՝ առաջարկելով Ֆրանսիայի անվտանգության ուժերի աջակցությունը: Սակայն, մի քանի օր անց ֆրանսիական կառավարությունը դադարեցրեց հարաբերությունները Բեն Ալիի հետ: Ֆրանսիան հասկացավ, որ կայուն և ժողովրդավար Թունիսը

[16] Pop V.,Middle East mayors unimpressed by EU reaction to uprisings, 31 January, 2011, http://euobserver.com/886/31720, (մուտք՝ 26.04.213):

տարածաշրջանային և միջազգային հետաքրքրություն է իրենից ներկայացնում: Միայն 2011թ.-ի հունվարի 21-ին ԵՄ-ը սառեցրեց Բեն Ալիի և նրա ընտանիքի հաշիվները Ֆրանսիական բանկերում:[17]

Փաստորեն, Ալժիրի դեպքը կրկին անգամ ցույց տվեց, որ ԵՄ-ը քաղաքական տեսանկյունից պետք է ընդուներ Թունիսում տեղի ունեցող ժողովրդավարական փոփոխությունները և որոշակի մասնակցություն ունենար այդ իրադարձություններում, թեև այն տնտեսական առումով ոչ շահեկան էր ԵՄ-ն և մասնավորապես Ֆրանսիայի համար:

Ալժիր

Ալժիրի իրադարձությունները սկսվեցին 2010 թ.-ի դեկտեմբերի 28-ին և ավարտվեցին 2012թ.-ի հունվարին: Սակայն, համեմատելով հարևան երկրների իրավիճակի հետ՝ (Թունիս, Լիբիա, Եգիպտոս) Ալժիրի քաղաքական դրությունը բավական կայուն է: 2012 թ.-ի մարտի 19-ի հանդիպման ժամանակ Ֆյուլեն նշեց. «Ալժիրը սկսել է իր բարեփոխումների գործընթացը, որին ԵՄ-ը պատրաստ է աջակցել: Մեր քաղաքական երկխոսությունը ավելի ինտենսիվ է դարձել, և վերջին շրջանում Ալժիրը որոշել է իր մասնակցությունը ցուցաբերել ԵՀՔ-ն մեջ»:[18] Այս հարաբերությունների նոր ընթացքը պայմանավորված էր 2011 թ. հայտարարությամբ, երբ Ալժիրի կառավարությունը ԵՄ-ն դիտորդներ հրավիրեց կայանալիք ընտրությունների ժամանակ:

Հորդանան

ԵՄ-Հորդանան հարաբերությունները երկար տարիների պատմություն ունեն: Հորդանանը ԵՄ-ն համար հանդիսանում է կարևոր դերակատար և խորհրդատու Մերձավոր Արևելքում: 2010թ. հոկտեմբերի՝ ԵՄ-Հորդանան «բարձր մակարդակի»

[17] Radio France Internationale, France pushes EU for Ben Ali assets freeze, January 20, 2011, http://www.english.rfi.fr/africa/20110120-european-union-mulls-ben-ali-assets-freeze (մուտք՝ 16.04.2013):

[18] EU-Algeria: A new stage of more intense cooperation, IP/12/255, 19 March, 2012, http://europa.eu/rapid/press-release_IP-12-255_en.htm (մուտք՝ 19.04.2013):

համագործակցության համաձայնագրի ստորագրման ժամանակ, ԵՄ-ը պատրաստակամություն ցուցաբերեց աջակցել Հորդանանին իր բարեփոխումների ճանապարհին: ԵՄ-ը ողջունեց Հորդանանի թագավոր Աբդուլլահի հայտարարությունը, որը վերաբերում էր Հորդանանի խորհրդարանի կողմից ընդունված սահմանադրական բարեփոխումներին:

Եգիպտոս

Մինչ ԵՄ-ն անդամ-երկրները հայտարարություններ էին անում՝ քաջալերելով Եգիպտոսի խաղաղ ցույցերը, որոնք սկսվեցին 2011թ. հունվարի 25-ին, ԵՄ-ը 4 օր լռում էր: Հունվարի 29-ին Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան և Գերմանիան միացյալ հայտարարություն արեցին, երբ Եգիպտոսում ինտերնետային և հեռախոսային կապերը անջատվել էին և 125 մարդ էր մահացել:[19] Նրանք Մուբարաքին կոչ էին անում ժողովրդավարացման ընթացքը սկսել, որը կարտացոլվի կառավարությունում և ազատ, արդար ընտրություններում:

Լիբիա

Այն ժամանակ, երբ ԵՄ-ն շատ անդամ-երկրներ շփոթված էին Լիբիայի իրադարձություններից, Ֆրանսիայի նախագահ Ն. Սարկոզին արագ արձագանքեց այս ամենին ասելով. «Ֆրանսիան որոշել է իր դերը հաստատել պատմության առջև՝ ազատելով ժողովրդին Կադաֆիից»: Ի՞նչը կարող է բացատրել Սարկոզիի աջակցությունը հակակադաֆիական ուժերին: Այս հարցը երեք պատասխան կարող է ունենալ՝ Ֆրանսիայի նախագահական ընտրությունները, մուսուլմանների միգրացիոն հոսքերը Ֆրանսիա և Լիբիայի միջոցով Ֆրանսիայի կենտրոնական դերի հաստատումը համաշխարհային քաղաքական «բեմում»:

Սիրիա

Սիրիայի ապստամբների բողոքները սկսվեցին 2011 թ. մարտի կեսին՝ որպես բարեփոխումների պահանջի կոչեր, բայց

[19] Cattane V., Expert suggests reasons for EU's silence on Egypt's protests, 6 February, 2011, http://www.egyptindependent.com/news/expert-suggests-reasons-eus-silence-egypts-protests (մուտք՝ 19.04.2013):

հետագայում վերածվեցին հակաիշխանական ցույցերի: Ապստամբների ընդվզումը ճնշվեց Սիրիայի ռեժիմի կողմից, որը ԵՄ-ը խստորեն դատապարտեց:[20] ԵՄ-ը պատժամիջոցներ կիրառեց Սիրիայի նկատմամբ, որը ներառում էր էմբարգո զենքի և այն սարքավորումների վրա, որոնք օգտագործվել էին ապստամբության ճնշման ժամանակ, ինչպես նաև ճանապարհորդական արգելք այն 155 քաղաքական գործիչների համար, որոնք մասնակցել էին խռովությունների ճնշմանը (ներառյալ Սիրիայի նախագահ Բաշար ալ-Ասադը) և դադարեցրեց բոլոր երկկողմանի համագործակցության ծրագրերը:

Սիրիայի իշխանության կողմից ոչ մի բարեփոխում չարվեց, ընդհակառակը, մեծածավալ ռազմական միջամտություն իրականացվեց ցուցարարների դեմ:[21] Այդ ժամանակ ԵՄ-ը նշեց Սիրիայի ռեժիմի լեգիտիմության կորստի մասին և Բաշար ալ-Ասադին կոչ արեց փոխզիջման գնալ և երկխոսության մեջ մտնել ժողովրդի հետ:[22] Առաջընթաց չտեսնելով՝ ԵՄ-ը ավելացրեց իր պատժամիջոցները, այս անգամ արդեն սիրիական հում նավթի վրա, ինչպես նաև ներդրումնային արգելք դրեց նավթի սեկտորի վրա, որը մասամբ դադարացրեց ԵՄ-Սիրիա Համագործակցության համաձայնագիրը, որը ներառում էր տարածաշրջանային և երկկողմանի ծրագրերի ընդհատում:

2012 թ. փետրվարի 27-ի բրյուսելյան հանդիպման ժամանակ ԵՄ–ն նախարարները եկան ընդհանուր հայտարարի նոր պատժամիջոցների վերաբերյալ, որոնք ներառում էին դեպի ԵՄ-ն երկրներ թռիչքների արգելք Սիրիայի որոշ քաղաքական գործիչների համար, այդ անձանց ցանկում է նաև Բաշար ալ-Ասադը:[23]

---

[20] EU Declaration by HR Ashton on unfolding situation in Syria, EU11-157EN, April 2011, http://www.eu-un.europa.eu/articles/fr/article_10988_fr.htm (մուտք՝ 19.04.2013):

[21] Portela C., The EU's Sanctions against Syria: Conflict Management by Other Means, Security Policy Brief, No. 38, September 2012, http://www.egmontinstitute.be/papers/12/sec-gov/SPB38.pdf (մուտք՝ 19.04.2013):

[22] Նույն տեղում:

[23] Statement by the spokesperson of EU High Representative Catherine Ashton welcoming the UN General Assembly Resolution on Syria, A 63/12, February 2012,

Միևնույն թվականի փետրվարի 24–ին Թունիսում տեղի ունեցավ «Սիրիայի բարեկամների» հանդիպումը, որի ժամանակ Ք. Էշթոնը հայտարարեց հետևյալը. «Շարժման սկզբից մենք մեղադրել ենք ալ-Ասադի ռեժիմին, ով ոտնահարում է քաղաքացիների իրավունքները: Տարածաշրջանային ներգրավվածությունը և Արաբական լիգան կենտրոնական դերում են մնում: Ես վերահաստատում եմ ԵՄ-ն աջակցությունը Արաբական լիգայի ծրագրին: Ինչպես նաև, ողջունում եմ Քոֆի Անանին, ով հանդիսանում է ՄԱԿ-ի հատուկ հանձնակատար Սիրիայի հարցով: Սիրիական զորքը և զինված ուժերը պետք է դուրս գան քաղաքներից և Արաբական լիգային պետք է ազատ մուտք տրվի»:[24]

Ի՞նչ էր ցանկանում ԵՄ-ը անել Սիրիայում: Եվրոպացի պաշտոնյաներից շատերը պարզապես կասեին. «դադարեցնել արյունահեղությունը»: Բայց ճգնաժամի կառավարումը, ուժով, թե առանց ուժի, միայն բռնության դադարեցումը չի: Այն նաև պետք է ներառի քաղաքական լուծման այն պայմանները, որոնք կբացառեն հետագա կոնֆլիկտները: Սիրիական դեպքը բարդացվել է նաև դրա որոշ հարևանների անվտանգության հարցերի և Սիրիայի գլխավոր դաշնակիցների (Իրան և Ռուսաստան) պատճառով:

Ավելին, Սիրիայի ներքին քաղաքական գործողությունները բավականին շփոթեցնող են: Երբ 2011թ. սկզբին առաջին ցույցերը եղան Բաշար ալ-Ասադի դեմ, դրանք դեռ խառնված, քողարկված էին Եգիպտոսի, Լիբիայի և Բահրեյնի դեպքերի ստվերի ներքո: Չնայած Մերձավոր Արևելքի հարցերով զբաղվող փորձագետները զգուշացնում էին, որ Սիրիան կարող է պայթյունավտանգ լինել, բայց եվրոպացի և ամերիկացի պաշտոնյաները ավելի լավատես էին այն հարցում, որ կարող են իշխանություններին «համոզել» դրական պատասխանել հասարակական դժգոհությանը: Ինչպես

http://www.consilium.europa.eu/uedocs/cms_data/docs/pressdata/EN/foraff/128046.pdf (մուտք՝ 21.04.2013):

[24] Statement by EU HR Ashton following the meeting of Friends of Syria in Tunis, EU12-054EN, 24 February 2012, Brussels, http://www.eu-un.europa.eu/articles/fr/article_11891_fr.htm (մուտք՝ 19.04.2013):

Ֆրանսիացի պատմաբան Օլիվեր Ռուան ասաց. «Սիրիան միակ երկիրն է, որտեղ «Արաբական գարունը» կարող է փոխել տարածաշրջանի աշխարհառազմավարական կոնցեպտը: Եթե Սիրիայում ռեժիմը տապալվի, ապա ամբողջովին նոր տարածաշրջան կունենանք»:[25]

Այսպիսով, «Արաբական գարնան» իրադարձությունները Միջերկրածովյան ավազանի և Մերձավոր Արևելքի մի շարք երկրներում հանգեցրին ԵՄ-ն՝ այդ տարածաշրջանների երկրների հետ վարվող նախկին քաղաքականության և համագործակցության ծրագրերի անհամապատասխանությանը՝ ելնելով այդ երկրներում ստեղծված նոր իրավիճակներից: ԵՄ-ը ստիպված էր արձագանքել այդ իրադարձություններին և փոխել իր քաղաքականությունը: ԵՄ-ը, փաստորեն, իր ֆինանսատնտեսական համագործակցությունը սկսեց պայմանավորել այդ երկրների քաղաքական իրադարձություններով և փոփոխություններով: Տնտեսական ոլորտում ԵՄ-ը, «Արաբական գարնան» արդյունքում, ժողովրդավարացման ուղին բռնած և անցումային փուլում գտնվող երկրներում ֆինանսատնտեսական աջակցությունը ուղղեց ժողովրդավարացման ճանապարհին խոչընդոտների և դժվարությունների հաղթահարմանը՝ դրանով իսկ փորձելով առաջատար դիրք զբաղեցնել այդ երկրներում նոր ստեղծված անցումային պայմաններում: Իսկ ԵՄ-ն քաղաքական արձագանքը, որը միասնական չէր, պայմանավորված էր ԵՄ-ն անդամ երկրների շահերով: «Արաբական գարնան» իրադարձություններով պայմանավորված՝ ԵՄ-ն քաղաքականության նոր մոտեցումների և փոփոխությունների հետագա զարգացումներն ու արդյունքները դեռ հստակ չեն և նոր ուսումնասիրության կարիք ունեն:

[25] ERLANGER S., Syrian Conflict Poses the Risk of Wider Strife, New York Times, February 25, 2012, http://www.nytimes.com/2012/02/26/world/middleeast/syrian-conflict-poses-risk-of-regional-strife.html?pagewanted=all (մուտք՝ 30.04.2013):

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՐԹԱԿ[1]

ԵԿԵՂԵՑԻՆ՝ ՈՐՊԵՍ ՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Հեղինե Կարապետյան

Հոդվածում ներկայացված է Հայ առաքելական եկեղեցու նկարագիրը՝ որպես ցանցային համակարգ: Թեմայի ընտրությունը պայմանավորված է նրանով, որ ցանցերն այժմ ավելի շատ դիտվում են որպես արդի հասարակական գործընթացների արդյունք, և հետաքրքիր է պարզել՝ ցանցային դաշտում ինչպիսի նկարագիր կունենա ավելի հին ու կայուն հասարակական համակարգը ի դեմ եկեղեցու, մասնավորապես Հայ առաքելական եկեղեցու:

Ի՞նչ է «ցանցային համակարգը»

«Ցանցային համակարգի» համընդհանուր ընդունելի սահմանում դեռևս մշակված չէ: Ցանցային համակարգերի վերաբերյալ աշխատանքների հեղինակների (Դ. Բարնի, Յ. Վ. Դիյկ, Դ. Հովհաննիսյան, Զ. Կարվալիկս, Մ. Կաստելս, Բ. Ուելման, Ա. Թուրեն, Ժ. Ֆ. Լյոտար) մոտեցումներում ընդհանրությունն այն է, որ բոլորն էլ ցանցն ընկալում են որպես նոր երևույթ, և այն փորձում են ուսումնասիրել թե՛ կառուցվածքային, և թե՛ բովանդակային տեսանկյունից՝ բնութագրելով ցանցը՝ որպես բազմատարր երևույթ:

Դ. Բարնին[2] և Յ. Վ. Դիյկը[3] ցանցը սահմանելիս հանգում են այն նույն գաղափարին, որ «ցանց»-ը կազմված է հանգույցներից, կապերից և հոսքերից. հանգույցները գործող կառույցներն են,

---

[1] «Ուսանողական հարթակը» նախատեսված է ուսանողների առավել հետաքրքիր և հաջողված հոդվածները տպագրելու համար:

[2] Darin B., The Network Society, Polity Press Ltd, 2004, p. 26.

[3] van Dijk ‘J., The Network Society: Social Aspects of New Media', The Netherlands, 1991, pp. 6-40.

կապերը՝ այդ կառույցների միջև շփումը, և հոսքերը՝ կառույցների գործունեությունը խթանող կամ խոչընդոտող ազդակները: Օրինակ, երկու ընկերների գոյությունն արդեն «ցանց» է, որտեղ հանգույցը ընկերների միությունն է, կապը՝ նրանց հաղորդակցման ձևերը (հեռախոսով խոսելը, համացանցով շփվելը և այլն), իսկ հոսքերը՝ բամբասանքը, սերը և այլն:

Նկատելի ընդհանրություն կա ցանցի տրամաբանության վերաբերյալ Մ. Կաստելսի և Դ. Հովհաննիսյանի մեկնաբանություններում: Նրանք երկուսն էլ ցանցում մեծ կարևորություն են տալիս հատկապես տրամաբանությանը, միայն թե Դ. Հովհաննիսյանն իր սահմանման մեջ «տրամաբանություն» եզրը փոխարինում է «տեքստ» եզրով:

Դ. Հովհաննիսյանը ցանցերը բաժանում է երեք տիպի.

ա) տեքստ և կենտրոն ունեցող ցանցեր, օրինակ՝ ցանկացած համաշխարհային սփռում ունեցող ազգ. յուրաքանչյուր ազգ ունի իր սեփական գաղափարական տեքստը՝ ինքնություն, կրոն, պատմություն, ապրելու սկզբունքներ և այլն, և ունի կենտրոն՝ պետություն, որն ունի կառավարման գործառույթ:[4]

Մ. Կաստելսը ևս կարևորում է ցանցային այն տրամաբանությունը, ինչի մասին խոսում է Դ. Հովհաննիսյանը: Կաստելսը կարծում է, որ ցանցի բոլոր անդամներին համախմբում է ոչ թե ինչ-որ ղեկավարող անձ կամ օբյեկտ, այլև այն գաղափարախոսությունը, ինչի շուրջ նրանք հավաքվել են և ծավալում են համակարգի ողջ գործունեությունը:

բ) կենտրոն ունեցող ցանցեր, օրինակ՝ ցանկացած տրանսնացիոնալ կորպորացիա: Այն ունի կենտրոն, որն իրականացնում է ընդհանուր կառավարման գործառույթը՝ ազատություն տալով հանգույցներին իրենց ամենօրյա գործունեության մեջ, և չունի որևէ գաղափարական, դիցաբանական, փիլիսոփայական, սոցիալական տեքստ, սակայն հիմնվում է նույն հիմնարար արժեքի՝ արդյունավետության վրա:

[4] Հեղինակի հարցազրույցը Դավիթ Հովհաննիսյանի հետ մարտի 12, 2013թ:

գ) տեքստ ունեցող ցանցեր, օրինակ՝ գրքասեր մարդկանց խումբը, որը չունի կենտրոն, սակայն ունի տեքստ, այն է՝ սերը գրքի նկատմամբ, այն գիտակցումը, որ գիրքը տեղեկացնում է, զարգացնում է, տանում է դեպի հոգևոր արժեքները և այլն, որի հիմնադրույթներով ղեկավարվում են հանգույցները՝ անհատները, իրենց գործունեության մեջ:[5]

Բ. Ուելմանի և Ա. Թուրենի սահմանումներում որոշակի ընդհանրություն նույնպես նկատելի է. նրանք երկուսն էլ ցանցային համակարգում նշանակալի տեղ են տալիս համակարգում գործող անդամների միջև եղած կապի կարևորությանը:

Բ. Ուելմանն իր աշխատություններում կարևորում է երեք գործոն՝ հասարակություն, աշխատանք և կազմակերպություններ, առանց որոնց, ըստ նրա, համակարգը կդադարի գործել: Նա կարևորում է կապը համակարգում գործող կազմակերպությունների և անդամների միջև:[6]

Ա. Թուրենը ցանցային համակարգի անդամների միջև կապի կարևորությունը մեկնաբանում է այլ կերպ. ցանցային համակարգի ծավալած ողջ գործունեությունը հանդիսանում է համակարգի անդամների կողմից համակարգի վրա ազդելու միջոց: Ահա թե ինչու է այն համարվում ցանցային համակարգ. նման համակարգը հանդիսանում է արդյունքն իր իսկ գործունեության:[7]

Մեկ այլ հեղինակ Ժ. Ֆ. Լյոտարը բարձրաձայնում է ցանցային համակարգի մաս կազմող մի այնպիսի բաղադրիչի մասին, առանց որի գոյության լիարժեք չէր լինի վերոնշյալ հեղինակներից և ոչ մեկի սահմանումը: Նա նկատում է, որ ցանցային համակարգում տիրում է հստակ ազատություն. չկան կաղապարված արգելքներ,

[5] Stalder F., Manuel Castells and the Theory of the Network Society, Polity Press, 2006, p. 5.

[6] Wellman B., Physical Place and Cyber Place: The Rise of Personalized Networking, International Journal of Urban and Regional Research 25, Canada, 2001, p. 2.

[7] Touraine A., Return of the actor: social theory in postindustrial society, Minneapolis: University of Minnesota Press, 1988, p. 104.

յուրաքանչյուր երևույթ ու գործընթաց դուրս է գալիս կենտրոնացված կառուցվածքների ու խմբերի ազդեցությունից:[8]

Ցանցի սահմանման հակասական մոտեցումներով աչքի են ընկնում հեղինակներ Յ. Վ. Դիյկը և Մ. Կաստելսը:

Ըստ Յ. Վ. Դիյկի՝ ցանցը բնության և հասարակության մեջ բարդ համակարգերի կազմակերպման մեթոդ է: Ցանցերը կենսական համակարգեր և հարցեր կարգավորելու բարդ ձևեր են: Ցանցում կարևորություն չի տրվում միավորների հատկանիշներին ու էությանը, ուստի ցանցերը կարող են ներթափանցել ինչպես բարդ խնդիրների մեջ, այնպես էլ կենսական համակարգերի բոլոր մակարդակներ:[9]

Յ. վան Դիյկը գտնում է, որ ցանցային համակարգը մի տիրույթ է, որտեղ հասարակական և լրատվական ցանցերը միավորվելով, նպաստում են համակարգի գործունեությանը: Նա համեմատում է ցանցային համակարգը կառուցվածքային համակարգի հետ, որը կազմված է կոնկրետ խմբերից, կազմակերպություններից և հասարակություններից:[10]

Յ. վան Դիյկը ցանցային համակարգը նմանեցնում է մարդու նյարդային համակարգին՝ դրա բովանդակությունն ավելի պարզ ձևով մեկնաբանելու համար:[11] Ըստ Մ. Կաստելսի ցանցերը սահմանում են մեր հասարակությունների նոր հասարակական կազմաբանությունը: Կաստելսը, մասնավորապես, ասում է. «Եթե ցանկանում եք ցանցային համակարգին տալ կոնկրետ սահմանում, ապա պետք է նշեք, որ այն մի համակարգ է, որտեղ գլխավոր հասարակական կառույցներն ու գործընթացները

[8] Lyotard J.-F., The Postmodern Condition, Manchester: Manchester University Press, 1984, ch. 5

[9] van Dijk J., The Network Society: Social Aspects of New Media, The Netherlands, 1991, pp. 6-40.

[10] Նույն տեղում էջ 2:

[11] van Dijk J., Outline of a multilevel theory of the network society, Department of Communication, University of Twente, The Netherlands, 2005, p.1.

կազմակերպվում են էլեկտրոնային ռեսուրսներով գործող ինֆորմացիոն ցանցերի շուրջ»:[12]

Ըստ Կաստելսի, ցանցային համակարգը պարզապես ցանցերի կամ հասարակական ցանցերի ամբողջություն չէ, ինչպես Յ. Վ. Դիյկն է կարծում, որովհետև հասարակական ցանցերը հասարակական կազմակերպվածության ավելի հին ձևեր են: Մինչդեռ իրականում խոսքը այն ցանցերի մասին է, որոնք տեխնոլոգիաների միջոցով տարածում և տեղ են հասցնում ինֆորմացիան: Նա պնդում է, որ ցանցերը դարձել են ժամանակակից հասարակության գլխավոր բաղադրիչները:[13]

Իսկ Յ. վան Դիյկի ցանցային ընկալումն ավելի մակերեսային է, նրա համար այդ միավորները դեռ անհատներն են, հասարակական խմբերը, կազմակերպությունները և հասարակությունները, մինչդեռ, ըստ Կաստելսի, սրանք բոլորը սերտորեն կապված են ցանցերի միջոցով:[14] «Ցանցային համակարգ» տերմինը, ըստ Կաստելսի, ավելի տեղին է օգտագործել, քան «ինֆորմացիոն համակարգ» տերմինը:

Կաստելսը առարկում է վան Դիյկին ասելով, որ միայն տեխնոլոգիան չէ, որ սահմանում է ժամանակակից հասարակությունը, այլ նաև մշակութային, տնտեսական և քաղաքական գործոնները, որոնք միասին ստեղծում են ցանցային համակարգը: Համակարգը կազմված է այս գործոնների հիման վրա, որոնց թողած ազդեցությունները կարող են զարգացնել կամ, հակառակը, խոչընդոտել համակարգի գործունեությունը:[15]

Պարզվում է, որ ըստ Յ. վան Դիյկի՝ ցանցային համակարգը հասարակական ցանցերի ամբողջություն է, որը կազմված է անհատներից, հասարակական խմբերից, կազմակերպություններից, հասարակություններից, մինչդեռ Մ.

---

[12] Castells M., Materials for an exploratory theory of the network society, Department of Sociology, University of California, Berkeley, 1999, pp. 9-12.

[13] Նույն տեղում:

[14] van Dijk J , The Network Society: Social Aspects of New Media, The Netherlands, 1991, pp. 6-7.

[15] Castells M., The Information Age: Economy, Society and Culture, Oxford UK: Blackwell Publishers, 1996, pp. 1-2.

Կաստելսը հերքում է նման տեսակետը՝ պնդելով, որ հասարակական ցանցերը հասարակական կազմակերպվածության ավելի հին ձևեր են և որ ցանցերը նրանք են, որոնք նորագույն տեխնոլոգիաների ու սարքավորումների միջոցով տարածում են ինֆորմացիան:

Դ. Հովհաննիսյանը և Մ. Կաստելսը ցանցային հիերարխիայի մասին ունեն տարբեր մոտեցումներ:

Դ. Հովհաննիսյանը մեկնաբանում է, որ միայն տեքստ ունեցող ցանցերում, որոշ դեպքերում նաև՝ տեքստ և կենտրոն ունեցող ցանցերում անհնար է առանձնացնել հիմնական կազմակերպչական կառավարող և կարգավորող օղակը: Կենտրոնը գոյություն ունի միայն դիցաբանական, գաղափարական, այսինքն՝ արժեքային համակարգի վրա ձևավորված համակարգի ձևով: Կենտրոնի ֆիզիկական բացակայությունն անխուսափելիորեն վերացնում է ցանկացած տիպի հիերարխիա, բացի արժեքայինից:[16]

Իսկ Կաստելսն այլ գաղափարախոսության կողմնակից է: Հոսքերի դաշտը կենտրոնական դեր է խաղում ցանցային համակարգի վերաբերյալ Կաստելսի դիրքորոշման մեջ: Դա հաղորդակցությունների ցանց է, որը սահմանվում է որպես կենտրոն, որտեղ ցանցերը հատվում են: Օրինակ, քաղաքների էլիտար բնակչությունը ոչ թե կապված է կոնկրետ տարածքի հետ, այլ հոսքերի դաշտի հետ: Կաստելսը մեծ կարևորություն է տալիս ցանցերին և պնդում, որ իրական ուժը գտնվում է ցանցերի ներսում և ոչ թե մեծ քաղաքներում: Սա հերքում է մնացած տեսաբանների առաջ քաշած այն տեսությունները, որոնք քաղաքներն ընդունում են հիերարխիայի տեսանկյունից:[17] Այլ կերպ ասած՝ ցանցային համակարգում պետք է ակտիվորեն գործի ցանցային

[16] Հեղինակի հարցազրույցը Դավիթ Հովհաննիսյանի հետ մարտի 12, 2013 թ.:
[17] Castells M., The Information Age: Economy, Society and Culture, Oxford UK: Blackwell Publishers, 1996, pp. 1-2.

տրամաբանությունը: Քանզի ինչպես Կաստելսն է նշում. «Ցանցի տրամաբանությունն ավելի հզոր է, քան ցանցի ուժերը»:[18]

Ստացվում է, որ ըստ Դ. Հովհաննիսյանի՝ ցանցը հիերարխիկ բնույթ ունի, մինչդեռ Կաստելսը պնդում է, որ ցանցում բնավ էլ հիերարխիա գոյություն չունի: Դ. Հովհաննիսյանը կողմ է այն գաղափարին, որ ցանցում հիերարխիան գոյություն ունի և՛ ֆիզիկական (կենտրոն), և՛ գաղափարական տեսքով, իսկ Կաստելսը հերքում է ցանցում ֆիզիկական հիերարխիայի գոյությունը և հավելում, որ ցանցային տրամաբանության առկայությունը ոչնչացնում է ցանկացած տեսակի հիերարխիա:

Ի՞նչ է «եկեղեցին», և արդյո՞ք հայ առաքելական եկեղեցին ցանցային համակարգ է

Եկեղեցի - (հունարեն էկլեսիա բառից) - ժողով, ժողովարան, հավաքատեղի, քրիստոնեական իմաստով՝ քրիստոնյաների համախմբում, ժողովում: «Եկեղեցի» բառը մի քանի նրբիմաստներ ունի: Նոր Կտակարանում եկեղեցի բառը կիրառվում է հետևյալ նշանակություններով.

- Տեղական եկեղեցի – Քրիստոնեական առանձին համայնքներ՝ հավատացյալների տեղական, տեսանելի հավաքույթները բնորոշելու համար:
- Տիեզերական – Կիրառվում է ավելի լայն իմաստով՝ մատնանշելու համար բոլոր քրիստոնյաների ամբողջությունը:
- Քրիստոնյաների հավաքատեղին՝ շինությունը: Ըստ Ա. Նոկսի՝ Նոր Կտակարանը «եկեղեցու» մասին մշտապես խոսում է կապերի, հարաբերությունների տեսանկյունից և այդ հարաբերությունները նա բաժանում է երեք խմբի՝ չնայած նրանք բոլորը փոխկապակցված են.

1. Աստծո և Աստծո մարդկանց միջև կապը,
2. Աստծո մարդկանց միջև կապը,
3. Աստծո մարդկանց և ուրիշների միջև կապը (նրանց, ովքեր Աստծո մարդիկ չեն, ովքեր չեն հավատում Աստծուն):[19]

[18] Stalder F., Manuel Castells and the Theory of the Network Society, Polity Press, 2006, p. 5.

Իսկ ըստ Ջ. Քավրի՝ եկեղեցին ավելին է քան կազմակերպությունը, այն ապրող, զարգացող օրգանիզմ է:[20]

Հայոց եկեղեցին առաքելական է կոչվում, քանի որ Քրիստոսի առաքյալների միջոցով է հաստատվել: Այն առաքելական է՝ ըստ ծագման, ըստ վարդապետության, որովհետև առաքյալների փոխանցած հավատքն է պահում, և ըստ հաջորդականության, քանի որ առաքյալներից սկսած իր իշխանությունը, նվիրապետությունը հաջորդաբար շարունակում է:[21]

Ցանցային համակարգի սահմանումներին ծանոթանալուց հետո փորձել ենք պարզել՝ կարող ենք արդյոք Հայ առաքելական եկեղեցին դիտարկել որպես ցանցային համակարգ: Սույն ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, սակայն, որ Հայ առաքելական եկեղեցին համապատասխանում է «ցանց» հասկացության ոչ բոլոր սահմանումներին: «Ցանց» հասկացության ամենապարզ իմաստից ելնելով (ցանց կարող է համարվել կազմակերպությունների, խանութների կամ որևէ այլ հաստատության շղթան)[22]՝ ընդունելի է Հայ առաքելական եկեղեցին դիտարկել որպես ցանց: Ասելով «Հայ առաքելական եկեղեցի»՝ հասկանում ենք հայոց բոլոր եկեղեցիները Հայաստանում և նրա տարածքից դուրս, այլ կերպ ասած՝ պատկերացնում ենք հայոց եկեղեցիների ցանց, որն ունի

[19] Knox A., Definition: Church (or Ekklesia), www.alanknox.net/2011/04/definition-church-or-ekklesia/ (մուտք՝ 15.04.2013)

[20] Cover J. G., Bible Basics, http://misslink.org/cover/basics56.html (մուտք՝15.04.2013)

[21] Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին պաշտոնական կայք http://www.armenianchurch.org/

[22] Ցանցում «տարածություն» հասկացությունը, սակայն, պահպանելով իր ավանդական նշանակությունը, ձեռք է բերում նաև նոր բովանդակություն՝ «վիրտուալ» իմաստով [Դավիթ Հովհաննիսյան]: Օրինակ՝ եթե որպես հիմնական արժեք ընտրվում է «փայտ»-ը, ապա դրա մշակութային դրսևորումն է «փայտի կիրառման կարևորությունն ու նշանակությունը», իսկ քաղաքակրթական կառույցները, որոնք ապահովում են դրանք՝ փայտ աճեցնող անտառները, փայտամշակման արհեստանոցները, փայտի համար նախատեսված ներկեր և լաքեր արտադրող գործարանները, կահույքի խանութները և այլն: Քարտեզի վրա նշելով այս բոլորի տարածման գոտիները՝ ստանում ենք «փայտի տարածաշրջան»:

կենտրոն՝ Էջմիածնի Մայր Աթոռը, և բազմաթիվ հանգույցներ՝ եկեղեցիներ Հայաստանում և Հայաստանից դուրս, որոնք ղեկավարվում են կենտրոնի՝ Մայր Աթոռի կողմից: Ցանցում «կենտրոն» հասկացությունը երեք գործառույթ ունի. ա) ինֆորմացիոն կենտրոն, որտեղից դուրս է գալիս և տարածվում է ինֆորմացիան, բ) ղեկավար կենտրոն, որը հսկում է այդ ինֆորմացիայի ճիշտ ուղղվածությունը (թե որ ոլորտին կամ դաշտին է անհրաժեշտ դրա առկայությունը) ու օգտագործումը, գ) ցանցի նպատակ: Ցանցային համակարգի այս բնորոշման տեսանկյունից Հայ առաքելական եկեղեցին լիովին կարելի է «ցանց» համարել:

Հայ առաքելական եկեղեցին կարող է ցանց համարվել նաև Ա. Նոկսի «եկեղեցու» սահմանման համաձայն. Նա, «եկեղեցի» ասելով, հասկանում է կապը այդ եկեղեցու հավատացյալների միջև: Կարելի է պնդել, որ հայկական եկեղեցում նման կապ ևս գոյություն ունի հավատացյալների միջև: Այստեղ այդ կապը հանդես է գալիս մի քանի համակարգերի տեսքով՝ արժեհամակարգի, որը կապող օղակ է ողջ քրիստոնյա-առաքելական հայության համար և ղեկավար կենտրոնի՝ Մայր Տաճարի տեսքով, որը կապում է թե՛ ողջ, և թե՛ կոնկրետ տարածքի Հայ առաքելական եկեղեցու հետևորդներին: Լավ օրինակ կարող է ծառայել այն փաստը, որ «2013 թ. ապրիլի 16-ին Թուրքիայի հարավ-արևելյան Մարդին նահանգի հայ համայնքի ներկայացուցիչները հավաքած գումարով վերանորոգել և կրկին որպես եկեղեցի օծել են Դերիքի շրջանում գտնվող Սուրբ Գևորգ եկեղեցին»:[23]

Փորձենք Հայ առաքելական եկեղեցին դիտարկել նաև «ցանցային համակարգ»-ի այն սահմանման տեսանկյունից, որ «ցանցային համակարգ»-ն ինֆորմացիոն դաշտ է, որտեղ դրսից ներթափանցող ինֆորմացիոն ալիքներն ուղղված են այդ դաշտում գործող տարբեր ոլորտներին: Մայր եկեղեցին ունի իր ինֆորմացիոն դաշտը՝ Աստվածաշունչը, հեթանոսական

[23] Մարդինի վերջին հայերը մտահոգ են Սուրբ Գեւորգ եկեղեցու ճակատագրով http://m.news.am/arm/news/149090.html (մուտք՝ 5.03.2013)

դիցաբանության քրիստոնեականացված տարբերակները, հայ եկեղեցու պատմությունը, որի միջոցով կարողանում է գաղափարապես պաշտպանվել դրսից ներթափանցող ինֆորմացիոն ալիքներից՝ օրինակ, օտար տոներից:

Որպես օրինակ քննարկենք Սուրբ Վալենտինի տոնակատարությունը, որը տարիների ընթացքում մեծ տարածում է գտել նաև Հայաստանում, սակայն Հայ առաքելական եկեղեցին պայքարում է դրա դեմ՝ փորձելով լրատվական և այլ միջոցներով տեղեկատվություն տարածել նմանատիպ բովանդակությամբ, սակայն հայկական ծագում ունեցող Սուրբ Սարգիս տոնի խորհրդի ու ծիսակատարությունների վերաբերյալ՝ ջանալով սեր ու հետաքրքրություն առաջացնել հասարակության մեջ հայկական տոների հանդեպ:

Օրինակ՝ «Առաջին լրատվական»-ի հետ զրույցում Մուղնու Սուրբ Գևորգ եկեղեցու վանահայր Տեր Շնորհքը նշել է. «Հայաստանում որպես սիրո մեկ այլ տոն նշում են նաև Սուրբ Վալենտինը, բայց նա հայ եկեղեցու տոնացույցում իբրև սուրբ չկա և որևէ կերպ մեր իրականությանը չի առնչվում: Կարծում եմ՝ ճիշտ չէ տոնելը: Եվրոպական երկրներում շատ ուրիշ տոներ էլ կան, որոնք մեր կենցաղում չեն եղել, հիմա մենք արհեստական կերպով բերում ենք ու փորձում մեր իրականության մեջ մտցնել: Գուցե, այո՛, մտածենք, որ դրա մեջ որևէ վատ բան չկա և թող երկուսն էլ տոնվի, բայց ինձ թվում է, որ տարիների ընթացքում այս օտարամոլությունը մեր ազգային դիմագիծն է փոխում: Եվ ի վերջո, եթե այդ տոնը մեր եկեղեցու տոնացույցում չկա, մենք ու՞մ բարեխոսությունն ենք խնդրում: Նման է նրան, որ դու ունենաս ընտանիքի հայր, որ քո պաշտպանն է, քո ապավենն է, բարեխոսն է Աստծո առաջ և հարևանի հայր, դու քո հորը թողած՝ դիմում ես նրան, որ քեզ համար ինչ-որ բարի գործ անի՝սա անտրամաբանական է: Իրականում սխալ է Վալենտին տոնելը, մեր ազգի համար նա սուրբ չէ»:[24]

[24] Սուրբ Սարգիս տոնի խորհուրդը
http://www.1in.am/arm/armenia_society_153618.html

Մեկ փաստ ևս կարող է ապացուցել այն պնդումը, որ Հայ առաքելական եկեղեցին ցանց է: Այն է՝ Հայաստանում և նրա սահմաններից դուրս հայերի կողմից անընդհատ կառուցվում են նոր հայկական եկեղեցիներ, որոնք ընդունվում են մայր եկեղեցու կողմից: Օրինակ, Լաս Վեգասում վերջերս կառուցվեց հայկական Սուրբ Կարապետ եկեղեցին:[25] Այս իրողությունն արդեն խոսում է այն մասին, որ հայ առաքելական եկեղեցին «ցանց» է, քանի որ ըստ սահմանումներից մեկի՝ ցանցերը բաց կառույցներ են և ունակ են ընդլայնվելու՝ իրենց մեջ ներգրավելով նոր հանգույցներ[26]: Տվյալ դեպքում հայ առաքելական եկեղեցին ընդունում է հայկական նորակառույց եկեղեցիներին և ընդգրկելով ցանցի մեջ՝ նոր շփման եզրեր գտնում նրանց հետ:

Հայ առաքելական եկեղեցին կրում է «ցանց»-ի մեկ այլ հատկանիշ նույնպես. ցանցերի պես դժվար խոցելի է[27]: Բոլոր ժամանակներում եղել են հակաքրիստոնեական և հակահայկական ինֆորմացիոն հոսքեր ուղղված հայոց եկեղեցուն՝ այն կործանելու և ոչնչացնելու ու այլ կրոն տարածելու նպատակով, սակայն Հայ առաքելական եկեղեցին կարողացել է դիմակայել բոլոր հարվածներին:

Ինչպես վերևում նշվեց, հեղինակներից Դ. Հովհաննիսյանը ցանցերը բաժանում է երեք խմբի՝ 1. տեքստ և կենտրոն ունեցող ցանցեր, 2. կենտրոն ունեցող ցանցեր և 3. տեքստ ունեցող ցանցեր:

Հայ առաքելական եկեղեցին պատկանում է առաջին խմբին. այն ունի գաղափարական տեքստ՝ քրիստոնեությունը, Աստվածաշունչը, Հայ եկեղեցու պատմությունը, Հայ առաքելական եկեղեցու սկզբունքները և կենտրոն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը: Հայ առաքելական եկեղեցին հիերարխիկ ցանց է, քանի որ ինչպես հեղինակն է մեկնաբանում, տեքստ ու կենտրոն ունեցող ցանցերում կենտրոնը գոյություն ունի 1. գաղափարական, այսինքն՝ արժեքային համակարգի վրա ձևավորված համակարգի

[25] Ամերիկացի սենատորն այցելել է Լաս Վեգասում վերջերս կառուցված հայկական եկեղեցի http://www.resource.am/index.php?ln=1&pid=7047

[26] Հեղինակի հարցազրույցը Դավիթ Հովհաննիսյանի հետ մարտի 12, 2013թ:

[27] Նույն տեղում:

ձևով, 2. որպես ֆիզիկական կենտրոն՝ կառավարման ու ղեկավարման գործառույթով:

Կենտրոնի ֆիզիկական բացակայությունն անխուսափելիորեն վերացնում է ցանկացած տիպի հիերարխիա, բացի արժեքայինից: Հենց հիերարխիկ ցանց լինելով է հայ առաքելական եկեղեցին տարբերվում մնացած բոլոր ցանցերից, որովհետև այստեղ չկա այն անսահմանափակ ազատությունը, որ նկատվում է սովորական ցանցերում, այստեղ կա խիստ վերահսկող մարմին՝ Մայր Տաճարը, որը գործ ունի բավականին նուրբ խնդրի՝ ազգային «ինքնության» ընդլայնման և պահպանման հետ:

Ըստ Զ. Կարվալիկսի և Մ. Կաստելսի՝ «ցանցային համակարգ»-ը ժամանակակից տեխնոլոգիաներն են ու դրանց արդյունքում ի հայտ եկած փոփոխությունները: Համաձայն այս տեսակետի նույնպես՝ Հայ առաքելական եկեղեցին կարող է «ցանց» համարվել, քանի որ ժամանակակից տեխնոլոգիաները որոշ չափով մուտք են գործել նաև հայ եկեղեցու դաշտ և մեր օրերում հայոց եկեղեցու համար այն ևս անհրաժեշտություն է: Այժմ ժամանակակից տեխնոլոգիաները վայրկենական արագությամբ տարածում են ցանկացած տեսակի ինֆորմացիա աշխարհի մի ծայրից մյուսը:

Այստեղ լավ օրինակ կարող է ծառայել մարտի 31–ին Հռոմի Պապի շնորհավորական ուղերձը՝ուղղված հայերին Զատկի տոնի կապակցությամբ[28]. սա ևս խոսում է այն մասին, որ Հայ առաքելական եկեղեցին վիրտուալ դաշտում է և իր գործընթացներին հետևում է և տեղյակ է ողջ աշխարհը:

Այժմ կան ինտերնետային հատուկ կայքեր քահանայի հետ անմիջական զրույց ունենալու, խորհրդակցելու համար, հայոց եկեղեցու անցյալի և ներկայի պատմությունը զետեղված է համացանցում (ճշգրիտ տվյալ այն մասին, թե համացանցում որքան էլեկտրոնային կայքեր ունի Հայ առաքելական եկեղեցին, որևէ մեկն ասել չի կարող, քանի որ գրեթե ամեն օր հոգևորականները նոր կայքեր, կամ սոցիալական ցանցերում նոր

[28] Հռոմի Պապը հայերին շնորհավորել է Զատիկի տոնի կապակցությամբ http://news.am/arm/news/146846.html

էջեր են բացում և քարոզչություն ծավալում: Սոցիալական www.do.am, www.blogspot.am և նմանատիպ այլ տիրույթներում տարբեր հոգևորականներ էջեր ունեն: Արարատյան Հայրապետական թեմն ունի երկու կայք, որոնք եռալեզու են, դրանք են՝ www.araratian-tem.am և www.qahana.am: Հոգևոր բովանդակությամբ եռալեզու կայք հազվադեպ է պատահում: Որոշակի այլ կայքերի հասցեներ կան այստեղ. http://www.qahana.am/?page=spiritual_sites&ln=am) և այլն:

Բ. Ուելմանը, «ցանցային համակարգ» ասելով, հասկանում է կապը համակարգում գործող անդամների միջև: Եթե չլիներ կապ հայ եկեղեցիների միջև, նախ չէր լինի հայոց եկեղեցիների այն ամբողջությունը, որը այսօր կա, քանի որ նրանցից յուրաքանչյուրը մյուսի գաղափարը շարունակողն է և հետո չէր լինի նրանց կապող կենտրոնը՝ քրիստոնեության գաղափարը: Այս դեպքում Հայ առաքելական եկեղեցին իրապես ցանց է. երբ ցանկանում են հայկական ինչ-որ եկեղեցի կառուցել կամ վերանորոգել, այդ հարցը անհանգստացնում է ողջ հայ եկեղեցական ցանցին: Վառ օրինակ կարող է ծառայել այն փաստը, որ «2010 թ. դեկտեմբերի 6-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, մտահոգված լինելով, որ Ախալցխայի Երևման Ս. Խաչ եկեղեցու վերանորոգման ընթացքում եկեղեցու դրսի պատերին և ներսի խորանում գտնվող խաչքարերը հանվել են և փոխադրվել գավառագիտական թանգարան, Վիրահայոց թեմի միջոցով դիմել է Վրաստանում Հռոմեա-կաթոլիկ եկեղեցու առաջնորդությանը՝ եկեղեցու նախնական վիճակն անխաթար պահպանելու խնդրանքով»:[29]

Ցանցային համակարգը սահմանող տեսություններից մեկը, սակայն, հակասում է Հայ առաքելական եկեղեցու բովանդակությանը: Ինչպես արդեն նշել ենք, Մ. Կաստելսի տեսության համաձայն՝ ցանցում հիերարխիա գոյություն չունի[30]. ցանցում նա կարևորում է ցանցի տրամաբանությունը և ոչ թե

[29] Ախալցխայի Երեւման Ս. խաչ եկեղեցու խաչքարերը հանվել են եւ փոխադրվել գավառագիտական թանգարան http://news.am/arm/news/40613.html

[30] Castells M., The Information Age: Economy, Society and Culture, Oxford UK: Blackwell Publishers, 1996, p. 1-2

ցանցի ֆիզիկական ղեկավար կենտրոնի գոյությունը: Կաստելսի այս տեսությունը չի համընկնում կոնկրետ մեր ուսումնասիրության առարկայի հետ, քանի որ Հայ առաքելական եկեղեցին իր բովանդակությամբ հիերարխիկ ցանց է:

Հոդվածում փորձ կատարվեց ցույց տալ, որ ըստ վերոհիշյալ հեղինակների (բացառությամբ Մ. Կաստելսի)՝ ցանցի վերաբերյալ տեսակետների Հայ առաքելական եկեղեցին կարելի է ցանց համարել:

Դ. Հովհաննիսյանի տեսության վրա հիմնվելով՝ Հայ առաքելական եկեղեցին պետք է հատկապես հիերարխիկ ցանց համարել, քանի որ գտնվում է թե՛ արժեքային՝ գաղափարական, և թե՛ ֆիզիկական կենտրոնի կառավարման ներքո: Հայ առաքելական եկեղեցին հիերարխիկ ցանց է, քանի որ այստեղ չի գործում այն անսահմանափակ ազատությունը, որ կա միայն տեքստ ունեցող ցանցերում: Այստեղ կա կենտրոնացված վերահսկողություն, քանի որ այս ցանցն իր բովանդակությամբ տարբերվում է մնացած ցանցերից. Հայ առաքելական եկեղեցին դասվում է այն ցանցերի շարքին, որոնք գործ ունեն շատ նուրբ ու պահպանողական արժեհամակարգի հետ, այս դեպքում հայոց եկեղեցին գործ ունի «ինքնության» պահպանման, տարածման և զարգացման հետ:

«ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

Արշակ Գևորգյան

Վերջին տասնամյակի Թուրքիայի քաղաքական թատերաբեմի գլխավոր դերակատարի և պետության 100-ամյակին ընդառաջ որդեգրված «պահպանողական ժողովրդավարության» ուղեգծի[1] հեղինակի ու իրականացնողի դերը պատկանում է իշխող «Արդարություն և զարգացում» կուսակցությանը (թուրք.՝ Adalet ve Kalkınma Partisi (AK Parti, զուգահեռաբար գործածվում է նաև ոչ պաշտոնական AKP ձևը)[2]): Ուստի հարևան երկրի քաղաքական իրադրության գնահատման տեսակետից ԱԶ կուսակցության անցյալի, ներկայի ու հնարավոր ապագայի ուսումնասիրությունը առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում: Ստորև փորձ կարվի հիմնական գծերով ներկայացնել կուսակցության 11-ամյա պատմությունը, գաղափարախոսությունն ու զարգացման հեռանկարները:

Կուսակցության պատմության համառոտ բնութագիրը

Նոր հազարամյակի սկզբին թուրքական քաղաքական դաշտը դեռ կրում էր 1997 թ.-ի փետրվարյան հեղաշրջման (թուրք.՝ Postmodern darbe) արդյունքում առաջացած փոթորկի ազդեցությունը: 2001 թ.-ի հունիսի 22-ին Թուրքիայի Սահմանադրական դատարանի որոշմամբ[3] փակվեց

[1] 2023թ.-ի թուրքական պետության տեսլականը հիմնական ուրվագծերով շարադրված է ԱԶԿ մանիֆեստում, որը հասանելի է կուսակցության պաշտոնական կայքում (անգլ.՝ http://www.akparti.org.tr/upload/documents/akparti2023siyasivizyonuingilizce.pdf):

[2] Պաշտոնական AK Parti հապավման դեպքում բառախաղ է առաջանում (թուրքերեն՝ ak – սպիտակ, մաքուր, անմեղ). H.-L. Kieser (ed.), *Turkey Beyond Nationalism: Towards Post-Nationalist Identities*, I. B. Tauris, 2006, p. 152

[3] Որոշման տեքստի բնագիրը ԹՍԴ-ի կայքում՝ http://www.anayasa.gov.tr/index.php?l=manage_karar&ref=show&action=karar&id=2167&content=

«Առաքինություն» կուսակցությունը (թուրք.՝ Fazilet Partisi)[4]: Դրա նորարարական թևը[5] ներկայացնող մի շարք գործիչներ էլ Ստամբուլի նախկին քաղաքապետ Ռեջեփ Թայյիփ Էրդողանի գլխավորությամբ կազմեցին 2001թ.-ի օգոստոսի 14-ին ստեղծված «Արդարություն և զարգացում» կուսակցության հիմքը: Նորաստեղծ ԱԶԿ-ին հենց սկզբից հարեցին նաև այլ քաղաքական ուժերի (մասնավորապես՝ «Մայր հայրենիք» (թուրք.՝ Anavatan Partisi) և «Ճշմարիտ ուղի» (թուրք.՝ Doğru Yol Partisi) կուսակցությունների ևն) մի շարք անդամներ:

Էրդողանը, խոսելով առաջին սերնդի ԱԶԿ-ականների մասին, մասնավորապես նշում է Աբդուլլահ Գյուլի, Աբդյուլլաթիֆ Շենների, Աբդյուլքադիր Աքսուի, Ջեմիլ Չիչեքի, Մելիհ Գյոկչեկի, Իսմայիլ Քահրամանի, Ալթան Քարափաշաօղլուի, Բյուլենթ Առընչի և Աբդուլլահ Չալըշքանի անունները[6]: Ընդհանուր առմամբ, օգոստոսի 14-ին «Bilkent» հյուրանոցի դահլիճում հավաքված կուսակցության «Հիմնադիրների խորհուրդը» բաղկացած էր 74 անդամներից, որոնցից 13-ը կանայք էին[7]: ԱԶԿ-ի ստեղծումից անմիջապես հետո մի քանի տասնյակ «առաքինական» պատգամավորներ համալրեցին նրա շարքերը (Մեջլիսում ԱԶԿ-ն ունեցավ 59 ներկայացուցիչ կամ ընդհանուր տեղերի 10,7%-ը):

Հիմնադրման պահին Թուրքիայի 39-րդ և XXI գումարման ԹԱՄԺ-ի 6-րդ կուսակցությունը դարձած Արդարություն և զարգացումը հենց սկզբից հանդես եկավ իբրև փոփոխությունների ջատագով: Կուսակցապետ Էրդողանի վաղ շրջանի

---

[4] Հատկանշական է, որ ԱԿ-ի անմիջական գաղափարական նախնին՝ «Բարօրություն» կուսակցությունը (թուրք.՝ Refah Partisi), նույնպես փակվել էր Սահմանադրական դատարանի որոշմամբ (16/01/1998թ.):

[5] Դեռ մինչև «Առաքինության» փակվելը թուրքական մամուլում ակտիվորեն շրջանառվում էին «ավան-դականների» (թուրք.՝ gelenekçiler) և «նորարարների» (թուրք.՝ yenilikçiler) միջև ներկուսակցական իշխանության համար պայքարի շուրջ լուրերը՝
(օր.՝ http://yenisafak.com.tr/arsiv/2000/subat/15/ddursun.html):

[6] Ü. Tekin, *AK Parti'nin Muhafazakar Demokrat Kimliği*, Orient Yayınları, 2004, s.73

[7] Անդամների անունները տե՛ս՝
http://hurarsiv.hurriyet.com.tr/goster/printnews.aspx?DocID=10009

հայտարարությունները դրա վառ վկայությունն են. *«Աթաթյուրքից սկսած՝ Ինյոնյուի, Մենդերեսի, Էջևիթի, Դեմիրելի, Չիլերի, Յըլմազի, Էրբաքանի կառավարությունների դրական կողմերը միավորելով՝ մի նոր քաղաքականություն եմ ցանկանում կառուցել...»*[8]: 2002 թ. ընտրություններին ընդառաջ Էրդողանի ու ընկերների առջև ծառացած հիմնական գաղափարական խնդիրը քեմալիզմի 6 սյուներից աշխարհիկությանը (թուրք.՝ laiklik) պահպանողական իսլամին չհամապատասխանելու քաղաքական հակառակորդների մեղադրանքներին[9] հակադարձելն էր: Այս առիթով նույն Էրդողանն, ով տարիներ առաջ պնդում էր, թե միաժամանակ «և՛ աշխարհիկ և՛ մուսուլման չեն լինում»[10] արդեն ինքը հայտարարեց, թե տեսնում է աշխարհիկությունը, իբրև իրենց «ժողովրդավարության երաշխիք» (թուրք. demokrasimizin teminatı)[11]: Ինչևէ, ԱԶԿ ղեկավար անդամների գաղափարախոսական մետամորֆոզին կանդրադառնանք ստորև:

Կուսակցության ու երկրի կյանքում հանգուցային նշանակություն ունեցան 2002թ.-ի նոյեմբերի 3-ի համապետական ընտրությունները: Դրանց արդյունքում ԱԶԿ-ն ստացավ ընտրությանը մասնակցածների ձայների 34.3%-ը (10.808.229 քվե) ու համապատասխանաբար նաև 550 հոգանոց ԹԱՄԺ-ի մանդատների 66%-ը (363 տեղ)[12]: ԱԶԿ-ից բացի Մեջլիս անցավ (ձայների 19.4%-ով՝ 178 մանդատ) նաև Դենիզ Բայքալի գլխավորած Հանրապետական ժողովրդական կուսակցությունը (թուրք.՝ Cumhuriyet Halk Partisi): Ընտրություններին մասնակցած մնացած 16 կուսակցությունները չհաղթահարեցին ձայների 10%-անոց շեմը, ուստի՝ քվեարկողների շուրջ 45%-ի ձայները իրենց արտացոլումը չգտան ԹԱՄԺ դահլիճում: Պարզ դարձավ, որ

[8] R. Çakır, F. Çalmuk, *Recep Tayyip Erdoğan: Bir Dönüşüm Öyküsü*, Metis Yayınları, 2001, s. 178-179

[9] T. Tosun, *Siyasette Yeniden Mevzilenmeler*, Büke Kitapları, 2003, s. 166

[10] Թուրք.՝ 'Hem laik hem Müslüman olunmaz': http://webarsiv.hurriyet.com.tr/2001/08/21/18523.asp

[11] R. Çakır, F. Çalmuk, *Recep Tayyip Erdoğan: Bir Dönüşüm Öyküsü*, Metis Yayınları, 2001, s. 221

[12] Տվյալներն ըստ՝ http://www.tesav.org.tr/2002.htm

1987թ.-ից հետո առաջին անգամ ձևավորվելու էր միակուսակցական կառավարություն:

Ընտրություններում ԱԶԿ-ի տպավորիչ հաղթանակը բացատրվում է, թերևս, հետևյալ գործոններով:

Առաջին՝ թեև ԱԶԿ-ն իրականում նախկին «բարօրականների» կուսակցություն էր, այն հասարակ մարդկանց կողմից ընդունվեց իբրև նոր ուժ (հաճախ առանց կենտրոնանալու իսլամական ուղղվածության վրա):

Երկրորդ՝ շատերը 2001թ.-ի փետրվարյան տնտեսական փոթորկից հետո հենց նոր ուժի հետ էին կապում հնարավոր առաջընթացը:

Եվ վերջապես ոչ պակաս կարևոր դեր էր խաղում կուսակցության առաջնորդի խարիզմատիկ կերպարը: Շատերն անուղղակիորեն քվեարկեցին Էրդողանի օգտին, թեև վերջինս, ինչպես ստորև կնշվի, չէր կարող մասնակցել ընտրություններին:

Քանի որ Էրդողանը նախկինում կրոնական անհնազանդություններ հրահրմանն ուղղված գործողություններ կատարելու պատճառով զրկված էր ընտրվելու կամ պետական պաշտոն զբաղեցնելու հնարավորությունից[13], նոյեմբերի 19-ին ձևավորված կառավարությունը գլխավորվեց Աբդուլլահ Գյուլը[14]: Սկզբից ևեթ էլ պարզ էր, որ ընդհանուր առմամբ կես տարի էլ չաշխատած Գյուլի կառավարությունը կոչված էր վերացնելու Էրդողանի իշխանության գալու ճանապարհին առկա իրավական և քաղաքական խոչընդոտները: Եվ արդեն դեկտեմբերի 13-ին XXII գումարման ԹԱՄԺ-ը 440 կողմ, 18 դեմ և 4 ձեռնապահ ձայներով

[13] 1997թ. դեկտեմբերին Սիիրթում նա հրապարակայնորեն ընթերցել էր Զիա Գյոքալփի «Զինվորի աղոթքը» (թուրք.՝ Asker Duası) բանաստեղծության սեփական տարբերակը, որն ընդգծված իսլամական տարրեր էր պարունակում: Իսկ 1998թ.-ի ապրիլի 21-ին Դիարբեքիրի պետանվտանգության դատարանը Էրդողանին մեղավոր էր ճանաչել ԹՔՕ-ի 312-րդ հոդվածի 2-րդ կետի հատկանիշներով՝ (http://www.radikal.com.tr/haber.php?haberno=45347): 2002թ.-ի սեպտեմբերի 20-ին Թուրքիայի Բարձրագույն ընտրական խորհուրդը մերժել էր Էրդողանի հնարավոր թեկնածությունը:

[14] Գյուլի գլխավորած Թուրքիայի 58-րդ կառավարության կազմը՝ http://www.akparti.org.tr/site/yonetim/hukumetler/58

ընդունեց և նախագահի հաստատման ուղարկեց Սահմանադրության տեքստում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծը[15]: Դրանում մասնավորապես նախատեսվում էր 76-րդ հոդվածի տեքստում «գաղափարական կամ անարխիկ բնույթի գործողություններ» (թուրք.՝ ‘ideoloji veya anarşik eylemler’) արտահայտությունը փոխարինել «ահաբեկչական գործողություններ» (թուրք. ‘terör eylemler’) ձևակերպմամբ: Սակայն դեկտեմբերի 19-ին երկրի նախագահ Ահմեդ Նեջդեթ Սեզերը, «սուբյեկտիվ, կոնկրետացված ու անձնավորված» բնորոշելով, արգելափակեց օրինագիծը[16]: Վերանայման ուղարկված նախագծի տեքստը կրկին քննարկելով՝ Մեջլիսը դեկտեմբերի 27-ին 437 կողմ, 44 դեմ, 1 ձեռնապահ ձայներով առանց փոփոխության կրկին հաստատեց այն: Այս անգամ արդեն փոփոխությունները նախագահի կողմից հաստատվեցին և օրենքի ուժ ստացան (31/12/2002թ.): Այսպիսով, ԱԶԿ առաջնորդը հնարավորություն ստացավ մուտք գործել խորհրդարան ու, օգտագործելով առաջին իսկ հնարավորությունը, 2003թ.-ի մարտի 9-ին մասնակցեց Սիիրթի կրկնակի ընտրություններին:[17] Ժողովրդական լայն զանգվածների մոտ ճանաչում վայելող Էրդողանը հեշտությամբ (ձայների 84.8%-ով) հաղթեց և հաղթականորեն մուտք գործեց ԹԱՄԺ: Սրան հաջորդեց քաղաքական գործողության վերջին արարը՝ մարտի 11-ին հրաժարական տվեց Գյուլի կառավարությունը և արդեն 3 օր անց ձևավորվեց Թուրքիայի պատմության 59-րդ կառավարությունը: Էրդողանի նորաստեղծ կաբինետում նախկին վարչապետ Գյուլին հատկացվեց փոխվարչապետի ու արտգործնախարարի պաշտոնը[18]:

---

[15] Օրենքի նախագծի տեքստը՝ http://www.tbmm.gov.tr/kanunlar/k4774.html

[16] Նախագահի պատասխանի տեքստը՝ http://www.tbmm.gov.tr/sirasayi/donem22/yil01/ss5m.htm

[17] Այս ընտրական շրջանի արդյունքներն Թուրքիայի Բարձրագույն ընտրական խորհրդի կողմից անվավեր էին ճանաչվել դեռ դեկտեմբերի 2-ին:

[18] Էրդողանի կառավարության կազմը՝ http://www.akparti.org.tr/site/yonetim/hukumetler/59

ԱԶԿ-ական կառավարության աշխատանքը, ընդհանուր գծերով, կարելի է հաջողված անվանել: Այս առումով կարելի է նշել, որ Էրդողանի կառավարությունը կարողացավ հաղթահարել իրաքյան պատերազմի շուրջ ստեղծված ճգնաժամը: Դեռ 2003թ.-ի մարտի 1-ին ԹԱՄԺ-ը ձայների 264 կողմ, 250 դեմ, 19 ձեռնապահ ձայների հարաբերակցությամբ դեմ էր արտահայտվել Կոալիցիոն ուժերի կազմում թուրքական բանակի անմիջական մասնակցությանը (նախագիծը չէր հավաքել Սահմանադրության 96-րդ հոդվածով նախատեսված անհրաժեշտ քվեարկությանը մասնակցածների ձայների բացարձակ մեծամասնությունը) [19]: Չնայած դրան հաջորդած ԱՄՆ-ի հետ հարաբերությունների որոշակի սրմանը, որոշ փորձագետներ «post factum» կարծիք են հայտնում անգամ, թե Թուրքիայի տարածաշրջանային դիրքերը միայն ամրացել են դաշնակիցների Իրաք ներխուժելուց հետո[20]:

Պիտի փաստել նաև 2000-2001 թթ. տնտեսական ցավագին անկումից հետո նոր կառավարության օրոք երկիրը սկսեց բարելավել տնտեսական արդյունքները (մասնավորապես ՀՆԱ-ի ու ինֆլյացիայի ցուցանիշների մասով) և արդեն 2004թ.-ի վերջին դարձավ Տնտեսական համագործակցության ու զարգացման կազմակերպության (անգլ.՝ OECD) առավել արագ զարգացող տնտեսություն ունեցող երկրներից մեկը[21]:

Թերևս նաև այլ գործոններով պիտի բացատրել 2004թ.-ի մարտի 28-ին կայացած տեղական ընտրություններում ԱԶԿ վստահ հաղթանակը (13.447.287 ձայն (ընդհանուր ձայների 41.67%-ը) և նահանգային խորհրդարանի (թուրք.՝ İl Genel Meclisi) 3208 տեղերից 2276-ը)[22] Կուսակցությունը մեծամասնություն կազմեց նաև տեղական ինքնակառավարման մարմինների

[19] Փաստաթղթի տեքստը՝ http://www.gazetem.net/bellekyazi.asp?yaziid=61

[20] *"Newsweek: Irak Savaşı'nın gerçek galibi Türkiye"*, Hürriyet, 29.11.2009՝ http://hurarsiv.hurriyet.com.tr/goster/ShowNew.aspx?id=13070619

[21] ՏՀԶԿ 2004թ.-ի հոկտեմբերյան Թուրքիայի մասին՝ http://www.oecd.org/eco/surveys/33821199.pdf

[22] Տվյալներն ըստ՝ http://www.ysk.gov.tr/ysk/docs/2004MahalliIdareler/ilgenel/ilGenel.pdf

ղեկավարների (1.750/3.193) և մետրոպոլիաների ղեկավարների (12/16) շրջանում:

Հիմնադրումից շուրջ 3,5 տարի անց, Եվրոպական ժողովրդական կուսակցության քաղաքական բյուրոյի 2005թ.-ի հունվարի 28-ի որոշմամբ Թուրքիայի իշխող քաղաքական ուժը դարձավ Եվրոպայի ամենաազդեցիկ քաղաքական կուսակցություններից մեկի դիտորդ անդամ[23]:

Թուրքիայի քաղաքական կյանքի համար ցնցումային իրադարձություն դարձան 2007թ.-ի նախագահական ընտրությունները: Գործող նախագահ Ահմեդ Նեջդեթ Սեզերի լիազորությունների ժամկետի սպառվելուն (2007թ.-ի մայիսի 16) ընդառաջ սկսեցին հայտարարվել թեկնածուների անունները: Արդեն Ապրիլի 24-ին վարչապետ Էրդողանն իբրև ԱԶԿ պաշտոնական թեկնածու ներկայացրեց Աբդուլլահ Գյուլին: Դեռ մինչև հայտարարումն ու դրանից հետո էլ թուրքական քաղաքների փողոցներ էին դուրս եկել քեմալական աշխարհիկության հարյուր հազարավոր կողմակիցներ:

Չուշացավ նաև թուրքական բանակի արձագանքը: Ապրիլի 27-ին ԹԶՈՒ պաշտոնական կայքում հայտնվեց մի հռչակագիր (այն Ուրալ Աքբուլութի թեթև ձեռքով աշխարհին հայտնի դարձավ իբրև ‘e-muhtıra’[24]), որում շեշտվում էր բանակի՝ իբրև աշխարհիկության երաշխավորի դերը: Հենց նույն օրը Մեջլիսում սկսվեցին Թուրքիայի Հանրապետության նախագահի ընտրությունները: Համաձայն ընթացակարգի առաջին երկու փուլերում հաղթանակի հասնելու համար անհրաժեշտ էր ստանալ ԹԱՄԺ ձայների 2/3-ը (550 տեղանոց Մեջլիսում՝ 367 քվե): Հաղթող չլինելու դեպքում երրորդ փուլում նոր նախագահին որոշելու էին պարզ մեծամասնությամբ (անհրաժեշտ էր 276 քվե): Ապրիլի 27-ին առաջին փուլի քվեարկությանը ընդդիմադիրների բոյկոտի պատճառով մասնակցեց միայն 357 պատգամավոր: Ուստի և

[23] Այդ մասին հայտնող տեղեկությունը ԵԺԿ պաշտոնական կայքում՝ http://www.epp.eu/pressnew.asp?artid=2

[24] M. Yetkin, *“e-muhtıra erken seçimi gündeme taşıdı”*, Radical, 29/04/2007՝ http://www.radikal.com.tr/haber.php?haberno=219781

մայիսի 1-ին Սահմանադրական դատարանը Հանրապետական ժողովրդական կուսակցության հայցով չեղյալ հայտարարեց առաջին քվեարկությունը (նշելով, որ ձայների 2/3-ը պահանջող քվեարկության համար քվորում ապահովվում է մեջլիսի պատգամավորների 2/3-ի ներկայության դեպքում միայն)[25]: Իսկ երբ մայիսի 6-ին կրկնակի քվեարկության ժամանակ կրկին քվորում ապահովել չհաջողվեց, նախագահի թեկնածու Գյուլը հայտարարեց ինքնաբացարկի մասին[26]:

Քանի որ թեկնածուների բացակայության պատճառով նոր նախագահի ընտրություն չէր կայացել, գործող նախագահ Սեզերը շարունակեց պաշտոնավարել նաև լիազորությունների ժամկետի սպառվելուց հետո:

Նույն ընթացքում ԱԶԿ-ականները Մեջլիսում նախաձեռնեցին (մայիսի 10) սահմանադրական փոփոխությունների հանրաքվե՝ նպատակ ունենալով ի թիվս այլ փոփոխությունների[27] քվորում ապահովելու շեմն իջեցնել 1/3-ի ու այսուհետ երկրի նախագահին ընտրել ուղղակի քվեարկությամբ: Թեև նախագահը վետո կիրառեց (մայիսի 25) օրինագծի նկատմամբ, ԱԶԿ-ին հաջողվեց խորհրդարանում երկրորդ քվեարկությամբ հաղթահարել այն (մայիսի 31):

Այլևս վետո կիրառելու հնարավորություն չունեցող Սեզերը, հունիսի 15-ին հարկադրված հաստատելով փոփոխությունների փաթեթը, դիմեց Սահմանադրական դատարան՝ դրա օրինականությունը վիճարկելու հայցով: ԹՍԴ-ը, սակայն, հուլիսի 5-ին սահմանադրական ճանաչեց նախագիծը: Այնուամենայնիվ լիազորությունները վայր դնող նախագահը հասավ նրան, որ հանրաքվեն տեղի ունեցավ (և փոփոխությունները 68.95% «այո»-

[25] Որոշման տեքստը ԹՍԴ-ի պաշտոնական կայքում՝
http://www.anayasa.gov.tr/index.php?l=manage_karar&ref=show&action=karar&id=2435&content=

[26] *"Gül, adaylıktan çekiliyor..."*, Milliyet, 06/05/2007՝
http://www.milliyet.com.tr/2007/05/06/son/sonsiy06.asp

[27] Փոփոխությունների նախագծի ողջ տեքստը՝
http://www.tbmm.gov.tr/kanunlar/k5660.html

ով ընդունվեցին[28]) 2007թ.-ի համապետական ընտրություններից հետո՝ հոկտեմբերի 21-ին:

Իսկ նման թոհուբոհի պայմաններում հուլիսի 22-ին կայացած խորհրդարանական ընտրություններում ԱԶԿ-ն ստացավ 16.327.291 քվե կամ ընտրության մասնակցածների ձայների 46,58%-ը: Արդյունքում Էրդողանի կուսակցակիցները Մեջլիսում զբաղեցրեցին բոլոր տեղերի 62%-ը (341 մանդատ):

Բացի ԱԶԿ-ից XXIII գումարման ԹԱՄԺ-ում տեղ գտան նաև Հանրապետական ժողովրդական (թուրք.՝ Cumhuriyet Halk Partisi, 112 տեղ) և Ազգայնական շարժում (թուրք.՝ Milliyetçi Hareket Partisi, 71 տեղ) կուսակցությունները[29]:

Օգոստոսի 13-ին, այն բանից հետո երբ Հանրապետական ժողովրդական կուսակցությունը արդեն հայտարարել էր նորընտիր խորհրդարանում նախագահի ընտրությունները չբոյկոտելու մասին, ԱԶԿ-ն կրկին իբրև նախագահի պաշտոնական թեկնածու ներկայացրեց Աբդուլլահ Գյուլին[30]: Այս երկրորդ քվեարկությունը ընթացավ 3 փուլով (օգոստոսի 20-ին, 24-ին և 28-ին) ու հիմնական հավակնորդ Գյուլը, ստանալով քվեարկությանը մասնակցած 448 պատգամավորներից 339-ի ձայները, ընտրվեց Թուրքիայի Հանրապետության 11-րդ նախագահ: Արդեն հաջորդ օրը ձևավորվեցնաև ԱԶԿ նոր կառավարությունը՝ բնականաբար, կրկին Էրդողանի գլխավորությամբ[31]:

2007թ.-ից հետո ընդգծված բնույթ ստացան երկրի քաղաքական կյանքին Թուրքիայի ռազմական տարրերի միջամտության նվազեցմանն ուղղված գործողությունները: Հավանաբար նաև նույն ենթատեքստում պիտի դիտարկել նաև,

[28] Հանրաքվեի արդյունքների մասին՝ http://www.ysk.gov.tr/ysk/docs/2007Referandum/Sonuc/sonuc.pdf

[29] Արդյունքներն ըստ՝ http://www.tesav.org.tr/2007.htm

[30] *"Erdoğan: Adayımız Gül, hayırlı olsun"*, NTV-MSNBC, 15/08/2007՝ http://arsiv.ntvmsnbc.com/news/417188.asp

[31] Թուրքիայի 60-րդ կառավարության կազմը՝ http://www.akparti.org.tr/site/yonetim/hukumetler/60

այսպես կոչված, «Էրգենեքոնի»[32] գործով մի շարք բարձրաստիճան զինվորականների (Վելի Քյուչուկ, Հուրշիթ Թոլոն, Շեներ Էրույգուր և այլք) ձերբակալությունները: Թուրքական քաղաքական վերնախավի նման գործողությունները ընթացքի մեջ են նաև այսօր: Վերջին ձեռբակալվածներից է օրինակ՝ ահաբեկչության հետ կապերի կասկածանքով ձերբակալվեց ԹԶՈւ-ի Գլխավոր շտաբի նախկին պետ Իլքեր Բաշբուղը[33]:

Ծայրահեղ քեմալականների ու չափավոր իսլամիստների հակամարտության տեսակետից պետք է հիշատակել Թուրքիայի Սահմանադրական դատարան ԱԶԿ գործունեությունը կասեցնելու մասին երկու հայցերը: Առաջինը կապված էր համալսարաններում գլխաշոր կրելու արգելքը վերացնելու փորձերի հետ: Գլխավոր պետական դատախազ Աբդուրրահման Յալչընկայայի հայցը Սահմանադրական դատարանը քննեց 2008թ.-ի հուլիսի 30-ին ու ձայների միայն նվազագույն տարբերությամբ (6 կողմ, 7 դեմ) մերժեց ԱԶԿ-ն փակելու միջնորդությունը[34]: Դատարանի որոշումը հասարակության կողմից ընկալվեց իբրև ԱԶԿ-ին տրված «ուղղվելու» հնարավորություն: Անկարայում ժողովրդական զանգվածների առջև ունեցած ելույթում ինքը Էրդողանը գոհունակությամբ նշեց. *«Թուրքիայի ապագան արգելակող մի մեծ անորոշություն է վերացվել»*[35]:

---

[32] Էրգենեքոնը աշխարհիկ ծայրահեղականների գաղտնի կազմակերպություն է, որին, ըստ պաշտոնական տեղեկությունների, ի թիվս այլոց հարել են թուրքական բանակի ու անվտանգության ուժերի մի շարք բարձրաստիճան սպաներ: Անվանումը ստացել է առասպելական լեռան անունից, որն ըստ լեգենդի ապաստարան է ծառայել մոնղոլներից փախչող թյուրքերի համար՝ http://terrorism.about.com/od/groupsleader1/p/Ergekon.htm:

[33] *"İlker Başbuğ tutuklandı"*, Sabah, 06.01.2012՝ http://www.sabah.com.tr/Gundem/2012/01/06/ilker-basbug-tutuklandi

[34] ԹՍԴ-ի «արդարացնող» որոշումը՝ http://www.anayasa.gov.tr/index.php?l=manage_karar&ref=show&action=karar&id=2611&content=

[35] The New York Times-ը ԹՍԴ-ի որոշման ներթուրքական և միջազգային արձագանքների մասին՝ http://www.nytimes.com/2008/07/31/world/europe/31turkey.html

Երկրորդը, որ երկրի գլխավոր դատախազության կողմից ներկայացվել էր դեռ մինչև կուսակցության իշխանության գալը, կապված էր հիմնադիրների իսլամական գաղափարներ դավանող ու արդեն փակված կուսակցությունների հետ ունեցած անմիջական առընչությունների հետ: Հարցը քննվեց միայն 2009թ.-ի հուլիսի 9-ին ու դատարանն այս անգամ էլ մերժեց ԱԶԿ-ն փակելու հայցը[36, 37]:

Էրդողանի երկրորդ կառավարության գործունեության ընթացքում, 2009թ.-ի առաջին քառորդում, արդեն, երկրի տնտեսությունը գրանցեց քառորդային ՀՆԱ ցուցանիշի վերջին երեք տասնամյակների ամենախոշոր անկումն (-14.3%) ու ամենաբարձր գործազրկության ցուցանիշը (16%)[38]:

Երկրի տնտեսական խնդիրներն իրենց արտացոլանքն ունեցան նույն շրջանում (2009թ.-ի մարտի 29-ին) տեղի ունեցած տեղական ընտրությունների արդյունքերի վրա: ԱԶԿ-ն հավաքեց ձայների 38.39 %-ը (15.353.553 քվե, ավելի քան 3%-ով քիչ քան նախորդ տեղական ընտրություններում) ու ստացավ նահանգային խորհրդարանի 3.281 տեղերից 1.889-ը (նախկին ընտրություններից շուրջ 387-ով պակաս): Այնուամենայնիվ, կուսակցությունը պահպանեց մեծամասնությունը տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների (1442/2.903) և մետրոպոլիաների ղեկավարների (10/16) շրջանում:

Փոխարենը նահանգային խորհրդարանում իրենց դիրքերը համապատասխանաբար մոտ 5 և 6 տոկոսով բարելավեցին

---

[36] ԹՍԴ-ի 2009թ.-ի հուլիսի 9-ի №27369 որոշումը՝ http://www.anayasa.gov.tr/index.php?l=manage_karar&ref=show&action=karar&id=2790&content=

[37] ԹՍԴ-ի ու ԱԶԿ-ի հարաբերությունների մասին մանրամասն տե՛ս՝ C. Çakmak, C. Dinç, *Constitutional Court: Its Limits to Shape Turkish Politics,* Insight Turkey Vol. 12 / No. 4 / 2010, pp. 69-92

[38] Թուրքական տնտեսության վրա համաշխարհային ճգնաժամի ազդեցության մասին տե՛ս՝ E. Uygur, *The Global Crisis And The Turkish Economy,* TWN Global Economy Series №21, Jutaprint, 2010

Հանրապետական ժողովրդական (23.08% և 612 տեղ) և Ազգայնական շարժում կուսակցությունները (15.97% և 414 տեղ)[39]:

Ընտրությունների արդյունքներն իշխող կուսակցության կողմից ընդունվեցին իբրև համեմատական անհաջողություն: Ինքն Էրդողանն, ընդգծելով իրենց ստացած մոտ 40% քվեների հասարակության վստահության դրսևորում լինելը, այնուամենայնիվ արձանագրեց, թե անհրաժեշտ է հետամուտ լինել 2007թ.-ի խորհրդարանական ընտրությունների համեմատ իրենց ընտրազանգվածի փոքրացման պատճառների վերացմանը[40]:

Հաջորդ տարի եվրահինտեգրման գործընթացին ընդառաջ ԱԶԿ-ն նախաձեռնեց սահմանադրական փոփոխությունների գործընթաց: Դրանով նախատեսվում էր փոփոխություններ կատարել Սահմանադրության 27 հոդվածների տեքստերում: Դրանք շոշափում էին հասարակաիրավական հարաբերությունների լայն շրջանակ՝ քաղաքացիների հավասարության ու պաշտպանվածության հարցերից (10-րդ և 20-րդ հոդվածներ) մինչև Սահմանադրական դատարանի ձևավորման ու իրավասությունների մասին հարցեր (146-րդ և 147-րդ հոդվածներ):

Իշխող կուսակցությունը քվեարկության պահին անկարող էր միայնակ ապահովել փոփոխություններին ուղղակիորեն օրենքի ուժ տալու համար անհրաժեշտ ԹԱՄԺ ձայների 2/3-ը (367 ձայն), բայց կարող էր հավաքել դրանց հաստատման համար հանրաքվե հայտարարելու համար անհրաժեշտ ձայների 60%-ը (330 քվե):

Մայիսի 7-ին քվեարկությամբ Մեջլիսը հաստատեց[41] բոլոր փոփոխման ենթակա բոլոր հոդվածները բացի 69-րդից[42]: 5 օր անց՝

[39] Արդյունքներն ըստ՝ http://www.ysk.gov.tr/ysk/docs/2009MahalliIdareler/ResmiGazete/IlGenel.pdf

[40] Էրդողանը «բացթողումների» պատճառների մասին խոսում էր արդեն ընտրությունների հաջորդ օրը՝ http://www.milliyet.com.tr/siyaset/SonDakika.aspx?aType=SonDakika&ArticleID=1077010&KategoryID=12&Date=30.03.2009&ver=3017

[41] ԹՍ տեքստում փոփոխություններ կատարելու մասին ընդունված օրենքի տեքստը՝ http://www.tbmm.gov.tr/kanunlar/k5982.html

մայիսի 12-ին օրինագիծը ստորագրվեց նախագահ Աբդուլլահ Գյուլի կողմից: Մինչև հանրաքվեի օրը փոփոխությունների փաթեթը քննարկման առավ նաև Թուրքիայի Սահմանադրական դատարանը (հուլիսի 7-ին): Հակառակ ընդդիմության սպասումներին այն չարգելեց հանրաքվեն ու բավարարվեց միայն դատաիրավական համակարգին, մասնավորապես՝ Դատավորների և դատախազների բարձրագույն խորհրդին (թուրք.՝ Hâkimler ve Savcılar Yüksek Kurulu) վերաբերվող հատվածներում փոփոխություններով:

Այսպիսով, հանրաքվեն կայացավ 2010թ.-ի սեպտեմբերի 12-ին և մասնակցածների 57.88%-ը (կամ 21.787.244 մարդ) «այո» ասացին փոփոխություններին[43]: 2010թ.-ի սահմանադրական փոփոխությունները ողջունվեցին համաշխարհային հասարակության կողմից իբրև դրական քայլ ժողովրդավարության կառուցման ճանապարհին: Փորձագետների կարծիքով հանրաքվեն Էրդողանի ու կուսակիցների գաղափարական հաղթանակն էր[44]:

Հաջորդ խորհրդարանական ընտրություններում, որ կայացան 2011թ.-ի հունիսի 12-ին, ԱԶԿ-ն կրկին մեծամասնություն կազմեց: Էրդողանի կուսակցությունը ստացավ քվեարկողների ձայների գրեթե կեսը՝ 49.83% (21.399.082): Այնուամենայնիվ, 24-րդ գումարման ԹԱՄԺ-ում ԱԶԿ-ին բաժին հասավ 17-ով ավելի քիչ մանդատ (327): 135 աթոռ ստացավ Հանրապետական ժողովրդական կուսակցությունը, 53՝ Ազգայնական շարժման անդամները: Մնացած տեղերը բաշխվեցին անկախ

[42] 69-րդ հոդվածում կատարվելիք փոփոխությունները, որ վերաբերվում էին ԹՍԴ-ի քաղաքական կուսակցությունների փակման լծակների սահմանափակմանը քվեարկության երկրորդ փուլում ստացան միայն 327 ձայն ու դուրս մնացին հանրաքվեի ուղարկվող փաթեթից:

[43] Տվյալներն ըստ՝ http://www.ysk.gov.tr/ysk/docs/2010Referandum/KesinSonuc/Sonuc.pdf

[44] *"Turkey's Erdogan scores reform referendum victory"*, Reuters, 12/09/2010՝ http://www.reuters.com/article/2010/09/12/us-turkey-referendum-idUSTRE68B01120100912

պատգամավորների միջև[45]: Հուլիսի 6-ից արդեն սկսեց գործել Էրդողանի երրորդ և Թուրքիայի 61-րդ կառավարությունը[46]:

Էրդողանի այս կառավարության գործունեության հենց սկզբից սկսվեցին խոսակցություններ կապված կուսակցապետի հետագա ճակատագրի մասին: Համաձայն ԱԶԿ կանոնադրության[47] երեք գումարում անընդմեջ ԹԱՄԺ պատգամավոր ընտրված յուրաքանչյուր անդամ՝ ներառյալ վարչապետը, նվազագույնը ևս մեկ պատգամավորական ժամկետ չի կարող առաջադրվել: Այս տարվա սեպտեմբերի 30-ին կայացած ԱԶԿ 4-րդ համագումարում Էրդողանն, իր երեքժամյա ելույթի ընթացքում անդրադառնալով իր և երկրի քաղաքական ապագային, նշեց, որ այլ կերպ է շարունակելու ծառայել երկրին[48]: Գրեթե բոլորը դիտորդները հասկացան, որ խոսքը գնում է երկրի նախագահի պաշտոնի մասին:

Սակայն, միաժամանակ ակնհայտ է, որ Էրդողանին չեն կարող բավարարել ներկա Սահմանադրությամբ նախագահին վերապահված գրեթե սիմվոլիկ լիազորությունները: Հենց այս դիտանկյունից պետք է գնահատել երկրում մեկնարկած նոր սահմանադրություն մշակման աշխատանքները, մասնավորապես՝ Սահմանադրության համաձայնեցման կոմիտեի (թուրք.՝ Anayasa Uzlaşma Komisyonu)[49] գործունեությունը:

Թուրքիայի առաջին ամբողջովին քաղաքացիական սահմանադրության գլխավոր նորարարությունը, ամենայն հավանականությամբ, կլինի երկրի ղեկավարման համակարգի

---

[45] Տվյալներն ըստ՝ http://www.ysk.gov.tr/ysk/docs/2011MilletvekiliSecimi/turkiye/milletvekilisayisi.pdf և http://www.ysk.gov.tr/ysk/docs/2011MilletvekiliSecimi/gumrukdahil/gumrukdahil.pdf

[46] Թուրքիայի գործող կառավարության կազմը՝ http://www.akparti.org.tr/site/yonetim/hukumetler/61

[47] ԱԶԿ կանոնադրությունը հասանելի է կուսակցության պաշտոնական կայքում՝ http://www.akparti.org.tr/site/akparti/parti-tuzugu

[48] Թուրքիայի վարչապետի ելույթի տեքստը՝ http://www.akparti.org.tr/site/haberler/basbakan-erdoganin-ak-parti-4.-olagan-buyuk-kongresi-konusmasinin-tam-metni/31771

[49] Կոմիտեի կազմը՝ https://yenianayasa.tbmm.gov.tr/uyeler.aspx

արմատական փոփոխությունը, մասնավորապես՝ 2014թ.-ի ընտրություններին ընդառաջ, երբ առաջին անգամ նախագահն ընտրվելու է ժողովրդի կողմից, անցումը դեպի երկրի ղեկավարման նախագահական մոդելի: Նախագահի և գործադիր իշխանության հարաբերությունների տեսակետից նախատիպային է համարվում ֆրանսիական մոդելը: Այնուամենայնիվ, դատելով նրանից, որ աշխատանքները քառակուսակցական կոմիտեում այդքան էլ հարթ չեն ընթանում, կարելի է ենթադրել, որ ԱԶԿ-ն կարող է խնդիրներ ունենալ Մեջլիսում ձայների 2/3-ը հավաքելու գործում: Իսկ հնարավոր հանրաքվեի դեպքում կառավարման քեմալական մոդելի փոփոխությանը ժողովրդի աջակցությունը ամենևին էլ երաշխավորված չէ:

Մյուս կողմից ոչ պակաս էական է գործող նախագահ Աբդուլլահ Գյուլի գործոնը: 2007թ.-ի նախագահական ընտրությունների բարդ գործընթացից հետո վերջինս զգալիորեն ամրապնդել է իր քաղաքական դիրքերն ու բնակչության որոշ հատվածի կողմից ընկալվում է իբրև հասարակության միասնության խորհրդանիշ[50]: Թուրքական ներքաղաքական զարգացումներով հետաքրքրված շրջանակներում քննարկվում են հնարավոր մի շարք տարբերակներ, այդ թվում՝ ինչպես իշխանական փոխատեղման «ռուսական» տարբերակը, այնպես էլ տարբերակներ, որոնցում Գյուլը հանդես է գալիս իբրև ինքնուրույն խաղացող: Առավել ևս, որ գործող նախագահը ընտրական կարգի փոփոխման հետ կապված Սահմանադրական դատարանի 2012թ.-ի հունիսյան որոշմամբ կարող է երկրորդ անգամ առաջադրվել, լինի դա ԱԶԿ աջակցությամբ, թե առանց դրա: Ընդ որում կուսակցության ներսում սեփական դիրքերն ամրապնդելու և հնարավոր չնախատեսված զարգացումները կանխելու Էրդողանի ձգտումների տեսակետից ուշագրավ է ԱԶԿ-ի և «Ժողովրդի ձայն»

[50] Որոշ հարցումների համաձայն Գյուլը ժողովրդական վարկանիշով անգամ գերազանցում է Էրդողանին՝ http://www.reuters.com/article/2012/09/26/us-turkey-president-idUSBRE88P0LP20120926

կուսակցության (թուրք.՝ Halkın Sesi Partisi) միավորումը[51]: Չի բացառվում, որ ԺՁԿ-ի ղեկավար Նուման Քուրթուլմուշը կարող է Էրդողանի քաղաքական հաշվարկի մի մասը լինել:

Ցանկացած դեպքում, առաջիկա իրադարձությունները անկասկած բեկումնային են լինելու թե՛ Թուրքիայի Հանրապետության, թե՛ «Արդարություն և զարգացում» կուսակցության ապագայի համար[52]:

Կուսակցության գաղափարախոսության համառոտ բնութագիրը[53]

Անդրադառնալով ԱԶԿ աջ-կենտրոնամետ պահպանողական գաղափարներին՝ սկզբից կեթ պիտի հիշատակել Էրդողանի 2004թ.-ի հունվարի 15-ի ելույթը, որտեղ Թուրքիայի վարչապետը նշում էր, որ «Արդարություն և զարգացումը» ձգտում է՝

- մոդերնիզացիայի, որը չի մերժում ավանդույթները,
- համընդհանրության, որն չի մերժում տեղայնականը,
- ռացիոնալության, որը չի մերժում աստվածային իմաստը[54],
- փոփոխության, որը չի մերժում արմատները:[55]

Նման զգուշավորությունը առաջին հերթին պայմանավորված է թուրքական հասարակական շրջաններում առկա գաղափարական զգալի բևեռացմամբ: Ուստի, Էրդողանի կարծիքով, Թուրքիային առավել համապատասխան է «պահպանողական ժողովրդավարությունը»:

---

[51] *"Erdoğan: Yuvanıza hoş geldiniz!"*, Habertürk, 22/09/2012՝ http://www.haberturk.com/gundem/haber/778770-erdogan-yuvaniza-hos-geldiniz

[52] *"Prospects for a Future Role for Erdogan"*, Al Jazeera, 14/10/2012՝ http://studies.aljazeera.net/en/positionpapers/2012/10/2012101182616142155.htm

[53] ԱԶԿ գաղափարախոսության վերաբերյալ չափազանց արժեքավոր է հետրյալ հետազոտությունը՝ M. H. Yavuz (ed.), *The Emergence of a New Turkey: Democracy and the AK Parti*, University of Utah Press, 2006

[54] Սուֆիական եզրաբանության շրջանակում հասկացվող աստվախային իմաստ:

[55] Տե՛ս Էրդողանի բացման ելույթը «Պահպանողականություն և ժողովրդավարություն» միջազգային սիմպոզիումի ընթացքում՝ http://www.akparti.org.tr/site/haber/3173/muhafazakarlik-ve-demokrasi-sempozyumu-basbakan-erdogan-ak-parti-siyaseti-r

Իսլամական կողմորոշում ունեցող կուսակցության պահպանողական դեմոկրատիայի ջատագով լինելու պարադոքսին գաղափարական հիմնավորում տալու փորձ է ԱԶԿ հովանավորությամբ հրատարակված Յալչընն Աքդողանի գիրքը[56]: Այն ընդգրկում է ժողովրդավարության թուրքական մոդելի կառուցվածքային առանձնահատկությունների ընդհանուր նկարագիրը: Սակայն, այնուամենայնիվ փորձելով հակիրճ բնորոշել պահպանողական ժողովրդավարությունը, կարելի է հիշել ԱԶԿ նախկին փոխկուսակցապետ ազգությամբ քուրդ Դենգիր Միր Մեհմեթ Ֆըրաթի ձևակերպումը՝ արտասանված վերևը հիշատակված սիմպոզիումի ընթացքում, թե այն *«պահպանողականության ու ժողովրդավարության սինթեզ է, որ կապում է ավանդական թուրքական արժեքները և եվրոպական պահպանողականության տարրերը»*[57]:

Այնուհանդերձ թուրքական «ավանդական արժեքներ» բավական անորոշ ձևակերպումը բազմաթիվ տարընթերցումների տեղիք է տալիս: Մասնավորապես առաջին հայացքից զարմանալի է թվում, որ ըստ էության իրենց քաղաքական կարիերան Millî Görüş շարժման[58] գաղափարական ազդեցությամբ առաջացած իսլամիստական կուսակցություններում սկսած գործիչները[59] այժմ նման արժեքների թվում չեն դասում կրոնական գործոնը: Բացատրությունը պետք է տեսնել ոչ միայն և ոչ այնքան կրոնական ազատությունների վերաբերյալ եվրոպական տեսակետները կիսելու, որքան ԱԶԿ գաղափարների և քեմալական լաիցիզմի համատեղելիության հարցի համատեքստում: Փորձենք քիչ ավելի հանգամանորեն

---

[56] Y. Akdoğan, *Muhafazakar Demokrasi*, AK Parti Yayınları, 2003

[57] http://www.akparti.org.tr/site/haber/4003/muhafazakarlik-ve-demokrasi-sempozyumu-genel-baskan-yardimcisi-firat-ak-par

[58] Նեջմեթթին Էրբաքանի համանուն հայտնի մանիֆեստից հետո ծագած Millî Görüş («ազգային տեսակետ») շարժումը քաղաքական իսլամի դրոշակակիրն էր: Մանրամասն տե՛ս Վ. Տեր-Մաթևոսյան, *Իսլամը Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում (1970-2001 թթ.)*, Երևան, 2008թ.

[59] Էրդողանն ինքը ժխտում է շարժման հետ իր կուսակցության գաղափարական ժառանգականության փաստը՝ http://arsiv.zaman.com.tr/2003/05/17/politika/h2.htm

անդրադառնալ Թուրքիայի իշխող կուսակցության կրոնական հարցի շուրջ ունեցած դիրքորոշմանը:

Դեռ 2002թ.-ի ընտրություններում տարած հաղթանակից հետո ունեցած առաջին ելույթում Էրդողանը թուրք հասարակությանը ներկայացավ իբրև «բարեփոխված» իսլամիստ[60], որը իր խոսքում բազմաթիվ մեջբերումներ է կատարում հանրապետության «հայր» Աթաթյուրքից: Այս վերափոխումը քննադատների կողմից ինչ-որ առումով ընկալվեց որպես թաքիյայի[61] դրսևորում: Չնայած կատարված ազատական սահմանադրական բարեփոխումներին, որոնց մի մասը վերաբերվում էր Թուրքիայում կրոնական փոքրամասնություններին, հատկապես 2004թ.-ից հետո ԱԶԿ տեղական մարմինների կողմից իրականացվում են քայլեր միտված ալկոհոլի օգտագործման սահմանափակման ու մասնակի արգելմանը[62] կամ հասարակական երկսեռ լողափերից կանանց օգտվելու իրավունքի վիճարկմանը[63]:

ԱԶԿ-ականները հաճախ շեշտը դնում են որոշ դրույթների վրա, որոնք սահմանադրական լաիցիզմի տեսակետից կարող են, իսկ արևմտյան ժողովրդավարության տեսակետից պետք է ընդունվեն (ուսանողների գլխաշոր կրելու իրավունք, ալավիների իրավունքներ են):

Աշխարհիկության սեփական ըմբռնման դրսևորումները ԱԶԿ-ականները կապում են դրա որակական տեսակավորման (չեզոք (ԱՄՆ մոդելը) և ագրեսիվ (Թուրքիայի մոդելը) տարատեսակների առանձնացում) հետ: Այլ խոսքերով ասած՝ փորձելով տարբերակել laikçilik-ը (գաղափարախոսական աշխարհիկություն) laiklik-ից

---

[60] ԱԶԿ-ին այդպես է անվանում, օրինակ, The Economist-ը իր 2004թ.-ի նոյեմբերի 25-ի համարում՝ http://www.economist.com/node/3436416

[61] Թաքիյան (արաբ.՝ **تقية**, թուրք.՝ takiye) արտաքին միջավայրի հարկադրանքով մուսուլմանի կողմից հավատքն առերևույթ ուրանալու կամ դրան հավասարեցվող այլ գործողություն կատարելու երևույթն է (հմմ. Ղուրան 16:106):

[62] "*Turkey's Islamist-rooted AKP to propose new bans on alcohol", Hürriyet Daily News,* http://www.hurriyet.com.tr/english/domestic/10164400.asp

[63] *"Boom in bikini-free holidays as Turkish women cover up"*, The Independent, 07/07/2007՝ http://www.independent.co.uk/news/world/europe/boom-in-bikinifree-holidays-as-turkish-women-cover-up-861277.html

(իրական աշխարհիկություն)[64]: Էրդողանն ինքն էլ է շեշտել ամերիկյան մոդելի ազդեցությամբ թուրքական աշխարհիկության վերաիմաստավորման փորձը[65]: Վերը հիշատակված աշխատության մեջ (էջ 132) Աքդողանը նաև մերժում է աշխարհիկության՝ իբրև քաղաքական գործիքի կիրառումը: Նման մոտեցումն ընդհանուր առմամբ զգալիորեն տարբերվում է քեմալական ավանդական պատկերացումներից, որի վառ արտահայտությունն է ԹՍԴ-ի 1998թ.-ի դատավճիռը Բարօրություն կուսակցության փակման մասին[66]: Բայց իսլամիստական նկրտումները այլընտրանքային աշխարհիկության քողի ներքո ներկայացնելն ամենևին էլ չի փոխում խնդիր էությունը: Արդյունքում 99,8% մուսուլմաններով բնակեցված[67] Թուրքիայում ունենք քեմալական աշխարհիկությամբ սահմանափակված «բարեփոխված» իսլամիստներ: Ու այս պայմաններում ավելորդ է խոսել, որ հասարակության տեսակարար զանգվածում աննշան հատված զբաղեցնող կրոնական փոքրամասնությունների իրավունքների մասին[68]:

«Պահպանողական ժողովրդավարության» քաղաքականության հաջորդ ուշագրավ դրույթը եվրահինտեգրման ու դրան ընդառաջ կատարվելիք փոփոխությունների ու դրան զուգահեռ քաղաքական նատիվիզմի համադրման հնարավորություն հարցն է: Թուրքական նատիվիզմը ենթադրում է երկրի կյանքի մի շարք կոնցեպտուալ գործոնների (ժողովրդավարական արժեքներ, ազատ շուկա, աշխարհիկություն, ազգայնականություն նն) մեկնաբանումն է ազգային արժեքների և

---

[64] İ. Ö. Kaboğlu, *Laiklik ve Demokrasi*, İmge Kitabevi, 2001, s. 175-178

[65] http://arama.hurriyet.com.tr/arsivnews.aspx?id=220348

[66] ԹՍԴ № 1998/1 որոշման տեքստը՝ http://www.anayasa.gov.tr/index.php?l=manage_karar&ref=show&action=karar&id=2919&content=

[67] Ըստ ԱՄՆ ԿՀՎ տվյալների՝ https://www.cia.gov/library/publications/the-world-factbook/geos/tu.html

[68] Թուրքիայի կրոնական ներկապնակի գնահատականը տե՛ս USCIRF-ի տարեկան զեկույցում՝ http://www.unhcr.org/refworld/docid/4dbe90b611.html

կրոնի տեսակետից[69]: Եթե Millî Görüş-ի նատիվիզմը խարսխված էր հակաարևմտականության վրա՝ իբրև «ազգային տեսակետի» ինքնության բնորոշիչ, ապա ԱԶԿ-ն եվրաինտեգրման կոնտեքստում մերժելով հակաարևմտականությունը՝ որոշակի դեր է հատկացնում նատիվիզմի սեփական պատկերացմանը: Էրդողանի խոսքերով. *«ԱԶ կուսակցությունը առաջ է քաշում նոր պահպանողական ժողովրդավարություն, որ համապատասխան է պահպանողականության գեներին ու պատմական օրենքներին, բայց և հենվում է այն վայրի պատմական և մշակութային ավանդույթների վրա, որտեղ իրականացվում է»*[70]: Իսկ մեկ այլ ելույթում ԱԶԿ ղեկավարը նշում է, որ փոփոխությունների ու զարգացման իրականացմանը զուգահեռ պետք է ձգտել պահպանել էությունը[71]: Պիտի ենթադրել, որ իդեալում նկարագրված մոդելը պիտի մոտ լիներ նրան, ինչը Ահմեթ Համդի Թանփընարը նկարագրում է իբրև «շարունակականություն փոփոխության և փոփոխություն շարունակականության մեջ»[72]: Բայց Թուրքիայում ԱԶԿ իշխանության գալուց հետո կատարված փոփոխությունների դերը չնսեմացնելով պիտի փաստել, որ այժմյան Թուրքիան դեռ շատ հեռու է որոշ շրջանակների կողմից ակտիվորեն շահարկվող «չափավոր իսլամական երկրի օրինակելի նմուշի» դերին համապատասխանելուց: Ու հենց այս ենթատեքստով հիշատակել է կուսակցության կարգախոսներից մեկը՝ «Կանգառ չկա, շարունակի՛ր ճանապարհը» (թուրք.՝ Durmak yok, yola devam.):

ԱԶԿ գաղափարախոսության մյուս երեսը՝ արտաքին քաղաքականությունը շատերի հավաստմամբ պայմանավորված է

---

[69] H. Yavuz, *Modernleşen Müslümanlar: Nurcular, Nakşiler, Milli Görüş ve AK Parti, Kitap Yayınevi*, 2005, s. 15

[70] Էրդողանի ելույթի տեքստի համար տե՛ս 54-ը:

[71] Տե՛ս «Պահպանողական ժողովրդավարություն և ազատության գլոբալացում» թեմայով Էրդողանի 2004թ.-ի հունվարյան ելույթը AEI- ում՝ 53, էջեր 333-340:

[72] M. Wollaeger (ed.), *The Oxford Handbook of Global Modernisms*, Oxford University Press, 2012, p. 534

«Թուրքիայի Հենրի Քիսսինջեր»[73] Ահմեթ Դավութօղլուի անձով[74]: Նրա «ստրատեգիական խորության» տեսությունը ենթադրում էր քաղաքական ուղեգծի բավական լուրջ փոփոխություններ: Դրանց պատճառների մասին խոսելով՝ ինքը Դավութօղլուն նկարագրել է նախկին Թուրքիայի քաղաքական կերպարը. *«Նախկինում Թուրքիային իբրև միջազգային խաղացող, տեսնում էին ամուր մկաններով, թույլ ստամոքսով, սրտի խնդիրներով և միջին մտավոր հնարավորություններով: Այլ խոսքերով ասած այն ուներ հզոր բանակ, բայց թույլ տնտեսություն, ինքնավստահության պակաս ու ոչ այնքան լավ ստրատեգիական մտածողություն»*[75]: Երկրի նման արտաքին նկարագիրը փոխելու ձգտմամբ պայմանավորված՝ Երկրորդ համաշխարհայինից հետո ավանդաբար «որևմտամետ» պիտակը կրող Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ ի հայտ եկան մի շարք փոփոխություններ, որոնք հստակ նկատելի դարձան հատկապես 2007թ.-ի ընտրություններից հետո[76]: 60-րդ կառավարության գործունեության տարիներին արևմտյան մամուլում հաճախակիացան անդրադարձները Թուրքիայի «արևելյան շրջադարձին»[77]:

---

[73] *"Turkey's 'Henry Kissinger'"*, Gulf News, 21/09/2009՝ http://gulfnews.com/opinions/columnists/turkey-s-henry-kissinger-1.540262

[74] Նրա գիրքը (*Stratejik derinlik: Türkiye'nin uluslararası konumu*, Küre Yayınları, 2001) ամփոփում է Թուրքիայի արտաքին առաջնահերթությունների ԱԶԿ տեսլականը:

[75] N. Seker, *"A Shift in Turkish Foreign Policy: Turkey's Strategic Depth"*, Qantara, 07/08/2009՝ http://en.qantara.de/Turkeys-Strategic-Depth/6894c155/index.html

[76] Թուրքական արտաքին քաղաքականության հիմունքների մասին պաշտոնական Անկարայի տեսակետի համար տե՛ս Ահմեթ Դավութօղլուի 2009թ.-ի դեկտեմբերի վաշինգտոնյան ելույթը՝ http://www.setav.org/ups/dosya/14808.pdf:

[77] "*Nostalgia for the Ottomans: Disillusioned with Europe, Turkey Looks East"*, Der Spiegel, 12/11/2009՝ http://www.spiegel.de/international/world/nostalgia-for-the-ottomans-disillusioned-with-europe-turkey-looks-east-a-660635.html, *"Turkey's drift away from the West",* The Jerusalem Post, 14/01/2009 http://www.silkroadstudies.org/new/inside/turkey/0901SC-JP.htm; *How the West Lost Turkey",* Foreign Policy, 25/11/2009՝ http://www.foreignpolicy.com/articles/2009/11/25/how_the_west_lost_turkey

Ինքը Դավութօղլուն առանձնացնում է թուրքական նոր արտաքին քաղաքականության հետևյալ սկզբունքները՝ երկրի ներսում անվտանգության և ժողովրդավարության համակշռում, «զրո խնդիր հարևանների հետ», պրոակտիվ խաղաղության դիվանագիտություն տարածաշրջանում և դրանից դուրս, կոմպլեմենտարիզմ աշխարհի ուժային բևեռների հետ հարաբերություններում, այսպես կոչված «ռիթմիկ» դիվանագիտություն: Բոլոր այս սկզբունքներն էլ հանգամանորեն վերլուծվել են շատերի, այդ թվում նաև Թուրքիայի արտաքին գերատեսչության ղեկավարի կողմից[78], սական անհրաժեշտ ենք համարում կանգ առնել որոշ հանգուցային կետերի վրա:

Առաջին հերթին պիտի նկատել, որ թուրքական արտաքին քաղաքականության մեջ կարմիր թելի նման անցնում է «մուսուլմանական համերաշխություն» թեզը, որն, ըստ ամենայնի, զուտ միջոց է տարածաշրջանային առաջնորդի հնարավոր դերին հավակնելու ճանապարհին:

Նման տեսակետից պետք է գնահատել Թուրքիայի քաղաքական հայացքների վերանայումը մուսուլմանական արևելքի նկատմամբ (Էրդողանը, Հաագայի միջազգային քրեական դատարանի կողմից Դարֆուրում ցեղասպանություն իրականացնելու մեջ մեղադրվող Սուդանի նախագահ Օմար ալ-Բաշիրին պաշտպանելով, անգամ հայտարարեց թե «մուսուլմանը չի կարող ցեղասպանություն գործել»[79]: Պիտի նկատել, իհարկե, որ այս խոսքերի տողատակում թաքնված է նաև Հայոց ցեղասպանության գոյությունը կասկածի տակ դնելու միտում):

Սակայն այս թեզի գործական կիրառության ամենացայտուն հետևանքն է թուրք-իսրայելական երբեմնի «գերազանց» գնահատվող[80] հարաբերությունների վատթարացումը (սկսած

[78] Տե՛ս նրա հոդվածը Insight Turkey ամսագրում՝ http://www.setav.org/ups/dosya/9595.pdf

[79] *"Erdoğan: Müslüman soykırım yapamaz"*, Radical, 09/11/2009՝ http://www.radikal.com.tr/Radikal.aspx?aType=RadikalDetayV3&ArticleID=963427&CategoryID=100

[80] Չնայած արդեն նկատվող խնդիրներին՝ 2006թ.-ի մայիսին Թուրքիա կատարած այցի ժամանակ երկու երկրների հարաբերություններին այսպիսի գնահատական

2009թ.-ի դավոսյան հայտնի սկանդալից ու 2010թ.-ի Գազայի ափերի մոտ տեղի ունեցած ծովային միջադեպից, մինչև մի քանի օր առաջ Էրդողանի արած սկանդալային հայտարարությունը[81]): Ակնհայտ է, որ այս ամենը պետք է դիտարկել Թուրքիայի՝ տարածաշրջանային ուժի կենտրոն դառնալու ձգտման և «Արևելք-Արևմուտք» քաղաքական հոլովույթում ծանրություն կենտրոնի տեղի որոշման համատեքստում:

Մասնավորապես, չնայած պաշտոնական Անկարայի խոսքերին[82], ԱԶԿ իշխանության տարիները կարելի է համարել ավանդական քեմալիզմի (թուրք.՝ Atatürkçülük) և նեոսմանիզմի (թուրք.՝ Yeni Osmanlıcılık) պայքարի շրջան: Թուրքիայի «անատոլիական քաղաքական էլիտայի» (որի ներկայացուցիչներն են իշխանական վերնախավի առանցքային դեմքերը) տեսակետը դիպուկ է բնորոշում Էրդողանի անձնական խորհրդական Հասան Ջյունեյդ Զափսուի խոստովանությունը. *«Մենք օսմանցիների ժառանգներն ենք ու չպետք է ամաչենք դրանից»*[83]:

Երկրորդ, հետադարձ հայացք գցելով՝ պետք է արձանագրել, որ «ստրատեգիական խորության» քաղաքականության գլխավոր սկզբունքը («զրո խնդիր հարևանների հետ») խոշոր հաշվով տվեց միայն ժամանակավոր արդյունքներ (դրանցից, թերևս, ամենանշանակալին 2009թ.-ի հոկտեմբերյան հայ-թուրքական մինչև այժմ այդպես էլ չվավերացված արձանագրությունն է)[84]: Ըստ էության այսպես կոչված «արաբական գարունն» ու Սիրիայի շուրջ

էր տվել Իսրայելի ԱԳ նախարար Ցիպի Լիվնին՝ http://www.turkishweekly.net/news/32586/turkey-and-israel-ending-the-crisis.html:

[81] Թուրքիայի վարչապետը Եվրասիական իսլամական 8-ի խորհրդի բացման ելույթում Իսրայելը որակել էր իբրև «ահաբեկչական պետություն»՝ http://www.zaman.com.tr/dis-haberler/basbakan-erdogan-israil-bir-teror-devletidir/2017813.html

[82] Դավութօղլուն ինքը մեկ անգամ չէ, որ հերքել է ԱԶԿ-ի նեոսմանիզմի հետ ունեցած կապը՝ http://www.todayszaman.com/tz-web/news-193944-i-am-not-a-neo-ottoman-davutoglu-says.html

[83] N. Seker, *"A Shift in Turkish Foreign Policy: Turkey's Strategic Depth"*, Qantara, 07/08/2009՝ http://en.qantara.de/Turkeys-Strategic-Depth/6894c155/index.html:

[84] *"The Hazards in Turkey's New Strategy"*, The New York Times, 24/10/2011՝ http://www.nytimes.com/2011/10/25/world/europe/25iht-letter25.html

ստեղծված ճգնաժամը վեր հանեցին թուրքական դիվանագիտության կողմից իբրև Թուրքիայի Հանրապետության պաշտոնական նշանաբանից («Խաղաղություն հայրենիքում, խաղաղություն աշխարհում», թուրք.՝ Yurtta barış, dünyada barış[85]) բխող տրամաբանական եզրահանգում ներկացված այս կարգախոսի անկենսունակությունը: Ներկայումս կարող ենք խոսել ավելի շուտ հակառակ արդյունքի մասին: Ինչպես դիպուկ նկատել է ՀՀ արտգործնախարարը. *«Թուրքիայի արտգործնախարարը խոսում է այն մասին, որ երեք հարևան երկրների հետ իրենք ոչ այնքան լավ հարաբերություններ ունեն: Բայց կարծում եմ այնքան էլ անկեղծ չէ, առնվազն երկու անգամ ավելի շատ է երկրների թիվը, որոնց հետ այնքան լավ հարաբերություններ չունեն, առնվազն վեցի հետ, իսկ վեցից երկուսի հետ ընդհանրապես հարաբերություններ չունեն»*[86]:

Եվ երրորդ, հատուկ ուշադրության է արժանի Թուրքիայի՝ ամբողջովին անկախ համաշխարհային խաղացողի դերին ձգտելու քաղաքականությունը, որ որոշ ուսումնասիրողներ բավական նկարագրական տերմինով անվանել են «թուրքական գոլիզմ»[87]: Նման «realpolitik»-ի առերևույթ հիմքը Թուրքիայի տնտեսական վերելքն է (երկիրն իր կայուն տեղն ունի «մեծ քսանյակում» (18-րդ), մեկ շնչին հասնող ՀՆԱ նոմինալ ցուցանիշը վերջին տասնամյակում 3.353$-ից հասել է 10.498$-ի, տնտեսության կայուն աճը շարունակվում է (+8,5%) ևն[88]): Թուրքական աղբյուրներն այս

---

[85] Աթաթյուրքի 1931թ.-ի ապրիլի 20-ի այս արտահայտությունը հնչում էր. «Yurtta sulh, cihanda sulh»: *Atatürk'ün Tamim, Telgraf ve Beyannameleri*, c. IV, Türk Tarih Kurumu Basımevi, 1991, s. 608

[86] ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի խոսքը և պատասխանները հարցերին Ուրուգվայի արտգործնախարար Լուիս Ալմագրոյի հետ համատեղ մամուլի ասուլիսի ժամանակ՝
http://www.mfa.am/hy/interviews/item/2012/05/04/nalbandian_almagro/

[87] Դը Գոլի Ֆրանսիայի «ազգային անկախական» շարժման թուրքական անալոգի մասին տե՛ս Օմեր Թաշփընարի հոդվածը՝
http://file.insightturkey.com/Files/Pdf/insight-turkey_vol_13_no_1_2011_taspinar.pdf

[88] Տվյալներն ըստ Համաշխարհային բանկի՝
http://data.worldbank.org/country/turkey

մասով հաճախ են մեջբերում Մեծ Բրիտանիայի վարչապետ Դեյվիդ Քեմերոնի խոսքերը. *«Բոլորը խոսում են ԲՌՀՉ (անգլ. BRIC) երկրներից: Խոսում են Հնդկաստանի, Բրազիլիայի, Ռուսաստանի և Չինաստանի արագ զարգացումից: Մենք մտածում ենք, որ Թուրքիան Եվրոպայի ԲՌՀՉ-ն է»*[89]: Սրան զումարելով նաև երկրի աշխարհաքաղաքական գերկարևոր դիրքը՝ պաշտոնական Անկարան Դավութօղլուի շուրթերով խոսում է վարվող 360°-ի քաղաքականության և 2023թ.-ին ընդառաջ Թուրքիայի միջազգային կշռի մեծացման մասին[90], ինչը Արևմուտքում ոմանց կողմից ընկալվում է իբրև «առանցքի շեղում» (թուրք.՝ eksen kaymasi):

Այլ խոսքերով ասած ԱԶԿ-ն որդեգրել է հստակ ուղեգիծ՝ ունենալով «Թուրքիայի մի որոշակի գաղափար»[91]:

Թուրքիայի ղեկավարները հստակորեն հասկացնում են, որ իրենց այլևս չի բավարարում Արևմուտքի «կրտսեր գործընկերոջ» դերը ու որպես հակակշիռ ակնարկում են երկրի հնարավոր եվրասիականացումը:

Նման մի ենթատեքստ կարելի է նկատել 2012թ.-ի հոկտեմբերյան Էրդողան-Մերկել հանդիպումից հետո Թուրքիայի վարչապետի ԵՄ անդամակցության վերջնաժամկետի վերաբերյալ արած ուլտիմատիվ հայտարարություններում[92]:

Հատկանշական է, որ ԵՄ անդամակցելու վերաբերյալ կարծիքը փոխվել է նաև թուրք հասարակության մոտ: Մասնավորապես, Մարշալի ֆոնդի հարցումների համաձայն

---

[89] *"Bize göre Türkiye Avrupa'nın BRIC'i"*, Sabah, 14/10/2010՝ http://www.sabah.com.tr/Ekonomi/2010/10/14/bize_gore_turkiye_avrupanin_brici

[90] Ուշագրավ է Դավութօղլուի «Տեսլական 2023. Թուրքիայի արտաքին քաղաքականության նպատակները» ելույթը (Լոնդոն, 22.11.2011)՝ http://www.mfa.gov.tr/speech-entitled-_vision-2023_-turkey_s-foreign-policy-objectives__-delivered-by-h_e_-ahmet-davutoglu_-minister-of-foreign-af.en.mfa

[91] Վերաձևակերպելով գեներալ դը Գոլի «Պատերազմի մասին հուշերի» հայտնի արտահայտությունը՝ «une certaine idée de la France»:

[92] *"Erdoğan'ın Berlin ziyareti Almanya basınında"*, Zaman, 01/11/2012՝ http://www.zaman.com.tr/dis-haberler/erdoganin-berlin-ziyareti-almanya-basininda/2009965.html

Թուրքիայի բնակչության միայն 48%-ն է ԵՄ անդամակցությանը համարում դրական (2004թ.-ի 73%-ի դիմաց) և միայն 33%-ը՝ հավանական[93]: Նման պայմաններում թուրքական քաղաքական կոմպլիմենտարիզմի ապագան պատված է անորոշության մշուշով: Վերջին երեք տարիներին միջազգային հայտնի Foreign Policy ամսագրի կողմից կազմվող «Համաշխարհային մտածողներ» ցուցակի առաջին երեսնյակում տեղ գրավող[94] Դավութօղլուի արտաքին քաղաքական տեսլականը «միաժամանակ անկախ է, ազգայնական, իսլամական, պանթուրքիստական, գլոբալ ու արևմտյան»[95]:

Բոլոր այս սկզբունքները իրար և ժողովրդավարության ու մոդերնիզացիայի հետ մի քաղաքականության մեջ հաջողությամբ համատեղելու իրատեսականությունն ու դրանց գործնական կիրառության արդյունավետությունը, սակայն, միանշանակ չէ: Դրա ապացույցն է մասնավորապես այն, որ գլխավոր ընդդիմադիր Հանրապետական ժողովրդական կուսակցության ու հատկապես դրա ղեկավար Քեմալ Քըլըչդարօղլուի քննադատական հայտարարությունները առանձնակի սուր են արտաքին հարցերում:

Ընդունելով հանդերձ ընդդիմադիրների նախնական սուբյեկտիվությունը՝ անկարելի է չհամաձայնվել, որ ԱԶԿ-ականների հաջողությունները արտաքին քաղաքական ասպարեզում (հատկապես գլխավոր առաջնահերթությունների ուղղությամբ), մեղմ ասած, տպավորիչ չեն[96]:

---

[93] Տե՛ս աղյուսակ 37-ը՝ http://www.gmfus.org/publications_/TT/TT_2011_text_turkce.pdf

[94] 2010-ի աղյուսակում Թուրքիայի ԱԳ նախարարը 7-րդն էր, 2011-ին նա և Էրդողանը զբաղեցնում էին 16-րդ, իսկ այս տարվա նոյեմբերի վերջին հրապարակված ցանկում՝ 28-րդ տեղը:

[95] G. E. Fuller, *New Turkish Republic: Turkey As a Pivotal State in the Muslim World*, United States Institute of Peace Press, 2007, p. 169

[96] *"Turkey's foreign policy in tatters, says Kılıçdaroğlu"*, Hürriyet Daily News, 8/11/2011` http://www.hurriyetdailynews.com/default.aspx?pageid=438&n=turkey8217s-foreign-policy-in-tatters-says-kilicdaroglu-2011-08-11, *"CHP leader Kılıçdaroğlu slams PM*

*

* *

Այսպիսով ամփոփելով՝ արձանագրենք, որ «Արդարություն և զարգացում» կուսակցությունը ծագել է քաղաքական իսլամի արդեն առկա գաղափարական հողի վրա (իմա՝ Նաջմեթթին Էրբաքանի երեք իսլամական կուսակցությունները 1970-1998թթ.): Թեև այն ներկայանում է իբրև «ժողովրդավարական պահպանողական կուսակցություն», խուսափելով «իսլամական» կամ «իսլամիստական» որևէ պաշտոնական ձևակերպումից, բայց ԱԶԿ դիրքորոշումը կրոնի հանդեպ (թե *«պետությունը» չեզոք է կրոնական հավատքի և փիլիսոփայական համոզմունքի ցանկացած դրսևորման նկատմամբ»*[97]) առնվազն տարբերվում է ավանդական քեմալիստական տեսակետից:

Կոպենհագենյան չափանիշներին համապատասխանելու ճանապարհին երկրում իրականացված ու իրականացվող քաղաքական, օրենսդրական, ներհասարակական և այլ բնույթի փոփոխությունների ներքին գլխավոր կատալիզորդը թուրքական զինված ուժերն են[98]: Ակնհայտ է, որ քաղաքացիական և ռազմական իշխանությունների հարաբերությունների բարեփոխման այս քողի ներքո Էրդողանի թիմը փորձում է փակել դեպի թուրքական քաղաքական պատմության համար «բարի ավանդույթ» դարձած ռազմական հեղաշրջումները տանող բոլոր դռները:

Արտաքին քաղաքական ուղղությամբ ԱԶԿ հիմնական առանձնահատկությունը միաժամանակ և՛ արևմուտքի և՛ արևելքի հետ մերձենալու ցանկությունն է: Այժմյան նախագահ Գյուլը դեռ 2004-ին էր նշում. *«Մի ժամանակի համար, երբ մարդիկ խոսում են*

Erdoğan's foreign policy", Today's Zaman, 20/11/2012՝ http://www.todayszaman.com/newsDetail_getNewsById.action?newsId=298790

[97] J. B. White, *"Islamist Mobilization in Turkey: A Study in Vernacular Politics"*, University of Washington Press, 2002, p. 274

[98] ԵՄ տեսակետը ԹԶՈ մասին տե՛ս Թուրքիայի մասին 2012-ի տարեկան զեկուցում (էջ 12)՝ http://ec.europa.eu/enlargement/pdf/key_documents/2012/package/tr_rapport_2012_en.pdf

քաղաքակրթությունների բախման մասին, Թուրքիան քաղաքակրթությունների բնական մի կամուրջ է: Մենք միայն փորձում ենք օգտագործել մեր դիրքը Իսլամն ու արևմուտքը մերձեցնելու համար»[99]: Ըստ էության, չնայած բազմազան անվանումներին ու բնորոշումներին, ԱԶԿ իշխանության տարիներին Թուրքական արտաքին քաղաքականության մեխը Արևմուտք-Արևելք մեծ ճոճանակի տատանումների հաշվին սեփական հավասարակշռության ամրապնդումն է եղել:

Այս ամենով հանդերձ «Արդարության և զարգացում» կուսակցություն ու իր որդեգրած ուղեգծի ապագայի մասին տեսակետները հակասական են: Էրդողանը դեռ Ստամբուլի քաղաքագլուխ եղած ժամանակ հայտարարել էր, թե *«ժողովրդավարությունը նման է տրամվայի. երբ հասնում ես քո կանգառին, պիտի իջնես»*[100]: Միայն ժամանակը ցույց կտա, թե ո՞րտեղ է կանգառն, ո՞ր ուղղությամբ է շարժվում տրամվայը, ե՞րբ կհասնի ու ընդհանրապես կհասնի՞ արդյոք:

[99] *"Turkey's Bid to Raise Its Islamic Profile and Court Europe May Backfire",* Arab News, 06/10/2004` http://www.arabnews.com/node/256169

[100] "The Erdogan Experiment", The New York Times, 11/05/2003` http://www.nytimes.com/2003/05/11/ magazine/the-erdogan-experiment.html?pagewanted=4&src=pm

ՔՄՀԿ կազմ՝

Դավիթ Հովհաննիսյան
Սաթենիկ Մկրտչյան
Աննա Գևորգյան
Տիգրան Մաթոսյան
Հայկ Քոչարյան
Տաթևիկ Մկրտչյան
Անի Գրիգորյան
Նաիրա Սահակյան

Մայիս 2013

Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն
Երևանի պետական համալսարան
Ալեք Մանուկյան 1, Երևան 0025, ՀՀ
Հեռ.՝ (37410) 551674
էլ.փոստ՝ cccs@ysu.am
www.cccsysu.com

Ֆորմատ՝ 60x84 1/16, թուղթ՝ օֆսեթ, №1:
Ծավալը՝ 12 պայմ. տպ. Մամուլ:
Տպաքանակը՝ 200: